ԿԼԻՄԵՆՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅ ՌԱԶՄԻԿՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱ-ՖԻՆՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ



Հրանտ Ռուբենի Պողոսյան



Հեղինակը շնորհակալություն է հայտնում
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ՀՐԱՆՏ ՌՈՒԲԵՆԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ
սույն գրքի հրատարակության
ծախսերը հոգալու համար

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

КЛИМЕНТ АРУТЮНЯН

УЧАСТИЕ ВОИНОВ–АРМЯН В СОВЕТСКО–ФИНСКОЙ ВОЙНЕ (30.11.1939 – 13.03.1940)

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА
2008

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՍԼԱՆ

ԿԼԻՄԵՆՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅ ՌԱԶՄԻԿՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱ–ՖԻՆՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

(30.11.1939 – 13.03.1940)

Ա 92819

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2008

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Հ 422

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական կոլեգիա՝
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր՝ ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր՝ ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ,
գեներալ-մայոր՝ ՌԱՖԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ,

Գրախոսներ՝
պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր՝ ՀՐԱՆՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ,
գեներալ-մայոր՝ ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Կ.Ա.
Հ 422 Հայ ռազմիկների մասնակցությունը Խորհրդա-ֆիննական պատերազմին (30.11.1939–13.03.1940) – Եր.: «Գիտություն» հրատ., 2008. 228 էջ:

Արխիվային հարուստ փաստական նյութերի, համապատասխան գրականության և մամուլի հիման վրա առաջին անգամ հայ պատմագրության մեջ լուսաբանվում է Երկրորդ համաշխարհային պատերազմի բաղկացուցիչ մաս կազմող Խորհրդա-ֆիննական պատերազմին (30.11.1939–13.03.1940) հայ ռազմիկների մասնակցության հիմնահարցը: Հատկապես մեծ ուշադրություն է դարձվել այդ պատերազմում Խորհրդային Միության հերոսի կոչման արժանացած, շքանշաններով և մեդալներով պարգևատրված հայ հրամանատարների ու զինվորների՝ հրետանավորների, օդաչուների, բժիշկների և տարբեր զորատեսակների կազմում մարտնչած հայորդիների կատարած սխրանքների վերհանմանը:

Գիրքը նախատեսված է ընթերցող լայն շրջանների, ինչպես նաև զինծառայողների համար և մեծ չափով կնպաստի նրանց ռազմահայրենասիրական դաստիարակության գործին:

ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 978-5-8080-0705-5
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2008 թ.

ԱՌԱՋԱԲԱՆ

Խորհրդա-ֆիննական պատերազմը, որը երկրորդ համաշխարհային պատերազմի բաղկացուցիչ մասն է, տեղի է ունեցել 1939թ. նոյեմբերի 30-ից մինչև 1940թ. մարտի 13-ը: Արևմտյան պատմագրության մեջ այն մտել է Ձմեռային պատերազմ անունով: Խորհրդային պատմագրությունը տարիներ շարունակ մոռացության էր տվել այդ պատերազմի գիտական պատմության ուսումնասիրությունը քաղաքական կոռեկտության տեսանկյունից, քանի որ երկրորդ աշխարհամարտն ավարտվելուց հետո Ֆինլանդիան ԽՍՀՄ-ին դաշնակից հարևան պետություն էր, որի հետ հաստատվել էին բարիդրացիական հարաբերություններ:

Հիշեցնենք, որ դեռևս Հայրենական մեծ պատերազմի նախօրյակին Մոսկվայում պետական քաղաքական հրատարակչությունը 1941 թ. հրատարակել էր «Մարտերը Կարելյան պարանոցում» հոդվածների և ակնարկների ժողովածուն[1], իսկ հետպատերազմյան տարիներին այդ հիմնահարցին հպանցիկ անդրադարձվել էր Հայրենական մեծ և երկրորդ համաշխարհային պատերազմների պատմության բազմահատորյակներում[2]: Խորհրդա-ֆիննական պատերազմի առանձին հարցեր լուսաբանվել էին նաև առանձին հեղինակների հուշագրություններում, Լենինգրադի զինվորական օկրուգի շտաբի պատմության և ԽՍՀՄ արտաքին քաղաքականությունը լուսաբանող փաստաթղթերի ժողովածուում և այլն[3]: Ինչ վերաբերում է

---

[1] Бои на Карельском першейке. М.: Огиз. Госполитиздат. 1941.

[2] История Великой Отечественной войны Советского Союза. 1941–1945. Т. 1. М., 1963; История Второй мировой войны. 1939–1945. Т. 3. М.: Воениздат, 1974.

[3] *А. Исбих, Ю. Корольков.* 123-я в боях с белофиннами, М., 1941; *Н.Ф. Кузмин* На стране мирного труда (1921–1940гг.). М., 1959; *К.А. Мерецков.* На службе народу. Страницы воспоминаний. М., 1968 (գիրքը 1971թ. լույս է տեսել նաև հայերեն Երևանում «Հայաստան» հրատարակչության կողմից); История ордена Ленина Ленинградского военного округа. М., 1974; История внешней политики СССР. 1917–1976. Изд. 3-е. Т. 1. М., 1976.

խորհրդահայ պատմագրությանը, ապա այն բոլորովին չէր զբաղվել Խորհրդա-ֆիննական պատերազմի պատմության և մասնավորապես այդ պատերազմին հայ ռազմիկների մասնակցության հիմնահարցի լուսաբանման խնդրով: Սակայն Խորհրդային Միության հայ հերոսների մասին լույս տեսած գրքերում լուսաբանվել են առաջին չորս հայ հերոսների սքխրանքները, որոնք այդ բարձրագույն կոչմանն են արժանացել Խորհրդա-ֆիննական պատերազմում դրսևորած խիզախության համար[4]:

Խորհրդային Միության փլուզումից հետո ռուսական պատմագրությունը սկսեց ակտիվորեն զբաղվել Խորհրդա-ֆիննական պատերազմի պատմության ուսումնասիրությամբ: Մեկը մյուսի հետևից սկսեցին լույս տեսնել մի շարք հեղինակների մենագրություններ, հոդվածների ժողովածուներ, որտեղ նորահայտ արխիվային փաստաթղթերի ու նյութերի հիման վրա լուսաբանվում էր պատերազմի քաղաքական պատմությունը, մեծ ուշադրություն էր դարձվում պատերազմի նախօրյակին Խորհրդային Միության և Ֆինլանդիայի միջև եղած հարաբերություններին, երկու երկրների միջև ծագած կոնֆլիկտին, պատերազմի ծագման պատճառներին, ցամաքում, օդում և ծովում տեղի ունեցած մարտական գործողություններին, պատերազմի մասնակից երկու կողմերի բանակների սպառազինության, հագուստի, զենքի տեսակներին և այլն[5]: Բոլորովին վերջերս Մոսկվայում լույս է տեսել Իգոր Պիխալո-

---

[4] Գիրք հերոսների մասին, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1964; Книга о героях. Ер., Изд-во АН АрмССР. 1985.

[5] *Липатов П.* Зимняя война. Формы одежды, снаряжение и вооружение участников Советско-финляндской войны 1939–1940. М.: Изд-во ТОО «Рейтаръ, 1996. Зимняя война 1939–1940. Кн. 1. М.: Наука, 1999; Кн. 2. М.: Наука, 1999 (ответ. редакторы: О.А. Ржашевский, О. Вехвиляйнен); Советско-финская война 1939–1940гг. Хрестоматия. Составитель Е.Е. Тарас. Минск: Харвест, 1999; Б. Соколов. Тайны финской войны. М.: Вече, 2000; Советско-финлядская война 1939–1940. Т. 1,2. СПб.: Полигон, 2003. Составтели: П.В. Петров, В.Н. Степанов.

վի «Մեծ զրպարտված պատերազմ» մենագրությունը, որտեղ հեղինակը, հենվելով պատմական իրադարձությունների ճշմարտացի վերլուծության և պատմահամեմատական օբյեկտիվ հետազոտության մեթոդի վրա, համոզիչ կերպով հողմացրիվ է անում ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Ռուսաստանում և արտասահմանում տնաբույս սունկերի պես բազմացած պատմության կեղծարարներին, մերժում նրանց կողմից անամոթաբար կատարված մի շարք պատմական փաստերի չարամիտ խեղաթյուրումներ, պատմական ճշմարտության տեսանկյունից մերկացնում հակախորհրդային մոլուցքով կուրացած կեղծարարների բազմաթիվ «պատմական հայտնագործություններ», որոնց թվում նաև Խորհրդա-ֆիննական պատերազմի պատմությունը խեղաթյուրողներին[6]:

Վերոհիշյալ բոլոր աշխատությունները սկզբնաղբյուրներ են հանդիսացել մեզ համար, որոնք օգտագործել ենք՝ քննական մոտեցում ցուցաբերելով: Բացի թվարկված գործերից՝ մեր ուսումնասիրության համար, հատկապես Խորհրդա-ֆիննական պատերազմում հակամարտող կողմերի կրած մարդկային կորուստների մասին, արժեքավոր, հավաստի թվական փաստեր ենք քաղել Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի գլխավոր շտաբի պետ գեներալ-գնդապետ Գ.Ֆ. Կրիվոշեևի խմբագրությամբ հրատարակված «Գաղտնիության մակագիրը հանված է. ԽՍՀՄ զինված ուժերի կորուստները պատերազմներում, մարտական գործողություններում և զինված ընդհարումներում» և նույն հեղինակի կազմած «Ռուսաստանը և ԽՍՀՄ-ը XX դարի պատերազմներում» վիճակագրական ուսումնասիրություններից[7]:

---

[6] *Пыхалов И.* Великая оболганная война (2-е изд., испр. и допол.). М.: Яуза («Русская правда»). 2006 (глава 6, Советско-финляндская война: порожение или победа? С. 165–205).

[7] Гриф секретности снят. Потери вооруженных сил СССР в войнах, боевых действиях и военных конфликтах. Статистическое исследование. М.: Воениздат, 1993; Россия и СССР в войнах XX века. Статистическое исследование. М.: ОЛМА–Пресс, 2001.

Այնուամենայնիվ մեր ուսումնասիրության կարևոր աղբյուրագիտական հիմքն են կազմել Ռուսաստանի Դաշնության ռազմական, պետական, պաշտպանության նախարարության կենտրոնական և ռազմաբժշկական փաստաթղթերի արխիվների համապատասխան ֆոնդերի փաստաթղթերն ու նյութերը, հատկապես Խորհրդա-ֆիննական պատերազմում իրենց հերոսական սխրանքներով աչքի ընկած հայ ռազմիկների պարգևատրման թերթիկները, հայ հրամանատարների ղեկավարությամբ մարտնչած առանձին զորամիավորումների, զորամասերի ու ստորաբաժանումների պատմական տեղեկանքները, մարտական գործողությունների մատյանները, սպաների ու բժիշկների անձնական գործերն ու ծառայողական ցուցակները:

Հրապարակում եղած համապատասխան գրականության և արխիվային նյութերից բացի՝ մեր ուսումնասիրության համար կարևոր աղբյուրագիտական հիմք է հանդիսացել պարբերական մամուլը: Հիմնովին օգտագործել ենք «Ведомости Верховного Совета СССР» հանդեսի 1939–1941թթ. համարները, որտեղից հավաստի տեղեկություններ ենք քաղել Խորհրդա-ֆիննական պատերազմում պարգևատրված հայ ռազմիկների մասին: Համապատասխան բացը լրացնելու նպատակով օգտվել ենք նաև «Известия», «Правда», «Комсомольская Правда», «Красная Звезда», «Սովետական Հայաստան» թերթերից: Առանձին մարտական գործողությունների մասին տեղեկություններ ենք քաղել «Военно-исторический журнал»–ից և ռազմական հանրագիտարաններից:

Բացի վերոհիշյալ աղբյուրներից՝ մենք օգտագործել ենք նաև Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի կենտրոնական և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության «Մայր Հայաստան» ռազմապատմական թանգարանների համապատասխան նյութերը:

Ինչպես նշեցինք, հայ պատմագրությունն այսօր հատուկ չի զբաղվել Խորհրդա-ֆիննական պատերազմին հայ ռազմիկների մասնակցության հիմնահարցի լուսաբանմամբ, և մեր

աշխատությունն առաջին փորձն է լրացնելու պատմության սպիտակ էջերը: Այս առումով էլ մեր ուսումնասիրությունը նորություն է հայ պատմագրության մեջ: Հայ պատմաբաններն առանձնակի շնորհակալ գործ են կատարել՝ լուսաբանելով Երկրորդ համաշխարհային պատերազմի հիմնական մասը կազմող՝ Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմի (1941–1945թթ.) պատմության, մասնավորապես այդ պատերազմին հայ ժողովրդի մասնակցության հիմնահարցի լուսաբանման ասպարեզում: Հիշատակության են արժանի պատմական գիտությունների դոկտորներ Արամայիս Մնացականյանի, Արշավիր Հակոբյանի, Խիկար Բարսեղյանի, Աշոտ Հարությունյանի, Աբել Սիմոնյանի, Վլադիմիր Ղազախեցյանի, Գրիգոր Աբրահամյանի, Մարատ Սահակյանի, Կլիմենտ Հարությունյանի, պատմական գիտությունների թեկնածուներ Երվանդ Խալեյանի, Քնարիկ Գրիգորյանի, Սիմոն Սարգսյանի, Ժորա Գրիգորյանի, Լիզա Մարտիրոսյանի և Գոհար Խաչատրյանի կատարած շնորհակալ աշխատանքն այդ բնագավառում: Սակայն Երկրորդ համաշխարհային պատերազմի բաղկացուցիչ և սկզբնական մասը հանդիսացող Խորհրդա-ֆիննական պատերազմի պատմության և այդ պատերազմին հայ ռազմիկների մասնակցության հիմնահարցը դեռևս գիտականորեն չի լուսաբանվել հայ պատմագրության կողմից: Հարկավոր է ուսումնասիրել Երկրորդ համաշխարհային պատերազմի պատմությունն ամբողջապես և ընդհանրացնող աշխատություն պատրաստել այդ պատերազմին հայ ժողովրդի մասնակցության վերաբերյալ: Ուստի սույն աշխատությունը հայ պատմաբանների կատարած շնորհակալ աշխատանքի շարունակությունն է: Այնուհետև պետք է գիտականորեն ուսումնասիրվի Երկրորդ համաշխարհային պատերազմի եզրափակիչ փուլի՝ Խորհրդա-ճապոնական պատերազմի պատմության և այդ պատերազմին հայ ռազմիկների մասնակցության հիմնահարցը և մեկ ընդհանրացնող ուսումնասիրություն ստեղծել Երկրորդ համաշխարհային պատերազմին հայ ժողովրդի մասնակցության վերաբերյալ:

Հայ պատմագրության կարևորագույն խնդիրներից մեկը մեր ժողովրդի մարտական հերոսական ավանդույթների վերհանումն ու քարոզումն է: Անտարակույս է այդ հզոր հոգևոր գործոնի նշանակությունը մատաղ սերնդի, Հայկական բանակի անձնակազմի ռազմահայրենասիրական դաստիարակության գործում: Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբնական շրջանի մաս կազմող Խորհրդա-ֆիննական պատերազմին հայ ժողովրդի զավակների մասնակցությանը նվիրված մեր ուսումնասիրությունը կոչված է նպաստելու հայ պատմագրության այդ պատվավոր առաքելության կատարմանը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԽՈՐՀՐԴԱ-ՖԻՆՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Միջազգային դրությունը և պատերազմի պատճառները

Խորհրդա-ֆիննական պատերազմի պատճառներն ավելի լավ հասկանալու համար հարկ ենք համարում մի համառոտ ակնարկով անդրադառնալ ֆիննական պետության ստեղծման և խորհրդա-ֆիննական տարածքային վեճերի պատմության վրա: Ինչպես հայտնի է, երբևէ իրենց պետականությունը չունեցած ֆիննական ցեղախմբերը 12–14-րդ դարերում աստիճանաբար զավթվել էին Շվեդիայի կողմից: Գտնվելով շվեդների տիրապետության տակ՝ Ֆինլանդիան չուներ ո՛չ վարչական և ո՛չ էլ նույնիսկ մշակութային ինքնավարություն: Պաշտոնական լեզուն համարվում էր շվեդերենը: Այդ լեզվով էին խոսում ազնվականները և հասարակության ամբողջ կրթված խավը: Շվեդերենով տարվում էր ուսուցումը, տպագրվում էին գրքեր: Ֆիննական լեզուն համարվում էր հասարակ մարդկանց լեզու: 1808–1809 թթ. ռուս-շվեդական պատերազմն ավարտվելուց հետո, 1809 թ. սեպտեմբերի 5 (17)-ին Ֆրիդրիխսհամում, Ռուսաստանի և Շվեդիայի միջև կնքված հաշտության պայմանագրի համաձայն, Ֆինլանդիայի ողջ տարածքը և Ալանդական կղզիները անցնում էին Ռուսաստանին[1]: Ֆինլանդիայի ղեկավարն էր ռուսական կայսրը, որի ներկայացուցիչն էր Ֆինլանդիայում գեներալ-նահանգապետը: 1853–1856 թթ. Ղրիմի պատերազմում պարտություն կրելուց հետո Ռուսաստանը ստիպված էր ընդլայնել Ֆինլանդիայի ինքնավարությունը: Հրավիրվեց ֆիննական սեյմը, շվեդերենի հետ պետական լեզու ճանաչվեց ֆիններենը, անցկացվեց դրամական բարեռորոգում, որի հետևանքով Ֆինլանդիան ստա-

---

[1] Военный энциклопедический словарь. М.: Воениздат. 1984. С. 647.

ցավ իր արժեդրամը: Ֆինլանդական մեծ իշխանության մեջ մտցվեց Վիբորգի նահանգը, որը Շվեդիայից Ռուսաստանին էր անցել 1721 թ. Նիշտադյան հաշտության պայմանագրով: Դրա հետևանքով Ֆինլանդիայի վարչական սահմաններն ընդհուպ մոտեցան Սանկտ Պետերբուրգին: Սակայն Ֆինլանդիան լրիվ անկախություն ստացավ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո՝ 1917 թ. դեկտեմբերի 31-ին: Ֆինլանդիայում հաստատվեց միապետություն, և թագավոր կարգվեց գերմանական թագաժառանգ Ֆրիդրիխ Կարլ Հեսսենցին: Առաջին համաշխարհային պատերազմում Գերմանիայի պարտությունից հետո Ֆինլանդիան հռչակվեց հանրապետություն: 1918–1920 թթ. Ֆինլանդիան ոչ միայն պաշտպանում էր Խորհրդային Ռուսաստանի դեմ ուղղված օտարերկրյա ինտերվենցիան, այլև 1918 թ. մայիսի 15-ին պատերազմ հայտարարեց Խորհրդային Ռուսաստանին: Ֆիննական բանակի հրամանատար գեներալ Կ.Գ. Մաններհայմը դեռևս նույն թվականի փետրվարի 23-ին հայտարարել էր, որ սուրն այնքան ժամանակ չի դնի պատյան, մինչև բոլշևիկներից չազատագրի Արևելյան Կարելիան[2]: Մարտի 15-ին նա հաստատել էր այսպես կոչված «Վալլենիուսի պլանը», որով նախատեսվում էր ռուսական տարածքների զավթում՝ մինչև Սպիտակ ծով – Օնեգայի լիճ – Սվիր գետ – Լադոգայի լիճ գիծը: Բացի այդ Ֆինլանդիային էին անցնում նաև Պեչենգայի մարզը և Կոլայի թերակղզին, իսկ Պետրոգրադը պետք է ստանար «ազատ քաղաքի» կարգավիճակ, ինչպիսին ուներ այն ժամանակ Դանցիգը: Նույն օրը ֆիննական զորքերի գլխավոր հրամանատարը հրաման տվեց կամավորներից կազմված էքսպեդիցիոն կորպուսին մտնել Արևելյան Կարելիա: Ինչպես արդեն նշեցինք, 1918 թ. մայիսի 18-ին Ֆինլանդիայի կառավարությունը պատերազմ հայտարարեց Խորհրդային Ռուսաստանին: Նույն թվականի հոկտեմբերի 15-ին ֆիննական զորքերը զավթեցին Խորհրդային Ռուսաստանին պատկանող Ռեբոլսկյան գավառը: 1919 թ. հուն-

---

[2] *Пыхалов И.* Великая оболганная война. С. 165–205.

վարին ֆինները զավթեցին նաև Ռեբոլսկյան գավառի սահմանակից Պորոսոզյորսկայա շրջանը:

1919 թ. ապրիլին ֆիննական զորքերը, շարունակելով հարձակումը, զավթեցին Հարավային Կարելիայի մի մասը և մոտեցան Կարելիայի մայրաքաղաք Պետրոզավոդսկին: Սակայն Խորհրդային Ռուսաստանի կարմիր բանակը, որն այդ ժամանակ ստիպված էր մի քանի ճակատներում մարտնչել ինչպես Անտանտի երկրների զորքերի, այնպես էլ Դենիկինի, Կոլչակի և Յուդենիչի դեմ, կարողացավ, այնուամենայնիվ, 1920 թ. հուլիսի 14–21-ին ֆիններին դուրս քշել Պետրոզավոդսկի շրջանից: Սակայն Ռեբոլսկյան և Պորոսոզյորսկայա շրջանները մնացին ֆիններին ձեռքում: Նույն թվականի հոկտեմբերի 14-ին Խորհրդային Ռուսաստանը, որ թուլացել էր Անտանտի երկրների արշավանքներից և ներքին հակահեղափոխության դեմ պայքարելուց, ստիպված էր էստոնական Յուրև (Տարտու) քաղաքում կնքել այսպես կոչված Յուրևյան հաշտության պայմանագիրը, որի համաձայն Ֆինլանդիային էր անցնում Պեչենգայի (Պետսամո) մարզը, որը նախկինում երբեք չէր եղել Ֆինլանդիայի կազմում: Հաշտության պայմանագրի համաձայն ֆիններին պետք է իրենց զինված ջոկատները ետ քաշեին Ռեբոլսկյան և Պորոսոզյորսկայա շրջաններից: Սակայն նրանք այնտեղ մնացին մինչև 1922 թ. փետրվար և միայն կարմիր բանակի ճնշման տակ հեռացան Կարելիայից: Չնայած դրան, ֆիններին ձեռքում էր մնացել ամբողջ Վիբորգի մարզը, որը սահմանակից էր Պետրոգրադին: Տեղ-տեղ սահմանը 20–30 կմ մոտենում էր Ռուսաստանի հյուսիսային մայրաքաղաքին, որտեղից ցանկացած պահի հեռահար հրետանին կարող էր անվրեպ կրակել Պետրոգրադի վրա: Հաշտության պայմանագրի կնքումից հետո՝ 1920 թ. դեկտեմբերին, դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին երկու երկրների միջև: Այնուհանդերձ, մինչև 1939 թ. նոյեմբերի վերջը Ֆինլանդիայի արտաքին քաղաքականության մեջ գերակշռում էր հակախորհրդային միտումը: Իսկ երբ 1929–1930 թթ. Ֆինլանդիայում աշխուժացան ֆաշիստական տար-

ները, երկրի կառավարող շրջանները, խրախուսվելով Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի, Ճապոնիայի հակախորհրդային բացահայտ թշնամական քաղաքականությունից, ոչ միայն անցան նրանց կողմը, այլև տենդագին կերպով սկսեցին խորհրդային սահմաններին մոտ կառուցել պաշտպանական ամրություններ, դիմել զանազան սադրանքների: Ֆինլանդիայի կառավարությունը հարմար պահի էր սպասում Խորհրդային Միությունից զավթել ամբողջ Կարելյան և Կոլա թերակղզին, իսկ ԽՍՀՄ կառավարող շրջանները, զգալով Երկրորդ համաշխարհային պատերազմի մոտալուտ վտանգը, ձգտում էին ամեն կերպ ոչ միայն ամրապնդել Լենինգրադի անվտանգությունը, այլև իրենց ազդեցությունը տարածել Լիտվայի, Լատվիայի և Էստոնիայի վրա, Լեհաստանից ետ վերադարձնել Խորհրդային Ռուսաստանից 1920 թ. պատերազմում զավթած Արևմտյան Ուկրաինայի ու Բելոռուսիայի հողերը, որոնք պանական Լեհաստանին էին անցել Ռիգայի հաշտության պայմանագրի հետևանքով (1921 թ. մարտի 18)[3]:

1930-ական թվականների վերջերին միջազգային դրությունը խիստ լարված էր ինչպես Եվրոպայում, այնպես էլ Ասիայում: Առաջին համաշխարհային պատերազմից պարտված դուրս եկած Գերմանիան, օգտագործելով կապիտալիստական երկրների միջև եղած սուր հակասությունները, կարողացավ 1920–1930-ական թվականներին ոչ միայն վերականգնել իր ռազմական արդյունաբերությունը, այլև 1933 թվականի հունվարի 30-ին, երբ իշխանության գլուխ անցավ ռազմատենչ ֆաշիստական ազգային սոցիալիստական կուսակցությունն Ադոլֆ Հիտլերի գլխավորությամբ, բռնել պատերազմի ուղին: 1935 թ. մարտին, խախտելով Վերսալյան խաղաղության պայմանագրի ռազմական հոդվածները, որով Գերմանիային արգելվում էր մեծ բանակ ունենալ, ֆաշիստական Գերմանիայի կառավարությունը մտցրեց համընդհանուր զինա-

---

[3] Советская военная энциклопедия. Т. 7. М.: Воениздат, 1979. С. 124.

պարտություն և սկսեց արագացված տեմպերով նախապատրաստվել նոր պատերազմի: Վերսալյան պայմանագրի խախտումը Գերմանիայի կողմից չհանդիպեց Անգլիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի կառավարությունների հակահարվածին, որոնք մտադրություն ունեին ֆաշիստական Գերմանիան ուղղել ԽՍՀՄ-ի դեմ: Հենց այդ պատճառով էլ նրանք չխանգարեցին Գերմանիային 1936 թ. գարնանը զորքերը մտցնել ապառազմականացված Հռենոսյան մարզ և դուրս գալ Ֆրանսիայի սահմանը: 1936 թ. հուլիսին ֆաշիստական խռովություն սկսվեց Հանրապետական Իսպանիայում: Հիտլերը և Մուսոլինին (ֆաշիստական Իտալիայի ղեկավարը) բացահայտ ինտերվենցիա սկսեցին այդ երկրում և օգնեցին գեներալ Ֆրանկոյին զավթել իշխանությունը:

1935–1936 թթ. Իտալիան, խոշոր տերությունների լուռ համաձայնությամբ, զավթեց Եթովպիան: Դրանից առաջ Հեռավոր Արևելքում Չինաստանի դեմ ագրեսիա էր սկսել Ճապոնիան: 1936 թ. նոյեմբերի 25-ին Գերմանիան և Ճապոնիան ստորագրեցին համագործակցության պայմանագիր, որին 1937 թ. նոյեմբերին միացավ Իտալիան: Այն 1940 թ. սեպտեմբերի 27-ին ամրապնդվեց նոր համաձայնագրով, որի հետևանքով ստեղծվեց Բեռլին–Հռոմ–Տոկիո ռազմաքաղաքական միությունը: Այդ նույն ժամանակ Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունները գաղտնի բանակցություններ էին վարում ֆաշիստական Գերմանիայի հետ, ձգտում նրան և նրա դաշնակիցներին ուղղել ԽՍՀՄ-ի դեմ: Հիտլերը հմտորեն օգտվեց դրանից և 1938 թ. մարտին զորքեր մտցրեց Ավստրիա և «անաղմուկ» այն միացրեց Գերմանիային: Խորհրդային Միությունը հանդես եկավ այդ ագրեսիայի դեմ, սակայն Ազգերի լիգան չտեսնելու տվեց սուվերեն Ավստրիայի վերացումը: 1938 թ. սեպտեմբերի 29-ին Մեծ Բրիտանիայի պրեմիեր-մինիստր Չեմբեռլենը, Ֆրանսիայի պրեմիեր-մինիստր Դալադիեն, իտալական կառավարության ղեկավար Մուսոլինին ժամանեցին Մյունխեն (Գերմանիա) և հաջորդ օրը Հիտլերի հետ կնքեցին մյունխենյան պայմանագիրը, որով, առանց Չեխոսլո-

վակիայի կառավարության մասնակցության և համաձայնության, Գերմանիային հանձնվեց չեխական Սուդետական մարզը (40,9 հազ. քառ. կմ, 5 միլիոն բնակչությամբ): 1939 թ. մարտին ֆաշիստական Գերմանիան ամբողջությամբ օկուպացրեց Չեխիան և Մորավիան, այնտեղ ստեղծելով իր պրոտեկտորատը: Սլովակիան հայտարարվեց «անկախ» պետություն, որտեղ հաստատվեց ֆաշիստական ռեժիմ[4]:

Խորհրդային Միության կառավարությունը դիմեց Ֆրանսիայի և Անգլիայի կառավարություններին՝ համատեղ միջոցառումներ մշակելու ագրեսորի դեմ: Սկսված բանակցությունները ձգձգվեցին, և պարզ երևում էր, որ Ֆրանսիան և Անգլիան բացահայտորեն ձգտում են Գերմանիային ուղղել ԽՍՀՄ-ի դեմ, որպեսզի «չոր» դուրս գան այդ պատերազմից: Իսկ Հեռավոր Արևելքում ծագած պատերազմի նոր օջախը սպառնում էր ԽՍՀՄ-ին երկու ճակատով բախվել արևմուտքում՝ Գերմանիայի և Արևելքում՝ Ճապոնիայի հետ:

1937 թ. ամռանը ճապոնական ռազմամոլները ներխուժեցին Չինաստանի հյուսիսային և կենտրոնական շրջանները և նվաճեցին բազմաթիվ քաղաքներ ու նավահանգիստներ: Համաշխարհային պատերազմի սպառնալիքը գնալով աճում էր: 1938 թ. հուլիս-օգոստոսին Խասան լճի (Չինաստանի և Կորեայի հետ ԽՍՀՄ պետական սահմանագծում) և 1939 թ. հուլիս-սեպտեմբերին Խալխին-Գոլ գետի (Մոնղոլիայի Ժողովրդական Հանրապետություն) շրջանում ճապոնական ռազմամոլները զինված սադրանքներ կազմակերպեցին Խորհրդային Միության դեմ, սակայն ջախջախիչ պարտություն կրեցին Կարմիր բանակի կողմից: Դա ստիպեց Ճապոնիայի կառավարությանը 1941 թ. ապրիլի 13-ին ԽՍՀՄ և նրա դաշնակից ՄԺՀ-ի հետ կնքել չեզոքության մասին պայմանագիր[5]:

Իսկ դրան 1939 թ. օգոստոսի 23-ին Մոսկվայում նախոր-

---

[4] Советская военная энциклопедия. Т. 5. М.: Воениздат, 1978. С. 456–457.

[5] *Широкород А.Б.* Русско-японские войны 1904–1945г. Минск: Харвест, 2003. С. 561–562.

դել էր ԽՍՀՄ և Գերմանիայի միջև 10 տարի ժամանակով չհարձակվելու մասին կնքված պայմանագրի և դրան կից գաղտնի արձանագրության ստորագրումը: Գաղտնի արձանագրության համաձայն երկու տերությունները որոշում էին իրենց ազդեցության գոտիներն ու շահերը Մերձբալթիկայում և Լեհաստանում[6]:

Օգտվելով Եվրոպայում իր համար ստեղծված բարենպաստ պայմաններից, ֆաշիստական Գերմանիան 1939 թ. սեպտեմբերի 1-ին հարձակվեց Լեհաստանի վրա, որով սկիզբ դրվեց Երկրորդ համաշխարհային պատերազմին: Սեպտեմբերի 3-ին Անգլիան և Ֆրանսիան պատերազմ հայտարարեցին Գերմանիային, սակայն իրականում այդ օրերին ոչինչ չձեռնարկեցին ագրեսորի դեմ: Գերմանական զորքերը, օգտվելով ընձեռնված հնարավորությունից, կարճ ժամանակաընթացքում ծնկի բերեցին լեհական բանակը և շարժվեցին դեպի արևելք: Սեպտեմբերի 17-ին խորհրդային զորքերն անցան լեհական սահմանը և մինչև սեպտեմբերի 25-ը խորացան դեպի արևմուտք՝ ազատագրելով Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելոռուսիայի այն շրջանները, որոնք 1920 թվականին Խորհրդային Ռուսաստանից զավթել էր պանական Լեհաստանը: Դրա հետևանքով ԽՍՀՄ արևմտյան սահմանները արևմուտք տարվեցին 250–350 կմ: Ազատագրված տարածքները, որտեղ ապրում էին ավելի քան 7 միլիոն ուկրաինացիներ և 3 միլիոն բելոռուս, միավորվեցին Ուկրաինական և Բելոռուսական Խորհրդային հանրապետություններին: Սեպտեմբերի 28-ին ԽՍՀՄ-ի և Գերմանիայի միջև կնքվեց մի նոր պայմանագիր, որից հետո Ի.Վ. Ստալինը հնարավորություն ստացավ լուծելու Ֆինլանդիայի հետ տարածքային վիճելի հարցերը, ուղիներ փնտրել ԽՍՀՄ հյուսիսարևմտյան սահմանների անվտանգության ամրապնդման համար: 1939 թ. հոկտեմբեր-նոյեմբերին ԽՍՀՄ կառավարությունն առաջարկեց Ֆինլան-

---

[6] Великая Отечественная война 1941–1945. Кн. 1. М.: Наука, 1998. С. 26–28.

Գրադարան

դիայի կառավարությանը՝ խորհրդա-ֆիննական պետական սահմանագիծը, որն անցնում էր Լենինգրադից հյուսիս 32 կմ հեռավորության վրա, 20–25 կմ ետ քաշել դեպի Կարելյան պարանոց և ԽՍՀՄ-ին զիջել 2761 քառ. կմ տարածք: Դրա փոխարեն Խորհրդային Միությունը Ֆինլանդիային էր զիջում երկու անգամ ավելի շատ տարածք՝ 5529 քառ. կմ Խորհրդային Կարելիայից[7]: Միաժամանակ առաջարկվում էր կնքել փոխադարձ օգնության պայմանագիր: Սակայն Ֆինլանդիայի կառավարությունը Անգլիայի և Ֆրանսիայի դրդմամբ չհամաձայնվեց այդ առաջարկության հետ և սկսեց ավելի ամրապնդել Լենինգրադից 32 կմ հյուսիս, Կարելյան պարանոցում, գերմանական, անգլիական, ֆրանսիական և բելգիական զինվորական մասնագետների օգնությամբ 1927–1939 թթ. կառուցված երկարատև ամրությունների համակարգը, այսպես կոչված «Մաններհայմի գիծը», որն ուներ 135 կմ երկարություն և 90 կմ խորություն, որտեղ տեղադրված էին 2000-ից ավելի երկարատև կրակակետեր (դոտեր և դզոտներ): Ֆիննական կառավարությունը չհամաձայնվեց նաև իրեն ձեռնտու պայմաններով վարձակալական հիմունքներով ԽՍՀՄ-ին տալ Ֆիննական ծոցում գտնվող Խանկո թերակղզին, որը համատեղ ուժերով կօգտագործվեր Ֆիննական ծոցը երրորդ պետության ագրեսիայից պաշտպանելու նպատակով: Նոյեմբերի վերջերին հաճախակի դարձան խորհրդա-ֆիննական սահմանամերձ շրջանում տեղի ունեցող սադրիչ դեպքերը: Նոյեմբերի 26-ին Մայնիլա գյուղի մոտ ֆիննական հրետանին կրակ բացեց խորհրդային տարածքի վրա, որի հետևանքով զոհվեցին 4 և վիրավորվեցին 9 կարմիրբանակայիններ: Երկու օր անց՝ նոյեմբերի 28-ին, ֆինները նման սադրիչ գործողություններ իրականացրին Ռաբոչի և Սրեդնի թերակղզիների միջև ընկած պարանոցում: Նույն բանը կրկնվեց նաև Սորտավալայի շրջանում: Այդ ամենն ստիպեցին Խորհրդային Միության կառավա-

---

[7] Советско-финляндская война 1939–1940. Т. 1. СПб.: Полигон, 2003. С. 21.

ությանը նոյեմբերի 28-ին չեղյալ հայտարարել 1920 թ. հոկտեմբերին Յուրև (Տարտու) քաղաքում կնքված հաշտության պայմանագիրը և նոյեմբերի 30-ին պատերազմ հայտարարել Ֆինլանդիային[8]: Արևմտյան տերությունները մեծ աղմուկով ընդունեցին այդ ակտը և դեկտեմբերի 14-ին Ազգերի լիգայի խորհուրդը, որն իր կազմում ուներ 15 անդամ, 7 կողմով (Անգլիա, Ֆրանսիա, Բելգիա, Բոլիվիա, Եգիպտոս, Հարավաֆրիկյան Միություն և Դոմինիկյան Հանրապետություն) քվեարկեց Խորհրդային Միությանը Ազգերի լիգայից վտարելու մասին (մյուս 8 երկրները կամ ձեռնպահ էին մնացել քվեարկությունից, կամ էլ չէին մասնակցել դրան): Դրանից հետո արևմտյան տերությունները սկսեցին Ֆինլանդիային առատորեն զենք ու զինամթերք մատակարարել: Չորս ու կես ամսից փոքր-ինչ պակաս ժամանակաընթացքում տեղի ունեցած պատերազմում միայն Ֆրանսիան Ֆինլանդիային տվեց 145 ինքնաթիռ, 496 հրանոթ, 5 հազար գնդացիր, 400 հազար հրացան և 20 միլիոն փամփուշտ: Իր հերթին Անգլիան Ֆինլանդիային տվեց 101 ինքնաթիռ, 114 հրանոթ, 185000 արկ, 200 հակատանկային հրանոթ, «Վիկկերս» տիպի 100 գնդացիր, 50000 գազ պարունակող արկեր, 15700 ավիառումբ, ինչպես նաև մեծ քանակությամբ հանդերձանք ու համազգեստ: Բացի այդ Ֆինլանդիա եկան 11600 օտարերկրացի կամավորներ, որոնցից՝ 8680 շվեդ, 944 դանիացի, 693 նորվեգացի, 364 ամերիկացի ֆիններ և 346 հունգարներ: Պատերազմի հենց առաջին օրվանից ֆիննական զորքերի գլխավոր հրամանատար մարշալ Մաններհայմի շտաբում էր գտնվում ֆրանսիական զինվորական առաքելությունը փոխգնդապետ Գանևալի և գեներալ Կլեման-Գրանկուրի գլխավորությամբ: Ֆրանսիացի մասնագետների հիմնական նպատակն էր ամեն կերպ Ֆինլանդիան պահել պատերազմական վիճակում[9]: Ֆրանսիան իր դաշնակից Անգլիայի հետ ծրագրել էր Պեչենգայի մոտ համատեղ

---

[8] *Пыхалов И.* Великая оболганная война. С. 182–194.
[9] Նույն տեղում, էջ 198–199:

ուժերով դեսանտ իջեցնել, ինչպես նաև ռմբահարել խորհրդային ռազմավարական կարևոր նշանակության օբյեկտները: Բացի հյուսիսից ԽՍՀՄ-ի վրա հարձակում կազմակերպելու պլանից, անգլիացիներն ու ֆրանսիացիները ծրագրում էին հարավից՝ Անդրկովկասի վրա հարձակվելու նպատակով: Սակայն նրանց պլանները չիրականացան, քանի որ Կարմիր բանակը, չնայած մեծ կորուստների գնով, հաղթեց ֆիններին և ստիպեց նրանց հաշտություն կնքել:

2. Խորհրդա-ֆիննական պատերազմի համառոտ նկարագիրը

ա) Մաններհայմի պաշտպանական համակարգը

Ինչպես նշեցինք, Խորհրդա-ֆիննական պատերազմը սկսվեց 1939 թ. նոյեմբերի 30-ին: Մարտական գործողությունները ընթանում էին հիմնականում Կարելյան պարանոցի շրջանում, որն իրենից ներկայացնում էր Լադոգա լճից մինչև Ֆիննական ծոց ընկած 100 կիլոմետրանոց տարածք: Կարելյան պարանոցի շրջանում խորհրդային զորքերը ծմեռային երեք ամիսների ընթացքում ստիպված էին հաղթահարել այդ ժամանակ աշխարհում ամենաամուր պաշտպանական գոտին, որը հայտնի էր Մաններհայմի գիծ անունով: Ինչպես արդեն նշեցինք, երկարատև ամրությունների այդ համակարգը կառուցվել էր Լենինգրադից 32 կմ հյուսիս, Կարելյան պարանոցի շրջանում՝ անգլիական, գերմանական, ֆրանսիական և բելգիական զինվորականների օգնությամբ՝ 1927–1939 թթ.: Բացի այն, որ այդ երեք պաշտպանական շերտերից բաղկացած գիծն ուներ 135 կմ երկարություն, 90 կմ խորություն, որտեղ տեղադրված էին 2000-ից ավելի երկարատև կրակակետեր (դոտեր և դզոտներ), դրանք իրար հետ կապված էին խրամատներով ու խրամուղիներով, որոնք ունեին ավելի քան 800 ստորգետնյա կազեմաթներ (ամրություններ): Մաններհայմի գծին հարում էր 136 կմ հակատանկային արգելափակոց,

որն ուներ 15–60 կմ խորություն և բաղկացած էր գերանների կուտակների մի քանի շերտերից, փշալարափակոցներից, գրանիտե կարճասյուներից, հակատանկային խանդակներից և քարե զառիվայր պատերից, ականադաշտերից, որոնք փակում էին բոլոր ճանապարհները: Ամրագոտիների համակարգն իրենց մեջ էին ներառել նաև անտառային զանգվածներն ու հազարավոր լճերը, ճահիճներն ու գետերը, գլաքարերն ու բարձունքները, որոնցով բավականաչափ հարուստ էր Ֆինլանդիան: Խորհրդային զորքերի առաջխաղացման համար մեծ խոչընդոտ էին նաև 1–1,5 մետր հաստության ձնե ծածկոցները, ինչպես նաև դաժան սառնամանիքը, որն այդ ձմռանը հասնում էր մինչև մինուս 50 աստիճանի: Այդպիսի պայմաններում հարկավոր էր նախ հաղթահարել ամրացված նախամատույցը, որից հետո ընկած էր պաշտպանության գլխավոր գիծը, որն ուներ 10 կմ խորություն և բաղկացած էր դիմադրության 25 հանգույցներից, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած էր 3–4 հենակետից (2–3 դոտ և 3–5 դզոտ): Ամեն մի հենակետ ուներ մշտական կայազոր՝ բաղկացած մեկ վաշտի կամ գումարտակի չափ զինվորներից: Դաշտային զորքերի դիրքերը պաշտպանված էին հակատանկային և հակահետևակային արգելափակոցներով:

Մաններհայմի պաշտպանական համակարգի երկրորդ գիծն առաջին գլխավոր գծից գտնվում էր 2–15 կմ հեռավորության վրա, և տեղ-տեղ իրար էին միացված առանձին ամրություններով: Մաններհայմի պաշտպանական համակարգի երրորդ գոտին փակում էր Վիբորգ տանող բոլոր ճանապարհները: Իր հերթին Վիբորգը ամրոց-քաղաք էր: Ամբողջությամբ Մաններհայմի գիծը ներառում էր տարբեր դասի և տեսակի երկարատև դիմադրության համար նախատեսված ամրություններ, որոնք ունեին հրանոթային կամ գնդացրային կրակակետեր՝ պաշտպանված զրահապատ տանիքով: Հաճախ ամրությունները բաղկացած էին մի քանի հարկերից: Երրորդ պաշտպանական շերտի մուտքը փակված էր փշալարերի տա-

սը գոտուց, հողի մեջ ամրացված երկաթյա ռելսերի խաչուկներից:

Մաններհայմի պաշտպանական համակարգի բոլոր երեք գոտիներն էլ գտնվում էին թավուտ անտառապատ միջավայրում, որը ծածկված էր ձյան հաստ շերտերով: Ձյունը քողարկել էր սառցակալած գլաքարերը, որոնց վրա տեղապտույտ տալով՝ լռվում էին տանկերը: Ձյունը ծածկել էր նաև լճերի բարակ սառույցը և ճահիճների երեսը՝ չթողնելով, որ դրանք սառչեն մինչև վերջ: Ձյունը քողարկում էր ֆիննական զորքերին օդից և ցամաքից, աղավաղում էր հրետանային կրակի ձայնը՝ խանգարելով հրետանավոր ձայնաչափների աշխատանքը, թյուրիմացության մեջ գցում կրակի տակ հայտնված հետևակին: Այն ժամանակվա ռազմական գիտության բոլոր կանոններով այդպիսի պայմաններում ճեղքել Մաններհայմի անառիկ պաշտպանական համակարգը, համարյա անհնար էր: Սակայն Ի.Վ. Ստալինը խնդիր դրեց Կարմիր բանակի հրամանատարության առջև ճեղքել Մաններհայմի անառիկ ամրությունների գիծը և ստիպել ֆիններին ընդունել Խորհրդային Միության կառավարության պահանջները:

բ) Պաշտպանվող կողմերի ուժերի հարաբերակցությունը

Ֆինլանդիան, որ 1939 թ. ուներ 4 միլիոն բնակչություն, ստեղծել էր 300-հազարանոց բանակ և ռազմականացված երկրապահ (շյուցկոր) ուժեր, որոնց կազմում հաշվվում էր շուրջ 100 հազար մարդ: Ֆիննական Կարելյան բանակը, որի հրամանատարն էր գեներալ Խ.Վ. Էստերմանը, իր կազմում ուներ 7 հետևակային դիվիզիա, 4 առանձին հետևակային և հեծյալ բրիգադ, մի քանի առանձին հետևակային գումարտակներ, որոնք պաշտպանում էին Վիբորգը (Վիիպուրի): Հարավում՝ Բալթիկ ծովի առափնյա շրջաններում, գործում էր ֆիննական զորքերի Ալանդական խմբավորումը: Սորտավալայի շրջանում (Սորտավալա քաղաքը գտնվում է Լադոգա լճի հյուսիսային մասում՝ Պետրոզավոդսկից արևմուտք) էր

գտնվում գնդապետ Պ. Տալվելայի զորախումբը, ինչպես նաև գեներալ Յու.Վ. Խեգգլունդի բանակային կորպուսը: Մարտական գործողությունների կենտրոնական տեղամասում՝ Սուոմուսսալմի շրջանում էր տեղաբաշխված գեներալ Վ. Տուոմպոյի զորախումբը: Լապլանդիայում էր գտնվում գեներալ է. Վալենիուսի զորախումբը: Ընդհանուր առմամբ ֆիններն ունեին 15 դիվիզիա, որոնցից յուրաքանչյուրն ուներ շուրջ 14200 անձնակազմ: Երեք դիվիզիա պահվում էր թիկունքում:

Ֆիննական բանակի հրետանին զինված էր ավելի քան 900 տարբեր տրամաչափերի հրանոթներով ու ականանետներով, որոնց մեջ քիչ չէին անգլիական, գերմանական, ֆրանսիական, չեխական, շվեդական արտադրության ժամանակակից տեսակները: Առափնյա հրետանին զինված էր 10-դյույմանոց թնդանոթների մարտկոցներով: Մաններհայմի գիծը պաշտպանող հրետանավորներն ունեին հստակ կազմակերպված հրետանային կրակ վարելու կարգավորված համակարգ: Հաճախ հրանոթները դիրքավորված էին երկաթբետոնյա ամրոցներում, որտեղ նրանց ոչնչացնելը մեծ դժվարությունների հետ էր կապված:

Ֆինլանդիայի ռազմաօդային ուժերը պատերազմի սկզբին ունեին 270 մարտական ինքնաթիռ, որոնք հիմնականում անգլիական, ֆրանսիական և իռլանդական ծագում ունեին: Ավիացիայի մեծ մասը կազմում էին կործանիչները: Պատերազմի ընթացքում արևմտյան տերությունները Ֆինլանդիային տվեցին ևս 350 ինքնաթիռ, 500 հրանոթ, 6000 գնդացիր, 100000 հրացան, միլիոնավոր փամփուշտ, 2.5 միլիոն արկ, ռազմամթերք և այլ հանդերձանք[10]:

Պատերազմի սկզբին ֆիննական ռազմածովային նավատորմը բաղկացած էր 29 մարտական նավերից, որոնցից սմենահազորներն էին ափամերձ պաշտպանության համար նախատեսված «Վյահնյամեյնեն» և «Իլմարինեն» հածանավերը: Նավատորմում կային նաև 3 հրետանավ, 5 սուզանավ, պա-

[10] Советская военная энциклопедия. Т. 7. С. 419.

հակային ու տորպեդային կատերներ, ականապատող և ականազերծող նավեր, սառցահատներ: Լադոգա լճի և Ֆիննական ծոցի պաշտպանության համար առանձնացված հրետանային համակարգն իրենից ներկայացնում էր մի հզոր ուժ:

Պատերազմն սկսելուց առաջ Ֆիննական ճակատում գործող Կարմիր բանակի զորախումբը Ֆիննական զորքերին թվապես գերազանցում էր երկու, հրետանիով՝ հինգ, ավիացիայով՝ տաս, տանկերով՝ քսանհինգ անգամ: Ֆիննական ռազմաճակատում գործող խորհրդային ռազմաօդային ուժերը զինված էին աշխարհում ամենածանր, չորս շարժիչանոց ՏԲ-3 և միջին հեռահարության ԴԲ-3 ռմբակոծիչներով, արագընթաց կործանիչներով, որոնց օդաչուների մի զգալի մասը մարտական հարուստ փորձ էր ձեռք բերել Չինաստանում, Իսպանիայում և Մոնղոլիայում:

Կարմրադրոշ Բալթիական նավատորմը պատերազմի նախօրյակին իր կազմում ուներ «Մարատ» և «Հոկտեմբերյան հեղափոխություն» գծանավերը, «Կիրով», «Լենինգրադ» և «Մինսկ» թեթև հածանավերը, երկու տասնյակ ականակիրներ, տորպեդային կատերներ, պահականավեր, ականազերծիչ նավեր, շուրջ 60 սուզանավեր և այլն:

Լադոգա լճից խորհրդային ցամաքային զորքերին զգալի օգնություն էր ցույց տալիս Լադոգայի լճային ռազմական նավատորմիղը, որը, չնայած իր փոքրաթիվ լինելուն, զինված էր հզոր հրետանային միջոցներով և կարող էր ցամաքային զորքերին ցույց տալ կրակային մեծ աջակցություն: Ավելի քան 1,5 հազար մարտական մեքենաներ ուներ Կարմրադրոշ բալթիական նավատորմը՝ կործանիչներ, հետախույզ օդանավեր, ռմբակոծիչներ, հիդրոպլաններ և այլն:

Խորհրդային կողմից մարտերին մասնակցում էին Լենինգրադի զինվորական օկրուգի զորքերը՝ 2-րդ կարգի բանակային հրամանատար Կ.Ա. Մերեցկովի (հետագայում Խորհրդային Միության մարշալ) գլխավորությամբ (օկրուգի ռազմական խորհրդի անդամն էր Լենինգրադի մարզկոմի և քաղկոմի 1-ին քարտուղար Ա.Ա. Ժդանովը, շտաբի պետը՝ 2-րդ կարգի բանա-

կի հրամանատար Վ.Ի. Սմորոդինովը): Պատերազմի սկզբին օկրուգի զորքերը տեղաբաշխված էին Բարենցի ծովից մինչև ֆիննական ծոց ընկած տարածքում: Մուրմանսկի ուղղությամբ տեղաբաշխված էր 14-րդ բանակը, որը կազմավորվել էր 1939 թ. հոկտեմբերին: Բանակի մեջ էին մտնում 2 հրաձգային դիվիզիա, որոնց օժանդակում էր Հյուսիսային ծովի նավատորմը 2-րդ կարգի ֆլագման Վ.Պ. Դրոզդի հրամանատարությամբ: Կանդալակշա-Ուինտա-Ռեբոլի ուղղությամբ էին գործում 9-րդ բանակի զորքերը, որոնց մեջ էին մտնում 3-րդ հրաձգային դիվիզիաները և առանձին այլ զորամասեր: Պետրոզավոդսկի ուղղությամբ տեղաբաշխված էին 8-րդ բանակի զորքերը 2-րդ կարգի բանակային կոմիսար Գ.Մ. Շտերնի հրամանատարությամբ: Բանակը կազմավորվել էր 1939 թ. հոկտեմբերին, և նրա մեջ մտնում էին 4 հրաձգային դիվիզիաներ: Հիմնական ուղղությամբ՝ Կարելյան պարանոցում, գործում էր 7-րդ բանակը, որի կազմում կային 9 հրաձգային դիվիզիա, 1 տանկային կորպուս, 3 առանձին տանկային բրիգադ, մի շարք հրետանային գնդեր և այլ ստորաբաժանումներ: Բանակի հրամանատարն էր սկզբում 2-րդ կարգի բանակային հրամանատար Վ.Ֆ. Յակովլևը (հոկտեմբեր-նոյեմբեր 1939 թ.), այնուհետև՝ 2-րդ կարգի բանակի հրամանատար Կ.Ա. Մերեցկովը (նոյեմբեր 1939 թ. – ապրիլ 1940 թ.): Բանակը կազմավորվել էր 1939 թ. նոյեմբերին: Նրան ակտիվ աջակցում էր Կարմրադրոշ Բալթյան նավատորմը 2-րդ կարգի ֆլագման Վ.Ֆ. Տրիբուցի հրամանատարությամբ:

զ) Պատերազմական գործողությունների ընթացքը

1939 թ. նոյեմբերի 30-ի առավոտյան ժամը 8-ին Լենինգրադի ռազմական օկրուգի զորքերը կեսժամյա հրետանային պատրաստությունից հետո անցան հարձակման: Ավելի քան 18 հրաձգային դիվիզիա և հինգ տանկային բրիգադ, որոնց կազմում հաշվվում էին 450 հազար զինվոր, 1576 հրանոթ, 1476 տանկ, 2446 ինքնաթիռ, անցան Ֆինլանդիայի պետա-

կան սահմանը և առաջ շարժվեցին: Օկրուգի հրամանատարությունը նախատեսել էր տասը օրվա մեջ կոտրել ֆիններին դիմադրությունը և ստիպել նրանց ընդունել հաշտության պայմանները:

Ամենից ծանր մարտերը տեղի էին ունենում Կարելյան պարանոցում, որտեղ մարտնչում էին 7-րդ բանակի միավորումներն ու զորամասերը: Մինչև դեկտեմբերի 12-ը երկարատև, համառ մարտերից հետո նրանց հաջողվեց ծանր կորուստների գնով առաջ շարժվել 25–65 կմ և դուրս գալ «Մաններհայմի գծի» գլխավոր գոտու դիմաց: Փորձերը՝ ընթացքից ճեղքել հակառակորդի երկարատև պաշտպանության գոտին, արդյունք չտվեցին: Բալթիական նավատորմի նավերը շրջափակեցին Բոտնիկական և Ֆիննական ծովածոցերի ափերը: Սակայն այդ շրջանում ավելին անել չհաջողվեց: 7-րդ բանակի զորքերի առաջխաղացմանը ոչ միայն խանգարում էին 45–50 աստիճանի հասնող սառնամանիքը, սառը դաղող քամին, ձնահյուսերն ու ձյունակույտերը, բարձր ծառերին նստած ֆիննական դիպուկահարները՝ «կկուները», բազմաշերտ արգելափակոցներով, փշալարերով, փոսերով պաշտպանված բազմաթիվ ամուր կրակակետերը, այլև ականային հզոր արգելափակոցները: Ինչպես նշում է 7-րդ բանակի հրամանատար Կ.Ա. Մերեցկովն իր հուշերում, հակառակորդն օգտագործում էր տարբեր բնույթի ականներ՝ հակահետևակային, հակատանկային ու պայթուցիկ մեծ ուժի ֆուգասներ, սովորական արկեր ու ծուղակներ: «Նահանջելիս ֆիններն էվակուացնում էին ամբողջ խաղաղ բնակչությանը, կոտորում էին կամ քշում ընտանի կենդանիներին և ամրացնում թողած վայրերը, – հիշում է Կ.Ա. Մերեցկովը: – Մերթ այստեղ, մերթ այնտեղ, գյուղերում ու ճանապարհների վրա ասես թե շտապելուց թափթփված էին հեծանիվներ, ճամպրուկներ, պատեֆոններ, ռադիոընդունիչներ, ժամացույցներ, դրամապանակներ, պորթսիգարներ: Բավական էր տեղից մի փոքր շարժել իրը, որ պայթյուն լսվեր: Բայց անցնելը վտանգավոր էր նաև այնտեղով, որտեղ թվում էր, թե ոչինչ չկա: Տների աստի-

ճաններն ու շեմքերը, ջրհորները, կոճղերը, ծառերի բները, անտառի կածաններն ու բացատները, ճանապարհի եզրերը տառացիորեն լցված էին ականներով: Բանակը կորուստներ էր կրում: Մարտիկները վախենում էին առաջ գնալ: Անհրաժեշտ էր շտապ կարգով ականների դեմ պայքարի միջոցներ գտնել, այլապես օպերացիան կարող էր ձախողվել: Մինչդեռ դրանց դեմ մենք ոչ մի արդյունավետ միջոց չունեինք և նման արգելափակոցները հաղթահարելուն անպատրաստ էինք»[11]:

Շնորհիվ ձեռնարկած միջոցների՝ շուտով գիտնականների ու ինժեներների ջանքերով կարճ ժամանակամիջոցում ստեղծվեցին ականորսիչներ, որոնք բաշխվեցին համապատասխան սակրային ստորաբաժանումներին:

«Հնգօրյա պատրաստություններից հետո նոր գրոհի գնացինք, – շարունակում է հիշել Կ.Ա. Մերեցկովը, – գրոհեցինք գլխավոր գոտին, բայց անհաջող: Փորձի և այդպիսի ամրությունների ճեղքման համար միջոցների բացակայությունը կրկին իրեն զգալ տվեց: Նման ոչ մի բանի մենք առաջ չէինք հանդիպել: Պարզվեց, որ հակառակորդի պաշտպանությունը ճնշված չէ: Դոտերը լռում էին, իսկ երբ մեր տանկերն առաջ էին սլանում, նրանք կրակ էին բացում և կողքից ու ետևից թնդանոթներով խփում տանկերին, իսկ գնդացիրներով հնձում էին հետևակին, և գրոհը ձախողվում էր: Այն ժամանակվա տանկերը, չունենալով հզոր թնդանոթներ, չէին կարողանում իրենք ճնշել դոտերը և լավագույն դեպքում սեփական իրանով փակում էին նրանց հրակնատները: Պարզվեց նաև, որ չի կարելի գրոհ սկսել հեռվից, չնայած խոր ձյանը, պահանջվում էր գրոհի ելման դիրքերը մոտեցնել դոտերին: Ինժեներային արգելափակոցներում փոքրաքանակ անցումների պատճառով տանկերը կուտակվում էին՝ դառնալով լավ թիրախ: Դաշտային ռադիոկայանների պակասը հրամանատարներին հնարավորություն չէր տալիս օպերատիվ կապ պահպանել: Այդ

---

[11] *Մերեցկով Կ.Ա.*, Ծառայություն ժողովրդին, Եր., «Հայաստան» հրատարակչություն, 1971, էջ 243:

պատճառով էլ տարբեր զորատեսակները վատ փոխգործողության մեջ էին մտնում: Դոտերի ու դզոտների դեմ պայքարելու համար չէին բավականացնում հատուկ գրոհային ջոկատները: Ավիացիան ռմբակոծում էր միայն հակառակորդի պաշտպանության խորքը՝ քիչ օգնելով արգելափակոցները հաղթահարող զորքերին:

Եվ, այնուամենայնիվ, ամենից շատ տհաճություններ էին պատճառում դոտերը: Խփում ենք, խփում, բայց չենք կարողանում քարուքանդ անել դրանք, քանի որ արկերը չեն ծակում դոտերը: Ստալինը զայրացավ, թե ինչու առաջ չենք շարժվում: Նա ընդգծում էր, որ անարդյունավետ պատերազմական գործողությունները կարող են անդրադառնալ մեր քաղաքականության վրա: Մեզ է նայում ամբողջ աշխարհը: Կարմիր բանակի հեղինակությունը ՍՍՀՄ-ի պաշտպանության երաշխիքն է: Եթե երկար կանգնենք-մնանք այդպիսի թույլ հակառակորդի առաջ, ապա դրանով իսկ կխթանենք իմպերիալիստական շրջանների հակասովետական ջանքերը:

Մոսկվայում Ստալինին զեկուցելուց հետո ես կարգադրություն ստացա անմիջականորեն ղեկավարել մարտով հետախուզությունը և գտնել, թե որն է ֆիննական դոտերի գաղտնիքը: Ես հրամայեցի այդ հետախուզությունն անցկացնել երեք ուղղությամբ: Պարզեցինք, թե որտեղ և ինչքան դոտ կա: Բայց ի՞նչ են իրենցից ներկայացնում դրանք: Սակրավորների մի խմբի հետ միասին կանչեցի զինվորական ինժեների և խնդիր առաջադրեցի՝ թափանցել թշնամու թիկունքը, պայթեցնել մի դոտ, ուսումնասիրել նրա ծածկույթը, իսկ բետոնի մի կտոր բերել հետազոտման: Հետո այդ կտորն ուղարկեցինք Մոսկվա: Գիտահետազոտական ինստիտուտն անալիզ արեց ու հայտնեց՝ ցեմենտը «600» մակնիշի է:

Ահա թե ինչու թեթև հրետանին չէր ծակում բետոնը: Բացի դրանից պարզվեց, որ շատ դոտերի մարտական կազեմատները հրակնատների կողմից մի քանի շերտով պատում էին զրահասալերով, իսկ երկաթբետոնյա պատերի ու ծածկերի հաստությունը հավասար էր 1,5–2 մետրի, ընդ որում

դրանք լրացուցիչ կերպով ծածկվում էին ևս 2–3 մետրանոց խտացրած հողաշերտով:

Ես խորհրդակցեցի Վորոնովի հետ[12]: Որոշեցինք նշանառությամբ կրակել մեծ հզորության թնդանոթներով: Առջևի գծին մոտեցրինք գլխավոր հրամանատարության ռեզերվի 203–280 մմ տրամաչափի հրետանին և սկսեցինք ուղիղ նշանառությամբ հարվածել դոտերին ու նրանց հրակնատներին: Գործն իսկույն առաջ գնաց: Ապա հարկ եղավ զբաղվել տարբեր զորատեսակների փոխգործողության կազմակերպմամբ:

Ի դեպ, միայն այդ ժամանակ ես, որպես հրամանատար, առաջին անգամ ստացա անձնական ռադիոկայան: Մշակեցինք (մեզ մոտ առաջին անգամ) գրոհային ջոկատների կազմն ու գործողությունների կարգը՝ ամուր կրակակետերը գրավելու և պայթեցնելու համար: Հետագայում այս փորձը լայնորեն կիրառվեց Հայրենական մեծ պատերազմի տարիներին ամրացված շրջանները ճեղքելիս: Ուժեղացրինք ավիացիայով հետախուզությունը, առաջադրանք տվեցինք լուսանկարել Մաններհայմի գիծը: Սրա վրա գնաց ամբողջ հունվարը: Մինչև փետրվարի սկիզբը վերջապես մենք ունեցանք թշնամու պաշտպանության սխեմայով քարտեզները: Այժմ կարելի էր կազմել նրա ճեղքման իրական պլանը: Այդ պլանի մասին ես զեկուցեցի Ի.Վ. Ստալինին, որը կանչել էր ինձ ու Ժդանովին: Ներկա էին Մոլոտովը, Վորոշիլովը, Տիմոշենկոն, Վորոնովը և Գրենդալը: Առաջարկված պլանը հաստատվեց»[13]:

Այդ նույն ժամանակաընթացքում մարտական գործողությունները համեմատաբար հաջողությամբ էին ընթանում Մուրմանսկի շրջանում, որտեղ գործում էր 1939 թ. հոկտեմ-

---

[12] Ն.Ի. Վորոնովը 1937–1940 թթ. Կարմիր բանակի հրետանու պետն էր: Խորհրդա-ֆիննական պատերազմի ընթացքում գտնվում էր ռազմական գործողությունների շրջանում և ղեկավարում է «Մաններհայմի գծի» ամրությունների ճեղքման մարտերում խորհրդային հրետանու գործողությունները: 1944 թ. նրան շնորհվել են հրետանու գլխավոր մարշալի, իսկ 1965-ին՝ Խորհրդային Միության հերոսի կոչումներ:

[13] *Մերեցկով Կ.Ա.*, Ծառայություն ժողովրդին, էջ 243–247:

բերին կազմավորված 14-րդ բանակը: Հյուսիսային նավատորմի հետ համագործակցելով, բանակի զորամիավորումները 1939 թ. դեկտեմբերին գրավեցին Ֆինլանդիային պատկանող Ռիբուլի և Սրեդնի թերակղզիները, Պեչենգա (Պետսամո) չսառչող նավահանգիստը և փակեցին դեպի Բարենցի ծով ֆիններին ելքը: Դեկտեմբերի վերջերին 14-րդ բանակի զորքերը Ֆինլանդիայի տարածքում խորացան 150–200 կմ: Նրանից հարավ՝ Կանդալակշա-Ուխտա-Ռեբոլ ուղղությամբ գործող 9-րդ բանակի զորքերը ֆիններին պաշտպանության մեջ մխրճվեցին 35–45 կմ, իսկ Պետրոզավոդսկի շրջանում գործող 8-րդ բանակն առաջ շարժվեց 50–80 կմ:

Որպեսզի դյուրացնեն Մաններհայմի գիծը գրոհող զորքերի գործողությունները, Կարելյան պարանոցում 1939 թ. դեկտեմբերի վերջերին կոմկոր Վ.Դ. Գրենդալի գլխավորած օպերատիվ զորախմբի հիման վրա կազմավորվեց 13-րդ բանակը: Նրա կազմի մեջ մտան 3-րդ, 15-րդ և 23-րդ հրաձգային կորպուսները, մի շարք տանկային, հրետանային, ավիացիոն և այլ զորամասեր[14]:

Խորհրդային հրամանատարությունը ձգտում էր ամեն գնով Մաններհայմի գիծը գրավել մինչև գարնանային հեղեղումների սկսվելը: Այդ նպատակով հարկավոր էր անմիջականորեն մարտական գործողությունների գոտում ստեղծել զորքերի ղեկավարման կենտրոնացված ղեկավարություն, մոտ բերել նոր ուժեր և ճշտել հարձակման պլանը: 1940 թ. հունվարի 7-ին Լենինգրադի զինվորական օկրուգի հիման վրա ստեղծվեց Հյուսիսարևմտյան ռազմաճակատը՝ 1-ին կարգի բանակային հրամանատար (1940 թ. մարտից Խորհրդային Միության մարշալ) Ս.Կ. Տիմոշենկոյի հրամանատարությամբ: Ռազմական խորհրդի անդամ նշանակվեց Ա.Ա. Ժդանովը, իսկ շտաբի պետ՝ 2-րդ կարգի բանակային հրամանատար Ի.Վ. Սմորոդինովը[15]: Նույն թվականի փետրվարի 11-ին կազմավոր-

---

[14] Советская военная энциклопедия. Т. 8. М.: Воениздат, 1980. С. 217.

[15] Նույն տեղում, հ. 7, էջ 419:

վեց նաև 15-րդ բանակը՝ 2-րդ կարգի բանակային հրամանատար Վ.Ն. Կարդյամովի հրամանատարությամբ: Բանակի մեջ էին մտնում 8-րդ և 56-րդ հրաձգային կորպուսները, 144-րդ հրաձգային և 119-րդ մոտոհրաձգային դիվիզիաները, 34-րդ թեթև տանկային բրիգադը, մի շարք այլ առանձին զորամասեր: 15-րդ բանակը կազմավորվել էր 8-րդ բանակի հարավային խմբավորման զորքերի հիման վրա և գործելու էր Լադոգա լճի հյուսիսարևելյան ափամերձ շրջանում[16]:

Այսպիսով, վերակազմման աշխատանքներն ավարտվելուց հետո Հյուսիսարևմտյան ռազմաճակատն իր կազմում ուներ վեց՝ 7-րդ, 8-րդ, 9-րդ, 13-րդ, 14-րդ և 15-րդ բանակները: Մաններհայմի գծի ճեղքումը հիմնականում իրականացնելու էին 7-րդ և 13-րդ բանակների զորքերը, որոնք հարձակվելու էին Վիբորգի ընդհանուր ուղղությամբ: Մեկ ամսից ավել տևած նախապատրաստական աշխատանքից հետո՝ 1940 թ. փետրվարի 11-ին, Հյուսիսարևմտյան ռազմաճակատի զորքերը, հրետանային հուժկու նախապատրաստական կրակից հետո, անցան հարձակման: Դրանով սկսվեց Խորհրդա-ֆիննական պատերազմի երկրորդ՝ հաղթական փուլը: Վեց օր տևած համառ մարտերում Մաններհայմի գծի պաշտպանության գլխավոր գոտում 7-րդ բանակի զորքերը ճեղքեցին ֆիննների պաշտպանությունը և սկսեցին առաջ շարժվել: Իրեն գերազանց դրսևորեց գնդապետ Ֆ.Ֆ. Ալյաբուշևի հրամանատարությամբ գործող 123-րդ հրաձգային դիվիզիան: Ըստ 7-րդ բանակի հրամանատար, 2-րդ կարգի բանակային հրամանատար Կ.Ա. Մերեցկովի. «ութ կիլոմետր խորությամբ այդ գոտին ուներ ավելի քան 200 դոտ և շուրջ 1000 դզոտ: Միջին հաշվով ռազմաճակատի յուրաքանչյուր կիլոմետրին ընկնում էր երկուական դոտ և հնգական դզոտ, որոնք իրար հետ միացված էին ինժեներական կառուցումներով պաշտպանված խրամատներով, զանազան արգելափակոցներով, թևային կամ

---

[16] Советская военная энциклопедия. Т. 6. М.: Воениздат, 1978. С. 650.

շեղաձիգ կրակի սիստեմով, իսկ միջլճային և ճահճային ծորակների կարևոր ուղղություններում նրանց խորությունն աճում էր մի քանի անգամ:

Ճեղքելով գլխավոր գոտին, մի քանի կիլոմետր տարածության վրա մենք հաղթահարում էինք զատիչ դիրքերը, որոնցից այն կողմ հանդիպեցինք պաշտպանական նոր գոտու, իսկ ավիացիան ցույց տվեց, որ ութ կիլոմետր այն կողմ գտնվում է երրորդ գոտին: Դրանց հաղթահարման վրա գնաց երկու շաբաթ: Բայց դրանով էլ գործը չվերջացավ: Վիբորգի առաջ կար երկգոտիանոց ամրացված շրջան, որը նախատեսված էր շրջանաձև պաշտպանության համար, իսկ հետախուզությունը հաղորդեց, որ դա ջրանցքով կապված է Սայմա լճի հետ»[17]:

Ձեռք բերած հաջողությունը զարգացնել ընթացքից չհաջողվեց: Ֆիններ համառ դիմադրություն էին ցույց տալիս: Հարձակումը զարգացնելու նպատակով հյուսիսարևմտյան ռազմաճակատի հրամանատարությունը մարտերի մեջ նետեց տանկային զորամասեր: Ֆիննական հրամանատարությունը վախենալով, որ խորհրդային զորքերը կարող են թափանցել Կարելյան բանակի հիմնական խմբավորման թիկունք, փետրվարի 17-ի գիշերը սկսեց իր զորքերի ետ քաշումը առաջին գոտուց՝ երկրորդ պաշտպանական գոտի: Երկրորդ պաշտպանական գոտին ընթացքից ճեղքելու 7-րդ բանակի փորձերը ավարտվեցին անարդյունք: Դրանից հետո ռազմաճակատի հրամանատարությունն այդ ուղղությամբ կատարեց ուժերի վերախմբավորում. այն համալրեց հետևակային, տանկային և, որ ամենից կարևորն է, մեծ տրամաչափի հզոր հրետանային զորամասերով: 1940 թ. փետրվարի 28-ին բանակի զորքերը վերսկսեցին հարձակումը և առաջին իսկ օրը, կոտրելով հակառակորդի դիմադրությունը, առաջ շարժվեցին: Մարտի 2-ին խորհրդային զորքերը դուրս եկան ֆիններ թիկունքային պաշտպանական գոտի և զարգացնելով հարձակումը Վիբոր-

---

[17] *Մերեցկով Կ.Ա.*, Ծառայություն ժողովրդին, էջ 250:

գի ուղղությամբ՝ հյուսիս-արևելքից թևանցեցին Վիբորգյան խմբավորման զորքերին: Հակառակորդը ստիպված եղավ նահանջել ամբողջ ճակատով մեկ: 7-րդ բանակի ձախ թևի զորքերը, հաղթահարելով սառցակալած Վիբորգի ծովածոցը, հյուսիս-արևմուտքից շրջանցեցին Վիբորգի ամրացված շրջանը և կտրեցին Վիբորգ-Հելսինկի խճուղին: Այդ հաղթանակում մեծ դեր խաղաց դիվիրամ Մ.Պ. Կիրպոնոսի գլխավորած 70-րդ հրաձգային դիվիզիան, որի զինվորական կոմիսարն էր գնդային կոմիսար (հետագայում՝ գեներալ-մայոր) Բենիամին Հովհաննեսի Գալստյանը:

7-րդ բանակի հրամանատար Կ.Ս. Մերեցկովն իր հուշագրության մեջ, անդրադառնալով 70-րդ հրաձգային դիվիզիայի հաջողություններին, նշում է. «Բանակի ռազմական խորհրդի անդամ Տ.Ֆ. Շտիկովի հետ միասին ես գնացի դիվիզիա: Դիվիզիայի հրամանատար Մ.Պ. Կիրպոնոսին ասում եմ. – գիշերը հետախուզեք Վիբորգի ամրացված շրջանը, իսկ մենք այստեղ կբերենք մեծ հզորության հրետանային մի գունդ: Կիրպոնոսը որոշեց հյուսիս-արևմուտքից ամրությունների մի մասը շրջանցելու փորձ անել: Առաջ մենք արդեն որոշ զորամասեր ուղարկել էինք սառույցի վրայով, բայց խանգարում էին հալված տեղերը: Մի քանի տանկ ջրասույզ էր եղել: Դիվիզիայի հրամանատարն իր նախաձեռնությամբ կրկնեց փորձը: Նրա տղաները ֆիննական բոլոր ժամապահներին անաղմուկ շարքից հանելու հնարը գտան: Այնժամ Կիրպոնոսն ամբողջ 70-րդ դիվիզիան իսկույն նետեց ծոցի արևմտյան ափը: Եվ երբ առավոտյան ես վերադարձա, ապա այստեղ արդեն ոչ ոքի չգտա: Դա կատարվեց մարտի 4-ին: 70-րդ դիվիզիային ես շնորհակալություն հայտնեցի: Կիրպոնոսի միավորումն ուժեղացրի տրված զորամասերով և արևմտյան ափով նրանց ուղարկեցի Վիբորգ՝ թիկունքից շրջանցելու քաղաքը, ապա հաջողության մասին հայտնեցի Ի.Վ. Ստալինին:

Ուղիղ նշանառությամբ գործել սկսեց հրետանին: Տառացիորեն ճեղքել-անցնելով թշնամու պաշտպանության միջով, 7-րդ բանակը գնում էր դեպի Վիբորգ: Մի քանի օր հետո ինձ

զանգահարեց Ստալինը և խնդիր առաջադրեց. այդ քաղաքը վերցնել երկու-երեք օրում: Մաննեռհայմի գիծը մնացել էր ետևում: Լենինգրադը հեռու էր, այժմ նրան չեն սպառնում. ֆիններից մենք շատ բան չենք ուզում, բայց հաշտության պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է, որպեսզի հակառակորդը համոզվի, որ ճանապարհը դեպի Հելսինկի բաց է, ուստի և Վիբորգի անկումը ֆինների համար վերջին տագնապալի ազդանշանը կլինի, իսկ պատերազմի ձգձգումը ֆրանսիացիներին ու շվեդներին հնարավորություն կտա օժանդակ ուժեր ուղարկել, և մեկ պետության դեմ պատերազմի փոխարեն մենք պայքարի մեջ կմտնենք կոալիցիայի դեմ: Հենց հեռախոսային զրույցի ժամանակ էլ սկսվեց Վիբորգի գրոհը, որն ավարտվեց նրա գրավումով»[18]:

Վիբորգի գրավմանը մեծ չափով նպաստեց նաև 2-րդ կարգի բանակային հրամանատար Վ.Դ. Գրենդալի 13-րդ բանակը, որը նույնպես մարտնչում էր Կարելյան պարանոցում և զգալի ավանդ ներդրեց Մաննեռհայմի գծի ճեղքման գործում: Մինչև 1940 թ. մարտի 13-ը տեղի ունեցած երկարատև, համառ ու կատաղի մարտերից հետո բանակի գլխավոր ուժերը հաղթահարեցին հակառակորդի անանցանելի համարվող պաշտպանական համակարգը, գետանցեցին Վուոկսա գետը և զարգացնելով հարձակումը Կեկսհոլմի ուղղությամբ, դուրս եկան Նոսկուոն լիճ – Սելկյա-Ռեպոլ բնագիծ, կտրելով Վիբորգ-Անտրեա տանող երկաթուղին:

Նույն ժամանակաընթացքում Պետրոզավոդսկի շրջանից դեպի արևմուտք էին արշավում 2-րդ կարգի բանակային հրամանատար (1940 թ. գեներալ-գնդապետ) Գ.Մ. Շտեռնի 8-րդ բանակի զորամիավորումները, սպառնալով հակառակորդին վերցնել շրջապատման մեջ:

1940 թ. փետրվարի 12-ից Լադոգա լճի հյուսիսարևելյան ափամերձ շրջանում մարտերի մեջ մտավ 15-րդ բանակը՝ 2-րդ

---

[18] *Մերեցկով Կ.Ա.*, Ծառայություն ժողովրդին, էջ 250–251 (Վիբորգը գրավվեց 1940 թ. մարտի 13-ին):

կարգի բանակային հրամանատար Վ.Ն. Կուրդյումովի գլխավորությամբ, որը մեծ աջակցություն ցույց տվեց Կարելյան պարանոցում Մաններհայմի գիծը գրոհող զորամասերին՝ իր վրա գրավելով ֆիննական զորքերի զգալի քանակություն:

Մաններհայմի գիծը գրոհող զորքերի հաղթական գործողությունները պայմանավորված էին նաև Մուրմանսկ-Կանդալակշա-Ուխտա-Ռեբոլ շրջանում մարտնչող 14-րդ և 9-րդ բանակների հաջողությամբ, որոնք ոչ միայն իրենց վրա էին ներքաշել ֆիննական զինուժի մի ստվար մաս, այլև դեռևս 1939 թ. դեկտեմբերին գրավելով Ռիբաչի, Սրեդնի թերակղզիները և Պեչենգա (Պետսամո) չսառչող նավահանգիստը փակել էին դեպի Բարենցի ծով ֆիններին ելքը:

Մաններհայմի գիծը հաղթահարած ցամաքային զորքերին զգալի օգնություն ցույց տվեց ավիացիան, ինչպես նաև Կարմրադրոշ Բալթյան նավատորմի նավերի և առափնյա մեծ հզորության հրետանին:

Ֆինլանդիայի կառավարությունը տեսնելով, որ Մաններհայմի գիծը հաղթահարելուց հետո խորհրդային զորքերը կարող են առանց որևէ մի խոչընդոտի կարճ ժամանակաընթացքում գրավել նաև Հելսինկին, ստիպված եղավ 1940 թ. մարտի 12-ին Մոսկվայում ԽՍՀՄ-ի կառավարության հետ կնքել հաշտության պայմանագիր: Հաջորդ օրվանից մարտական գործողությունները դադարեցվեցին:

Հաշտության պայմանագրի համաձայն՝ ԽՍՀՄ պետական սահմանները Լենինգրադից հյուսիս տարվեցին ավելի քան 150 կմ: Խորհրդային Միությունը անցավ ամբողջ Կարելյան պարանոցը՝ Վիբորգ, Կեկսհոլմ, Սուոյարվի, Սորտավալա քաղաքներով, Կուոլայարվիի շրջանը կենտրոնական մասում, Սրեդնի և Ռիբաչի թերակղզիները՝ հյուսիսում: Ֆինլանդիան 30 տարի ժամանակով Խորհրդային Միությանը հանձնեց Խանկո թերակղզին, որտեղ պետք է ստեղծվեր ռազմածովային բազա: Բացի այդ Ֆինլանդիան պարտավորվում էր չմասնակցել ԽՍՀՄ-ի դեմ ուղղված այլ երկրների ռազմական խմբավորումներին:

Խորհրդային Միության կողմից պայմանագիրը ստորագրել էին ժողկոմխորհի նախագահ և արտաքին գործերի ժողկոմ Վ.Մ. Մոլոտովը, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության անդամ Ա.Ա. Ժդանովը և կոմբրիգ Ա.Ա. Վասիլևսկին, Ֆինլանդիայի կողմից՝ Մինիստրների խորհրդի նախագահ Ռիստո Ռյուտին, Յու.Կ. Պասիկիվին, գեներալ Կ.Ռ. Վալդեն և պրոֆեսոր Վյահնե Վոհյոնմաան[19]:

Խորհրդա-ֆիննական պատերազմում տարած հաղթանակը Կարմիր բանակը ձեռք բերեց մեծ կորուստների գնով: Ռուսաստանի դաշնության գլխավոր շտաբի ճշտած տվյալներով պատերազմի ընթացքում Կարմիր բանակի անվերադարձ կորուստները կազմել են 95 348 մարդ, որոնցից 65384՝ սպանված, 14043-ը անհայտ կորած, 1,15921-ը վիրավորվելու հետևանքով հոսպիտալներում մահացած: Այդ նույն ժամանակաընթացքում խորհրդային զորքերի սանիտարական կորուստները կազմեցին 264908 մարդ, որից 188671-ը վիրավոր, 58370-ը հիվանդ, 17867-ը ցրտահարված: Այսպիսով, 105 օր տևած մարտական գործողությունների ընթացքում Կարմիր բանակի ընդհանուր կորուստները կազմել են 360 256 մարդ[20]: Ֆինների կրած կորուստները համեմատաբար քիչ էին՝ 25 000 սպանված և 45 000 վիրավոր, ռմբակոծությունների հետևանքով զոհվել են 25 243 մարդ[21]:

Չնայած մարդկային այդ մեծ կորուստներին, Կարմիր բանակը Խորհրդա-ֆիննական պատերազմի ընթացքում ձեռք բերեց ձմեռային խիստ սառնամանիքների և ձյունառատ եղանակային պայմաններում հզոր ամրացված շրջանի ճեղքման

---

[19] Газ. "Известия". 14 марта 1940. № 60. С. 1.

[20] Гриф секретности снят. Потери Вооруженных сил СССР в войнах, боевых действиях и военных конфликрах. Статистическое исследование. М.: Воениздат, 1993. С. 125; Россия и СССР в войнах XX века. Потери вооруженных сил. Статистическое исследование. М.: «ОЛМА-ПРЕСС», 2001. С. 195–197.

[21] *П.Б. Липатов.* Зимняя война. М.: ТОО «Рейтер», 1996. С. 45; Советско-финская война 1939–1940 гг. Хрестоматия. Редактор-составитель А.Е. Тарас. Минск: «Харвест», 1999. С. 31.

փորձ: Ձեռք բերված մարտական փորձը նպաստեց Կարմիր բանակի մարտավարական և օպերատիվ արվեստի զարգացմանը, զորքերի կազմակերպչական կառուցվածքի, զենքի և մարտական տեխնիկայի բարելավմանը, զորքերի կառավարմանը և նրանց մարտական պատրաստվածության կատարելագործմանը: Միաժամանակ Կարմիր բանակի հրամանատարությունը դառը դասեր քաղեց որոշ զորամիավորումների անհաջողություններից, որոնք արդյունք էին հիմնականում հակառակորդին թերագնահատելու, սեփական ուժերը գերագնահատելու: Առանձին զորամասերի անհաջողությունների մեղքը բարդվեց միայն ստորին մակարդակի հրամանատարության վրա, որոնք հրապարակայնորեն դատապարտվեցին: Այսպես, օրինակ, պատերազմի առաջին փուլում՝ Սուոմուսալմի նավահանգստի մոտ 1939 թ. դեկտեմբերի 28-ից մինչև 1940 թ. հունվարի 7-ը տեղի ունեցած մարտերում բանակի և 163-րդ ու 44-րդ դիվիզիաների հրամանատարության անհամաձայն գործողությունների հետևանքով 44-րդ հրաձգային դիվիզիան ընկավ շրջապատման մեջ և համարյա ամբողջովին ջախջախվեց: Դիվիզիայի ջախջախման ամբողջ մեղքը գցվեց 44-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար Վինոգրադովի, շտաբի պետ Վոլկովի և քաղբաժնի պետ Պախոմենկոյի վրա, որոնք շրջապատումից դուրս գալուց հետո 1940 թ. հունվարի 11-ին բաց երկնքի տակ տեղի ունեցած 50 որպեսանոց դատավարության ժամանակ, որին ներկա էին շրջապատումից մի կերպ դուրս պրծած մարտիկները և այլ զորամասերի անձնակազմեր, երեք հրամանատարները դատապարտվեցին գնդակահարության: Դատավճիռը ի կատար ածվեց տեղն ու տեղը, բոլորի ներկայությամբ[22]:

Չնայած ժամանակավոր անհաջողություններին և մարտի դաշտում կրած վիթխարի կորուստներին, խորհրդային ռազմիկները ձմեռային և բնակլիմայական ծանր պայմաններ-

---

[22] Советско-финская война 1939–1940 гг. Хрестоматия. Редактор-составитель А.Е. Тарас. Минск: «Харвест», 1939. С. 338.

ռում, հատկապես Մաններհայմի գծի անառիկ պաշտպանությունը ճեղքելիս ցուցաբերեցին արիության և տոկունության բազմաթիվ օրինակներ: Մարտերում առավել աչքի ընկած 75 զորամիավորումներ ու զորամասեր պարգևատրվեցին Լենինի, Կարմիր դրոշի և Կարմիր աստղի շքանշաններով: Այսպես, օրինակ, Լենինի շքանշանով պարգևատրվեցին 123-րդ, 70-րդ, 100-րդ, 136-րդ հրաձգային դիվիզիաները, 28-րդ կորպուսային հրետանային գունդը, 39-րդ առանձին թեթև տանկային բրիգադը, Կարմիր դրոշի շքանշանով՝ 7-րդ, 43-րդ, 138-րդ հրաձգային, 86-րդ մոտորահրաձգային դիվիզիաները, 20-րդ և 35-րդ տանկային բրիգադները, 136-րդ և 320-րդ հրետանային գնդերը, 19-րդ, 27-րդ, 28-րդ, 37-րդ, 184-րդ, 205-րդ, 245-րդ հրաձգային և 81-րդ լեռնահրաձգային գնդերը, 7-րդ, 19-րդ, 49-րդ կործանիչ, 10-րդ, 58-րդ, 5-րդ, 18-րդ արագընթաց ռմբակոծիչ գնդերը և այլն[23]: Ավելի քան 50 հազար զինվոր ու սպա արժանացան կառավարական զանազան պարգևների (Լենինի, Կարմիր դրոշի, Կարմիր աստղի շքանշանների, «Արիության համար» և «Մարտական ծառայությունների համար» մեդալների), իսկ 412 խիզախների շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում[24]: Հերոսի կոչման արժանացածների թվում էին Հյուսիսարևմտյան ռազմաճակատի հրամանատար, 1-ին կարգի բանակային հրամանատար (հետագայում՝ Խորհրդային Միության մարշալ) Ս.Կ. Տիմոշենկոն, 7-րդ բանակի հրամանատար, 2-րդ կարգի բանակային հրամանատար (հետագայում՝ Խորհրդային Միության մարշալ) Կ.Ա. Մերեցկովը, 50-րդ հրաձգային կորպուսի հրամանատար, կոմդիվ Ֆ.Դ. Գորելենկոն, 136-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, կոմբրիգ Ս.Ի. Չերնյակը, 70-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, դիվհրամ Մ.Պ. Կիրպոնոսը (հետագայում՝ գեներալ-

---

[23] Бои на Карелском перешейке. М.: Госполитиздат, 1941. С. 411–415; Газ. «Известия», 22 марта 1940. № 67. С. 1; 8 апреля 1940. № 81. С. 1; 12 апреля 1940. № 85. С. 1.

[24] Герои Совеского Союза. Историко-статистический очерк. М.: Воениздат, 1984. С. 27.

գնդապետ) և ուրիշներ: Ըստ զորատեսակների՝ հերոսներից 154-ը հետևակայիններ էին, 76-ը՝ օդաչու, 75-ը՝ տանկիստ, 64-ը՝ հրետանավոր, 19-ը՝ ծովային, 10-ը՝ սակրավոր, մեկը՝ հեծելազորային, 13-ը՝ սահմանապահ: Ըստ ազգային կազմի՝ հերոսներից 284-ը ռուսներ էին, 85-ը՝ ուկրաինացի, 13-ը՝ բելոռուս[25], 4-ը՝ հայ[26], 3-ը՝ վրացի[27] և այլն: Ադրբեջանցիները Խորհրդա-ֆիննական պատերազմում Խորհրդային Միության հերոս չեն ունեցել:

---

[25] Նույն տեղում:

[26] Книга о героях. Ер.: Изд. АН АрмССр, 1985. С. 9–16.

[27] *К. Цкитишвили, Т. Чинчилакашвили.* Герои Совеского Союза из Грузии. Тбилиси: «Сабчота Сакартвело», 1981. С. 236, 280, 321.

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅ ՌԱԶՄԻԿՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱ-ՖԻՆՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

1. Խորհրդային Միության առաջին հայ հերոսները

Խորհրդային Միության հերոսի կոչման արժանացած առաջին հայորդին 7-րդ բանակի 20-րդ տանկային բրիգադի 91-րդ տանկային վաշտի ռադիստ, շարքային Կարապետ Սիմոնի Սիմոնյանն էր: Կ.Ս. Սիմոնյանը ծնվել է 1918 թ. հունիսի 6-ին Թիֆլիս քաղաքում (այժմ՝ Թբիլիսի): Նրա հայրը Արևմտյան Հայաստանի Բիթլիս քաղաքից էր, որը Առաջին համաշխարհային պատերազմից առաջ գաղթել էր Կարս, իսկ Մեծ եղեռնից հետո՝ բնակություն հաստատել Վրաստանի հյուրընկալ մայրաքաղաքում, որտեղ այդ տարիներին հայ բնակչությունը գերակշռում էր իր թվաքանակով: Կարապետը ընտանիքի անդրանիկ զավակն էր և ստիպված էր դպրոցում սովորելուն զուգընթաց աշխատել, որպեսզի որոշ չափով թեթևացնի վեց երեխա խնամող ծնողների հոգսերը: Թբիլիսիի թիվ 94 յոթնամյա դպրոցն ավարտելուց հետո Կարապետը ուսումը շարունակում է երկաթուղային թիվ 3 միջնակարգ երեկոյան դպրոցում, միաժամանակ՝ շարունակում աշխատանքը: 1938 թ. ավարտելով 10-րդ դասարանը, նա զորակոչվում է Կարմիր բանակի շարքերը և ծառայության անցնում Լենինգրադի զինվորական օկրուգում: Կարճ ժամանակամիջոցում ավարտելով կապավոր-հրաձիգների դասընթացները, շարքային Կ.Ս. Սիմոնյանը նշանակում է ստանում նույն օկրուգի 7-րդ բանակի 20-րդ տանկային բրիգադի 91-րդ տանկային գումարտակում որպես ծանր Տ-28 տանկի հրաձիգ-ռադիստ: Սիմոնյանի տանկի անձնակազմը հատկապես աչքի ընկավ Խորհրդա-ֆիննական պատերազմի առաջին փուլում՝ Մաներհայմի գծի առաջապահ գոտին հաղթահարելու մարտերում: 1939 թ. դեկտեմբերի 13-ին տանկի անձնակազմն առաջադրանք էր ստացել ուղեկցել գրոհող հետևակին և ոչնչաց-

նել թշնամու դզոտներն ու դոտերը: Մարտը տեղի էր ունենում Կարելյան պարանոցում մինչև 40 աստիճանի սառնամանիքի պայմաններում: Ահա թե ինչպես է նկարագրել այդ մարտը հայ առաջին հերոսը «Бои на Карельском перешейке» ժողովածուում. «Մեր հսկայական տանկը ռազմաճակատում էր պատերազմի առաջին իսկ օրվանից: Մեկ ամսվա մարտերի ընթացքում մեր անձնակազմը գործել էր լավ համագործակցած և ամուր բարեկամացել էր: Մենք յոթ հոգի էինք. տանկի հրամանատար Վասիլի Գրիգորևիչ Գրուզդևը, մեխանիկ-վարորդ Միխայիլ Լարչենկոն, հրանոթի նշանառու Եվգենի Լուպպովը, տեխնիկ Իվան Կովալը, գնդացրորդներ Բորիս Վոլկովը և Միխայիլ Լոբաստևը և ես՝ հրաձիգ-ռադիստ Կարապետ Սիմոնյանը: Մենք արդեն սովորել էինք լավ մանևրել, հաղթահարել դժվարին արգելքները: Մեր մարտական մեքենան գործում էր դասակի ավանգարդում:

Ռազմաճակատում մենք սկզբում մարտնչել ենք Տերիոկի-Ռայվոլա-Բոբոշինո ուղղությամբ: Գործը, ինչպես ասում են, շատ-շատ էր: Մեր տանկն իր հզոր պողպատյա իրանով ճանապարհին խորտակում էր վիթխարի ծառեր, հաղթահարում խորը գետակներ, բարձր արագությամբ գրավում բարձունքներ, թռչում էր արգելափոսերի վրայով, հաղթահարում կոճղերն ու կարճասյուները և ֆրանսիական ցանցերը:

Մենք արդեն լավ ծանոթացել էինք սպիտակ ֆիններ խորամանկ մարտավարությանը: Հաճախ նրանք մեզ բաց էին թողնում առաջ, չէին կրակում, բայց հենց որ մեր ետևից երևում էր հետևակը, նրանք ինքնաձիգներից ու գնդացիրներից կրակ էին բացում մեր մարտիկների վրա: Մեկ անգամ չէ, որ մեր տանկը հարկադրված էր լինում հետ վերադառնալ, որպեսզի ճնշի թշնամու կրակակետը և օգնի հետևակի առաջխաղացմանը:

Դեկտեմբերի վերջերին, մի քանի օր անընդհատ առաջխաղացումից հետո, մենք այդ օրերին 11 անգամ գրոհեցինք հակառակորդի պաշտպանության գիծը: Մեր տանկային դասակը· առաջադրանք ստացավ հետախուզել թշնամու դիր-

քերը: Մենք համարձակ 15 կմ առաջ անցանք մեր ետևից եկող հետևակից և մոտեցանք թշնամու ուժեղ ամրացված դիրքերին: Այստեղ տեղանքը ծածկված էր ականների և ֆուգասների խիտ ցանցով, և մենք հնարավորություն չունեինք ազատ մանևրելու: Յուրաքանչյուր մետրը գնդակոծվում էր հակառակորդի կողմից: Ի դժբախտություն մեզ, տեսողությունը գերազանց էր պարզկա եղանակի հետևանքով, իսկ ջերմաստիճանը հասնում էր մինուս 40 աստիճան սառնամանիքի:

Եվ ահա, հենց որ մեր տանկը մոտեցավ փոքր գետակի ափին, սպիտակֆինները մեզ դիմավորեցին մրրկային կրակով: Մենք պատասխան կրակ բացեցինք: Հանկարծ մեքենան ցնցվեց. թշնամու արկը խոցեց տանկի զրահը և վիրավորեց մեխանիկ-վարորդ Լարչենկոյի ոտքը: Ղեկավարման լծակը շարքից դուրս էր եկել, տանկը կանգ առավ: Ես շտապեցի վիրավոր ընկերոջս մոտ, օգնություն ցույց տվեցի նրան, ապա կրկին վերադարձա ռացիայի մոտ: Մեր դասակի մյուս տանկերի հետ կապ չկար: Ես այդ մասին զեկուցեցի տանկի հրամանատարին:

– Ոչինչ, մենք կպաշտպանվենք մինչև վերջին փամփուշտը, – ասաց ընկեր Գրուզդևը:

Անշարժացած մեր տանկն իր ողջ վիթխարի զանգվածով կախվել էր գետակի վրա և ֆիննական հրանոթի համար հարմար թիրախ էր: Շրջապատը եռում էր կրակոցներից ու պայթյուններից: Այդ տագնապալից պահին տանկում հնչեցին պրոլետարական հիմնի[1] բառերը: Ոգևորված երգից, մենք կրակում ու տեսնում էինք, թե ինչպես են մեկը մյուսի հետևից լռում թշնամու կրակակետերը: Այդ անհավասար մարտը տևեց քառասուն րոպե:

Հանկարծ տանկի դիտանցքի ճեղքից ես հեռվում ինչ-որ մարդիկ նկատեցի, որ սողալով ձյան վրա գալիս էին դեպի մեզ: Մենք սկզբում մտածեցինք, թե դա մեր հետևակն է գալիս

---

[1] Խոսքը «Ինտերնացիոնալ» երգի մասին է, որ մինչև 1944 թ. նոր տարին ԽՍՀՄ պետական հիմնն էր:

օգնության, և ճիշտ դուրս եկանք: Անչափ մեծ էր մեր ուրախության չափը: Որոշեցինք օգնել հարձակվողներին և սկսեցինք բացել տանկի ներքին դռնակը, որպեսզի դուրս գայինք մեքենայից: Այդպես մենք դուրս եկանք տանկի տակ, վերցնելով մեզ հետ երկու գնդացիր, մնացած գնդացիրների ու հրանոթի փակաղակները: Վիրավոր Լարչենկոյին պառկեցրինք գետնի վրա: Հետո վառեցինք ծուխ առաջացնող գլանակները և գնդացրային կրակ վարեցինք: Ավա՜ղ, ծխածածկոցը մեզ չէր քողարկում թշնամու տեսադաշտից: Լեյտենանտ Գրուզդևը, հրաձիգներ Վոլկն ու Լոբաստևը սպանվեցին: Կենդանի մնացածներս սողում էինք դեպի մեզ օգնության հասնող հետևակի կողմը: Ես քաշելով տանում էի վիրավոր Լարչենկոյին:

Ճանապարհին ես չգտա մեր երկրորդ տանկը, որի հրամանատարն էր ընկեր Զագորուդկոն: Բանից պարզվեց, որ նրա անձնակազմը դիմել էր հնարամտության: Երբ նրանց տանկը վառվել էր, և հնարավորություն չկար մնալ մեքենայի ներսում, նրանք միացրած թողեցին շարժիչը՝ դանդաղ ընթացքի վրա և տանկն ուղղեցին յուրայինների կողմը: Իսկ տանկի անձնակազմը քողարկվելով քայլում էր տանկի առջևից, նրա իրանը որպես վահան սարքած փրկվելով թշնամու գնդակներից: Ես այդ մասին իմացա հետագայում:

Սողալով ես շարժվում էի մերոնց կողմը, երբ հանդիպեցի երկու սանիտարի, որոնց հանձնեցի վիրավոր Լարչենկոյին: Իսկ ես, զինվելով նրա ատրճանակով, հետ վազեցի՝ օգնելու մեր տանկի անձնակազմի մյուս անդամներին: Չնայած գլուխս այդ պահին շշմած վիճակում էր, բայց պարզ գիտակցում էի, որ Կարմիր բանակի զինվորը իրավունք չունի իր ընկերներին թողնել վտանգի մեջ: Ինձ միացան երկրորդ տանկի անձնակազմից ընկերներ Պոլյուտկինը, Կարպովը և այլք, որոնց ազգանունները չեմ հիշում: Այստեղ ինձ շատ պետք եկավ իմ ֆիզիկական բարձր պատրաստվածությունը, որ ես ստացել էի դպրոցում սովորելու տարիներին և մասնակցել էի Թբիլիսիում տեղի ունեցող վազքի մրցումներին: Թշնամու

ուժեղ կրակի տակ և ձյան միջով վազում էի վիրավոր ընկերներիս ուղղությամբ, ընկնում ձյան մեջ, բարձրանում և շարունակում ճանապարհս: Այսպես մենք հասանք մեր տանկային դասակի խփված երրորդ տանկին, որի հրամանատարն էր ընկեր Կոտունովը: Տանկի մոտ մենք գտանք նրան և նրա անձնակազմի անդամներ Սեմեննիկովին և Սմուրիկովին՝ ծանր վիրավոր վիճակում: Մենք նրանց առաջին բժշկական օգնություն ցույց տալուց հետո, տեղափոխեցինք թիկունք:

Հաջորդ օրը մեր զորամասերը ֆիններից ետ խլեցին մեր խփված երեք տանկերը: Հետագայում ես արդեն մարտերին մասնակցեցի որպես տանկի հրամանատար:

Մեր տանկի ողջ անձնակազմին շնորհվեց Խորհրդային Միության հերոսի բարձր կոչում: Նրանցից երեքը զոհվեցին, իսկ չորսը կենդանի են և գտնվում են շարքում»[2]:

Կարապետ Սիմոնյանը և նրա մյուս հինգ ընկերները Խորհրդային Միության հերոսի կոչման արժանացան ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. հունվարի 15-ի հրամանագրով[3]: Տանկի հրամանատար Վ.Գ. Գրուզդևը, անձնակազմի անդամներ Բ.Վ. Վոլկովը և Մ.Ա. Լոբաստևն այդ կոչմանն արժանացան հետմահու: Անձնակազմի մյուս երեք կենդանի մնացած անդամները շարունակեցին մարտնչել ֆինների դեմ և իրենց սխրանքներով նպաստեցին Մաններհայմի գծի ճեղքմանը: Պատերազմի ավարտից մի քանի օր անց Խորհրդային Միության հերոսի Ոսկե աստղ մեդալը և Լենինի շքանշանը հայ առաջին հերոսին և նրա ընկերներին հանդիսավոր պայմաններում Լենինգրադի Սմոլնի պատմական շենքում հանձնեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Մ.Ի. Կալինինը:

Հերոսի կոչմանն արժանանալուց հետո Կարապետ Սիմոնյանն առաջ քաշվեց տանկի հրամանատարի պաշտոնում և

---

[2] Бои на Карельском перешейке. М.: Госмелитиздат, 1941. С. 59–60.

[3] Известия. 16 января 1940. № 13. С. 1.

շարունակեց սարտնչել թշնամու դեմ մինչև պատերազմի հաղթական ավարտը: Ֆիննական մի շարք դոտեր և տասնյակ զինվորներ իրենց մահը գտան հերոս տանկիստի մարտական մեքենայի անձնակազմի վարած դիպուկ կրակից: Չնայած պատերազմի վերջին օրը՝ 1940 թ. մարտի 13-ին, Վիբորգի գրավման ժամանակ հերոս հրամանատարը վիրավորվեց, սակայն նա մնաց շարքում մինչև մարտի հաղթական ավարտը: Ապաքինվելուց հետո Կարապետ Սիմոնյանը որոշ ժամանակ սովորեց ռազմատրանսպորտային ակադեմիայի կատարելագործման դասընթացներում և ավարտելուց հետո 1941 թ. դեկտեմբերից մասնակցեց Հայրենական մեծ պատերազմին: Այնուհետև նա 1942 թ. ավարտում է Թբիլիսիի հրետանային ուսումնարանի կարճատև դասընթացները, իսկ 1943-ին՝ բարձրագույն սպայական ուսումնարանը: Մինչև 1944 թ. հերոս սպան մասնակցում է Կովկասի ճակատամարտին, ապա Ուկրաինայի ազատագրման մարտերին, զորացրվում մայորի կոչումով: Պատերազմից հետո նա երկար տարիներ աշխատել է Վրաստանի ներքին գործերի նախարարության և պետական անվտանգության մարմիններում, ապա որպես ցեխի վարիչ՝ Թբիլիսիի թիվ 1 ուսումնաարտադրական կոմբինատում: Հերոսի Ոսկե աստղ մեդալից ու Լենինի շքանշանից բացի պարգևատրվել էր նաև Կարմիր աստղի շքանշանով, «Մարտական ծառայությունների համար» և այլ մեդալներով: Խորհրդային Միության առաջին հերոս Կ.Ս. Սիմոնյանի կյանքի թելը կտրվել է Թբիլիսիում 1983 թ. դեկտեմբերի 12-ին[4]:

Մեզ հաջողվեց պարզել, որ Խորհրդա-ֆիննական պատերազմում 1939 թ. դեկտեմբերի 13-ի մարտի ժամանակ Կարապետ Սիմոնյանի կողմից փրկված վիրավոր մեխանիկ-վարորդ Միխայիլ Անդրեևիչ Լարչենկոն (ծնված 1914 թ. հունվարի 11-ին Լենինգրադի մարզի Կոլպինո քաղաքում) նույնպես մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, եղել տանկա-

---

[4] Герой Советского Союза. Краткий биографический словарь. М.: Воениздат, 1988. Т. 2. С. 363–464.

յին վաշտի հրամանատար, 1946-ին ավարտել է բարձրագույն սպայական զրահատանկային դպրոցը, հասել կապիտանի աստիճանի: 1987 թ. տվյալներով Խորհրդային Միության հերոս Մ.Ա. Լարչենկոն ապրում էր Լենինգրադում (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ)[5]:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. մարտի 21-ի հրամանագրով Խորհրդա-ֆիննական պատերազմում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության և հերոսության համար Խորհրդային Միության հերոսի կոչում շնորհվեց 7-րդ բանակի հրետանու պետ, դիվհրամ Միքայել Պարսեղովին[6]: Նրա պարգևատրման թերթիկում, որը ստորագրել էին 7-րդ բանակի հրամանատար, 2-րդ կարգի բանակային հրամանատար Կ.Ա. Մերեցկովը և բանակի ռազմական խորհրդի անդամ, դիվիզիոնային հրամանատար Կլեմենտևը և Շտիկովը, գրված էր. «Հակառակորդի պաշտպանական հիմնական ամրագոտու ճեղքման նախապատրաստման և իրականացման, ինչպես նաև դրանից հետո տեղի ունեցած մարտերում բանակի հրետանու գործողությունների լավ կազմակերպման և ղեկավարման համար արժանի է Խորհրդային Միության հերոսի կոչման»[7]:

Մ.Ա. Պարսեղովը ծնվել է 1899 թ. հունվարի 15-ին Լեռնային Ղարաբաղի Ասկերանի շրջանի Մաշադիշեն (այժմ՝ Կոլխոզաշեն) գյուղում՝ բրուտագործի ընտանիքում: 12 տարեկանում զրկվելով ծնողներից, նա թողնում է հայրենի օջախն ու ուսումը և մեկնում Ուզբեկստանի Անդիջան քաղաք՝ հեռավոր ազգականի մոտ: Այնտեղ դեռևս պատանի Միքայելը առավոտից երեկո ծանր ֆիզիկական աշխատանք է կատարում փայտեղենի արհեստանոցում, ապա՝ բամբակազտիչ գործարանում: 1916 թ. նա զորակոչվել է ռուսական բանակի շարքերը և

---

[5] Там же. 1987. Т. 1. С. 848–849.
[6] Известия. 22 марта 1940. № 60. С. 1.
[7] ՌԴ ՊՆԿԱ. ֆ. 33, գ. 793756, գ. 36, թ. 198–199:

մարտնչել Առաջին համաշխարհային պատերազմի Կովկասյան ռազմաճակատում: Հոկտեմբերյան Սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակից հետո նա վերադարձել է Անդիջան և Կարմիր բանակի շարքերում պայքարել խորհրդային իշխանության համար: Նա ծառայում էր Անդիջանի ամրոցում և արդեն ճանաչված հրետանավոր-հրամանատար էր: 1920 թ. օգոստոս-սեպտեմբերին նա հրետանավորի իր գործնական գիտելիքներն ամրապնդեց Տաշքենդի հրետանային դպրոցում և որպես հրետանավոր-հրամանատար մասնակցեց Բուխարայի էմիրի տիրապետության տապալմանը: Կարմիր բանակի Թուրքեստանյան ռազմաճակատի զորքերի ընդհանուր հրամանատարությունն իրականացնում էր Մ.Վ. Ֆրունզեն, իսկ Բուխարան բասմաչներից 1920 թ. սեպտեմբերին ազատագրեց Թուրքեստանյան ռազմաճակատի 1-ին բրիգադան քաղաքացիական պատերազմի հերոս Հակոբ Մելքումովի հրամանատարությամբ: Նրա բրիգադան 1921 թ. Գիսսարի հովտում տեղի ունեցած մարտերում ջախջախեց Էնվեր փաշայի բանդաները, շանսատակ արեց 1915 թ. հայոց Մեծ եղեռնի կազմակերպիչներից մեկին և դրա համար պարգևատրվեց այն ժամանակների համար խորհրդային ամենաբարձր շքանշանով՝ Կարմիր դրոշի երկրորդ շքանշանով[8]: Այդ մարտերին ակտիվորեն մասնակցեց նաև հրետանավոր-հրամանատար, ապագա Խորհրդային Միության հերոս Մ.Ա. Պարսեղովը: Բրիգադի հրամանատարն անմիջապես գնահատեց իր հայրենակից երիտասարդ հրետանավորի խիզախությունն ու մարտավարական ունակությունները և շարքի առաջ նրան շնորհակալություն հայտնեց, ապա գործուղեց հրետանային դասընթացներ՝ կատարելագործելու գիտելիքները: 1922 թ. ավարտելով հրետանային դասընթացները՝ Մ.Ա. Պարսեղովը

---

[8] Советская военная энциклопедия. М.: Воениздат, 1978. Т. 5. С. 239 (ըստ ՌԴ Կենտրոնական ռազմական թանգարանում պահվող նյութերի՝ Էնվեր փաշան սպանվել է 1922 թ. օգոստոսի 4-ին Չագանա կիշլակում Հակոբ Մելքումովի գլխավորած 8-րդ հեծյալ բրիգադի մարտիկների կողմից):

նշանակում ստացավ Թուրքեստանյան զինվորական օկրուգի հրետանային զորամասերից մեկում, որպես կրակային դասակի հրամանատար: Երկու տարվա անբասիր ծառայության ընթացքում հմուտ հրետանավորը առաջ քաշվեց դիվիզիոնի հրամանատարի բարձր պաշտոնում, իսկ 1925 թ. գործուղվեց հրետանու հրամանատարների վերապատրաստման դասընթացներում սովորելու: 1926 թ., ավարտելով դասընթացները, մի քանի տարի ծառայեց տարբեր զորամասերում և հասավ դիվիզիայի հրետանու պետի պաշտոնին: 1931 թ. գերազանց գնահատականներով հանձնելով ընդունելության քննությունները Մ.Ա. Պարսեղովն ընդունվում է Մ.Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիա: Նրա հետ միասին ակադեմիա ընդունվեցին Խորհրդային Միության ապագա մարշալ, Խորհրդային Միության կրկնակի հերոս Ի.Ք. Բաղրամյանը, զրահատանկային զորքերի ապագա մարշալ Պ.Ս. Ռիբալկոն, բանակի գեներալ Ա.Ս. Ժադովը, գեներալ-գնդապետ Լ.Մ. Սանդալովը և ուրիշներ: 1932 թ. ակադեմիայի պետ է նշանակվում Խորհրդային Միության ապագա մարշալ Բ.Մ. Շապոշնիկովը, որն այդ տարիներին հայտնի էր որպես ռազմական գիտության առաջատար տեսաբան և հրատարակել էր «Բանակի ուղեղը» հանրահայտ եռհատորյակը: 1936 թ. գերազանցությամբ ավարտելով ակադեմիան՝ կոմբրիգ Մ.Ա. Պարսեղովը նշանակվում է Լենինգրադյան ռազմական օկրուգ 69-րդ ծանր հրետանային գնդի հրամանատար[9]: Մարտական ուսուցման ասպարեզում ձեռք բերած հաջողությունների համար Մ.Ա. Պարսեղովը 1938 թ. փետրվարի 22-ին պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով, ապա առաջ քաշվում 1939 թ. հոկտեմբերին նոր ձևավորված 7-րդ բանակի հրետանու պետի պաշտոնում: Նրան շնորհվում է նաև դիվիզիայի հրամանատարի կոչում: Խորհրդա-ֆիննական պատերազմում վառ կերպով դրսևորվեցին հրետանավոր հրամանատարի զորահրա-

---

[9] *И.И. Кузнецов.* Маршалы, генералы 1940 года. Иркутск. 2000. С. 272.

մանատարական բարձր ընդունակություններն ու ռազմավարամարտավարական հմտությունները: Բանակի հրետանու գործողությունները հմտորեն կազմակերպելու, Մաններհայմի գծի երկաթբետոնե հզոր ամրությունները հաղթահարելիս ցուցաբերած խիզախության համար 7-րդ բանակի հրամանատար, 2-րդ կարգի բանակային հրամանատար Կ.Ա. Մերեցկովը, ռազմական խորհրդի անդամ Ա.Ա. Ժդանովը դեռևս 1939 թ. դեկտեմբերյան գործողությունների համար դիվիրամ Մ.Ա. Պարսեղովին ներկայացրել էին Լենինի շքանշանով պարգևատրման: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1940 թ. հունվարի 15-ի հրամանագրով դիվիրամ Մ.Ա. Պարսեղովը պարգևատրվեց Լենինի շքանշանով[10]: Առ այսօր զորավար Մ.Ա. Պարսեղովի Խորհրդա-ֆիննական պատերազմում ստացած առաջին Լենինի շքանշանի մասին ոչ մի հիշատակություն չկա: Սույն աշխատության համար արխիվային փաստեր հավաքելու ընթացքում մենք Ռուսաստանի պետական ռազմական արխիվում գտանք հայ ժողովրդի պանծալի զավակի պարգևատրման թերթիկը հայրենիքի ամենաբարձր շքանշանի ներկայացնելու մասին և ապա ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության համապատասխան հրամանագիրը՝ տպագրված ԽՍՀՄ Գերագույն խորհրդի «Известия» պաշտոնաթերթում[11]:

Խորհրդա-ֆիննական պատերազմի ավարտից երեք ամիս անց՝ 1940 թ. հունիսի 4-ին, ԽՍՀՄ Ժողկոմխորհի՝ Կարմիր բանակում գեներալական կոչումներ շնորհելու մասին որոշմամբ առաջինների թվում հրետանու գեներալ-լեյտենանտի կոչում շնորհվեց Մ.Ա. Պարսեղովին[12]:

Հայրենական մեծ պատերազմի սկզբին հրետանու գեներալ-լեյտենանտ, Խորհրդային Միության հերոս Մ.Ա. Պարսեղովը Հարավարևմտյան ռազմաճակատի հրետանու պետն էր:

---

[10] ՌԴ ՊՆԿԱ, ֆ. 37837, ց. 3, գ. 390, թ. 46:
[11] Известия, 17 января 1940. № 14. С. 1.
[12] Известия, 6 июня 1940. № 126. С. 1.

Այդ ռազմաճակատի շտաբի օպերատիվ վարչության պետը նրա վաղեմի դասընկեր գնդապետ Ի.Ք. Բաղրամյանն էր, որի հետ միասին սովորել էին Մ.Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայում: Պատերազմի առաջին ամիսներին, չնայած հարկադրական նահանջի ծանր պայմաններին, ռազմաճակատի հրետանին մեծ կորուստներ պատճառեց հակառակորդին՝ հատկապես 1941 թ. հուլիսի 7-ից մինչև սեպտեմբերի 26-ը տեղի ունեցած Կիևյան պաշտպանական գործողության ժամանակ: Կիևի պաշտպանությունից հետո հրետանու գեներալ-լեյտենանտ Մ.Ա. Պարսեղովը որպես Կալինինի ռազմաճակատի 30-րդ բանակի հրետանու պետ մասնակցել է Մոսկվայի ճակատամարտին (30 սեպտեմբերի 1941 թ. – 20 ապրիլի 1942 թ.)[13]: Այնուհետև նա նշանակվում է Բրյանսկի ռազմաճակատի 40-րդ բանակի հրամանատար և ակտիվորեն մասնակցում Բոլխովի և Օրյոլի ուղղությամբ տեղի ունեցած մարտերին: 1942 թ. հուլիսի 3-ին Մ.Ա. Պարսեղովը նշանակվում է Հեռավորարևելյան ռազմաճակատի, իսկ 1945 թ. օգոստոսից՝ 2-րդ Հեռավորարևելյան ռազմաճակատի հրետանու հրամանատար և այդ պաշտոնում ակտիվորեն մասնակցում է Խորհրդա-ճապոնական պատերազմին (9 օգոստոսի – 2 սեպտեմբերի 1945 թ.): Ճապոնական միլիոնանոց Կվանտունյան բանակի ջախջախման գործում մեծ ներդրում կատարեցին հրետանու գեներալ-լեյտենանտ, Խորհրդային Միության հերոս Մ.Ա. Պարսեղովի ղեկավարած հրետանային զորամիավորումները: Հայրենիքը բարձր գնահատեց տաղանդավոր զորապետի զորավարական տաղանդը՝ նրան պարգևատրելով Սուվորովի 2-րդ և Կուտուզովի 1-ին աստիճանների շքանշաններով[14]: Պատերազմի հաղթական ավարտից հետո նա սովո-

---

[13] Մոսկվայի ռազմաճակատում նրա բանակի հաջողությունների մասին նշվել է Սովինֆորմբյուրոյի 1942 թ. փետրվարի 15-ի առավոտյան հաղորդագրության մեջ (Сообщение Советского Информбюро. М., 1944. Т. 2. С. 106):

[14] ԴԴ ՊՆԿԱ. ֆ. 2-րդ Հեռավորարևելյան ռազմաճակատ, ց. 1620, գ. 251, թթ. 548, 571:

ռել և ավարտել է Գլխավոր շտաբի ակադեմիայի բարձրագույն ակադեմիական դասընթացները, այնուհետև ղեկավարել Հեռավորարևելյան, Հյուսիսային, Բելոմորսկյան և Լենինգրադյան զինվորական օկրուգների հրետանին: 1958 թ. նրան շնորհվել է հրետանու գեներալ-գնդապետի կոչում: 1961 թ. հրետանու գեներալ-գնդապետ Մ.Ա. Պարսեղովը նշանակվում է Լենինգրադի հրետանային ակադեմիայի հրամանատարական ֆակուլտետի պետը և այդ պաշտոնում մահանում՝ 1964 թ. ապրիլի 26-ին: Նա թաղվել է Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) Բոգոսլովսկյան գերեզմանատանը: Բացի հերոսի Ոսկե աստղ մեդալից, նա պարգևատրվել էր Լենինի (3), Կարմիր դրոշի (4), Սուվորովի 2-րդ աստիճանի, Կուտուզովի 1-ին աստիճանի շքանշաններով, բազմաթիվ մեդալներով[15]: ԽՍՀՄ նախարարների խորհրդի որոշմամբ 1965 թ. հոկտեմբերի 14-ից Լենինգրադի Բոգոսլավյան գերեզմանոցում, որտեղ թաղված է Մ.Ա. Պարսեղովը, հուշարձան է կանգնեցվել հերոսի գերեզմանին[16]:

Խորհրդա-ֆիննական պատերազմում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության և հերոսության համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. ապրիլի 7-ի հրամանագրով Խորհրդային Միության հերոսի կոչում շնորհվեց 13-րդ բանակի 50-րդ հրաձգային դիվիզիայի 756-րդ հրաձգային գնդի դասակի հրամանատար, կրտսեր լեյտենանտ Գրիգոր (Գուրգեն) Միքայելի Հայրապետյանին և նույն բանակի 4-րդ հրաձգային 39-րդ գնդի գնդացրային վաշտի դասակի հրամանատարի օգնական, կրտսեր հրամանատար Իսահակ Մարկոսի Մանասյանին[17]: Երկու հերոսներն էլ հրետանու գեներալ-գնդապետ Միքայել Պարսեղովի հայրենակիցներն էին՝ արցախահայեր:

---

[15] *И.И. Кузнецов.* Маршалы, генералы 1940 года. С. 276; Военный энциклопедический словарь. Иркутск, 2000. С. 540.

[16] *А.В. Казарьян.* Война, люди, судьбы. «Айастан», 1975. Т. 1. С. 47.

[17] Известия. 8 марта 1940. № 81. С. 1.

Գուրգեն (Գրիգոր) Միքայելի Հայրապետյանը ծնվել է 1914 թ. օգոստոսի 22-ին Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Մինգրելսկ գյուղում: 1929 թ. Գուրգենն ընդունվում է տեղի յոթնամյա դպրոցը, միաժամանակ աշխատում կոլտնտեսությունում: Դպրոցն ավարտելուց հետո նա 1936 թ. զորակոչվում է Կարմիր բանակի շարքերը: 1938–1939 թթ. Գ.Մ. Հայրապետյանը ավարտում է կրտսեր լեյտենանտների դասընթացները և նշանակվում 75-րդ հրաձգային գնդում որպես դասակի հրամանատար: Այդ զորամասի շարքերում էլ կրտսեր լեյտենանտ Գ.Մ. Հայրապետյանը 1939 թ. սեպտեմբերին մասնակցում է Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելոռուսիայի ազատագրմանը, որոնք դեռևս 1920 թ. Խորհրդային Ռուսաստանից զավթել էր պանական Լեհաստանը: Դրանից հետո կրտսեր լեյտենանտ Գ.Մ. Հայրապետյանը տեղափոխվեց Լենինգրադյան զինվորական օկրուգ և նշանակվեց կոմկոր Վ.Դ. Գրենդալի գլխավորած զորքերի օպերատիվ խմբում որպես 50-րդ հրաձգային դիվիզիայի 756-րդ հրաձգային գնդի դասակի հրամանատար: Ինչպես արդեն նշել ենք, 1939 թ. դեկտեմբերի վերջերին այդ օպերատիվ խմբի հիման վրա կազմավորվեց 13-րդ բանակը, որը 1940 թ. հունվարի 7-ից Հյուսիս-արևմտյան ռազմաճակատի կազմում ակտիվ մասնակցություն ունեցավ Կարելյան պարանոցում Մաններհայմի գծի ամրությունների ճեղքման մարտերին: Ահա թե ինչպես է Գ.Մ. Հայրապետյանը նկարագրել այն մարտը, որի համար ինքն արժանացել է Խորհրդային Միության հերոսի կոչման. «Մեր դիվիզիան տեղաբաշխված էր բարձունքների շղթաներից մեկի վրա, ֆիններինը՝ մյուս: Երկու բարձունքների շղթաների միջև ընկած էր ձորակ: Երբ մեր հետևակը փոքրիկ խմբերով վազեվազ իջնում էր բարձունքի լանջից գրոհելու համար, ֆինները հնարավորություն էին ստանում գրոհողների շարքերը գնդակոծել դիպուկ կրակով, մեծ կորուստներ պատճառել մերոնց և ստիպել նրանց վերադառնալ ելման դիրքեր:

Գիշերային հետախուզության ժամանակ մենք պարզե-

ցինք, որ ֆիննական խրամատների անմիջապես առաջ ընկած է մեռյալ, չգնդակոծվող տարածք: «Եթե իմ գրոհային խմբին հաջողվի անկորուստ հասնել այդ մեռյալ տարածք, – մտածեցի ես, – ապա դրանից հետո մենք կարող ենք ներխուժել նաև ֆինների խրամատները»:

Փետրվարի 11-ին դիվիզիան անցավ հարձակման: Առավոտյան ժամը 5-ին սկսվեց հրետանային նախապատրաստությունը: Այն շարունակվեց 4 ժամ անդադար: Երբ լույսը բացվեց, ես հրաման ստացա իմ գրոհային խմբով ներխուժել թշնամու խրամատները:

Խումբը ելման դիրքեր գրավեց բարձունքի լանջին: Ես քաջ գիտակցում էի, որ եթե մենք փոքր խմբերով վազեվազ իջնենք լանջն ի վար, ապա ֆինները մեզ կգնդակահարեին մինչև ձորակ հասնելը:

Մնացել էր միայն մեկ հնարավորություն. վազել ամբողջ հասակով մեկ, մեծ արագությամբ, մինչև կհասնեինք ձորակի մեռյալ տարածքը:

Ես հենց այդպիսի որոշում էլ ընդունեցի: Առաջ ուղարկեցի մեկ ջոկ, ընդ որում մարտիկներին ուղարկեցի ոչ թե խմբով, այլ բացազատված իրարից 5-6 մետր:

Նայում եմ՝ հաջողվեց: Կատաղի կրակի տակ բոլոր 10 մարտիկներն էլ անվնաս հասան մեռյալ տարածք և դիրքեր գրավեցին ֆինների խրամատների առջև:

Դրանից հետո հարձակման անցավ երկրորդ ջոկը: Եվ դարձյալ հաջող: Ուղարկում եմ նաև երրորդ ջոկը և ահա ամբողջ գրոհային խումբը, բացի ինձանից, գտնվում է տեղում:

Հարկավոր է, որ ես էլ հասնեմ այնտեղ: Ամբողջ թափով վազում եմ ներքև: Բայց ֆիններն արդեն կռահել էին մեր միտքը և ինձ վրա ուղղեցին գնդացրային կրակի տարափ:

Զգալով, որ փոքր-ինչ հապաղելը հավասարազոր է մահվան, վազում եմ ամբողջ շնչով մեկ: Բայց կրակն այնքան ուժեղ էր, որ ինձ չհաջողվեց վազել մինչև մեռյալ գոտի:

Բարձունքի լանջին մի ժամանակ կանգնած էր մի բնակելի շինություն: Այն լրիվ այրված էր, մնացել էր միայն կիս-

ավեր աղյուսե վառարանը: Ես թաքնվեցի ծխնելույզի հետևում: Վառարանն այնպես էին գնդակոծում, որ աղյուսի բեկորները հորդառատ անձրևի նման թափվում էին գլխիս պողպատյա սաղավարտի վրա: Հենց ուզում էի փոքր-ինչ շարժվել, լուցկու նման առկայծում էին գնդակները:

Համարյա քսան րոպե ֆիններն ինձ ստիպեցին թաքնված մնալ վառարանի ծխնելույզի հետևում: Վերջապես նրանք հանգստացան՝ կարծելով, թե ես սպանվել եմ: Օգտվելով պահից, ես դուրս թռա թաքստոցից և վազելով հասա խմբիս:

Մեր և ֆինների միջև ընկած էր շուրջ 30 մետր տարածություն: Լսում եմ նրանց խոսակցությունը, ինձ համար անծանոթ լեզվով հրամանները: Միմյանցից մեզ բաժանում էր երկար ու նեղ մի թումբ:

Գնդակներով նրանք մեզ չեն հասնի: Դրա համար սկսեցին մեզ վրա նետել ձեռքի նռնակներ: Մենք մեր հերթին սկսեցինք թմբից այն կողմ շպրտել ձեռքի նռնակներ: Բայց երկար ժամանակ չենք կարող պատսպարվել թշնամու նռնակներից, հարկավոր է դիմել գրոհի: Իսկ ինչպե՞ս: Խրամատների առջև ընկած թումբը հավանաբար ականապատված է:

Եվ հանկարծ ֆինները, խաբվելով մեր «ուռռաներից», կարծելով, թե մենք արդեն հարձակվել ենք նրանց խրամատների վրա, պայթեցրին իրենց ականադաշտը: Ձյունն ու հողը ծածկեցին մեզ:

Սակայն ուշքի գալով, ես նկատեցի, որ իմ խումբը ողջ է:

Այդ ժամանակ մեր գլխին մի նոր սպառնալիք կախվեց: Ֆիննական գնդակներից մեզ պաշտպանող թումբն ականների պայթյունից հետո չափազանց իջել էր: Այժմ մենք կարող էինք միայն պառկել և չբարձրացնել գլուխներս: Վերկենալու ոչ մի հնարավորություն չկար:

Նայում եմ՝ օդում մեր կործանիչ ինքնաթիռն է: Օդաչուն երևի հասկացավ մեր վիճակը: Ինքնաթիռը խոյահար թռիչքով գրոհեց ֆիննական խրամատները, կրակելով բոլոր գնդացիրներից: Ֆինները թաքնվեցին խրամատների գետնախորշե-

րում: Դրանից էլ ես վայրկենապես օգտվեցի:

Վազում ենք դեպի ֆիննական խրամատները՝ միաժամանակ նռնակներ նետելով այնտեղ: Սպիտակֆիններից ոմանք մահացու վերք են ստանում, ոմանք՝ վիրավորվում, իսկ ոմանք էլ դիմում են փախուստի՝ նետելով զենքերը: Ներխուժում ենք թշնամու խրամատները:

Խրամատների պաշտպանական համակարգում գտնվող 3 դոտեր, հնարավորություն չունենալով գնդացրային կրակով պաշտպանել յուրայիններին, ստիպված էին դադարեցնել կրակը, որովհետև կվնասեին նաև նրանց: Դոտերից դուրս եկան նրանց անձնակազմերը և օգնության շտապեցին խրամատներում կռվող ֆիննական զինվորներին: Ես իմ մարտիկների մի մասին խրամատներով ուղարկեցի աջ, մի մասին՝ ձախ, իսկ ինքս, տեսնելով խրամատների հաղորդակցության համար կառուցված գետնուղին, որը տանում էր դեպի հակառակորդի պաշտպանության խորքերը, ինձ գցեցի այնտեղ, որպեսզի փակեմ թիկունքից օգնության հասնող ֆիններ ի ճանապարհը:

Ուղիղ իմ առջևից փախչում էր ֆինն զինվորը: Ես մի քանի անգամ կրակեցի նրա վրա, բայց չդիպա, քանի որ հաղորդակցության ուղին զիգզագ էր և ձգվում էր դեպի պաշտպանական գոտու խորքերը:

Հանկարծ ես նկատեցի, որ ֆինն զինվորը սուզվեց ձախից փորված մի մեծ սողանցքի մեջ: Ես վայրկենապես կռահեցի, եթե անմիջապես հետևեմ նրան, ապա թաքստոցից կկրակեն ինձ վրա: Սակայն ես արհամարհեցի վտանգը և մտա այդ գետնուղին և առաջ շարժվեցի մթան մեջ: Եվ հանկարծ ես դուրս եմ գալիս լավ լուսավորված գետնափոր մի տան ներսում: Այնտեղ ոչ ոք չկար: Իսկ այլ ճանապարհ չկար:

– Որտե՞ղ է ֆինը: Նա ո՞ւր անհետացավ:

Հրացանս պատրաստ պահած, նռնակը ձեռքիս՝ ես զննեցի սենյակը: Պատի երկայնքով լայն քնատախտակամածներ են, երկհարկանի, ինչպես գնացքի վագոններում: Ավելի բարձր, պատերի երկայնքով ձգվում էին էլեկտրալա-

ների փնջերը: Սենյակի մեջտեղում մի սեղան կար, որի վրա՝ երեք նավթավառ (պրիմուս): Նավթավառների վրա կային երեք զինվորական փոքրիկ կաթսաներ, որոնց մեջ շիլա էր եփվում: Ամենուրեք կույտերով թափված էին հրացաններ, նռնակներ, ատրճանակներ և դաշտային պայուսակներ: Բայց ոչ մի մարդ չկար: Ի՞նչ եղավ ֆինն զինվորը, որին հետապնդում էի:

Այդ պահին ինձ հասան իմ երկու մարտիկները: Կանգնեցին մոտս, հրացանները մարտական վիճակում պահած, սկսեցին զննել սենյակի անկյունները:

Մի անկյունում նկատեցինք շինելների մի ամբողջ կույտ: Նայում եմ և տեսնում. կույտի տակից երևում են թաղիքե երկարաճիտ կոշիկների ծայրերը: Սկզբում ես ուշադրություն չդարձրեցի դրան: Սկսեցի հավաքել սպայական պայուսակները՝ նրանց միջից հանելով փաստաթղթեր, քարտեզներ, որպեսզի ուղարկեմ շտաբ: Եվ հանկարծ գլխումս հարց ծագեց՝ ինչո՞ւ թաղիքե կոշիկների ծայրերը վեր են տնկված: Եթե դրանք դատարկ լինեին, ապա ընկած կլինեին կողքի վրա:

Մոտեցա շինելների կույտին: Աջ ձեռքումս պահել եմ ատրճանակս, ձախ ձեռքով այս ու այն կողմ եմ նետում շինելները: Շինելների կույտի տակ ընկած էր իմ փնտրած ֆինն զինվորի անշնչացած մարմինը՝ ձեռքին ամուր բռնած ատրճանակը: Ինքնասպան էր եղել:

Ես սպայական պայուսակներում գտած փաստաթղթերն ուղարկեցի շտաբ, իսկ ինքս իմ խմբի մարտիկների հետ դիրքեր գրավեցի խրամատում: Սկսեցինք հավաքել ֆինների թողած զենքը: Հավաքվեց հրացանների, ինքնաձիգների, ատրճանակների մի ամբողջ կույտ, գտնվեց նաև երկու հաստոցային գնդացիր: Մենք գնդացիրների փողերն անմիջապես ուղղեցինք ֆինների կողմը: Գնդացիրների մոտ ընկած էին փայտե արկղներ՝ հազարավոր փամփուշտներով լի:

Կամաց-կամաց իմ շուրջը հավաքվեց ձորակ իջած ավելի քան 60 մարտիկ, որոնց հետ ես կարող էի ետ մղել ֆինների հակագրոհները:

Սակայն ֆինները առաջին հակագրոհն սկսեցին միայն

երեկոյան դեմ: Մենք նրանց դիմավորեցինք իրենց իսկ գնդացիրների կրակով: Ֆինների դիրքերը հրետակոծվում էին նաև մեր հրետանու կողմից, այնպես որ ֆինների բանը բուրդ էր: Չհասած մեր դիրքերին՝ նրանք ստիպված էին նահանջել:

Հակագրոհը ետ էր մղված: Բայց ես գիտեի, որ ֆինները ձեռնարկելու են մի նոր գրոհ, ավելի մեծ ուժերով...

Ֆինները երկրորդ հակագրոհը սկսեցին մութ գիշերը: Սառնամանիք էր, բուք, քամի և ձյուն: Ֆինները մեզ վրա երեք կողմից մրրկային կրակ բացեցին: Իմ մարտիկները մարտնչում էին առյուծի նման: Ես մի կողմից մյուս կողմն էի գնում, ոգևորում մարտիկներին, կազմակերպում նրանց գործողությունները: Շուտով ես նկատեցի, որ ֆինները հակագրոհի հիմնական ուղղություն են ընտրել խրամատների միջև ընկած հաղորդակցության զիգզագաձև ճանապարհը: Այստեղ ամենաթեժ մարտերն էին ընթանում: Իմ մարտիկները կրակելով սկսեցին ետ քաշվել:

– Նռնակներ, – գոչում եմ, – ինձ շատ նռնակներ տվեք:

Նռնակներով ես լավ էի կռվում, այդ զենքը վաղուց էի սիրում: Դեռևս մինչև Կարմիր բանակ զորակոչվելս ես հանրապետությունում առաջին տեղն էի գրավել նռնականետման մրցումներում: Նռնականետողի համար սովորաբար լավագույն հեռավորությունը համարվում էր մինչև 68 մետր:

Մարտիկներս ինձ տվեցին նռնակների մի կապոց: Ես հաղորդակցության ուղիների մոտ հարմար դիրք գրավեցի և սկսեցի մեկը մյուսի ետևից հակառակորդի վրա նետել նռնակները: Օգտվելով դրանից՝ իմ խումբը հետ քաշվեց հարմար դիրքեր»[18]: Այդ մարտում Գ.Մ. Հայրապետյանը չնայած վիրավորվեց, սակայն վիրավոր վիճակում պայքարեց մինչև վերջ և մարտում ոչնչացրեց հակառակորդի երեք զինվոր: Միայն մարտն ավարտվելուց հետո նա 1940 թ. փետրվարի 15-ին հայտնվեց հոսպիտալում:

Փետրվարի 11–14-ը Վուոկսի լճի հարավային մասում

---

[18] Бои на Карельском перешейке. С. 265–268.

հակառակորդի 3 դոտեր լռեցնելու, մի քանի տասնյակ ֆիննզինվոր ու սպա ոչնչացնելու և մարտական առաջադրանքը գերազանց կատարելու ժամանակ ցուցաբերած խիզախության համար, ինչպես արդեն նշեցինք, կրտսեր լեյտենանտ Գ.Մ. Հայրապետյանը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. ապրիլի 7-ի հրամանագրով արժանացավ Խորհրդային Միության հերոսի կոչման[19]:

Խորհրդա-ֆիննական պատերազմից հետո լեյտենանտ Գ.Մ. Հայրապետյանը զինվորական ծառայությունը շարունակեց Լենինգրադում և Կիրովի անվան հետևակային ուսումնարանի դասակի հրամանատարն էր: Երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, նա մեկնեց գործող բանակ և ակտիվորեն մասնակցեց Նարվա և Լուգա քաղաքների պաշտպանական մարտերին: 1942 թ. հուլիսից ավագ լեյտենանտ Գ.Մ. Հայրապետյանը մարտնչում էր Անդրկովկասյան, ապա Հյուսիս-Կովկասյան ռազմաճակատներում, հանդիսանում էր 8-րդ առանձին լեռնահրաձգային վաշտի հրամանատարը և իր ալպինիստական ստորաբաժանման գործողություններով օժանդակում էր Մերձծովյան խմբավորման 20-րդ հրաձգային դիվիզիայի և 40-րդ մոտոհրաձգային բրիգադի լեռնանցումների գործին: 1942 թ. դեկտեմբերին Գ.Մ. Հայրապետյանը նշանակվում է 236-րդ հրաձգային դիվիզիայի գումարտակի հրամանատար և մասնակցում Կուբանի ազատագրման մարտերին: 1943 թ. կապիտան Գ.Մ. Հայրապետյանը մարտնչում էր Հայկական 409-րդ հրաձգային դիվիզիայի 814-րդ հրաձգային գնդի շարքերում, որպես գումարտակի հրամանատար: Նա այդ դիվիզիայի շարքերում ակտիվորեն մասնակցում է Ուկրաինայի, Ռումինիայի, Հունգարիայի ազատագրման մարտերին, պարգևատրվում Կարմիր աստղի շքանշանով: 1944 թ. հոկտեմբերին Տիսսա գետն անցնելուց հետո Գ.Մ. Հայրապետյանը մեկնում է Մոսկվա և սովորում «Վիստրել» հրա-

---

[19] Герои Советского Союза. Краткий биографический словарь. М.: Воениздат, 1978. Т. 1. С. 32.

մանատարական դասընթացներում: Պատերազմի հաղթական ավարտից հետո մայոր Գ.Մ. Հայրապետյանը նշանակվում է գնդի հրամանատարի տեղակալ, իսկ 1951-ին տեղափոխվում է Անդրկովկասյան զինվորական օկրուգ, նշանակվում օկրուգի զինվորական բուհերի ավագ հրահանգիչ: Ծառայությանը զուգընթաց 1948–1952 թթ. նա հեռակա սովորում և ավարտում է Մոսկվայի Մ.Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան, ստանում փոխգնդապետի կոչում: Սկսած 1955 թ. փոխգնդապետ Գ.Մ. Հայրապետյանն աշխատում էր Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում՝ որպես ռազմագիտության դասախոս: Բանակից զորացրվելուց հետո նա աշխատել է Երևանի Ռելե, ապա «Երազ» ավտոմոբիլային գործարաններում՝ որպես պահակապետ: 1975 թ. մինչև իր կյանքի վերջը աշխատել է Հայկական ԽՍՀ նախարարների խորհրդին առընթեր Գլխավոր արխիվային վարչությունում՝ որպես քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ: Հերոսի կյանքի թելը կտրվել է 1998 թ. մարտի 14-ին Երևանում: Բացի Հերոսի Ոսկե աստղ մեդալից և Լենինի շքանշանից, նա պարգևատրվել էր 2 Կարմիր աստղ, Կարմիր դրոշի, Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշաններով:

Չորրորդ հերոսը նույնպես Արցախի զավակ էր: Իսահակ Մարկոսի Մանասյանը ծնվել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Խերխան գյուղում 1917 թ. հոկտեմբերի 10-ին: 1933 թ. ավարտելով գյուղի յոթնամյա դպրոցը, պատանի Իսահակը մեկնում է Բաքու, որ իր աշխատանքով փոքր-ինչ թեթևացնի ընտանիքի հոգսերը: Նա աշխատանքի է ընդունվում Բաքվի շինարարական-մոնտաժային գրասենյակում՝ որպես սևագործ բանվոր, հետո՝ ատաղձագործի օգնական, ապա դառնում իր գործի վարպետ՝ հյուսն: Աշխատանքին զուգընթաց ուշիմ պատանին սովորում է երեկոյան բանվորական միջնակարգ դպրոցում: 1938 թ. Ի.Մ. Մանասյանը զորակոչվում է Կարմիր բանակի շարքերը, սովորում կրտսեր հրամանատարների դպրոցում և այն 1939 թ. ավարտելուց հետո սեպտեմբերին մասնակցում Արևմտյան Ուկրաինայի և Արևմտ-

յան Բելոռուսիայի ազատագրմանը, որոնք, ինչպես արդեն նշել ենք, դեռևս 1920 թ. Խորհրդային Ռուսաստանից զավթել էր պանական Լեհաստանը: Երբ 1939 թ. նոյեմբերի 30-ին սկսվեց Խորհրդա-ֆիննական պատերազմը, կրտսեր հրամանատար Ի.Մ. Մանասյանը 13-րդ բանակի 4-րդ հրաձգային դիվիզիայի 39-րդ հրաձգային գնդի շարքերում, որպես գնդացրային դասակի հրամանատարի օգնական, Կարելյան պարանոցում ակտիվորեն մասնակցեց Մաններհայմի գծի ճեղքման ծանր մարտերին: 1940 թ. Վուոկսի գետի հարավային ափի մոտ՝ Յայուրյալյա գյուղի շրջանում, հակառակորդի կրակակետերը ոչնչացնելու, մարտերում ցուցաբերած խիզախության համար հայ քաջորդին արժանացավ Խորհրդային Միության հերոսի կոչման: Ահա թե ինչպես է նկարագրված Մանասյանի սխրանքը նրա պարգևատրման թերթիկում, որը ստորագրել են 39-րդ հրաձգային գնդի հրամանատար, մայոր Կոզլովը, գնդի զինվորական կոմիսար Չեչուրոն, 4-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, կոմբրիգ Միզիչենկոն, դիվիզիայի կոմիսար Լոսկուտովը, 15-րդ հրաձգային կորպուսի հրամանատար, կոմբրիգ Կորոլյովը, կորպուսի կոմիսար Միխայլովը, 13-րդ բանակի հրամանատար, կոմկոր Պարուսինովը և բանակի ռազմական խորհրդի անդամ, կորպուսային կոմիսար Զապարոժեցը. «Սպիտակ ֆիններ դեմ տեղի ունեցած մարտերում ընկեր Մանասյանը գործով ապացուցեց իր նվիրվածությունը հայրենիքին: 1940 թ. մարտի 5-ին 39-րդ հրաձգային գունդը հարձակվում էր Վուոկսի գետից մեկ կիլոմետր հարավ գտնվող Յայուրյալյա գյուղի վրա իշխող բարձունքի ուղղությամբ: Այդ բարձունքի վրա գտնվող հակառակորդի կրակակետերը մեծ խոչընդոտ էին հարձակման անցած ստորաբաժանումների համար: 39-րդ գունդը մեծ դժվարություններ առաջ կանգնեց՝ հասնելով բարձունքի լանջին. հակառակորդի տեղատարափ կրակից շարքից դուրս էր եկել գնդի հրամանատարական կազմի զգալի մասը, և գնդի ստորաբաժանումները հայտնվել էին ճգնաժամային վիճակում: Արագորեն ճիշտ գնահատելով ստեղծված իրադրությունը՝

ընկ. Մանասյանն իր վրա վերցրեց գնդացրային վաշտի հրամանատարությունը: Նրան հաջողվեց իր շուրջը համախմբել վաշտի հաստոցային գնդացիրների անձնակազմերին, ճիշտ կազմակերպեց նրանց համագործակցությունը և դիպուկ կրակով ոչնչացրեց հարձակմանը խանգարող ֆիննական կրակակետերից շատերը: Դրանով իսկ Մանասյանը հնարավորություն տվեց յուրայիններին գրավել բարձունքը: Այն գրավելուց հետո էլ Մանասյանը շարունակեց ղեկավարել գնդացրային վաշտի գործողությունները և հերոսաբար ետ մղեց թշնամու 5 գրոհ:

Տարածքի վրա իշխող բարձունքի գրավումը հնարավորություն ստեղծեց հարևան 50-րդ հրաձգային դիվիզիայի համար հարձակում սկսել Վասիկկասարի և Դյունամասարի կղզիների վրայով: 1940 թ. մարտի 7-ին Վասիկկասարի կղզու վրա տեղի ունեցած մարտում ընկեր Մանասյանը շարունակում էր վարել գնդացրային վաշտի հրամանատարությունը, հմտորեն ղեկավարում գնդացրային կրակը, մեկը մյուսի ետևից շարքից հանում հակառակորդի կրակակետերը: Թշնամու ուժեղ գնդացրային-ականանետային կրակի տակ անձամբ լինում էր գնդացրային հաշվարկների մոտ, ճշտում յուրաքանչյուր անձնակազմի առաջադրանքը: Շնորհիվ ճիշտ վարած գնդացրային դիպուկ կրակի՝ մեկը մյուսի ետևից շարքից դուրս էին գալիս հակառակորդի կրակակետերը, որը հնարավորություն տվեց մեր հետևակին գրավել Վուոկսի գետի հանդիպակաց ափը: Սպիտակ ֆիննների դեմ մղված մարտերում բացառիկ համարձակություն, քաջություն, նախաձեռնություն դրսևորելու համար ընկեր Մանասյանն արժանի է Խորհրդային Միության հերոսի կոչման»[20]:

Խորհրդա-ֆիննական պատերազմի ավարտից հետո Ի.Մ. Մանասյանը սովորում և 1941 թ. ավարտում է Գորկի (այժմ՝ Նիժնի Նովգորոդ) քաղաքի ռազմաքաղաքական ուսումնարանը և 105-րդ հրաձգային գնդի շարքերում լեյտե-

---

[20] ԱԴ ՊՆԿԱ, ֆ. 33, ց. 793756, գ. 10, թթ. 7–8:

նանտի կոչումով մասնակցում Հայրենական մեծ պատերազմին, վիրավորվում մարտերից մեկում: Բուժվելուց հետո նա 1942 թ. մայիս-նոյեմբեր ամիսներին աշխատում է որպես Բաքվի թիվ 1288 հոսպիտալի, ապա Երևանի թիվ 372 հոսպիտալի պետի քաղաքական գծով տեղակալ: 1943 թ. հուլիսին կապիտան Ի.Մ. Մանասյանը գործուղվում է Թբիլիսի՝ «Վիստրել» հրամանատարական դասընթացներում սովորելու: Նույն թվականի աշնանը, ավարտելով դասընթացները, նշանակում է ստանում 26-րդ հրաձգային դիվիզիայի 976-րդ հրաձգային գնդում՝ որպես հրաձգային գումարտակի հրամանատար: 1947 թ. մայոր Ի.Մ. Մանասյանը զորացրվում է Կարմիր բանակի շարքերից և վերադառնում Բաքու: Կուսակցական բարձրագույն դպրոցն ավարտելուց հետո Ի.Մ. Մանասյանը 1949–1952 թթ. աշխատում է Բաքվի Լենինի անվան տեքստիլ կոմբինատում՝ որպես փոխտնօրեն: Այնուհետև նրան աշխատանքի են հրավիրում Ադրբեջանի ներքին գործերի նախարարությունում: Խորհրդա-ֆիննական պատերազմի չորրորդ հայ հերոսի կյանքի թելը կտրվում է Բաքվում 1974 թ. սեպտեմբերի 15-ին[21]:

Վերոհիշյալ 4 հերոսները հայերից առաջիններն էին, որ արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման: Հարկ ենք համարում նշել նաև 12 հայ խիզախների անունները, որոնք, իրենց մարտական մկրտությունը ստանալով Խորհրդա-ֆիննական պատերազմում, հետագայում՝ Հայրենական մեծ պատերազմի տարիներին, դարձան Խորհրդային Միության հերոսներ: Նրանց թվում էին Իվան Ստեփանի Իսակովը (հետագայում՝ Խորհրդային Միության նավատորմի ծովակալ), Համազասպ Խաչատուրի Բաբաջանյանը (հետագայում՝ Զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ), Աշոտ Վաղարշակի Ղազարյանը (հետագայում՝ գեներալ-մայոր), Լազար Սերգեյի Չափչախովը (օդաչու, Հայրենական մեծ պատերազ-

---

[21] Герои Советского Союза. Краткий биографический очерк. Т. 2. С. 34.

մի առաջին հայ հերոսը, զոհվել է 1942 թ. ապրիլի 13-ին), Գարեգին Շեգիի Բալայանը (զոհվել է Դնեպրի անցման ժամանակ 1943 թ. սեպտեմբերի 25-ին: Նրա անունը ԽՍՀՄ պաշտպանության նախարարի՝ 1972 թ. նոյեմբերի 10-ի թիվ 236 հրամանով հավերժ գրանցվել է թիվ 58731 զորամասի 1-ին մոտոհրաձգային գումարտակի անձնակազմի ցուցակում), Սամսոն Մովսեսի Մկրտումյանը (օդաչու, զոհվել է 1943 թ. նոյեմբերի 1-ին), Գուրգեն Միրզայի Արզումանյանը (հեծելազորային, զոհվել է 1943 թ. սեպտեմբերի 22-ին), Ջահան Սարգսի Կարախանյանը (սակրավոր, զոհվել է 1943 թ. դեկտեմբերի 22-ին), Անդրանիկ Խաչիկի Մելքոնյանը (սակրավոր), Աշխարհբեկ Սարգսի Ղազարյանը (հրաձգային դասակի հրամանատարի օգնական), Դավիթ Միսակի Յազիչյանը (տանկիստ) և Գևորգ Արկադիի Առուստամովը (հետախույզ, զոհվել է 1945 թ. հունվարի 22-ին):

2. Լենինի շքանշանով պարգևատրվածները

Ինչպես արդեն նշեցինք, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. հունվարի 15-ի հրամանագրով Կարելյան պարանոցում Մաններհայմի գծի ամրությունների առաջին գոտին ճեղքելու մարտերում 7-րդ բանակի հրետանու գործողությունները հմտորեն ղեկավարելու և ցուցաբերած խիզախության համար Լենինի շքանշանով էր պարգևատրվել դիվիրամ Միքայել Արտեմի Պարսեղովը[22]:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. ապրիլի 7-ի հրամանագրով Լենինի շքանշանով, ավա՜ղ, հետմահու պարգևատրվեց նաև մեկ ուրիշ հայ հրետանավոր՝ 43-րդ հրաձգային դիվիզիայի 200-րդ հաուբիցային հրետանային գնդի հրամանատար, գնդապետ Գարեգին Սահակի Սահակյանը: 1939 թ. դեկտեմբերի 3-ին Ռիիխի-Սյուրյա շրջա-

---

[22] ՌՊՈԱ, ֆ. 37837, ց. 3, գ. 390, թ. 46; Известия. 17 января 1940. № 14. С. 1.

նում հակառակորդի տեղատարափ հրացանային-գնդացրային կրակի տակ, դրսևորելով անձնական խիզախություն, գնդապետ Սահակյանը կանգնեցրեց խուճապի մատնված հետևակայիններին և ճիշտ ժամանակին արձակած հրետանային կենտրոնացված կրակով լռեցրեց թշնամու կրակակետերը և հնարավորություն ստեղծեց հետևակին առաջ շարժվել ու գրավել հարմար դիրքեր: Դեկտեմբերի 11-ին Մուոլաա կոչվող տեղամասում գնդապետ Սահակյանը, անձամբ ղեկավարելով մարտկոցների կրակը, ճնշեց հակառակորդի 4 հրանոթից բաղկացած մեկ հրետանային մարտկոցի կրակը, ոչնչացրեց 2 գնդացրային կրակակետ՝ իրենց անձնակազմերով, և պայթեցրեց զինամթերքի խոշոր պահեստը: Դեկտեմբերի 18-ին Օյնալայից արևելք, հայտնաբերելով հակառակորդի հրետանային դիտակետը, ուղղորդեց մարտկոցներից մեկի կրակը և ոչնչացրեց այն: Նույն խիզախությամբ էր գործում խիզախ հրետանավորը նաև դեկտեմբերի 20-ին՝ Օյնալայի ամրացված շրջանի գրավման մարտում: Շնորհիվ հմուտ հրամանատարի գրագետ գործողությունների, հակառակորդի ամրացված շրջանի կրակակետերը մեկը մյուսի ետևից շարքից դուրս էին գալիս հրետանային դիպուկ կրակի հետևանքով, քարուքանդ էին լինում խրամատներն ու բլինդաժները, ոչնչացվում այնտեղ գտնվող կենդանի ուժն ու տեխնիկան: Օրվա վերջին հակառակորդի Օյնալայի ամրացված շրջանը գրավվեց: Գնդապետ Սահակյանի հրետանին մեծ ավերածություններ պատճառեց հակառակորդին նաև 1940 թ. հունվար-փետրվարի մարտերում: Սակայն հրետանու հմուտ հրամանատարին բախտ չէր վիճակվել տեսնել հաղթանակը: Նա հերոսաբար զոհվեց իր հրամանատարական կետում՝ 1940 թ. փետրվարի 20-ին, Ռոկկա բնակավայրի շրջանում գնդի հրետանու գործողությունները ղեկավարելիս: Գ.Ս. Սահակյանը պատերազմից առաջ բնակվում էր Լենինգրադում, ծնվել էր 1903 թ., կուսակցական էր, պարգևատրված էր ԲԳԿԲ 20-տարին մեդալով[23]:

---

[23] ՌՊՈԱ, ֆ. 37837, ց. 3, գ. 545, թ. 1:

Խորհրդային Միության Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. ապրիլի 11-ի հրամանագրով Լենինի շքանշանով պարգևատրվեց նաև 7-րդ բանակի 7-րդ հրաձգային դիվիզիայի հրետանային գնդի մարտկոցի հրամանատար, ավագ լեյտենանտ Հայկ Գրիգորի Ղազարյանը[24]: Նրա պարգևատրման թերթիկում, որը ստորագրել են գնդի հրամանատար մայոր Մալմիգոն, դիվիզիայի հրամանատար կոմբրիգ Բերզինը, բանակի հրամանատար 2-րդ կարգի բանակային հրամանատար Մերեցկովը և ուրիշներ, նշված է. «Խոտինենի շրջանում 1940 թ. փետրվարի 7-ին տեղի ունեցած մարտում հրետանային երկու դիպուկ համազարկով ոչնչացրեց հակառակորդի գնդացրային դասակը, որը դուրս էր եկել բաց կրակային դիրք և դիմահար կրակ էր բացել մեր գնդի վաշտերից մեկի ուղղությամբ, որն առաջադրանք էր ստացել շրջափակել թշնամու դզոտը: Շնորհիվ ավագ լեյտենանտ Հայկ Ղազարյանի հրետանային մարտկոցի ժամանակին և արդյունավետ աջակցության, վաշտը հաջողությամբ կատարեց առաջադրանքը: Վիբորգի համար 1940 թ. մարտի 10-ին տեղի ունեցած մարտում Ղազարյանի մարտկոցի դիպուկ կրակով ոչնչացվեց հակառակորդի մեկ դիտակետ, որը խնամքով քողարկված էր եկեղեցու զանգակատան կատարին, ինչպես նաև ուղիղ նշանառությամբ կրակող ֆիննական մեկ հրանոթ: Մարտկոցի գործողությունները հաջողությամբ ղեկավարելու և մարտերում ցուցաբերած խիզախության համար ավագ լեյտենանտ Հ.Գ. Ղազարյանն արժանի է պարգևատրման Լենինի շքանշանով»[25]:

Ո՞վ է այդ հերոս հրետանավորը, որտե՞ղ է ծնվել, ի՞նչ ճակատագիր է ունեցել նա: Մոսկվայի Ռուսաստանի պետական ռազմական արխիվում մենք այդ պատասխանը չգտանք: Սակայն մենք որոշեցինք մեր ուսումնասիրությունը շարունակել Մոսկվայի մարզի Պոդոլսկ քաղաքում տեղակայված

---

[24] Ведомости Верховного Совета СССР. 6 июня 1941. № 24. С. 4.
[25] ՌՊՈԱ. ֆ. 37837, g. 3, գ. 462, pp. 288–289:

Ռուսաստանի դաշնության պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվում, որին մենք բավականաչափ քաջածանոթ ենք մեր երեսունհինգամյա անընդմեջ աշխատանքից: Եվ մենք չսխալվեցինք: Մեր ուսումնասիրությունը Պոդոլսկի ռազմական արխիվում պսակվեց հաջողությամբ: Մենք արխիվի 11-րդ բաժնում, որտեղ արժեքավոր տվյալներ են պահվում Կարմիր բանակի շարքերում ծառայած սպաների մասին, գտանք կապիտան Հ.Գ. Ղազարյանի անձնական հաշվառման քարտը: Պարզվեց, որ Հայկ Գրիգորի Ղազարյանը ծնվել է 1905 թ. Արևելյան Հայաստանի Կարսի մարզի Զարիշատի շրջանի Գյադուկ գյուղում: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Արևմտյան Հայաստանում հայերի դեմ թուրքական կառավարության իրականացրած ցեղասպանությանը զոհ գնաց ավելի քան 1,5 միլիոն հայ, իսկ շուրջ 600 000 հայ էլ մի կերպ փրկվելով սպանդից սփռվեց աշխարհով մեկ: 1918 թ. ապրիլին թուրքական զորքերը մտան նաև Արևելյան Հայաստան և գրավեցին Կարսը: Թուրքական յաթաղանից մազապուրծ Ղազարյանների ընտանիքը մի կերպ հասավ էջմիածին, իսկ երբ Հայաստանում հաստատվեցին խորհրդային կարգեր, և թուրքերն ստիպված էին 1920 թ. դեկտեմբերին հեռանալ Ալեքսանդրապոլից, Ղազարյանները տեղափոխվեցին այնտեղ: Թուրքերի հեռանալուց հետո ահավոր վիճակ էր ստեղծվել երբեմնի ծաղկուն քաղաքում: Հայկն ստիպված էր ընտանիքի հոգսերը հոգալու համար սևագործ բանվորություն անել ավերված դեպոյում: Սակայն չդիմանալով անտանելի պայմաններին՝ 1921 թ. Ղազարյանների ընտանիքն Ալեքսանդրապոլից տեղափոխվեց Աշտարակի շրջան, որտեղ նրանց տուն և հող տրվեց: 1922–1925 թթ. Հայկը սովորեց և ավարտեց Օշականի գյուղատնտեսական դպրոցը, որից հետո նշանակվեց Աշտարակի շրջանի Արկել գյուղի գյուղխորհրդի նախագահ: Մինչև բանակ զորակոչվելը՝ 1927 թ. հոկտեմբերի 15-ը, նա աշխատեց այդ պաշտոնում: Հայկ Ղազարյանը ծառայությունն սկսեց Հայկական հրաձգային դիվիզիայի հրետանային գնդում: Սկզբում նա սովորեց

գնդային դպրոցում, որն ավարտելուց հետո նշանակվեց հրանոթի հրամանատար: Երիտասարդ հրետանավորը շուտով աչքի ընկավ ամենամյա զորավարժանքների ժամանակ, որտեղ նրա հրանոթի անձնակազմն աչքի էր ընկնում վարժական թիրախներին դիպուկ կրակելով: Դա չվրիպեց գնդի հրամանատարության աչքից, 1929 թ. հոկտեմբերին հմուտ հրետանավորին առաջ քաշեցին հրետանային դասակի հրամանատարի օգնականի պաշտոնում: Նույն թվականին էլ 24-ամյա Հայկն ընդունվեց կուսակցության շարքերը, շուտով ստացավ ավագի զինվորական կոչում: 1931 թ. հոկտեմբերին Հայկ Ղազարյանն ընդունվում է Թբիլիսիի Անդրկովկասյան հետևակային ուսումնարանը, որն ավարտում է 1934 թ.: Այնուհետև, մինչև 1938 թ. մայիս, շարունակում է զինվորական ծառայությունը Հայկական 76-րդ լեռնահրաձգային դիվիզիայի 1-ին հայկական լեռնահրաձգային գնդում՝ որպես հրետանային դասակի հրամանատար: 1938 թ. մայիսին ավագ լեյտենանտ Հայկ Ղազարյանը նշանակում է ստանում Կիևի հատուկ զինվորական 46-րդ հրաձգային դիվիզիայի 93-րդ հրետանային գնդում՝ որպես հրետանային դասակի հրամանատար: 1939 թ. սեպտեմբերին նա մասնակցում է Արևմտյան Ուկրաինան ազատագրելու արշավին: Դրանից հետո նա նոր նշանակում է ստանում Լենինգրադի զինվորական օկրուգի 7-րդ բանակի 7-րդ հրաձգային դիվիզիայի 23-րդ հրետանային գնդում և որպես մարտկոցի հրամանատար՝ մասնակցում Խորհրդա-ֆիննական պատերազմին... 1940 թ. հոկտեմբերի 2-ին Հայկ Ղազարյանին շնորհվում է կապիտանի կոչում: Հայրենական մեծ պատերազմը կապիտան Հ.Գ. Ղազարյանը դիմավորել է Արևմտյան Ուկրաինայի Բորիսլավ քաղաքում, որտեղ և զոհվել է 1941 թ. հունիսի 28-ին ֆաշիստական զավթիչների դեմ մղված մարտերից մեկում[26]:

---

[26] ՌԴ ՊՆԿԱ, 11-րդ բաժին (սպայական կազմի հաշվառման բաժին), կապիտան Հ.Գ. Ղազարյանի անձնական հաշվառման քարտ, թիվ 79/6:

Խորհրդա-ֆիննական պատերազմում Պետրոզավոդսկից դեպի արևմուտք գտնվող հակառակորդի ամրությունների ճեղքման մարտերում իրեն ենթակա հրետանային զորամասերի գործողությունները հմտորեն ղեկավարելու և մարտերում ցուցաբերած խիզախության համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. մայիսի 19-ի հրամանագրով Լենինի շքանշանով պարգևատրվեց 8-րդ բանակի հրետանու պետ կոմբրիգ Նիկոլայ Ալեքսանդրի Կլիչը (ծնվել է 1895 թ. Կարս քաղաքում): Ընթերցողին հիշեցնենք, որ դեռևս 1918 թ. մայիսյան հերոսամարտերում Հայկական կորպուսի հրետանային մարտկոցներից մեկի քաջարի հրամանատար կապիտան Ն.Ա. Կլիչը մեծ դեր էր խաղացել թուրքական զորքերի դեմ տարած հաղթանակում, նպաստել հայկական պետականության վերականգնման գործին: Նա Հայաստանի առաջին հանրապետության բանակի ստեղծման գործիչներից է, եղել է հրետանային դիվիզիոնի հրամանատար: Կլիչն այդ պաշտոնն է վարել նաև Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո՝ կամավոր մտնելով Հայկական կարմիր բանակի շարքերը: Նա 1926 թ. առաջինների թվում է արժանացել Խորհրդային Հայաստանի բարձրագույն պարգևին՝ Կարմիր դրոշի շքանշանին: Այնուհետև հմուտ հրետանավորը 1928 թ. ավարտել է Մոսկվայի Մ.Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան, աշխատել ԽՍՀՄ պաշտպանության նախարարությունում և հրետանային զորամասերի պատրաստության գործում ունեցած ակնառու ծառայությունների համար ԽՍՀՄ Կենտգործկոմի նախագահության՝ 1937 թ. հունիսի 27-ի հրամանագրով պարգևատրվել Լենինի շքանշանով: Նույն թվականի հոկտեմբերի 22-ի հրամանագրով Նիկոլայ Կլիչը պարգևատրվել է Կարմիր դրոշի շքանշանով: Երբ սկսվեց Խորհրդա-ֆիննական պատերազմը, կոմբրիգ Ն.Ա. Կլիչը 8-րդ բանակի հրետանու հրամանատարն էր: Պատերազմի հաղթական ավարտից որոշ ժամանակ անց, երբ Կարմիր բանակում հաստատվեցին գեներալական կոչումները, 1940 թ. հունիսի 4-ին

ԽՍՀՄ ժողկոմխորհի որոշմամբ հրետանու գեներալ-լեյտենանտի կոչում շնորհվեց նաև Ն.Ա. Կլիչին[27]: Հայրենական մեծ պատերազմի նախօրյակին հրետանու գեներալ-լեյտենանտ Ն.Ա. Կլիչը Բելոռուսական հատուկ զինվորական օկրուգի հրետանու պետն էր: Երբ 1941 թ. հունիսի 22-ին սկսվեց պատերազմը, նույն օրը Բելոռուսական հատուկ զինվորական օկրուգը վերակազմավորվեց Արևմտյան ռազմաճակատի: Ն.Ա. Կլիչը ստանձնեց ռազմաճակատի հրետանու պետի պաշտոնը: Ռազմաճակատի հրամանատարն էր բանակի գեներալ Դ.Գ. Պավլովը: Սակայն պատերազմի նախօրյակին Ի.Վ. Ստալինի թույլ տված սխալները, հատկապես նրա կողմից Հիտլերին հավատալը, որի հետ 1939 թ. օգոստոսի 23-ին կնքել էր միմյանց վրա չհարձակվելու պայմանագիր՝ 10 տարի ժամկետով, ողբերգական ծանր աղետ հանդիսացան Արևմտյան զորքերի համար, որոնք հիմնականում տեղակայված էին Բելոռուսիայի տարածքում: Գերմանաֆաշիստական զորքերը, օգտվելով հանկարծակի հարձակումից և Կարմիր բանակի գլխավոր հրամանատարության անփութությունից, ծանր կորուստներ պատճառելով Արևմտյան ռազմաճակատի զորքերին, 1941 թ. հունիսի 28-ին գրավեցին Բելոռուսիայի մայրաքաղաք Մինսկը: Փոխանակ վերլուծելու կրած անհաջողությունների օբյեկտիվ պատճառները, Ի.Վ. Ստալինը հապճեպ քավության նոխազ ընտրեց Արևմտյան ռազմաճակատի հրամանատարությանը և անհիմն կերպով նրանց վրա բարդեց պատերազմի առաջին շաբաթվա ընթացքում կրած պարտության պատճառները: Հունիսի 30-ին Մոսկվա կանչվեց բանակի գեներալ Դ.Գ. Պավլովը և ձերբակալվեց: Նրա հետ միասին ձերբակալվեցին և գնդակահարվեցին Արևմտյան ռազմաճակատի շտաբի պետ գեներալ Վ.Ե. Կլիմովսկին, ռազմաճակատի հրետանու պետ, հրետանու գեներալ-լեյտենանտ Ն.Ա. Կլիչը և ուրիշներ: Սակայն հետագայում, Ի.Վ. Ստալինի մահից որոշ ժամա-

---

[27] Известия. 6 июня 1940. № 129. С. 1.

նակ անց, նրանք բոլորն էլ հետմահու արդարացվեցին: Ն.Ա. Կլիչը լիովին արդարացվեց 1965 թ. հոկտեմբերի 8-ին[28]:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. ապրիլի 7-ի հրամանագրով Լենինի շքանշանով պարգևատրվեց 13-րդ բանակի 51-րդ հրաձգային դիվիզիայի 348-րդ հրաձգային գնդի հրաձգային վաշտի հրամանատար, լեյտենանտ Զավեն Գրիգորի Փափազյանը[29]: Նա հատկապես աչքի ընկավ Խեմել, Ռոպոլա, Պիենպերո, Սուուրպերո, Կյախյարի բնակավայրերի և Տալի երկաթուղային կայարանի գրավման մարտերում: Միայն Անտերոլա լճի շրջանում լեյտենանտ Փափազյանի վաշտը, որը մարտնչում էր առաջին գծում, հաղթահարեց հակատանկային ցցապատնեշների հինգ և փշալարափակոցների երեք շարքերը և ճեղքեց հակառակորդի պաշտպանությունը, ամրացավ Մանիկալա բնակավայրի շրջանում, որտեղ հաջողությամբ ետ մղեց ֆիններ թվապես մի քանի անգամ շատ ուժերի երկու հակագրոհ: Գնդի հրամանատարի վկայությամբ լեյտենանտ Զ.Գ. Փափազյանը վերոհիշյալ մարտերի ընթացքում կռվել է արիաբար ու հմտորեն կատարել բոլոր առաջադրանքները[30]: Նույն թվականի մայիսի 1-ին Սմոլնիում հանդիսավոր պայմաններում Լենինի թիվ 6688 շքանշանը լեյտենանտ Զ.Գ. Փափազյանին հանձնեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Մ.Ի. Կալինինը:

Խորհրդա-ֆիննական պատերազմում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելի կատարելու և այդ ընթացքում ցուցաբերած խիզախության համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. ապրիլի 7-ի հրամանագրով Լենինի շքանշանով պարգևատրվեց նաև լեյտենանտ Արտաշես Ենոքի Մինասյանը[31]:

---

[28] ՌԴ ՊՆԿԱ, 11-րդ բաժին (գեներալների անձնական հաշվառման քարտարան), հրետանու գեներալ-լեյտենանտ Ն.Ա. Կլիչի անձնական քարտ:

[29] Ведомости Верховного СоветаСССР. 1941. 6 февраля. № 6. С. 3.

[30] ՌՊՈԱ, ֆ. 37837, g. 3, q. 525, p. 43:

[31] Ведомости Верховного СоветаСССР. 1941. 6 февраля. № 6. С. 3.

Ինչպես պարզվեց մեր հետագա ուսումնասիրությունների ժամանակ, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. հունվարի 26-ի հրամանագրով Լենինի շքանշանով պարգևատրվեց նաև կրտսեր լեյտենանտ Հակոբ Նիկոլայի Պողոսյանը[32]:

Խորհրդա-ֆիննական պատերազմի մասնակիցներից հետագայում՝ Հայրենական պատերազմի տարիներին, նման բարձր պարգևի են արժանացել մայոր Ամբիոս Հովակիմի Կուրղինյանը (Շիրակի մարզի Արթիկի շրջանի Հոռոմ գյուղից), ավագ սերժանտ Եփրեմ Գրիգորի Ղարիբյանը (Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Գիշի գյուղից), փոխգնդապետ Նավասարդ Թևանի Հարությունյանը (Սյունիքի մարզի Կապանի շրջանի Շիշկերտ գյուղից), Արամայիս Իվանի Քոսոյանը (Երևանից), լեյտենանտ Բաբկեն Աղասու Մանուկյանը (Շիրակի մարզի Աշոցքի շրջանի Թորոս գյուղից) և ուրիշներ:

3. Պատերազմին մասնակցած հայորդիներ, որոնք հետագայում դարձել են ծովակալներ, մարշալներ և գեներալներ

Խորհրդա-ֆիննական պատերազմում հրամանատարության մարտական առաջադրանքները օրինակելիորեն կատարելու և այդ ընթացքում դրսևորած խիզախության ու հերոսության համար հայազգի մի շարք բարձրաստիճան զինվորական գործիչներ, որոնց հետագայում շնորհվեց գեներալի կամ ծովակալի կոչումներ, պարգևատրվեցին Կարմիր դրոշի շքանշանով: Նրանց թվում էր նաև ԽՍՀՄ ռազմածովային նավատորմի ժողկոմի 1-ին տեղակալ, 2-րդ կարգի ֆլագման Իվան (Հովհաննես) Ստեփանի Իսակովը (Տեր-Իսահակյան): Մարտական գործողությունների ընթացքում նա Կրոնշտադտում մեծ օգնություն ցույց տվեց Բալթյան կարմրադրոշ նավատորմի հրամանատարությանը՝ կոորդինացնելու ֆիննա-

[32] Известия. 1940. 27 февраля. № 1. С. 1.

կան ծոցում և Լադոգա լճում նավատորմի գործողությունները ցամաքային ուժերի հետ, որի համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. ապրիլի 21-ի հրամանագրով պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով[33]: Ի.Ս. Իսակովը ծնվել է 1894 թ. օգոստոսի 22-ին Հայաստանի Կարսի մարզի Հաջիքենդ գյուղում՝ երկաթուղային ծառայողի ընտանիքում: Նրա հայրը Արցախի Գետաշեն գյուղից էր, մայրը՝ էստոնացի շվեդուհի: Ընտանիքը հիմնականում բնակվում էր Թիֆլիսում, որտեղ 1903–1913 թթ. Ի.Ս. Իսակովը սովորում և ավարտում է Թիֆլիսի ռեալական ուսումնարանը, այնուհետև 1917 թ. մարտին՝ Պետերբուրգի ծովային ենթասպաների դպրոցը: 1917 թ. հոկտեմբերից Ի. Իսակովն ակտիվորեն մասնակցել է գերմանական զավթիչների դեմ Ռիգայի ծովածոցում մղված մարտերին, 1918 թ. գարնանը՝ Բալթյան նավատորմի «Սառցե արշավին»՝ Հելսինկիից մինչև Կրոնշտադ, 1919 թ. օգոստոսին՝ անգլիական ականակիրների դեպի Կրոնշտադ արշավանքի հետմղման մարտերին, իսկ 1920 թ. մայիսին՝ էնզելսի գործողությանը, որի ընթացքում սպիտակգվարդիականները ջախջախվեցին Կասպից ծովում:

Այդ տարիներին նա եղել է «Իզյասլավ» ականակրի նավապետի օգնական, «Կոբչիկ» պահականավի պետի ավագ օգնական, «Դեյատելնի» ականակրի նավապետ և այլն: 1926 թ. նա առաջ է քաշվում Սևծովյան ռազմածովային ուժերի շտաբի պետի օգնականի, ապա՝ օպերատիվ բաժնի պետի պաշտոնում:

Ի.Ս. Իսակովը սովորում և ավարտում է ռազմածովային ակադեմիային առընթեր ծովային հրամանատարների կատարելագործման դասընթացները և ստանում ռազմածովային բարձրագույն կրթություն: Դասընթացներն ավարտելուց հետո նշանակվում է գլխավոր շտաբի օպերատիվ բաժնի պետի օգնական, իսկ 1930–1933 թթ. որպես ավագ դասախոս դասա-

---

[33] Адмирал флота Советского Союза Исаков И.С. Документы и статьи. Е.: изд. «Айастан», 1984. С.

վանդում է ռազմածովային ակադեմիայում: 1933–1935 թթ. Ի.Ս. Իսակովը վարում է Բալթյան նավատորմի շտաբի պետի պաշտոնը: 1933 թ. նրա գլխավորությամբ Բալթիկ ծովից Բելոմոր-Բալթյան ջրանցքով Հյուսիսային ծով է տեղափոխվում ռազմանավերի քարավանը, որը, փաստորեն, դառնում է Հյուսիսային նավատորմի հիմնադրման հիմքը: 1933 թ. հունվարից Ի.Ս. Իսակովը Բալթյան նավատորմի շտաբի պետն էր, իսկ նույն թվականի օգոստոսից՝ նավատորմի հրամանատարը: 1938 թ. հունվարին Ի.Ս. Իսակովը նշանակվում է ԽՍՀՄ ռազմածովային նավատորմի ժողկոմի տեղակալ, իսկ 1939 թ. ապրիլին՝ առաջին տեղակալ և այդ պաշտոնում աշխատում մինչև 1946 թ. (1938 թ. հունիսից մինչև 1939 թ. օգոստոսը միաժամանակ ռազմածովային ակադեմիայի պետն էր): 1940 թ. հունիսի 4-ին ԽՍՀՄ Ժողկոմխորհի որոշմամբ Ի.Ս. Իսակովին առաջինների թվում շնորհվում է ծովակալի կոչում: Նույն թվականի նոյեմբերին ծովակալ Ի.Ս. Իսակովը միաժամանակ նշանակվում է Գլխավոր ծովային շտաբի պետ: Հայրենական մեծ պատերազմի տարիներին, որպես Գերագույն գլխավոր հրամանատարության զորակայանի ներկայացուցիչ, ծովակալ Իսակովը փոխհամաձայնեցրել է նավատորմի գործողությունները ցամաքային ուժերի հետ: 1941 թ. եղել է Լենինգրադյան, 1942 թ. ապրիլից՝ Հյուսիս-Կովկասյան ուղղության, ապա՝ Հյուսիս-Կովկասյան, իսկ 1942 թ. օգոստոսից՝ Անդրկովկասյան ռազմաճակատների ռազմական խորհրդի անդամ: Մարտական առաջադրանքները կատարելիս նա Տուապսեի շրջանում 1942 թ. հոկտեմբերի 4-ին ծանր վիրավորվեց ազդրից և զրկվեց ոտքից: 1946–1947 թթ. աշխատել է գլխավոր ծովային շտաբի պետ, 1947–1950-ին՝ ԽՍՀՄ ռազմածովային ուժերի գլխավոր հրամանատարի տեղակալ, 1950–1956 թթ.՝ ԽՍՀՄ Ծովային նավատորմի տեղակալ: Այնուհետև նա մինչև իր կյանքի վերջը եղել է ԽՍՀՄ պաշտպանության նախարարության գլխավոր տեսուչների խմբի գլխավոր տեսուչ: 1955 թ. մարտի 3-ին նրան առաջինն է շնորհվել Խորհրդային Միության նավատորմի ծովակալի կոչում: Հայրենական մեծ

պատերազմում ցուցաբերած արիության և խիզախության համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1965 թ. մայիսի 7-ի հրամանագրով Ի.Ս. Իսակովին շնորհվել է Խորհրդային Միության հերոսի կոչում: Նա պարգևատրվել է Լենինի՝ վեց, Կարմիր դրոշի՝ երեք, Ուշակովի 1-ին աստիճանի՝ երկու, Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի, Կարմիր աստղի շքանշաններով, ինչպես նաև Գրյունվալդի 1-ին աստիճանի Խաչ՝ լեհական, Պարտիզանական աստղ և Ժողովրդական ազատագրում՝ հարավսլավական շքանշաններով, բազմաթիվ մեդալներով:

Ռազմածովային գործին զուգընթաց Ի.Ս. Իսակովը զբաղվել է ռազմատեսական ու ռազմապատմական հարցերով, նավատորմի զարգացման հեռանկարների ուսումնասիրությամբ: 1932–1933-ին մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմի պատմության փաստաթղթերի ժողովածուների կազմմանն ու խմբագրմանը: 1937 թ. պաշտպանել է ատենախոսություն՝ «Ճապոնացիների օպերացիան Ցինդաոյի դեմ 1914 թ.» և ստացել ռազմածովային գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Նա ակտիվորեն մասնակցություն է ունեցել ռազմածովային ուժերի մարտական կանոնագրքերի մշակմանը: Որպես պատերազմի փորձի ուսումնասիրության գծով ԽՍՀՄ պաշտպանության ժողկոմի տեղակալ, մի շարք տեսական ու գործնական միջոցառումներ է մշակել երկրի ռազմածովային ուժերի պատմության, Հայրենական մեծ պատերազմում նավատորմի դերի լուսաբանման և երկրորդ համաշխարհային պատերազմի փորձի ուսումնասիրման ուղղությամբ: 1947 թ. նշանակվել է «Ծովային ատլասի» (հ. 1–3) խմբագրական կոլեգիայի նախագահ: «Ծովային ատլասի» 1-ին հատորի համար նրան 1951 թ. մարտի 14-ին շնորհվել է 1-ին կարգի ԽՍՀՄ Պետական մրցանակ: Երկար տարիներ Ի.Ս. Իսակովը եղել է Լենինյան և ԽՍՀՄ Պետական մրցանակների կոմիտեի՝ երկրաբանության ու աշխարհագրության հանձնաժողովի անդամ, ռազմածովային գիտությունների գծով՝ բարձրագույն որակավորման հանձնաժողովի նախա-

գահ, Խորհրդային մեծ հանրագիտարանի գլխավոր խմբագրական խորհրդի, Հայկական աշխարհագրական ընկերության, ԽՍՀՄ գրողների միության անդամ: Գրել է ծովային կյանքին նվիրված ավելի քան 250 պատմվածք, ուսումնասիրություններ ծովակալ Լազար (Ղազար) Սերեբրյակովի (Արծաթագործյան) և Խորհրդային Միության կրկնակի հերոս, ծովային օդաչու Նելսոն Ստեփանյանի մասին:

1958 թ. Ի.Ս. Իսակովն ընտրվել է ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ, 1967-ին՝ ՀԽՍՀ ԳԱ պատվավոր անդամ: 1951 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: Եղել է ԽՍՀՄ 1-ին գումարման Գերագույն խորհրդի պատգամավոր:

Ի.Ս. Իսակովը մահացել է 1967 թ. հոկտեմբերի 11-ին Մոսկվայում և թաղվել Նովոդևիչի գերեզմանատանը: Ժամանակին նրա անունով է կոչվել ԽՍՀՄ ռազմածովային նավատորմի հակասուզանավային խոշոր ռազմանավերից մեկը: Երևանի Զվարթնոց օդանավակայանը մայրաքաղաքին կապող գլխավոր մայրուղին կոչվել է ծովակալ Իսակովի անվամբ, որի վրա վեր է խոյանում հայ ժողովրդի արժանի զավակի մոնումենտալ արձանը: 2004 թ. ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծվել է «Ծովակալ Իսակով» մեդալը, որով պարգևատրվում են Հայկական զինված ուժերի առաջավոր զինծառայողները:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. ապրիլի 7-ի հրամանագրով Խորհրդա-ֆիննական պատերազմում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ընթացքում ցուցաբերած արիության ու քաջության համար Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվեց նաև 7-րդ բանակի 113-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, կոմբրիգ Քրիստափոր Նիկոլայի Ալավերդյանը[34]: Դա խիզախ հրամանատարի երկրորդ մարտական պարգևն էր. մինչ այդ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1938 թ. փետրվարի 22-ի հրամանագրով Կարմիր

---

[34] Ведомости Верховного СоветаСССР. 1941. 6 февраля. № 6. С. 3.

բանակի 20-ամյակի առթիվ մայոր Ք.Ն. Ալավերդյանը պարգևատրվել էր Կարմիր դրոշի շքանշանով[35]: Կոմբրիգ Ք.Ն. Ալավերդովը մինչև 113-րդ դիվիզիայի հրամանատարությունն ստանձնելն զգալի աշխատանք կատարեց Հյուսիսարևմտյան ռազմաճակատի վարչության ստեղծման գործում: Նա ռազմաճակատի խորհրդի հատուկ խմբի կազմում ոչ միայն կազմակերպչական մեծ օգնություն ցույց տվեց 1-ին կարգի բանակային հրամանատար (հետագայում՝ Խորհրդային Միության մարշալ) Ս.Կ. Տիմոշենկոյին ռազմաճակատի շտաբի համալրման գործի ընթացքում, այլև կատարեց հատուկ հանձնարարություններ ռազմաճակատի միավորումների ու զորամասերի մարտական պատրաստության, Մաններհայմի գծի ճեղքման նախապատրաստական միջոցառումների իրականացման ուղղությամբ: Նա ռազմական խորհրդի հանձնարարությամբ բազմիցս լինում էր առաջապահ զորամասերում, արժեքավոր խորհուրդներ տալիս նրանց հրամանատարներին: 1940 թ. հունվարի սկզբներին Կոմբրիգ Ք.Ն. Ալավերդյանը նշանակվեց 113-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար: Նրա դիվիզիան հատկապես աչքի ընկավ Մաններհայմի գծի Կարխուլյան պաշտպանական համակարգի ճեղքման մարտերում: Ինչպես նշել է Հյուսիսարևմտյան ռազմաճակատի հրամանատար Ս.Կ. Տիմոշենկոն դիվիզիայի հրամանատարի պարգևատրման թերթիկում՝ «Ք.Ն. Ալավերդովի հրամանատարությամբ 1940 թ. փետրվարին 113-րդ հրաձգային դիվիզիան ճեղքեց Կարխուլյան ամրացված շրջանի պաշտպանությունը և հյուսիսից շրջանցելով այն՝ գրավեց ֆիննական 6 դոտ, 42 դզոտ և մեծ քանակությամբ ռազմաավար: 1940 թ. մարտի 17-ի գիշերը լույս 18-ի առավոտյան, ընկեր Ալավերդովի դիվիզիան գիշերային մարտերով անցավ 23 կմ, գրավեց Յուխանեես բնակավայրի ամրացված շրջանը, հակառակորդի Մերձովյան զորախումբը բաժանեց երկու մասի և փակեց նրանց միմյանց կապող ուղիները: Համարում եմ, որ ընկեր Ալավերդովն արժանի է պարգևատրվելու Կարմիր դրոշի շքանշա-

[35] Ведомости Верховного Совета СССР. 1938. 18 апреля. № 2. С. 1–4.

նով»[36]: Ինչպես արդեն նշեցինք, կոմբրիգ Ք.Ն. Ալավերդովն այդ պարգևին արժանացավ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. ապրիլի 7-ի հրամանագրով: Դրանից շուրջ երկու ամիս հետո՝ 1940 թ. հունիսի 4-ին, ԽՍՀՄ ժողկոմխորհրդի որոշմամբ Ք.Ն. Ալավերդյանին առաջինների թվում շնորհվեց գեներալ-մայորի կոչում[37]: Հայրենական մեծ պատերազմի սկզբին գեներալ-մայոր Ք.Ն. Ալավերդյանի հրամանատարությամբ գործող 113-րդ հրաձգային դիվիզիան մարտնչում էր գերմանաֆաշիստական զավթիչների դեմ Արևմտյան ռազմաճակատում: 1941 թ. հունիսի 22-ից Բրեստի (Բելոռուսիա) շրջանում նրա դիվիզիան մի քանի օր շարունակ հերոսաբար ետ էր մղում հակառակորդի ծանր զրահատեխնիկայի վիթխարի ուժերի հարվածները՝ թշնամուն հասցնելով կենդանի ուժի ու տեխնիկայի մեծ կորուստներ: Մարտերից մեկում գեներալ Ալավերդյանը ծանր վիրավորվեց և գերի վերցվեց: Բայց գերության մեջ չընկճվեց հայրենասեր զորավարի ոգին: Նա ոչ միայն մերժեց ֆաշիստների հետ համագործակցելու առաջարկությունը, այլև Համելբուրգի (Գերմանիա) ռազմագերիների համակենտրոնացման ճամբարում գեներալներ Կարբիշևի և Նիկիտինի հետ միասին ստեղծեց ընդհատակյա հակաֆաշիստական կազմակերպություն, որի հիմնական նպատակը խորհրդային ռազմագերիներից գերմանական բանակում ազգային զորամասեր ստեղծելու հիտլերյան պլանի ձախողումն էր: 1942 թ. ապրիլին գեստապոն հայտնաբերեց ընդհատակյա շարժման կազմակերպիչներին և Նյուրնբերգի բանտում գնդակահարեց գեներալ Ք.Ն. Ալավերդյանին: Ք.Ն. Ալավերդյանը ծնվել է 1897 թ. Հայաստանի Վայոց ձորի մարզի Օղբին գյուղում՝ չքավոր գյուղացու ընտանիքում: Նյութական ծանր պայմաններն ստիպել են նրան 16 տարեկանում թողնել հայրենի գյուղը և մեկնել Միջին Ասիա: Այստեղ նա դիմավորել է 1917 թ. Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը, մտել Կար-

---

[36] ՌՊՌԱ, ֆ. 37837, ց. 3, գ. 393, թ. 96: Ведомости Верховного Совета СССР. 1941. 6 февраля. № 6. С. 3.

[37] Известия. 1940. 6 июня. № 129. С. 1.

միր բանակի շարքերը և մարտնչել բասմաչների դեմ: 1918–1919 թթ. էսկադրոնի հրամանատար Ք.Ն. Ալավերդյանը մարտնչել է Ուկրաինայում՝ Պոլտավա, Կամենեց-Պոդոլսկ, Ստարոբ-Կոնստանտինով, Օստռոգ շրջաններում: 1920 թ. նա արդեն առաջ էր քաշվել հեծյալ գնդի հրամանատարի պաշտոնում: Ուկրաինայում քաղաքացիական պատերազմն ավարտվելուց հետո Ք.Ն. Ալավերդյանը սովորում և 1927 թ. ավարտում է Կիևի միացյալ ռազմական դպրոցը, որից հետո նշանակվում է Հայկական 22-րդ հեծյալ գնդի հրամանատար: Շուտով նա մեկնում է Մոսկվա, ընդունվում Մ.Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան, որն ավարտում է 1936 թ. և նշանակվում կազակային հեծյալ դիվիզիայի հրամանատար: Մեկ տարի անց նա ընդունվում է Կարմիր բանակի գլխավոր շտաբի ռազմական ակադեմիան, որն ավարտելուց հետո նշանակում է ստանում Լենինգրադյան ռազմական օկրուգում, որտեղ և դիմավորում է Խորհրդա-ֆիննական պատերազմը...

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. ապրիլի 7-ի հրամանագրով Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվեց նաև 13-րդ բանակի 19-րդ հրաձգային կորպուսի շտաբի պետ, գնդապետ Բագրատ Իսահակի Առուշանյանը[38]: Նրա պարգևատրման թերթիկում, որը ստորագրել են 19-րդ հրաձգային կորպուսի հրամանատար, Խորհրդային Միության հերոս, կոմդիվ Տերյոխինը, 13-րդ բանակի հրամանատար կոմկոր Պարուսինովը և ուրիշներ, նշված է. «Սպիտակֆիններ դեմ մղված մարտերում գնդապետ Բ.Ի. Առուշանյանն իրեն դրսևորել է բացարձակապես դրական կողմերով: Նա մեծ ներդրում ունի կորպուսի զորամասերի մարտական համախմբման գործում, որի շնորհիվ կորպուսի զորամասերը նվազագույն կորուստներով ու գերազանց գործողություններով իրագործեցին հակառակորդի ամրացված շրջանի ճեղքումը: Նա անձամբ մեկնում էր կորպուսի առաջապահ զորամասեր և տեղում կոնկրետ ցուցումներ տալիս ամրացված շրջանի

[38] Ведомости Верховного Совета СССР. 1941. 12 февраля. № 7. С. 1.

ճեղքման համար: Հատկապես մեծ գործ կատարեց կորպուսի շտաբի աշխատանքների ղեկավարման, քիչ կորուստներով հակառակորդի ջախջախումն ապահովելու ուղղությամբ: Սպիտակֆիններին դեմ մղված մարտերում ունեցած բացառիկ ծառայությունների և ցուցաբերած խիզախության ու քաջության համար գնդապետ Բ.Ի. Առուշանյանն արժանի է Կարմիր դրոշի շքանշանի»[39]: Պարգևատրումից երկու ամիս անց գնդապետ Բ.Ի. Առուշանյանը ԽՍՀՄ Ժողկոմխորհի՝ 1940 թ. հունիսի 4-ի որոշմամբ Կարմիր բանակում առաջինների թվում է արժանանում գեներալ-մայորի կոչման[40]: Հայրենական մեծ պատերազմի սկզբին գեներալ-մայոր Բ.Ի. Առուշանյանը ծառայում էր Կիևի հատուկ ռազմական օկրուգում՝ որպես 12-րդ բանակի շտաբի պետ: Նրա բանակը զգալի դեր կատարեց հիտլերյան գեներալ Կլեյստի տանկային զորախմբի հաղթարշավը կասեցնելու գործում: 1941 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին գեներալ Առուշանյանը Հարավարևմտյան ռազմաճակատի հրամանատարի տեղակալն էր թիկունքի գծով: Նույն թվականի նոյեմբերին նա նշանակվում է 56-րդ առանձին բանակի շտաբի պետ և աչքի ընկնում 1941 թ. նոյեմբերի 29-ին Դոնի Ռոստովի առաջին ազատագրման գործողության ժամանակ: 1943 թ. դեկտեմբերին գեներալ Առուշանյանը 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի 4-րդ հարվածային բանակի հրամանատարի տեղակալն էր, իսկ 1944 թ. ամռանը, որպես 14-րդ հրաձգային կորպուսի հրամանատար, ակտիվորեն մասնակցում Բելոռուսական գործողությանը: 1944 թ. օգոստոսին գեներալ Առուշանյանը՝ որպես 2-րդ հարվածային բանակի 11-րդ գվարդիական կորպուսի հրամանատար, աչքի ընկավ Լիտվայի, ապա Արևելյան Պրուսիայի ազատագրման մարտերում: Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո նրան 1945 թ. հունիսի 5-ին շնորհվում է գեներալ-լեյտենանտի կոչում: Նա այն երջանիկ զորավարների թվում էր, որ մաս-

---

[39] ՌՊՌԱ. ֆ. 37837. ց. 3. գ. 398. թ. 297:
[40] Известия. 1940. 6 июня. № 129. С. 1

նակցել է Մոսկվայի Կարմիր հրապարակում 1945 թ. հունիսի 24-ին տեղի ունեցած Հաղթանակի զորահանդեսին: Պատերազմից հետո գեներալ-լեյտենանտ Բ.Ի. Առուշանյանը շարունակել է զինվորական ծառայությունը Խորհրդային բանակում, 1946 թ. հունիսից դասավանդել է Գլխավոր շտաբի ռազմական ակադեմիայում: 1951 թ. գեներալ-լեյտենանտ Բ.Ի. Առուշանյանն առողջության վատացման պատճառով զորացրվում է բանակի շարքերից և երկար տարիներ Խորհրդային բանակի կենտրոնական տանը (ք. Մոսկվա) կատարում ռազմագիտական շնորհակալ աշխատանք: Բ.Ի. Առուշանյանը ծնվել է 1903 թ. Հայաստանի Գորիսի շրջանի Վերիշեն գյուղում: 1914 թ. գյուղի ծխական դպրոցն ավարտելուց հետո սկսել է աշխատել, որպեսզի հոգա ընտանիքի հոգսերը: 1923 թ. նա կամավոր մտնում է Կարմիր բանակի շարքերը և զինվորական ծառայությունն սկսում Ա.Ֆ. Մյասնիկյանի անվան միացյալ ռազմական դպրոցում՝ որպես կուրսանտ: 1926 թ. գերազանց գնահատականներով ավարտում է դպրոցը և պարգևատրվում դիպուկահար հրացանով: Այնուհետև նա ծառայությունը շարունակում է Հայկական հրաձգային դիվիզիայի 1-ին հրաձգային գնդի շարքերում՝ սկզբում որպես դասակի, ապա՝ վաշտի, գումարտակի հրամանատար, գնդային դպրոցի պետ: 1933 թ. կարմիր հրամանատար Բ.Ի. Առուշանյանն ընդունվում է Մ.Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան, որն ավարտում է 1936 թ. գերազանցությամբ: Ավարտելուց հետո Բ.Ի. Առուշանյանը սկզբում նշանակվում է Կիևի հատուկ զինվորական օկրուգի 15-րդ Սիվաշյան հրաձգային դիվիզիայի շտաբի օպերատիվ բաժնի պետի տեղակալ, ապա՝ պետ: 1938 թ. մայիսին նա նշանակվում է 6-րդ հրաձգային կորպուսի շտաբի օպերատիվ բաժնի պետ, իսկ մեկ տարի անց՝ 12-րդ բանակի շտաբի օպերատիվ բաժնի պետ[41]: Այդ պաշտոնում նա 1939 թ. սեպտեմբերին մասնակցում է Արևմտյան Բելոռուս-

---

[41] *А.В. Казарьян.* Война. Люди, судьбы. Е., изд. «Айастан», 1975. Т. 1. С. 116–123.

սիայի ազատագրմանը, որը լեհերին էր անցել դեռևս 1920 թ.: Այնուհետև գնդապետ Բ.Ի. Առուշանյանը, որպես 13-րդ բանակի 19-րդ հրաձգային կորպուսի շտաբի պետ, մասնակցում է Խորհրդա-ֆիննական պատերազմին... Գեներալ-լեյտենանտ Բ.Ի. Առուշանյանի կյանքի թելը կտրվել է Մոսկվայում՝ 1994 թ. սեպտեմբերի 19-ին[42]: Գեներալ-լեյտենանտ Բ.Ի. Առուշանյանը պարգևատրված էր Լենինի, Կարմիր դրոշի (3), Սուվորովի 2-րդ աստիճանի, Կուտուզովի 2-րդ աստիճանի, Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշաններով, բազմաթիվ մեդալներով[43]:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. մարտի 21-ի հրամանագրով Մաններհայմի պաշտպանական գիծը ճեղքելու մարտերին ակտիվորեն մասնակցելու և այդ ընթացքում հակառակորդի կենդանի ուժին ու տեխնիկային զգալի կորուստներ պատճառելու, հրամանատարության մարտական առաջադրանքը կատարելու համար Լենինի շքանշանով պարգևատրվեց Հյուսիսարևմտյան ռազմաճակատի 7-րդ բանակի 70-րդ հրաձգային դիվիզիան, որի հրամանատարն էր կոմդիվ Մ.Պ. Կիրպոնոսը (հետագայում՝ գեներալ-գնդապետ), իսկ զինվորական կոմիսարը՝ գնդային կոմիսար (հետագայում՝ գեներալ-մայոր) Բենիամին Հովհաննեսի Գալստյանը: Դիվիզիան Խորհրդա-ֆիննական պատերազմին մասնակցում էր սկզբից՝ 1939 թ. նոյեմբերի 30-ից: Անցնելով Սեստրա գետը՝ մինչև դեկտեմբերի կեսերը դիվիզիայի զորամասերը կատաղի մարտերով հաղթահարեցին հակառակորդի դիմադրությունը՝ Տերիոկի-Մելոլա-Կուոլեմա-Յարվի շրջանում և դուրս եկան Մաններհայմի գծի Կարխուլյան պաշտպանական հանգույցի դիմաց՝ Սումիից արևմուտք: Ֆիններին լավ էին նախապատրաստվել պաշտպանությանը, և նրանց հաջողվեց ժամանակավորապես կանգնեցնել խորհրդային զորքերի ընդհանուր հարձակումը: Մինչև 1940 թ. փետրվարի 11-ը դիվի-

---

[42] Ով ով է, Հայեր, Կենսագրական հանրագիտարան, Ե., 2005, հ. 1, էջ 117:

[43] ՌԴ ՊՆԿԱ, 11-րդ բաժին, պարգևատրվածների քարտարան:

զիայի հրամանատարությունը մեծ աշխատանք կատարեց մարտերի ժամանակ նկատված թերությունները շտկելու, համալրվելու, տարբեր զորատեսակների հետ փոխգործողությունները համաձայնեցնելու ուղղությամբ: Եվ ահա նախապատրաստական աշխատանքները ապարդյուն չանցան: Հարձակման հենց առաջին իսկ օրը 70-րդ հրաձգային դիվիզիային հաջողվեց գրավել կարևոր 34,8 բարձունքը, որը Սաններհայմի գծի Կարխուլյան պաշտպանական հանգույցի բանալին էր: Փաստորեն դիվիզիային հաջողվեց ճեղքել թշնամու անառիկ պաշտպանությունը և առաջ շարժվել դեպի Վիբորգի ծովածոցի ափերը: Սակայն ճանապարհին պետք է հաղթահարվեին Ռեվոն-սաարի, Պիի-սաարի ամրացված կղզիները, գրավվեր Կոյվիստո թերակղզին, Վլանիեմի գյուղը, Նիսալախտի և Խեյնլախտի ծովածոցերը և կտրել Վիբորգ-Հելսինկի տանող մայրուղին: Մինչև մարտի 13-ը դիվիզիան հաջողությամբ կատարեց առաջադրանքը: Միայն այդ մարտերում դիվիզիան գրավեց 16 հրանոթ, որոնցից չորսը՝ 76 մմ տրամաչափի, մնացածը՝ 122 և 152 մմ տրամաչափի: Բացի դրանից ոչնչացվեց 5 հրանոթ, մի շարք դոտեր ու դզոտներ, ավար վերցվեցին մեծ թվով գնդացիրներ, ինքնաձիգներ, հրացաններ և այլն[44]: Դիվիզիայի հաջող գործողությունները նպաստեցին Վիբորգի ազատագրմանը: Այդ քաղաքը շվեդներից ռուսներին էր անցել դեռևս Պյոտր 1-ի ժամանակ: Ամբողջ մարտական գործողությունների ժամանակ դիվիզիայի կոմիսար Բենիամին Գալստյանը մշտապես լինում էր զորամասերում, անձնական օրինակով սխրանքների ոգեկոչում մարտիկներին, դժվար պահերին գրոհի առաջնորդում նրանց: Դիվիզիայի մարտական գործողությունները հմտորեն ղեկավարելու և այդ ընթացքում ցուցաբերած խիզախության համար Բենիամին Գալստյանը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. ապրիլի 11-ի հրամանագրով պարգևատրվեց Կարմիր դրոշի շքա-

---

[44] Бои на Карельском перешейке. С. 292–293.

նշանով[45]: Դրանից մի փոքր շուտ՝ 1940 թ. մարտի 21-ի հրամանագրով Խորհրդային Միության հերոսի կոչում էր շնորհվել դիվիզիայի հրամանատար Ս.Պ. Կիրպոնոսին[46]:

Բենիամին Հովհաննեսի Գալստյանը ծնվել է Հայաստանի Շիրակի մարզի Ախուրյանի շրջանի Ճլոխան (1945 թ. դեկտեմբերի 7-ից՝ Բենիամին) գյուղում 1902 թ. մարտի 7-ին: 13 տարեկանից ինքնուրույն աշխատել է գյուղի հարուստների մոտ, ապա՝ Ալեքսանդրապոլում՝ որպես երկաթուղային դպրոցի ենթավարպետ: Երբ 1918 թ. մայիսի 15-ին թուրքերը գրավեցին Ալեքսանդրապոլը, 16-ամյա պատանին, մի կերպ փրկվելով թուրքական կոտորածներից, փախավ Թիֆլիս և այնտեղ բանվորություն արեց տեղական գործարաններից մեկում: Խորհրդային կարգերի հաստատումից հետո Բենիամին Գալստյանը մտնում է Կարմիր բանակի շարքերը և այնուհետև իր ողջ կյանքը նվիրաբերում հայրենիքի զինված պաշտպանության գործին: Նա ծառայում էր Հայկական հրաձգային դիվիզիայի շարքերում: Սկզբում ավարտում է գնդային դպրոցը, ապա՝ Ա.Ֆ. Մյասնիկյանի անվան Հայկական միացյալ ռազմական դպրոցը, իսկ 1931-ին՝ Անդրկովկասյան զինվորական օկրուգի ռազմաքաղաքական դպրոցը Թբիլիսիում: Նա ծառայում էր Հայկական լեռնահրաձգային դիվիզիայի 2-րդ լեռնահրաձգային գնդում՝ որպես գնդի կազմակերպության քարտուղար, երբ նրան 1932 թ. գործուղեցին սովորելու Մոսկվայի Վ.Ի. Լենինի անվան ռազմաքաղաքական ակադեմիայում: 1936 թ. ավարտելով ակադեմիան՝ նշանակում է ստանում Լենինգրադյան զինվորական օկրուգում և, ինչպես արդեն նշեցինք, 1939–1940 թթ. ակտիվորեն մասնակցում Խորհրդա-ֆիննական պատերազմին՝ որպես 70-րդ հրաձգային դիվիզիայի կոմիսար: Հայրենական մեծ պատերազմի սկզբից նա մասնակցում է Լենինգրադի հերոսական պաշտպանությանը՝ որպես 70-րդ հրաձգային դիվիզիայի կոմիսար, աչքի ընկնում

---

[45] Ведомости Верховного Совета СССР. 1941. 11 июня. № 25. С. 3.

[46] Герои Советского Союза. Краткий биологический словарь. Т. 1. С. 653.

Լուգայի շրջանում տեղի ունեցած արյունահեղ մարտերում: Շուտով բրիգադի կոմիսար Բենիամին Գալստյանը ստանձնում է 125-րդ հրաձգային դիվիզիայի կոմիսարի պաշտոնը, մարտնչում Պուշկին-Պուլկովո-Կրասնի բոր շրջանում: 1941 թ. դեկտեմբերյան մարտերից մեկում նա ծանր վիրավորվում է և տեղափոխվում հոսպիտալ: Բուժվելուց հետո՝ 1942 թ. փետրվար-ապրիլ ամիսներին, Բենիամին Գալստյանը Նևսկի օպերատիվ զորախմբի կոմիսարն է, աչքի է ընկնում Մոսկովսկի Դուբրովկայի հենակետի պաշտպանության մարտերում: Նույն թվականի ամռանը Բենիամին Գալստյանին նշանակում են Լենինգրադյան ռազմաճակատի 42-րդ բանակի ռազմական խորհրդի անդամ: Պուլկովյան բարձունքների պաշտպանության ժամանակ, գտնվելով առաջապահ դիրքերում, 1942 թ. դեկտեմբերի 4-ին Բենիամին Գալստյանը զոհվում է հերոսաբար: Նրա դին հողին հանձնեցին Լենինգրադի Ալեքսանդր Նևսկի մայրավանքի գերեզմանատանը: Թաղման օրը թերթում լույս է տեսնում ԽՍՀՄ ժողկոմխորհի՝ 1942 թ. դեկտեմբերի 4-ի որոշումը Բենիամին Գալստյանին գեներալ-մայորի կոչում շնորհելու մասին: Հերոս հայրենակցի հիշատակը հավերժացնելու նպատակով նրա ծննդավայր Ճլոխան գյուղը 1945 թ. դեկտեմբերի 7-ին գեներալի անունով կոչվեց Բենիամին: 1955 թ. Լենինգրադի Մոսկովյան շրջանում փողոց բացվեց գեներալ Գալստյանի անվամբ, շրջանի դպրոցներից մեկն էլ կոչվեց հերոս քաղաքի պաշտպանության մարտերում զոհված հայ գեներալի անունով[47]:

Կանդալակշա-Ուխտայի շրջանում հակառակորդի կենդանի ուժին ու տեխնիկային մեծ կորուստներ պատճառեց 9-րդ բանակի 122-րդ հրաձգային դիվիզիան, որի հրետանու պետն էր գնդապետ (հետագայում՝ գեներալ-մայոր) Նիկոլայ Ալեքսանդրի (Ալեքսանի) Հովհաննիսյանը: Դիվիզիայի հրամանատար գնդապետ Շևչենկոյի և կոմիսար, գնդային կոմի-

---

[47] *Կ.Ա. Արտյունյան*. Участие армянского народа в Великой Отечественной войне Советского Союза (1941–1945). Е.: Изд. «Гитутюн» НАН РА, 2004. С. 495.

սար Ստարոստինի վկայությամբ. «Գնդապետ Ն.Ա. Հովհաննիսյանը ծմեռային մարտերի ընթացքում իրեն դրսևորել է որպես բանիմաց, կարգապահ և նախաձեռնող հրամանատար: Մարտի ժամանակ նա երբեք իրեն չի կորցնում, հանգիստ է և միշտ հավատում է հաղթանակին: Շնորհիվ նրա կազմակերպչական հմտությունների՝ դիվիզիայի հրետանու շտաբը մշտապես գործում էր անխաթար: Նա մշտապես հմտորեն և ժամանակին էր օգտագործում հրետանու հզոր ուժը՝ դիվիզիայի առջև դրված մարտական հերթական առաջադրանքը կատարելու համար[48]: 9-րդ բանակի հրետանու պետ, գնդապետ Կովալչուկի վկայությամբ գնդապետ Ն.Ա. Հովհաննիսյանը Կուոլայարվիի շրջանում 1940 թ. փետրվարի վերջերին ու մարտի սկզբներին տեղի ունեցած մարտերում հաջողությամբ կատարեց բանակի ռազմական խորհրդի հրամանը, որի համար էլ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. մայիսի 14-ի հրամանագրով հրետանու հմուտ հրամանատարը պարգևատրվեց Կարմիր աստղի շքանշանով[49]: Մինչ այդ նա պարգևատրվել էր նաև «ԲԳԿԲ-ի 20 տարին» մեդալով: Խորհրդա-ֆիննական պատերազմն ավարտվելուց հետո գնդապետ Ն.Ա. Հովհաննիսյանը 1940–1941 թթ. սովորում է Կարմիր բանակի Գլխավոր շտաբի ռազմական ակադեմիայում, որն ավարտելուց հետո վերադառնում է հարազատ դիվիզիա: 1941 թ. հունիսի 22-ին սկսվեց Հայրենական մեծ պատերազմը: Գնդապետ Ն.Ա. Հովհաննիսյանը պատերազմի հենց առաջին իսկ օրվանից մասնակցում է մարտական գործողություններին և պաշտպանում Լենինգրադի մատույցները: Ամառային արյունահեղ մարտերից մեկում խիզախ հրետանավորը ծանր վիրավորվում է ու տեղափոխվում հոսպիտալ: Բուժվելուց հետո՝ 1941 թ. դեկտեմբերին, գնդապետ Ն.Ա. Հովհաննիսյանին նշանակում են Միջին Ասիա էվակուացված Մոսկվայի մարզի Պոդոլսկ քաղաքի հրետանային ուսումնարանի պետ:

---

[48] ՌՊՌԱ, ֆ. 37837, ց. 3, գ. 520, թ. 235:
[49] Նույն տեղում:

Այդ պաշտոնում նա ծառայում է մինչև 1943 թ. մայիս, ապա իր խնդրանքով վերադառնում ռազմաճակատ: Սկզբում որպես 15-րդ հրաձգային կորպուսի հրետանու պետ՝ գնդապետ Ն.Ա. Հովհաննիսյանն ակտիվորեն մասնակցում է Կուրսկի ճակատամարտին՝ Օրյոլի ուղղությամբ, նպաստում հինավուրց ռուսական քաղաքի ազատագրմանը (1943 թ. օգոստոսի 5-ին) և պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով: Հետաքրքիր է, որ գնդապետ Ն.Ա. Հովհաննիսյանի միավորման շարքերում էր մարտնչում նաև նրա որդին՝ հրետանային մարտկոցի հրամանատար, լեյտենանտ Ռեմ Հովհաննիսյանը, որը պարգևատրվում է Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով: Կուրսկի ճակատամարտի հաղթական ավարտից հետո հայր ու որդի Հովհաննիսյանների մարտական ուղին ձգվում է Կիև, Ժիտոմիր, Լվով, Պերեմիշլ երթուղով: 1944 թ. փետրվարի 20-ին գնդապետ Ն.Ա. Հովհաննիսյանը նշանակվում է 3-րդ գվարդիական տանկային բանակի հրետանու հրամանատար և ակտիվորեն մասնակցում Լեհաստանի ազատագրման, ապա գերմանական հողում հիտլերյան բանակի ջախջախման մարտերին: Վիսլայի և Սանդոմիրյան հենակետի գրավման մարտերում 3-րդ գվարդիական տանկային բանակի հրետանու գործողությունները հմտորեն ղեկավարելու համար գնդապետ Ն.Ա. Հովհաննիսյանը պարգևատրվում է Սուվորովի 2-րդ աստիճանի զորավարական շքանշանով, իսկ նոյեմբերի 18-ին արժանանում հրետանու գեներալ-մայորի կոչման: Հրետանու գեներալ-մայոր Նիկոլայ Հովհաննիսյանն աչքի է ընկնում նաև Կարմիր բանակի՝ 1945 թ. հունվարի 12-ին սկսած հզոր հարձակման ժամանակ: Գվարդիականները սրընթաց գործողություններով մեկը մյուսի ետևից ազատագրելով լեհական բազմաթիվ քաղաքներ, հունվարի 22-ին մտան Գերմանիա և մարտեր սկսեցին Սիլեզիայի արդյունաբերական շրջանը գրավելու համար: Այդ օրերին հրետանու գեներալ-մայոր Նիկոլայ Հովհաննիսյանի անունը 7 անգամ նշվել է Գերագույն գլխավոր հրամանատարի հրամաններում: Ավա՜ղ, գեներալ Ն.Ա. Հովհաննիսյանին բախտ չվիճակվեց տեսնելու

հաղթանակը: Նա հերոսաբար զոհվեց 1945 թ. հունվարի 28-ին Վիսլա-Օդերյան գործողությունների ժամանակ: Նրա աճյունը փոխադրվեց ուկրաինական Ժիտոմիր քաղաք և ամփոփվեց այնտեղ: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1945 թ. ապրիլի 6-ի հրամանագրով գվարդիայի հրետանու գեներալ-մայոր Նիկոլայ Ալեքսանդրի Հովհաննիսյանը հետմահու պարգևատրվեց Լենինի շքանշանով: Գեներալի որդին շարունակեց հոր գործը: Պատերազմի ավարտից հետո նա սովորեց և ավարտեց ռազմական ակադեմիան, ավելի քան 10 տարի ծառայեց Վարշավայի պայմանագրի միացյալ զինված ուժերի շտաբում, զբաղեցրեց զանազան պատասխանատու պաշտոններ, միաժամանակ կատարեց ռազմագիտահետազոտական աշխատանք և պաշտպանեց ատենախոսություն: 1976 թ. Ռեմ Նիկոլայի Հովհաննիսյանին շնորհվեց գեներալ-մայորի կոչում:

Խորհրդա-ֆիննական և Հայրենական մեծ պատերազմների ակտիվ մասնակից, հրետանու գեներալ-մայոր Նիկոլայ Ալեքսանդրի Հովհաննիսյանը ծնվել է Երևանի Սուրմալու գավառի Բահառլու գյուղում՝ 1899 թ. մայիսի 2-ին: Վաղ հասակում զրկվելով ծնողներից՝ նա 1912 թ. ստիպված է լինում մեկնել Երևան և սկսել աշխատանքային գործունեությունը՝ միաժամանակ սովորելով դպրոցում: 1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Ն.Ա. Հովհաննիսյանը կամավոր մտնում է Հայկական Կարմիր բանակի շարքերը: Ծառայության հետ մեկտեղ նա սովորում և ավարտում է բանակի քաղբաժնին կից կուսակցական դպրոցը և 1922 թ. աշնանը նշանակվում Հայկական Կարմիր բանակի վերակազմավորման հետևանքով ստեղծված Հայկական հրաձգային դիվիզիայի հրետանային գնդում՝ որպես քաղղեկ: 1926 թ. Նիկոլայ Հովհաննիսյանին ուղարկում են Մոսկվա՝ հրետանային դպրոցում սովորելու համար: Դպրոցն ավարտելուց հետո նա նշանակվում է Երրորդ հրաձգային դիվիզիայի հրետանային գնդում՝ որպես կրակային դասակի հրամանատար: Շուտով կարմիր հրամանատար Ն.Ա. Հովհան-

նիսյանն առաջ է քաշվում սկզբում մարտկոցի, ապա՝ դիվիզիոնի հրամանատարի պաշտոններում: 1933 թ. նա ընդունվում է Մոսկվայի Մ.Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան: Այն ավարտելուց հետո՝ 1936 թ. աշնանը, Ն.Ա. Հովհաննիսյանը վերադառնում է Հայաստան և նշանակվում Հայկական լեռնահրաձգային դիվիզիայի շտաբի օպերատիվ բաժնի պետի տեղակալ, ապա՝ բաժնի պետ, դիվիզիայի շտաբի պետ: 1937–1938 թթ. մայոր Նիկոլայ Հովհաննիսյանը Հայկական 76-րդ Կ.Ե. Վորոշիլովի անվան կարմրադրոշ լեռնահրաձգային դիվիզիայի հրամանատարն էր: 1938 թ. մայիսին նա նշանակում է ստանում Բելոռուսական հատուկ զինվորական օկրուգում՝ որպես դիվիզիայի հրետանու պետ, և 1939 թ. սեպտեմբերին մասնակցում Արևմտյան Բելոռուսիայի ազատագրմանը, որը, ինչպես նշել ենք, դեռևս 1920 թ. Խորհրդային Ռուսաստանից զավթել էր պանական Լեհաստանը: Այնուհետև գնդապետ Ն.Ա. Հովհաննիսյանը, որպես Լենինգրադյան զինվորական օկրուգի 9-րդ բանակի 122-րդ հրաձգային դիվիզիայի հրետանու պետ, 1939 թ. նոյեմբերի 30-ից մինչև 1940 թ. մարտի 13-ը ակտիվորեն մասնակցում է Խորհրդա-ֆիննական պատերազմին...

Խորհրդա-ֆիննական պատերազմում իր առաջին մարտական մկրտությունն է ստացել ապագա Զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ, Խորհրդային Միության հերոս Համազասպ Խաչատուրի Բաբաջանյանը:

Հ.Խ. Բաբաջանյանը 1938 թ. հոկտեմբերի 17-ից մինչև 1940 թ. դեկտեմբերի 23-ը ծառայել է Լենինգրադյան զինվորական օկրուգի 2-րդ զենիթային-գնդացրային գնդում՝ որպես գնդի հրամանատարի շարային գծով տեղակալ և ուներ մայորի կոչում[50]: Գունդը 1939 թ. նոյեմբերի 30-ից մինչև 1940 թ. մարտի 13-ը, այսինքն՝ Խորհրդա-ֆիննական պատերազմի օրերին հուսալիորեն պաշտպանում էր Լենինգրադի երկինքը

---

[50] ՌԴ ՊՆԿԱ, Զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ Հ.Խ. Բաբաջանյանի անձնական գործ, ծառայողական թերթ, թ. 1, ինքնակենսագրություն, թ. 13:

ֆիննական ինքնաթիռների հարձակումից: Շնորհիվ օդնդի, ինչպես նաև Լենինգրադի զինվորական օկրուգի հակաօդային պաշտպանության զորքերի գործադրած ջանքերի՝ հակառակորդի ոչ մի ինքնաթիռի չհաջողվեց ներխուժել Ռուսաստանի հյուսիսային մայրաքաղաքի օդային տարածք և որևէ վնաս պատճառել նրան... Հ.Խ. Բաբաջանյանը ծնվել է 1906 թ. փետրվարի 18-ին Ռուսաստանի կայսրության Ելիզավետպոլի նահանգի Շամխորի շրջանի հայկական Չարդախլու գյուղում: Այդ գյուղը հայտնի է նաև որպես Խորհրդային Միության մարշալ, կրկնակի հերոս Իվան Քրիստափորի Բաղրամյանի ծնողների ծննդավայր: 1925 թ. սեպտեմբերի 16-ին Հ.Խ. Բաբաջանյանը կամավոր մտել է Կարմիր բանակի շարքերը և այնտեղ ծառայել մինչև իր կյանքի վերջը՝ 1977 թ. նոյեմբերի 1-ը: 1929 թ. ավարտել է Անդրկովկասյան զինվորական դպրոցը, այնուհետև վարել դասակի, վաշտի սպայի գումարտակի հրամանատարի պաշտոնները, սկզբում՝ Անդրկովկասյան, իսկ 1938 թ. հոկտեմբերից՝ Լենինգրադյան զինվորական օկրուգում: Այնտեղ նա վարել է 2-րդ զենիթային-գնդացրային գնդի հրամանատարի շարային գծով տեղակալի պաշտոնը և մասնակցել Խորհրդա-ֆիննական պատերազմին: Հայրենական մեծ պատերազմը մայոր Հ.Խ. Բաբաջանյանը դիմավորել է Արևմտյան ռազմաճակատում՝ սկզբում որպես 19-րդ բանակի շտաբի օպերատիվ բաժնի պետի օգնական, իսկ 1941 թ. հուլիսից մինչև 1942 թ. ապրիլ՝ 2-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի 395-րդ գվարդիական հրաձգային գնդի հրամանատար: Այնուհետև սովորել և ավարտել է Մ.Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայի արագացված դասընթացները և 1942 թ. սեպտեմբերին նշանակվել 3-րդ (20-րդ գվարդիական) մեքենայացված բրիգադի, իսկ 1944 թ. օգոստոսին՝ 11-րդ գվարդիական տանկային կորպուսի հրամանատար: Նա ակտիվորեն մասնակցել է Սմոլենսկի, Մոսկվայի, Կուրսկի ճակատամարտերին, Լվով-Սանդոմիրյան, Վիսլա-Օդերյան, Արևելա-Պոմերյան և Բեռլինյան մարտական գործողություններին, Դնեստր գետն առաջինների թվում հաղթահարելու և

ցուցաբերած արիության համար արժանացել Խորհրդային Միության հերոսի կոչման:

Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո՝ 1945 թ. հուլիսի 11-ին, գնդապետ Հ.Խ. Բաբաջանյանին շնորհվել է գեներալ-մայորի կոչում: Հետպատերազմյան տարիներին գեներալ Հ.Խ. Բաբաջանյանը եղել է բանակի, զինվորական օկրուգի հրամանատար, Զրահատանկային զորքերի ակադեմիայի պետ (1967–69), ապա մինչև իր կյանքի վերջը վարել է Խորհրդային բանակի տանկային զորքերի պետի բարձր պաշտոնը: 1953 թ. նրան շնորհվել է գեներալ-լեյտենանտի, 1956-ին՝ գեներալ-գնդապետի, 1968-ին՝ զրահատանկային զորքերի մարշալի, իսկ 1975-ին՝ զրահատանկային զորքերի գլխավոր մարշալի կոչում: Հ.Խ. Բաբաջանյանը պարգևատրված էր Լենինի 4, Հոկտեմբերյան հեղափոխության, Կարմիր դրոշի 4, Սուվորովի 1-ին և 2-րդ, Կուտուզովի 1-ին, Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի, Կարմիր աստղի 2, «ԽՍՀՄ զինված ուժերում հայրենիքին մատուցած ծառայության համար» շքանշաններով, բազմաթիվ մեդալներով և արտասահմանյան երկրների պարգևներով: Հ.Խ. Բաբաջանյանն ընտրվել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 6-րդ և 7-րդ նստաշրջանների պատգամավոր: Թաղված է Մոսկվայի Նովոդևիչի գերեզմանատանը[51]:

Խորհրդա-ֆիննական պատերազմում իր մարտական մկրտությունն է ստացել նաև ինժեներական զորքերի մարշալ Սերգեյ Քրիստափորի Ագանովը (ծնվել է 1917 թ. հունիսի 4-ին Աստրախան քաղաքում): Մոսկվայի ինժեներական ռազմական ուսումնարանն առաջին կարգի դիպլոմով ավարտելուց հետո լեյտենանտ Ս.Ք. Ագանովը 1940 թ. հունվարի 31-ին նշանակում է ստացել Լենինգրադյան զինվորական օկրուգի 7-րդ բանակի 123-րդ հրաձգային դիվիզիայի 257-րդ առանձին սակրային գումարտակում՝ որպես սակրային դասակի հրամանատար: Այդ դիվիզիան ակտիվորեն մասնակցել է Մաններհայմի գծի ճեղքման մարտերին և հրամանատարության առա-

[51] Военная энциклопедия. М.: Воениздат, 1997. Т. 1. С. 335.

ջադրանքները փայլուն կատարելու, ինչպես նաև ծմեռային դաժան սառնամանիքային և բարդ տեղանքում տեղի ունեցած կռիվներում ցուցաբերած խիզախության համար պարգևատրվել Լենինի շքանշանով: Նշենք, որ Կարմիր բանակում այդպիսի բարձր պարգևի արժանացան նաև 70-րդ, 100-րդ և 136-րդ հրաձգային դիվիզիաները, ինչպես նաև 28-րդ կորպուսային հրետանային գունդը և 39-րդ առանձին թեթև տանկային բրիգադը[52]:

ՌԴ պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվի տվյալների համաձայն՝ 123-րդ հրաձգային դիվիզիայի ազգային կազմը 1939 թ. նոյեմբերի 11-ի տվյալներով ուներ հետևյալ տեսքը. ռուսներ՝ 10002, ուկրաինացիներ՝ 3312, բելոռուսներ՝ 432, հայեր՝ 670, վրացիներ՝ 121, ադրբեջանցիներ՝ 4, ուզբեկներ՝ 131, ղազախներ՝ 96[53]: Դիվիզիայի հաջողությունները մեծապես կախված էին նաև նրա առանձին սակրային գումարտակի գործողություններից: Սակրավորները, ամեն վայրկյան վտանգելով իրենց կյանքը, ականազերծում էին հակառակորդի ականադաշտերը, ճանապարհ բացում փշալարային փակոցների միջով, վերանորոգում ավերված ճանապարհներն ու կամուրջները և այլն: Իսկ եթե հիշենք, որ նրանք այդ ամենն անում էին սաստիկ սառնամանիքների, հակառակորդի ծառերի վրա քողարկված դիպուկահար «կուկուշկաների» կրակի տակ, ապա ավելի պարզ կդառնա սակրավորների կատարած հերոսական աշխատանքի պատկերը: Կարելյան պարանոցում ծմեռային սառնամանիքի և բարդ տեղանքի պայմաններում ծավալված դաժան, արյունահեղ մարտերի ժամանակ լեյտենանտ Ագանովը հնարավորություն է ստանում ոչ միայն գործնականում օգտագործել ուսումնարանում ստացած գիտելիքները, այլև կատարելագործել իր մարտական վարպետությունը, խորապես յուրացնել սակրավորի վտանգավոր, բայց չափազանց անհրաժեշտ մասնագիտությունը, ձեռք բերել հրամանատարական ունակություններ:

---

[52] Бои на Карельском перешейке. С. 411.

[53] ՌԴ ՊՆԿԱ, ֆ. 123-րդ հրաձգային դիվիզիա, ց. 345110, գ. 1, թ. 12:

Հաշվի առնելով երիտասարդ սպայի կարողությունները՝ նրան առաջ են քաշում սակրային վաշտի հրամանատարի պաշտոնում: Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրվանից՝ 1942 թ. հունիսի 22-ից մինչև 1942 թ. նոյեմբեր ամիսը, Սերգեյ Ագանովը մարտնչում էր Լենինգրադյան, ապա Վոլխովյան ռազմաճակատների 23-րդ բանակի 123-րդ հրաձգային, Լենինի շքանշանակիր դիվիզիայի շարքերում՝ որպես սակրային վաշտի հրամանատար, ապա գումարտակի շտաբի պետ: Նա Լենինգրադի հերոս պաշտպանների շարքերում իր ուսերի վրա կրեց պաշարված քաղաքի բնակիչներին հասած բոլոր զրկանքները և պաշարման դաժան հետևանքները: 1941 թ. հոկտեմբերի 24-ին Սերգեյ Ագանովին շնորհվեց ավագ լեյտենանտի, իսկ 1942 թ. փետրվարի 28-ին՝ կապիտանի կոչում: Նա նշանակվեց Լենինգրադյան ռազմաճակատի 54-րդ բանակի 136-րդ առանձին մոտոինժեներային գումարտակի հրամանատար: 1942 թ. ապրիլին կապիտան Ագանովին վստահվեց 54-րդ բանակի ինժեներական զորքերի շտաբի պետի օգնականի պաշտոնը: Հակառակորդի հրետանային, ականանետային ու գնդացրային ուժեղ կրակի տակ ականապատման և ականազերծման աշխատանքները հմտորեն ղեկավարելու և ցուցաբերած քաջության համար կապիտան Ագանովը 54-րդ բանակի հրամանատար, Խորհրդային Միության հերոս գեներալ-մայոր (հետագայում՝ բանակի գեներալ) Ի.Ի. Ֆեդյունինսկու՝ 1942 թ. ապրիլի 21-ի հրամանով պարգևատրվեց «Արիության համար» մեդալով: Դա ապագա մարշալի առաջին մարտական պարգևն էր: Նույն թվականի սեպտեմբերին Ագանովին շնորհվեց մայորի կոչում, իսկ նոյեմբերին նա առաջ քաշվեց Կարմիր բանակի ինժեներական զորքերի շտաբի արգելափակոցների ու ականափակոցների բաժնի պետի օգնականի պաշտոնում: Մարտական առաջադրանքները ժամանակին կատարելու և ցուցաբերած քաջության համար մայոր Ագանովը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1944 թ. մայիսի 17-ի հրամանագրով պարգևատրվեց Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով: Մինչ այդ՝

1942 թ. դեկտեմբերի 22-ին, Ագանովը պարգևատրվել էր նաև «Լենինգրադի պաշտպանության համար» մեդալով: 1944 թ. հոկտեմբերի 31-ին նրան շնորհվեց փոխգնդապետի կոչում և վստահվեց Կարմիր բանակի ինժեներական զորքերի շտաբի օպերատիվ բաժնի պետի ավագ օգնականի պաշտոնը: Այդ պաշտոնում փոխգնդապետ Ս.Ք. Ագանովը 1945 թ. մայիսի 9-ին դիմավորեց հաղթանակը: Հայրենական մեծ պատերազմից հետո փոխգնդապետ Ս.Ք. Ագանովը 1946 թ. ապրիլի 18-ից մինչև 1951 թ. հունվարի 16-ը վարել է Խորհրդային բանակի ինժեներական զորքերի շտաբի 1-ին բաժնի ավագ սպայի, այնուհետև մինչև 1952 թ. հունվարի 28-ը շտաբի 3-րդ բաժնի պետի տեղակալի պաշտոնները: 1947–1950 թթ. փոխգնդապետ Ս.Ք. Ագանովը հեռակայել և ոսկե մեդալով ավարտել է Մ.Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան: 1951 թ. փետրվարի 17-ին նրան շնորհվել է գնդապետի կոչում: Ս.Ք. Ագանովին 1952 թ. հունվարի 28-ին վստահվել է Խորհրդային բանակի ինժեներական զորքերի շտաբի 1-ին բաժնի պետի պատասխանատու պաշտոնը: 1953 թ. նոյեմբերի 25-ից մինչև 1955 թ. նոյեմբերի 26-ը գնդապետ Ս.Ք. Ագանովը սովորել է գլխավոր շտաբի Կ.Ե. Վորոշիլովի անվան ռազմական ակադեմիայում: Ավարտելուց հետո նշանակվել է Գերմանիայում խորհրդային զորքերի խմբավորման 8-րդ գվարդիական բանակի ինժեներական զորքերի պետ: 1959 թ. մայիսի 25-ին ԽՍՀՄ նախարարների խորհրդի որոշմամբ Ս.Ք. Ագանովին շնորհվել է ինժեներական զորքերի գեներալ-մայորի կոչում: 1960 թ. սեպտեմբերից մինչև 1963 թ. դեկտեմբեր ինժեներական զորքերի գեներալ-մայոր Ս.Ք. Ագանովն աշխատել է ԽՍՀՄ զինված ուժերի Գլխավոր շտաբի ռազմական ակադեմիայի ռազմաինժեներական ամբիոնում, նախ՝ որպես ավագ դասախոս, ապա՝ ամբիոնի վարիչի տեղակալ: 1964 թ. նա հաջողությամբ պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել ռազմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, իսկ 1966 թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում:

1967 թ. հունվարի 18-ին գեներալ Ս.Ք. Ագանովը նշանակվել է Գերմանիայում խորհրդային զորքերի խմբավորման ինժեներական զորքերի պետ և այդ պաշտոնում ծառայել մինչև 1970 թ. հունվարի 9-ը: 1969 թ. փետրվարի 21-ին նրան շնորհվել է ինժեներական զորքերի գեներալ-լեյտենանտի կոչում: 1970–1974 թթ. Ս.Ք. Ագանովը վարում է ԽՍՀՄ պաշտպանության նախարարության ինժեներական զորքերի պետի տեղակալի պաշտոնը: 1974 թ. ապրիլի 29-ից մինչև 1975 թ. մարտի 26-ը Ս.Ք. Ագանովը Վ. Կույբիշևի անվան ռազմաինժեներական ակադեմիայի պետն էր: 1975 թ. մարտի 26-ին նա նշանակվել է ԽՍՀՄ պաշտպանության նախարարության ինժեներական զորքերի պետ: Նույն թվականի ապրիլի 25-ին Ս.Ք. Ագանովին շնորհվել է ինժեներական զորքերի գեներալ-գնդապետի կոչում: Այդ բարձր պաշտոնում Ս.Ք. Ագանովն աշխատել է շուրջ 12 տարի՝ մինչև 1987 թ. փետրվարի 26-ը: 1980 թ. մայիսի 7-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով Սերգեյ Ագանովին շնորհվել է ինժեներական զորքերի մարշալի կոչում:

Ինժեներական զորքերի մարշալ Ս.Ք. Ագանովի հմուտ ղեկավարությամբ ինժեներական զորքերը ոչ միայն կրում են էական կառուցվածքային փոփոխություններ, այլև հիմնովին բարելավվում է տեխնիկական զինվածությունը, մշակվում են նոր միջոցներ հարձակողական և պաշտպանողական գործողությունների ժամանակ զորքերի համապատասխան մասնագիտական սպասարկման և ապահովման համար: Մարշալն անձամբ մեծ ներդրում կատարեց հատկապես ինժեներական զորքերի սպառազինության նորացման և արդիականացման ասպարեզում, որի համար նա 1981 թ. արժանացավ պետական մրցանակի: Միաժամանակ նա զգալի գործ կատարեց ռազմաինժեներական գիտության զարգացման և ինժեներական զորքերի հրամանատարական կազմի կրթական մակարդակի բարձրացման բնագավառում:

1986 թ. ապրիլին որպես պետական հանձնաժողովի անդամ, Ս.Ք. Ագանովը, վտանգելով առողջությունը, անձամբ ղե-

կավարել է Չերնոբիլի ատոմակայանի աղետի հետևանքները վերացնելու ինժեներական զորքերի աշխատանքները, որի համար պարգևատրվել է Լենինի շքանշանով: Նա մի քանի անգամ եղել է Աֆղանստանում, անձամբ ղեկավարել ինժեներական զորքերի մարտական գործողությունները: 1987 թ. մարտից մինչև իր կյանքի վերջը ինժեներական զորքերի մարշալ Ս.Ք. Ագանովն աշխատում էր ԽՍՀՄ պաշտպանության նախարարության գլխավոր տեսուչների խմբում, կատարում պատասխանատու առաջադրանքներ: Ս.Ք. Ագանովը պարգևատրվել է Լենինի, Կարմիր դրոշի, Կուտուզովի 1-ին աստիճանի, Հայրենական պատերազմի 1-ին և 2-րդ աստիճանների, Կարմիր աստղի երկու, «ԽՍՀՄ զինված ուժերի կազմում Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 3-րդ աստիճանի» շքանշաններով, «Արիության համար», «Մարտական ծառայությունների համար», «Լենինգրադի պաշտպանության համար» մեդալներով և այլն:

Խորհրդա-ֆիննական պատերազմում իր առաջին մարտական մկրտությունը ստացած, Հայրենական մեծ պատերազմում հաղթական մարտական ուղի անցած և հետպատերազմյան խաղաղ տարիներին ԽՍՀՄ զինված ուժերի ինժեներական մարտական պատրաստության բարձրացման գործում մեծ ավանդ ներդրած տաղանդավոր զորապետի կյանքի թելը կտրվել է Մոսկվայում՝ 1996 թ. փետրվարի 1-ին՝ երկարատև ու ծանր հիվանդությունից հետո[54]:

Խորհրդա-ֆիննական պատերազմում Մաններհայմի գծի ճեղքման մարտերում իր արժանի ավանդն է ներդրել հրետանու ապագա գեներալ-լեյտենանտ Իվան Դավթի Վեքիլովը (ծնվել է 1894 թ. նոյեմբերի 24-ին Վրաստանի Ցարսկոյե կոլոդցի կոչվող բնակավայրում): 1939 թ. նոյեմբերից մինչև 1940 թ. մարտի 13-ը գնդապետ Ի.Դ. Վեքիլովը Կարելյան պարանոցում կատարում էր 7-րդ բանակի հրաձգային կորպուսներից մեկի հրետանու պետի պաշտոնը:

---

[54] ՌԴ ՊՆԿԱ. Ինժեներական զորքերի մարշալ Ս.Ք. Ագանովի անձնական գործ, թթ. 1–15:

Ի.Դ. Վեքիլովը լավ էր հասկանում, որ տարիների ընթացքում խնամքով կառուցված Մաններհայմի գծի անառիկ ամրությունները հաղթահարելու գործում գլխավոր դերը պետք է կատարի հրետանին: Դրա համար էլ նա մեծ նշանակություն էր տալիս խիստ ճշտված և չափազանց հզոր հրետանային դիպուկ կրակ վարելու մարտավարությանը: Գիշեր ու ցերեկ, այրող սառնամանիքի պայմաններում նա հաճախ էր հայտնվում հրետանավորների դիրքերում, ստուգում մարտկոցների պատրաստվածության վիճակը, հետևում, որ դրանք մշտապես ապահովված լինեն արկերով, իսկ զինվորները՝ սննդով:

1940 թ. փետրվարի 11-ին՝ երկարատև ու խնամքով նախապատրաստական աշխատանքներ տանելուց հետո, սկսվեց Մաններհայմի գծի վճռական գրոհը: Այդ օրը վաղ առավոտյան թշնամու գլխին թափվեցին հազարավոր արկեր: Վիբորգի ընդհանուր ուղղությամբ գործում էր գնդապետ Ի.Դ. Վեքիլովի գլխավորած հրետանին: Դիպուկ կրակից աստիճանաբար մեկը մյուսի ետևից շարքից դուրս էին գալիս հակառակորդի փայտահողային կրակակետերը, ավերվում էին երկաթբետոնից կառուցված դոտերը: Փետրվարի 16-ին ֆիններն ստիպված էին թողնել իրենց պաշտպանության առաջին գոտին և նահանջել երկրորդ, ավելի ամուր կառուցված բնագիծը: Փետրվարի 28-ին գնդապետ Ի.Դ. Վեքիլովի հրետանավորները հակառակորդի դիրքերի վրա թափեցին արկերի տեղատարափ կարկուտ: Մինչև մարտի առաջին շաբաթվա վերջը Մաններհայմի գիծը ճեղքվեց: Հակառակորդի զորքերը Վիբորգի, Կեգսհոլմի և Սորտավալայի շրջանում ընկան շրջապատման վտանգի մեջ, ուստի ստիպված բռնեցին նահանջի ուղին, իսկ մարտի 12-ին ֆիննական կառավարությունը ստիպված էր հաշտություն խնդրել:

Կորպուսի հրետանու գործողությունները հմտորեն ղեկավարելու և ցուցաբերած խիզախության համար Ի.Դ. Վեքիլովն արժանացավ Կարմիր դրոշի շքանշանի[55]: Հայրենական

---

[55] *А.В. Казарьян.* Война, люди, судьбы. Е.: изд. «Айастан». С. 10.

մեծ պատերազմի տարիներին Ի.Դ. Վեքիլովը եղել է Հարավային ռազմաճակատի հրետանու շտաբի պետ, Հարավարևմտյան ուղղության հրետանու պետի տեղակալ, Կարմիր բանակի հրետանու շտաբի պետի տեղակալ, ակտիվորեն մասնակցել է Դոնի Ռոստովի, Մոսկվայի Ելեցի շրջաններում տեղի ունեցած մարտերին, Ստալինգրադի և Կուրսկի ճակատամարտերին, Բելոռուսական, Կորսուն-Շևչենկովյան, Վիսլա-Օդերյան, Պոմերանյան և Բեռլինյան գործողություններին: 1942 թ. հունվարի 10-ին նրան շնորհվել է հրետանու գեներալ-մայորի, իսկ 1943 թ. հուլիսի 5-ին՝ հրետանու գեներալ-լեյտենանտի կոչում: Պատերազմից հետո Կարմիր բանակի գլխավոր շտաբում վարել է հրետանային վարչության պետի պատասխանատու պաշտոնը, այնուհետև տեղափոխվել գլխավոր շտաբի ռազմական ակադեմիա և աշխատել որպես դասախոս: Պարգևատրված էր Լենինի, Կարմիր դրոշի 3, Սուվորովի և Կուտուզովի 2-րդ աստիճանների, Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի, Կարմիր աստղի շքանշաններով և բազմաթիվ մեդալներով: Ի.Դ. Վեքիլովը մահացել է Մոսկվայում՝ 1953 թ. հունիսի 16-ին[56]:

Խորհրդա-ֆիննական պատերազմին ակտիվ մասնակցություն է ունեցել նաև ապագա գեներալ-լեյտենանտ Ստեփան Իլյայի Կինոսյանը (ծնվել է 1900 թ. Վրաստանի Ախալքալաքի շրջանի Սաթխա գյուղում): 19 տարեկան հասակում նա կամավոր մտնում է Կարմիր բանակի շարքերը և ակտիվորեն մասնակցում Հայաստանում և Վրաստանում խորհրդային կարգերի հաստատման մարտերին: 1921–1923 թթ. նա ծառայում էր Հայկական հրաձգային դիվիզիայի շարքերում: 1923 թ. դիվիզիայի հրամանատարությունը Ս.Ի. Կինոսյանին ուղարկում է Մոսկվա՝ Համառուսաստանյան Կենտգործկոմի անվան Կրեմլի ռազմական դպրոցում սովորելու: 1925 թ. գերազանց գնահատականներով ավարտելով դպրոցը՝ նա մեկ տարի ծառայում է դպրոցում՝ որպես ուսումնական դասակի հրամանա-

[56] Նույն տեղում, էջ 18:

տար: 1926 թ. հուլիսի 4-ին Ս. Կինոսյանը վերադառնում է Երևան և նշանակվում Ա.Ֆ. Մյասնիկյանի անվան Հայկական միացյալ ռազմական դպրոցի ուսումնական վաշտի դասակի հրամանատար:

Անդրկովկասի հանրապետությունների ազգային ռազմական դպրոցները 1927 թ. միավորվում են մեկ միացյալ Թիֆլիսի Անդրկովկասյան ռազմական դպրոցի մեջ: Ստեփան Կինոսյանը տեղափոխվում է Թիֆլիս և վեց տարի աշխատում այդ դպրոցում՝ վարելով վաշտի հրամանատարի օգնականի, կուրսանտական վաշտի հրամանատարի, դպրոցի ուսումնական մասի պետի օգնականի պաշտոնները: 1933 թ. գարնանը Ս.Ի. Կինոսյանն ընդունվում է Մոսկվայի Մ.Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիա, որն ավարտում է 1936 թ. առաջին կարգի դիպլոմով և նշանակում ստանում Կալինին քաղաքում տեղաբաշխված 48-րդ հրաձգային դիվիզիայի շտաբում՝ օպերատիվ բաժնի պետ: Մեկ տարի անց նրան շնորհվում է մայորի կոչում. նշանակվում է նույն դիվիզիայի շտաբի պետ, 1939 թ. առաջ է քաշվում Կիևի հատուկ ռազմական օկրուգի շտաբի օպերատիվ բաժնի պետի օգնականի պաշտոնում:

1939 թ. սեպտեմբերին փոխգնդապետ Ս.Ի. Կինոսյանը, որպես Ի.Վ. Բոլդինի հեծյալ-մեքենայացված զորախմբի շտաբի օպերատիվ բաժնի պետ, մասնակցում է Արևմտյան Բելոռուսիայի ազատագրմանը: 1939 թ. նոյեմբերի 30 – 1940 թ. մարտի 13-ը գնդապետ Ս.Ի. Կինոսյանը մասնակցում է Խորհրդա-ֆիննական պատերազմին 7-րդ բանակի շարքերում՝ Կարելյան պարանոցում: Դաժան ձմեռային պայմաններում տեղի ունեցած մարտերում, հակառակորդի Մաններհայմի գծի ամրությունները գրոհելիս, Ս.Ի. Կինոսյանը ձեռք է բերում մարտական հարուստ փորձ: Այստեղ բացահայտվում են նրա հրամանատարական տաղանդը և մարտական հատկությունները: Նա աճում և կոփվում է մարտադաշտում, դառնում ռազմական արվեստի գիտակ:

Մաններհայմի գծի անառիկ պաշտպանությունը ճեղքելիս ցուցաբերած խիզախության համար գնդապետ Ս.Ի. Կի-

նոսյանը պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով[57]: Հայրենական մեծ պատերազմի տարիներին Ս.Ի. Կինոսյանը եղել է 33-րդ բանակի շտաբի օպերատիվ բաժնի պետ, ապա 49-րդ բանակի շտաբի պետ, ակտիվորեն մասնակցել Մոսկվայի ճակատամարտին, Արևելա-Պրուսական, Վիսլա-Օդերյան մարտական գործողություններին: 1942 թ. նոյեմբերի 17-ին նրան շնորհվել է գեներալ-մայորի, իսկ 1945 թ. մայիսի 13-ին՝ գեներալ-լեյտենանտի կոչում: Պատերազմի տարիներին պարգևատրվել է Լենինի, Կարմիր դրոշի 4, Սուվորովի 2-րդ աստիճանի, Կուտուզովի 1-ին և 2-րդ աստիճանների, Բոգդան Խմելնիցկու 1-ին աստիճանի շքանշաններով և այլն: Հետպատերազմյան տարիներին եղել է Թուրքեստանյան զինվորական օկրուգի շտաբի պետ, 1950 թ. ավարտել է Գլխավոր շտաբի Կ.Ե. Վորոշիլովի անվան ռազմական ակադեմիան, 1956 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, ստացել ռազմական գիտությունների թեկնածուի կոչում: Սկսած 1950 թ.՝ դասավանդել է վերոհիշյալ ակադեմիայում, 1958 թ. դարձել է ամբիոնի պետի տեղակալ: 1964 թ. հիվանդության պատճառով զորացրվել է ԽՍՀՄ զինված ուժերի շարքերից: Մահացել է 1965 թ. սեպտեմբերի 29-ին Մոսկվայում:

Խորհրդա-ֆիննական պատերազմին ակտիվորեն մասնակցել է նաև ապագա գեներալ-մայոր Բագրատ Իվանի Իսահակյանը (ծնվել է 1904 թ. դեկտեմբերի 25-ին Շուշի քաղաքում): 1921 թ. կամավոր մտել է Կարմիր բանակի շարքերը, 1925 թ. ավարտել է Ա.Ֆ. Մյասնիկյանի անվան Հայկական միացյալ ռազմական դպրոցը, ապա ծառայությունը շարունակել 66-րդ հեծյալ գնդում, վարել դասակի, ապա էսկադրոնի հրամանատարի, գնդային դպրոցի պետի և գնդի շտաբի պետի պաշտոններ: 1938 թ. նրան շնորհվել է մայորի կոչում: Մայոր Բ.Ի. Իսահակյանը նույն թվականին նշանակվել է Լենինգրադյան զինվորական օկրուգի 25-րդ հեծյալ դիվիզիայի

---

[57] Նույն տեղում, գիրք 1-ին, Ե., 1975, էջ 102; *Արմո Մալխասյան*, Սովետական բանակի հայ գործիչները, Ե.: Հայպետհրատ, 1963, էջ 264:

63-րդ հեծյալ գնդի հրամանատար և այդ պաշտոնում 1939 թ. նոյեմբերի 30 – 1940 թ. մարտի 13-ը մասնակցել Խորհրդա-ֆիննական պատերազմին՝ Կարելյան պարանոցում գրոհելով Մաններհայմի գծի անառիկ պաշտպանական բնագիծը և ցուցաբերած սխրանքի համար պարգևատրվել Կարմիր աստղի շքանշանով[58]: Հայրենական մեծ պատերազմի տարիներին վարել է հեծյալ գնդի, ապա մեքենայացված բրիգադի հրամանատարի պաշտոնները, արժանացել գնդապետի կոչման: Հետպատերազմյան տարիներին ավարտել է Խորհրդային բանակի զրահատանկային և մեքենայացված զորքերի ռազմական ակադեմիան, այնուհետև վարել տանկային միավորման հրամանատարի պաշտոնը: 1954 թ. նրան շնորհվել է տանկային զորքերի գեներալ-մայորի կոչում: Մեկ տարի անց առողջական վիճակը վատանալու պատճառով զորացրվել է ԽՍՀՄ զինված ուժերի շարքերից, բնակություն հաստատել Մինսկում, որտեղ և մահացել է 1974 թ. սեպտեմբերի 26-ին:

Հայրենիքին մատուցած ծառայությունների համար Բ.Ի. Իսահակյանը պարգևատրվել է Լենինի, 2 Կարմիր դրոշի, Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի, Կարմիր աստղի շքանշաններով, բազմաթիվ մեդալներով[59]:

Մաններհայմի անառիկ գիծը ճեղքողների թվում էր նաև Պետրոս Անտոնի Չունչուզովը (ծնվել է 1913 թ. օգոստոսի 15-ին Ղրիմի Արմյանսկ քաղաքում): Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո նա ընդունվել է Լենինգրադի հրետանային թիվ 1 ուսումնարանը, որն ավարտելուց հետո ծառայել է 168-րդ հրաձգային դիվիզիայի 453-րդ հրետանային գնդում՝ որպես մարտկոցի քաղղեկ:

Երբ սկսվեց Խորհրդա-ֆիննական պատերազմը, դիվիզիան Վոլգոգրադից տեղափոխվեց Կարելիա՝ Լադոգա լճի ափին գտնվող Օլոնեց քաղաք, և մարտական առաջադրանք ստացավ հարձակվել լճափի երկայնքով: Ֆինները կատաղի

---

[58] *А.В. Казарьян.* Война, люди, судьбы. Кн. 2. Е.: Айастан, 1977. С. 163.

[59] Նույն տեղում, էջ 168:

դիմադրություն էին ցույց տալիս՝ օգտագործելով իրենց ձեռնտու անտառոտ, ճահճապատ տեղանքը, որը հագեցած էր ականապատ դաշտերով ու փշալարերի խիտ ցանցով: Բոլոր ճանապարհները, արահետները, նույնիսկ առանձին գլաքարեր ականապատված էին: Դոտերի և դզոտների համակարգը թույլ էր տալիս հակառակորդին խաչաձև կրակ վարել, իսկ ծառերին սպիտակ խալաթներով քողարկված դիպուկահար «կուկուշկաները» նշանառության տակ էին վերցնում հրամանատարներին և նույնիսկ առանձին կարմիրբանակայինների: Այդ ամենին եթե գումարենք խորը ձյունը և ուժեղ սառնամանիքը, ապա պարզ կդառնա, թե ինչ դժվարին մարտական առաջադրանք էր դրված 163-րդ հրաձգային դիվիզիայի առջև: Չունչուզովի մարտկոցը գործում էր Սալմի բնակավայրի ուղղությամբ: Հակառակորդի ուժեղ կրակը չէր թողնում առաջ շարժվել: Հարկավոր էր ծանր՝ 122 միլիմետր տրամաչափի հրանոթներ դուրս բերել ուղիղ նշանառության և դիպուկ կրակով լռեցնել թշնամու կրակակետերը: Չնայած ֆինների սպանիչ կրակին և ձյունածածկ տեղանքին, Չունչուզովին և մարտկոցի հրամանատարին հաջողվեց հրանոթները դուրս բերել ուղիղ նշանառության և դիպուկ կրակով ստիպել լռել հակառակորդի գնդացրային կրակակետերը: Հետևակի համար ուղին բաց էր: Օրվա վերջում Սալմի բնակավայրը գրավվեց: Սակայն հակառակորդի պաշտպանությունն ուներ խորը էշելոնացված բնույթ, ուստի նրան հաջողվեց Կիտեշյա բնակավայրի շրջանում կանգնեցնել դիվիզիայի առաջապահ ջոկատների առաջխաղացումը: Ֆիններին հաջողվեց նաև 168-րդ հրաձգային դիվիզիայի հարևանությամբ մարտնչող 18-րդ մոտոհրաձգային դիվիզիային ստիպել նահանջել, որի հետևանքով 168-րդ հրաձգային դիվիզիան, հետևապես նաև 453-րդ հրետանային գունդը հայտնվեցին կիսաշրջապատման մեջ: Ուր որ է թշնամին կարող էր փակել շրջապատման օղակը և ջախջախել զորամասերը: Սակայն այդ նեղ դրությունից կարողացան ելք գտնել: Որոշվեց սահնակներով ծանր տեխնիկան ու հրանոթները Լադոգայի սառցապատ մակերեսով

դուրս բերել կիսաշրջապատումից և անսպասելի հարվածով անակնկալի բերել թշնամուն: Մարտկոցի քաղղեկն այդ հանդուգն ու վտանգավոր մտահղացումը իրագործողների առաջին շարքերում իր անձնական օրինակով ոգևորում էր զինվորներին: Շուտով հրամանատարը նրան հանձնարարեց կամավորների մի փոքր խմբով հետախուզել ճանապարհը և առաջնորդել հրետանին: Առաջադրանքը կատարվեց ճիշտ ժամանակին: Ծանր հրետանին, հետախույզների տված տվյալների համապատասխան, դիպուկ կրակ բացեց հակառակորդի կրակակիրների վրա, լռեցրեց դրանք, իսկ հետևակը, հաղթահարելով բնակլիմայական խոչընդոտները, ճեղքեց ֆինների պաշտպանությունը և դուրս եկավ նրանց թիկունք: 1940 թ. մարտի սկզբներին նախաձեռնությունն անցավ դիվիզիայի ձեռքը, իսկ մեկ շաբաթ հետո Մաններհայմի գիծը ճեղքված էր: Ֆինները ստիպված էին հաշտություն խնդրել:

Հայրենական մեծ պատերազմի առաջին շրջանում կապիտան Պ.Ա. Չունչուզովը սկզբում որպես 168-րդ հրաձգային դիվիզիայի 453-րդ հրաձգային գնդի մարտկոցի հրամանատար, ապա 1941 թ. դեկտեմբերից որպես 55-րդ բանակի 56-րդ հրաձգային դիվիզիայի հրետանու շտաբի պետի օգնական մասնակցում է Լենինգրադի համար մղվող ծանր մարտերին, 1943 թ. հունվարին ականատես լինում Լենինգրադյան և Վոլխովյան ռազմաճակատների զորքերի միացմանը, որի հետևանքով Լենինգրադի պաշարումը վերացվեց: 1943 թ. մայիսին մայոր Չունչուզովը նշանակվում է 67-րդ բանակի հրետանու շտաբի հետախուզության բաժնի, իսկ տարեվերջին՝ 23-րդ բանակի 10-րդ հրաձգային դիվիզիայի հրետանու շտաբի պետի պաշտոնում և ակտիվորեն մասնակցում Լենինգրադի պաշարման լրիվ վերացման մարտերին, որն ավարտվում է 1944 թ. օգոստոսի 8-ին[60]:

Հայրենական մեծ պատերազմը Պ.Ա. Չունչուզովը

---

[60] *А.В. Казарьян.* Война, люди, судьбы. Кн. 4. Е.: изд. «Айастан», 1984. С. 124–138.

ավարտում է փոխգնդապետի կոչումով: Պատերազմից հետո նա 1952 թ. ավարտում է Մ.Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան, 1956 և 1968 թթ.՝ Գլխավոր շտաբի Կ.Ե. Վորոշիլովի անվան ռազմական ակադեմիայի բարձրագույն ակադեմիական դասընթացները և մի շարք պատասխանատու պաշտոններ է վարում ԽՍՀՄ զինված ուժերի շարքերում: Եղել է Անդրկովկասյան ռազմական օկրուգի Հակաօդային պաշտպանության պետ, Հյուսիսկովկասյան ռազմական օկրուգի շտաբի պետ, աշխատել Վարշավայի պայմանագրի միացյալ զինված ուժերի համակարգում 1965 թ. նրան շնորհվել է հրետանու գեներալ-մայորի, իսկ 1970-ին՝ հրետանու գեներալ-լեյտենանտի կոչում, 1977-ին զորացրվել է ԽՍՀՄ զինված ուժերի շարքերից:

Գեներալ-լեյտենանտ Պ.Ա. Չունչուզովը մահացել է 1982 թ. սեպտեմբերի 5-ին Մոսկվայում[61]: Պարգևատրվել է Կարմիր դրոշի 2, Կարմիր աստղի 2, Հայրենական մեծ պատերազմի 1-ին և 2-րդ աստիճանների շքանշաններով, մի շարք մեդալներով:

Խորհրդա-ֆիննական պատերազմում իր առաջին մարտական մկրտությունն է ստացել ապագա գեներալ-լեյտենանտ, Արցախի ազգային հերոս Քրիստափոր Իվանի Իվանյանը (ծնվել է 1920 թ. դեկտեմբերի 21-ին Թիֆլիսում): 1940 թ. փետրվարի 3-ին ժամանակից շուտ ավարտելով Թբիլիսիի հրետանային ուսումնարանը, կրտսեր լեյտենանտ Ք.Ի. Իվանյանը 30-րդ հրաձգային դիվիզիայի 59-րդ թեթև հրետանային գնդի շարքերում, որպես հրետանային դասակի հրամանատար, մասնակցել է Մաններհայմի գծի ճեղքման մարտերին: Ձմեռային սառնամանիքների և ֆիննների համառ դիմադրության պայմաններում երիտասարդ հրետանավոր հրամանատարն աչքի ընկավ մարտավարական ունակություններով ու հմտությամբ, որի համար 1940 թ. մարտի սկզբներին առաջ քաշվեց մարտկոցի հրամանատարի պաշտոնում: Շուտով

---

[61] Հայկական համառոտ հանրագիտարան, Եր., 2003, հ. 4, էջ 141:

1938 թ. ավարտելով Լենինգրադի հրամանատարական կազմի ակադեմիական դասընթացները, կրտսեր լեյտենանտ Նարինյանը նշանակվում է Լենինգրադի զինվորական օկրուգի 84-րդ մոտոհրաձգային դիվիզիայի 334-րդ հրաձգային գնդի հակատանկային հրանոթների մարտկոցի դասակի հրամանատար: Այդ պաշտոնում էլ նա 1939 թ. նոյեմբերի 30-ից մինչև 1940 թ. մարտի 13-ը մասնակցում է Խորհրդա-ֆիննական պատերազմին, աչքի ընկնում Մաններհայմի գծի ճեղքման և Վիբորգի գրավման մարտերում, ձեռք բերում հրամանատարական փորձ: Ֆիննական հզոր ամրացված դոտը չէր վնասվում մեծ տրամաչափի հրանոթների հարվածներից: Հնարամիտ հրետանավորը իր դասակի 45 մմ տրամաչափի հրանոթները դուրս բերեց ուղիղ նշանառության և դիպուկ կրակ բացեց դոտի հրակնատների վրա: Արկերի պայթյունները կուրացրին կրակակետի անձնակազմին: Դրանից ոգևորված՝ գնդի գրոհային ջոկատները գրավեցին դոտը և կատարեցին մարտական առաջադրանքը: Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրվանից 13-րդ հրաձգային դիվիզիայի 48-րդ հրետանային գնդի կազմում լեյտենանտ Ս.Ի. Նարինյանը, որպես մարտկոցի հրամանատար, մասնակցում է Լենինգրադի պաշտպանությանը: 1942 թ. փետրվարին նա առաջ է քաշվում նույն դիվիզիայի հրետանու շտաբի պետի օգնական, նրան շնորհվում է նաև ավագ լեյտենանտի կոչում: 1942 թ. կապիտան Ս.Ի. Նարինյանը նշանակվում է 67-րդ բանակի հրետանու շտաբի օպերատիվ բաժնի պետի օգնական, աչքի ընկնում Շլիսելբուրգի և Մինյավինյան բարձունքների համար մղված մարտերում, 1943 թ. հունվարի 18-ին մասնակցում է Լենինգրադի պաշարման ճեղքման պատմական գործողությանը: 1943 թ. ամռանը մայոր Ս.Ի. Նարինյանը նշանակվում է 3-րդ հրետանային կորպուսի շտաբի օպերատիվ բաժնի պետ, մեծ աշխատանք տանում Լենինգրադի պաշարման լրիվ վերացման մարտերում կորպուսի հրետանու գործողությունների ղեկավարման հարցում: 1944 թ. փոխգնդապետ Ս.Ի. Նարինյանը կորպուսի շտաբի պետն էր:

Պատերազմի հաղթական ավարտից հետո նա շարունակում է ծառայությունը հրետանային զորամասերում: 1948 թ. Ս.Ի. Նարինյանը գերազանցությամբ ավարտում է բարձրագույն սպայական դպրոցը: Մեկ տարի անց նրան շնորհվում է գնդապետի կոչում: 1956 թ. գնդապետ Ս.Ի. Նարինյանը հաջողությամբ ավարտում է Գլխավոր շտաբի ռազմական ակադեմիայի բարձրագույն դասընթացները և նշանակվում զինվորական օկրուգներից մեկի հրետանու շտաբի պետ: 1958 թ. փետրվարին Ս.Ի. Նարինյանին շնորհվում է հրետանու գեներալ-մայորի կոչում: 1961 թ. հրետանու գեներալ-մայոր Ս.Ի. Նարինյանն աշխատել է Ձերժինսկու անվան հրետանային ակադեմիայում որպես դասընթացների, ապա՝ ֆակուլտետի պետ: Նրա կուրծքը զարդարում էին Կարմիր դրոշի, երկու Կարմիր աստղի, Հայրենական պատերազմի 1-ին և 2-րդ աստիճանների շքանշաններ և բազմաթիվ մեդալներ[63]:

Խորհրդա-ֆիննական պատերազմում իրենց մարտական մկրտությունն են ստացել նաև հետագայում գեներալ-մայորներ Ղևոնդ Ավագի Հակոբյանը, Ռաֆիկ Սահակի Մարտիրոսյանը, Սուրեն Սարգսի Ոսկանյանը և ուրիշներ:

4. Մեդալներով պարգևատրված հայ սպաներ և քաղաշխատողներ

Խորհրդա-ֆիննական պատերազմում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու, մարտերում ցուցաբերած խիզախության և մարտական ունակությունների համար մի շարք հայ սպաներ և քաղաշխատողներ պարգևատրվել են Կարմիր դրոշի, Կարմիր աստղի շքանշաններով, «Արիության համար» և «Մարտական ծառայությունների համար» մեդալներով:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. մայիսի 19-ի հրամանագրով Կարմիր դրոշի շքանշանով

---

[63] *А.В. Казарьян.* Война, люди, судьбы. Кн. 3. Е.: изд. «Айастан», 1980. С. 163–172.

պարգևատրվեց 8-րդ բանակի 164-րդ հրաձգային դիվիզիայի 358-րդ հրաձգային գնդի հրամանատար, մայոր Աշոտ Վարդանի Մաթևոսյանը: Նրա պարգևատրման թերթիկում, որը ստորագրվել է դիվիզիայի հրամանատար կոմբրիգ Դենիսովի և բանակի հրամանատար Շտեռնի կողմից, նշված է. «Մարտական գործողությունների ընթացքում գնդի հրամանատար մայոր Մաթևոսյանն անձամբ դրսևորել է խիզախության և անվախության բազմաթիվ օրինակներ: Նրա գունդը մարտերին մասնակցել է 1939 թ. դեկտեմբերից և աչքի ընկել Լայմալովյան ուղղությամբ: Միայն 1940 թ. մարտի 6-ին «Չորնայա», իսկ 8-ին Անանուն բարձունքների գրավման մարտերում գունդը ավար վերցրեց 2 հաստոցավոր և 5 ձեռքի գնդացիր, 40 հրացան, 5 արկղ ինքնաձիգի և 40 արկղ հրացանի փամփուշտ, զանազան հանդերձանք: 1940 թ. մարտի 11–12-ին գունդը հաջողությամբ կատարեց իր առջև դրված մարտական առաջադրանքը: Այդ մարտերում գրավվեց հակառակորդի 200 գետնատնակ, ավար վերցվեց 500 հրացան, 6 հաստոցավոր գնդացիր, 4 թեթև և 1 ծանր հրանոթ, մեծ քանակությամբ զինամթերք և հանդերձանք: Հակառակորդը, թողնելով դիրքերն ու զենքը, խուճապահար փախչում էր մայոր Մաթևոսյանի գնդի հարվածներից:

Գնդի գործողությունները մարտերի ընթացքում խելացի ղեկավարելու և ցուցաբերած քաջության համար մայոր Ա.Վ. Մաթևոսյանն արժանի է պարգևատրվելու Կարմիր դրոշի շքանշանով»[64]: Ո՞վ էր այդ հայ հերոսը, որտե՞ղ էր նա ծնվել: Այդ հարցերը պարզելու նպատակով մենք աշխատեցինք ՌԴ պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվում, որը գտնվում է Մոսկվայի մարզի Պոդոլսկ քաղաքում: Արխիվի 11-րդ բաժնում մեզ հաջողվեց պարզել, որ Աշոտ Վարդանի Մաթևոսյանը ծնվել է 1902 թ. հուլիսի 16-ին Հայաստանի Արտաշատի շրջանի Նովրուզլու գյուղում: 1923 թ. մար-

---

[64] ՌՊՈԱ, ֆ. 37837, ց. 3, գ. 504, թթ. 359–360; ֆ. 34980 (358-րդ հրաձգային ֆոնդ), ց. 12, գ. 563, թթ. 1–21:

տին նա զորակոչվել է Կարմիր բանակի շարքերը և սովորել Հայկական հրաձգային դիվիզիային կից ռազմա-քաղաքական դպրոցում: Այնուհետև որպես քաղղեկ ծառայել է նույն դիվիզիայի 2-րդ հրաձգային գնդում: 1927 թ. քաղղեկ Մաթևոսյանը սովորել և ավարտել է Կիևի միացյալ քաղաքական-ռազմական դպրոցը, ապա վերադարձել Հայաստան և մինչև 1930 թ. դեկտեմբեր ծառայել Հայկական հրաձգային դիվիզիայի 2-րդ հրաձգային գնդում՝ որպես վաշտի հրամանատար: 1930–1934 թթ. նա 5-րդ կովկասյան կազակական հեծյալ դիվիզիայում վարել է գնդի դպրոցի պետի, ապա 2-րդ հրաձգային դիվիզիայում՝ գումարտակի հրամանատարի պաշտոնները: 1936–1937 թթ. Աշոտ Մաթևոսյանը կրկին վերադարձել է Հայաստան և ծառայությունը շարունակել Հայկական 76-րդ լեռնահրաձգային դիվիզիայի շարքերում՝ որպես 227-րդ հրաձգային գնդի հրամանատար: 1938 թ. ամռանը մայոր Մաթևոսյանը նշանակում է ստացել Կիևյան հատուկ զինվորական օկրուգում՝ որպես 164-րդ հրաձգային դիվիզիայի 358-րդ հրաձգային գնդի հրամանատար: 1939 թ. սեպտեմբերին նա մասնակցել է Արևմտյան Ուկրաինայի ազատագրմանը, արժանացել բարձրագույն հրամանատարության խրախուսանքին...

Խորհրդա-ֆիննական պատերազմի ավարտից հետո 1940 թ. հոկտեմբերի 8-ին Ա.Վ. Մաթևոսյանին շնորհվել է գնդապետի կոչում: Երկու օր հետո գնդապետ Ա.Վ. Մաթևոսյանը Խորհրդա-ֆիննական պատերազմում կատարած սխրանքների համար ստացել է Կարմիր դրոշի շքանշան (թիվ 20766): Այնուհետև, երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, գնդապետ Ա.Վ. Մաթևոսյանը իր գնդի հետ միասին մասնակցել է 1941 թ. հունիսի 22 – սեպտեմբեր տեղի ունեցած դաժան մարտերին և ծանր վիրավոր վիճակում գերվել գերմանացիների կողմից: Մենք կարողացանք պարզել, որ նա 1944 թ. հունվարի 6-ին ազատվել է գերությունից[65]:

---

[65] ԴԴ ՊՆԿԱ. 11-րդ բաժին (սպաների հաշվառման անձնական քարտ 56/261), թ. 1–2:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. ապրիլի 11-ի հրամանագրով Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվեց 7-րդ հրաձգային դիվիզիայի 9-րդ ավտոմոբիլային գումարտակի հրամանատար կապիտան Միհրան Ավետիսի Եղիազարյանը[66]: Նրա պարգևատրման թերթիկում, որը ստորագրել են դիվիզիայի հրամանատար կոմբրիգ Բերզինը և կոմիսար Կարտալևը, նշված է. «Ֆինլանդիայում տեղի ունեցած մարտերի ժամանակ ընկ. Եղիազարյանն օրինակելի աշխատանքով դիվիզիային ապահովում էր ինչպես զինամթերքով, այնպես էլ՝ պարենով: Շնորհիվ նրա կողմից գումարտակի աշխատանքների հստակ կազմակերպման, դիվիզիան երբեք ընդհատումներ չունեցավ երկաթուղային բազայից դեպի զորամասեր կատարվող մատակարարման գործում: Դժվարին բնակլիմայական պայմաններում (ճանապարհների բացակայություն, անտառոտ, ճահճապատ, ձյունածածկ տեղանք) ավտոմոբիլային գումարտակը մշտապես հստակորեն էր կատարում դիվիզիայի հրամանատարության առաջադրանքները:

1940 թ. փետրվարի 11-ի մարտում զոհվեց 380-րդ հրաձգային գնդի 1-ին հրաձգային գումարտակի հրամանատարը: Դիվիզիայի հրամանատարի որոշմամբ նրան փոխարինող նշանակվեց կապիտան Եղիազարյանը, որը հաջողությամբ կազմակերպեց գումարտակի գործողությունները Վիբորգի ուղղությամբ: Չնայած մարտում ձեռքից վիրավորվեց կապիտան Եղիազարյանը, բայց նա չթողեց հրամանատարությունը և շարունակեց ղեկավարել գումարտակի գործողությունները: Շնորհիվ կապիտան Եղիազարյանի խիզախության՝ գումարտակը զարգացրեց հաջողությունը և ժամանակին կատարեց մարտական առաջադրանքը:

Ավտոմոբիլային գումարտակի առաջադրանքները ղեկավարելու, ինչպես նաև 380-րդ հրաձգային գնդի 1-ին հրաձգային գումարտակի գործողություններն առաջնորդելիս ցուցաբերած խիզախության համար կապիտան Եղիազարյանն

---

[66] Ведомости Верховного Совета СССР. 1941. 11 июня. № 25. С. 2.

արժանի է պարգևատրման Կարմիր դրոշի շքանշանով»[67]:

Միհրան Ավետիսի Եղիազարյանը ծնվել է 1905 թ. մայիսի 1-ին Կարսի մարզի Բաշգյուղ գյուղում: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին նրա ընտանիքը տեղափոխվեց Հրազդանի շրջանի Արզաքյան գյուղ, որտեղ պատանի Միհրանը զբաղվել է բատրակությամբ: 1923 թ. Եղիազարյանը եկել է Երևան և սովորել Ջերժինսկու անվան միջնակարգ դպրոցում, միաժամանակ աշխատել քաղաքային միլիցիայում: 1927 թ. զորակոչվել է Կարմիր բանակի շարքերը և ծառայել Հայկական դիվիզիայի կապի վաշտում: 1928–1931 թթ. սովորել և ավարտել է Թիֆլիսի Անդրկովկասյան ռազմական դպրոցը: Այնուհետև վերադարձել է Հայաստան և ծառայությունը շարունակել Հայկական լեռնահրաձգային դիվիզիայի շարքերում՝ որպես 1-ին գնդի դասակի հրամանատար: Շուտով Եղիազարյանը առաջ է քաշվել վաշտի հրամանատարի պաշտոնում: 1938 թ. ամռան սկզբներին կապիտան Եղիազարյանը տեղափոխվել է Ուկրաինա և ծառայել Կիևի հատուկ զինվորական օկրուգի 7-րդ հրաձգային դիվիզիայում՝ որպես գումարտակի հրամանատար, 1939 թ. սեպտեմբերին մասնակցել է Արևմտյան Ուկրաինայի ազատագրմանը: Այնուհետև նրա դիվիզիան տեղափոխվել է Լենինգրադի զինվորական օկրուգ, որտեղ և 1939 թ. դեկտեմբեր – 1940 թ. մարտ ամիսներին մասնակցել Խորհրդա-ֆիննական պատերազմին: Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրերից 7-րդ հրաձգային դիվիզիան դաժան մարտեր էր մղում գերմանա-ֆաշիստական զավթիչների գերակշիռ ուժերի դեմ: Մարտերից մեկում 1941 թ. օգոստոսի 2-ին կապիտան Եղիազարյանը ծանր վիրավորվում է և տեղափոխվում հոսպիտալ: Սակայն օգոստոսի 12-ին գերմանացիները գրավում են հոսպիտալը և գերի վերցնում կապիտան Եղիազարյանին:

Մինչև 1943 թ. ռազմագերի Մ. Եղիազարյանը գտնվում էր Ուկրաինայի Վլադիմիր-Վոլենսկի շրջանային համակենտ-

---

[67] ԴՊՐԱ, ֆ. 37837, ց. 3, գ. 446, թ. 219:

ռոնացման ճամբարում, որտեղ ակտիվորեն մասնակցում էր ընդհատակյա հակաֆաշիստական պայքարին: Երբ 1943 թ. ամռանը նրան մի շարք ռազմագերիների հետ փոխադրում են Ֆրանսիա, կապիտան Եղիազարյանին հաջողվում է փախչել գերությունից, միանալ ֆրանսիական պարտիզաններին և մարտնչել նրանց շարքերում՝ որպես ջոկի հրամանատար: Երբ Ֆրանսիայի հարավային շրջաններում կազմակերպվում է 1-ին խորհրդային պարտիզանական գունդը, որի շարքերում կար ավելի քան 1200 հայ, կապիտան Միհրան Եղիազարյանը նշանակվում է գնդի հրամանատար, գնդապետ Ալեքսանդր Ղազարյանի տեղակալ: Հայ պարտիզաններն իրենց մարտական սխրանքներով աչքի են ընկնում Հար և Լոզեր դեպարտամենտների ազատագրման մարտերում, արժանանում Ֆրանսիայի կառավարության բազմաթիվ պարգևների: Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո Միհրան Եղիազարյանը վերադարձավ Երևան և աշխատանքի անցավ Գյուղմատակարարման փայտամշակման գրասենյակում՝ որպես մատակարարման բաժնի պետ: Սակայն 1948 թ. նրան ձերբակալեցին: Կալանքից ազատվել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1955 թ. սեպտեմբերի 17-ի որոշմամբ: Այնուհետև աշխատանքի է անցել Երևանում, վարել ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահության վարչա-տնտեսական պետի պաշտոնը: Խորհրդա-ֆիննական պատերազմի և Ֆրանսիայի պարտիզանական շարժման ակտիվ գործչի կյանքի թելը կտրվել է 1971 թ. փետրվարի 17-ին Երևանում[68]:

Խորհրդա-ֆիննական պատերազմում կատարած սքխրանքների համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. ապրիլի 11-ի հրամանագրով Կարմիր աստղի շքանշանով պարգևատրվեց 100-րդ հրաձգային դիվիզիայի 355-րդ հրաձգային գնդի շտաբի պետի թիկունքի գծով տե-

---

[68] ՀՀ ԳԱԱ նախարարության արխիվ. Միհրան Ավետիսի Եղիազարյանի անձնական գործ. թիվ 34, էջ 1–4:

ղակալ ավագ լեյտենանտ Զաքար Սերգեյի Բաղդասարովը[69]: «Շնորհիվ ընկեր Բաղդասարյանի հմուտ ղեկավարության և անսահման հոգատարության, սպիտակ ֆիններին դեմ մղված ողջ մարտերի ընթացքում զինվորներն ապահովված էին տաք կերակուրով, զինամթերքով և հանդերձանքով», – Բաղդասարովի պարգևատրման թերթիկում նշել են գնդի հրամանատար մայոր Շվարյովը, դիվիզիայի հրամանատար կոմբրիգ Երմակովը և ուրիշներ: «Խոտինենի շրջանում 15 օր տևած լարված մարտերի ընթացքում սնունդն առաջին գծում կռվող զինվորներին էր հասցվում հակառակորդի կրակի տակ տաք վիճակում: Գիշեր ու ցերեկ, հաշվի չառնելով հոգնածությունը, ավագ լեյտենանտ Զ.Ս. Բաղդասարովը լինում էր գնդի գումարտակներում, ստուգում մատակարարման վիճակը, հետևում, որ ժամանակին առաջին գծում կռվողները ապահովվեն տաք կերակուրով և անհրաժեշտ հանդերձանքով: Նա հոգատարություն է ցուցաբերում նաև գնդային և գումարտակային բժշկական կետերի աշխատողների հանդեպ, նպաստում, որ նրանք արագ և ժամանակին վիրավոր մարտիկներին հանեն մարտի դաշտից»[70]: Զ.Ս. Բաղդասարովը ծնվել է 1909 թ. Ռուսաստանի Կրասնոդարի երկրամասի Արմավիր քաղաքում: Հայրենական մեծ պատերազմի սկզբին, որպես 1-ին գվարդիական հրաձգային դիվիզիայի 355-րդ հրաձգային գնդի շտաբի պետ, աչքի է ընկել Մոսկվայի ճակատամարտում և պարգևատրվել Կարմիր աստղի երկրորդ շքանշանով:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. ապրիլի 11-ի հրամանագրով Կարմիր աստղի շքանշանի արժանացավ նաև 43-րդ հրաձգային դիվիզիայի 162-րդ հրետանային գնդի դիվիզիոնի հրամանատար կապիտան Գևորգ Քրիստափորի Բաղդասարյանը[71]: Նա հատկապես իրեն որպես հմուտ և խիզախ հրետանավոր դրսևորեց Խորհրդա-ֆիննական պատերազմի սկզբին տեղի ունեցած հարձակողական

---

[69] Ведомости Верховного Совета СССР. 1941. 15 июня. № 26. С. 2.
[70] ՌՊՈԱ, ֆ. 37837, ց. 3, գ. 400, թ. 204:
[71] Ведомости Верховного Совета СССР. 1941. 15 июня. № 26. С. 2.

մարտերում: Նրա պարգևատրման թերթիկում գնդի հրամանատար, գնդապետ Օլխովսկին և դիվիզիայի հրամանատար, գնդապետ Կիրպիչնիկովը նշում են. «Սպիտակ ֆինների դեմ կապիտան Գ.Ք. Բաղդասարյանը դրսևորել է համարձակություն, խիզախություն, հրամանատարական կամք և կազմակերպվածություն:

1939 թ. դեկտեմբերի 1–4-ը սահմանից մինչև Լեխտիկյուլյա տեղի ունեցած մարտերում, որոնք ընթանում էին ճանապարհազուրկ վայրերով՝ սառած ճահճի վրայով, իր դիվիզիոնը դուրս բերեց նախատեսված դիրքեր և ժամանակին հրետանային դիպուկ կրակով ապահովեց հետևակի մարտի հաջողությունը:

1939 թ. դեկտեմբերի 5-ին Վուոտ-Իյոկի գետի անցման ժամանակ անձամբ ղեկավարում էր դիվիզիոնների մարտկոցների կրակը և նպաստում դիվիզիայի առաջապահ ստորաբաժանումների հաջողությանը:

1939 թ. դեկտեմբերի 6-ի, 8-ի, 9-ի, 11-ի և 14-ի Պյալիլյա բնակավայրի շրջանում տեղի ունեցած մարտերում իր դիվիզիոնի հուժկու կրակով ժամանակին և հստակ ապահովեց հետևակի գրոհը և պաշտպանեց նրանց գործողությունները: Վտանգի ենթարկելով կյանքը, նա բաց դիրքերից, հրետանային դիպուկ կրակով մեկը մյուսի հետևից ոչնչացրեց հակառակորդի կրակակետերը և կացարանները: Այդ մարտերում կապիտան Գ.Ք. Բաղդասարյանի դիվիզիոնը մեկ անգամ չէ, որ գիշերով ետ է մղել հակառակորդի հարձակումները:

Խատյալախդեն-Յարվի լճի շրջանում անձամբ կատարեց հրետանային հետախուզություն և կործանեց հակառակորդի դզօտները: Միայն նրա դիվիզիոնի կրակով ոչնչացվեց հակառակորդի 12 դզօտ: Գիշերային մարտերի ընթացքում կապիտան Բաղդասարյանի դիվիզիոնը համագործակցում էր 147-րդ հրաձգային գնդի հետախուզական ջոկատի հետ: Այդ համագործակցությունը իրականացվում էր հմտորեն և կազմակերպված ձևով: 1939 թ. դեկտեմբերի 1-ից 1940 թ. փետրվարի 15-ը ընկած ժամանակահատվածում կապիտան Գ.Ք.

Բաղդասարյանի դիվիզիոնն անբաժան համագործակցում էր 147-րդ հրաձգային գնդի 2-րդ հրաձգային գումարտակի հետ, աջակցում նրան հրետանային կրակով: Արժանի է պարգևատրման Կարմիր աստղի շքանշանով»[72]:

Գ.Ք. Բաղդասարյանը ծնվել է 1905 թ. Բաքու քաղաքում: 1923 թ. հոկտեմբերին կամավոր մտել է Կարմիր բանակի շարքերը: Նույն թվականին ընդունվել է Երևանի Հայկական միացյալ ռազմական դպրոցը, որն ավարտել է 1926 թ. և ծառայել Հայկական հրաձգային դիվիզիայի հրետանային գնդում՝ որպես դասակի հրամանատար: 1930-ական թվականների սկզբներին սովորել և ավարտել է Թբիլիսիի Անդրկովկասյան ռազմական դպրոցի հրետանային բաժինը: Այնուհետև վերադարձել է հարազատ զորամաս և մինչև 1938 թ. հունիս վարել սկզբում հրետանային մարտկոցի, ապա՝ դիվիզիոնի հրամանատարի պաշտոնը: 1938 թ. հունիսի սկզբներին ավագ լեյտենանտ Գ.Ք. Բաղդասարյանը տեղափոխվել է Կիևի հատուկ զինվորական օկրուգ և ծառայել հրաձգային դիվիզիայի 162-րդ հրաձգային գնդում՝ որպես դիվիզիոնի հրամանատար: 1939 թ. սեպտեմբերին կապիտան Գ.Ք. Բաղդասարյանը դիվիզիայի կազմում մասնակցել է Արևմտյան Ուկրաինայի ազատագրմանը, ապա իր զորամասի հետ փոխադրվել Լենինգրադյան զինվորական օկրուգ և մասնակցել Խորհրդա-ֆիննական պատերազմին: Հայրենական մեծ պատերազմի սկզբին մայոր Գ.Ք. Բաղդասարյանը Լենինգրադյան ռազմաճակատի 139-րդ հրաձգային դիվիզիայի՝ 162-րդ հրետանային գնդի շտաբի պետն էր: 1941–1944 թթ. նա ակտիվորեն մասնակցել է Լենինգրադի համար մղված մարտերին, առաջ քաշվել 131-րդ հրաձգային դիվիզիայի հրետանու պետի պաշտոնում: Պատերազմի վերջում Գ.Ք. Բաղդասարյանը 118-րդ հրաձգային կորպուսի հրետանու հրամանատարն էր:

Հայրենական մեծ պատերազմում ցուցաբերած սքխրանքների համար Գ.Ք. Բաղդասարյանը պարգևատրվել է Լե-

---

[72] ՌՊՌԱ, ֆ. 37837, ց. 3, գ. 400, թ. 206:

նինի, Կարմիր դրոշի (3), Կուտուզովի 2-րդ աստիճանի, Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշաններով, «Լենինգրադի պաշտպանության համար» մեդալով և այլն[73]:

Մաններհայմի գծի անառիկ պաշտպանությունը Կարելյան պարանոցում Կեկսհոլմի ուղղությամբ ճեղքելու մարտերում ցուցաբերած խիզախության համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. ապրիլի 7-ի հրամանագրով Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվեց 13-րդ բանակի 8-րդ հրաձգային դիվիզիայի 151-րդ հրաձգային գնդի հրետանու պետ, կապիտան Վարդգես Մկրտչի Հակոբյանը: Գնդի հրամանատար մայոր Բարմինի, դիվիզիայի հրամանատար, կոմբրիգ Ռուբցովի և բանակի հրամանատար, 2-րդ կարգի բանակային հրամանատար Գրենդալի վկայությամբ կապիտան Վ.Մ. Հակոբյանը 1940 թ. փետրվարի 12-ի մարտում, արհամարհելով կյանքին սպառնացող վտանգը, անձամբ ղեկավարում էր գնդի հրետանու գործողությունները, հմտորեն ճշտում հրանոթների կրակը, պայքար տանում հակառակորդի կրակակետերի դեմ, որոնք խանգարում էին գնդի 1-ին և 3-րդ հրաձգային գումարտակների հարձակման հաջողությանը: Շնորհիվ կապիտան Վ.Մ. Հակոբյանի հմուտ ղեկավարության, գնդի հրետանին դիպուկ կրակով ճնշեց հակառակորդի կրակակետերի կրակը և ճանապարհ բացեց հարձակվող հետևակի համար: Չնայած այդ մարտում խիզախ հրետանավորը վիրավորվեց, սակայն վերքը կապելուց հետո շարունակեց հրամանատարական կետից ղեկավարել գնդի հրետանու գործողությունը՝ մինչև մարտական առաջադրանքի հաջող ավարտը... Վ.Մ. Հակոբյանը ծնվել է 1907 թ., բանակ էր զորակոչվել 1925 թ.[74]:

Վերոհիշյալ հրամանագրով Կարմիր դրոշի շքանշանի արժանացավ նույն բանակի 80-րդ հրաձգային դիվիզիայի 218-րդ հրաձգային գնդի գնդացրային վաշտի հրամանատար, լեյտենանտ Հակոբ Խաչատուրի Հակոբյանը: 1940 թ. փետր-

---

[73] ՌԴ ՊՆԿԱ, 11-րդ բաժին, պարգևատրվածների քարտարան, գվարդիայի գնդապետ Գ.Ք. Բաղդասարյանի պարգևատրման քարտ, էջ 1–2:

[74] ՌՊՈԱ, ֆ. 37837, ց. 3, գ. 392, թ. 365:

վարի 12-ի մարտում նա հմտորեն կազմակերպեց գնդացրային վաշտի գործողությունը և նպաստեց գնդի առաջխաղացմանը: Մարտի ընթացքում նա անձնական օրինակով ոգևորում և առաջ էր տանում վաշտի մարտիկներին, ցուցաբերելով անվեհերություն և քաջություն: Այդ մարտում խիզախ հրամանատարը վիրավորվեց, բայց նա չթողեց մարտական պոստը մինչև համապատասխան հրաման ստանալը... Հ.Խ. Հակոբյանը ծնվել է 1919 թ., Կարմիր բանակ էր զորակոչվել 1939 թ.[75]:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. ապրիլի 7-ի հրամանագրով Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվեց նաև 13-րդ բանակի 17-րդ մոտոհրաձգային դիվիզիայի 55-րդ մոտոհրաձգային գնդի 2-րդ գնդացրային վաշտի դասակի հրամանատար, կրտսեր լեյտենանտ Նորայր Մարգարի Այվազյանը: Նրա պարգևատրման թերթիկում, որը ստորագրված է դիվիզիայի և բանակի հրամանատարների կողմից, նշված է. «2-րդ գնդացրային վաշտի դասակի հրամանատար, կրտսեր լեյտենանտ Նորայր Մարգարի Այվազյանը, որն ուղարկվել էր 4-րդ վաշտ՝ օգնելու ֆիններ գրոհները ետ մղող յուրայիններին, շրջապատվեց մեկ վաշտի չափ սպիտակ ֆիններ բանդայով: Առանց խուճապի մատնվելու՝ Այվազյանը գնդացրային կրակ բացեց թշնամու վրա: Վեց անգամ սպիտակֆիններ դիմեցին գրոհի, բայց հանդիպելով սպանիչ գնդացրային կրակի, ետ շպրտվեցին: Գրոհներից մեկի ժամանակ Այվազյանն ուժեղ ցնցակաթված ստացավ, բայց չնայած դրան, նա սպանեց 3 սպայի և ավար վերցրեց նրանց զենքերն ու փաստաթղթերը և մարտն ավարտվելուց հետո հանձնեց իր վաշտի հրամանատարին: Դրանից հետո խիզախ գնդացրորդին ուղարկեցին հոսպիտալ բուժվելու: Ընկ. Այվազյանը կատարեց խորհրդային զինվորին վայել սխրանք: Արժանի է Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվելու»[76]: Նորայր Մարգարի Այվազյանը ծնվել է 1915 թ. Հայաստանի Արմավիրի

---

[75] Նույն տեղում, թ. 361:
[76] Նույն տեղում, գ. 392, թ. 257:

մարզի Զանֆիդա գյուղում: բանակ էր զորակոչվել 1936 թ.[77]:

Նույն հրամանագրով Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվեց նաև 100-րդ հրաձգային դիվիզիայի 355-րդ հրաձգային դասակի հրամանատար, կրտսեր լեյտենանտ Միքայել Հայրապետի Հարությունյանը[78]: Գնդի հրամանատար մայոր Շվարցի և դիվիզիայի հրամանատար կոմբրիգ Երմակովի կողմից ստորագրված պարգևատրման թերթիկում նշված է. «Խոտինեն-Տուրտա ամրացված շրջանի ճեղքման մարտերում ընկ. Հարությունյանը հերոսաբար էր գործում իր գնդացրային դասակի հետ միասին: Շնորհիվ նրա կողմից գնդացրային դասակի հմուտ կառավարման, գնդի 8-րդ հրաձգային վաշտի մարտիկներին հաջողվեց ճեղքել ֆիննների պաշտպանությունը և կատարել մարտական առաջադրանքը: Գործելով դասակի առջևում, նա իր օրինակով մարտի էր առաջնորդում իր ստորաբաժանման մարտիկներին, նրանց ակտիվ գործողությունների կոչում թշնամու դոտերը գրավելու ժամանակ: Մարտի թեժ պահին ընկեր Հարությունյանը վիրավորվեց, բայց խիզախ հրամանատարը չթողեց մարտադաշտը մինչև մարտի վերջը: Արժանի է պարգևատրվելու Կարմիր դրոշի շքանշանով»[79]:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. մարտի 20-ի հրամանագրով Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվեց 44-րդ հրաձգային դիվիզիայի 305-րդ հրաձգային դասակի հրամանատար, կրտսեր լեյտենանտ Սոկրատ Հովհաննեսի Ավետովը (ծնված 1911 թ., բանակում ծառայում էր 1933 թ.): Մարտերից մեկում նա իր դասակի ջոկերից մեկի հետ հետախուզություն կատարելիս անսպասելի կերպով հանդիպեց հակառակորդի զինվորների մի խմբի: Անմիջապես մարտի մտնելով նրանց հետ՝ կրտսեր լեյտենանտ Ավետովը սպանեց ֆիններից մեկին և ստիպեց մյուսին գերի հանձնվել: Ֆիննական զինվորն արժեքավոր «լեզու» դուրս եկավ: Դրա-

---

[77] Նույն տեղում:
[78] Ведомости Верховного Совета СССР. 1941. 15 июня. № 24. С. 4.
[79] ՈՊՈԱ, ֆ. 37837, ց. 3, գ. 398, թ. 291:

նից հետո խիզախ հայորդին մի քանի անգամ իր մարտիկների հետ դուրս եկավ հետախուզության, ավար վերցրած ֆիննական ինքնաձիգը ձեռքին՝ բարձրացավ ծառի վրա և դարանից ոչնչացրեց թշնամու չորս զինվորի: 1940 թ. հունվարի 6-ին՝ ժամը 18^{00}-ին, 122-րդ հրետանային գնդի 2-րդ դիվիզիոնի պաշտպանության մարտում խիզախ հայորդին զոհվեց հակառակորդի ականի պայթյունից[80]:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. ապրիլի 7-ի հրամանագրով Խորհրդա-ֆիննական պատերազմում ցուցաբերած արիության և խիզախության համար Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվեց Կարմրադրոշ Բալթիական նավատորմի ծմեռային պաշտպանության 111-րդ կամավորական թեթև դահուկային գումարտակի 4-րդ դասակի հրամանատար, կրտսեր լեյտենանտ Անդրեյ Լեոնտիի Համբարձումովը (ծնվել է 1914 թ., բանակ զորակոչվել 1933 թ.): Նրա պարգևատրման թերթիկում, որը ստորագրել են գումարտակի հրամանատար, ավագ լեյտենանտ Խրոմովը, Կարմրադրոշ Բալթիական նավատորմի ծմեռային պաշտպանության հրամանատար, կոմբրիգ Գրիգորևը, Կարմրադրոշ Բալթյան նավատորմի հրամանատար, 1-ին կարգի ֆլագման Տրիբուցը, ասված էր. «Ընկեր Համբարձումովը համեստ, անվեհեր հրամանատար է: Կիուսկերի կղզու համար 1940 թ. մարտի 4-ին կայացած մարտը տեղի ունեցավ 70 կիլոմետրանոց դահուկային արշավից անմիջապես հետո: Արշավ, որ տեղի էր ունեցել հակառակորդի գնդացրային և ականանետային ուժեղ կրակի տակ: Արհամարհելով ամեն որպե կյանքին սպառնացող վտանգը՝ կրտսեր լեյտենանտ Համբարձումովը ժամանակին կատարեց մարտական առաջադրանքը: Այնուհետև հարկավոր էր հետախուզել կղզին և այն մաքրել թշնամու դիպուկահարներից: Առաջադրանքը պետք է կատարեին 3-րդ դասակի մարտիկները: Չնայած հոգնածությանը՝ կրտսեր լեյտենանտ Ա.Լ. Համբարձումովը կարողացավ համոզել գումար-

[80] Նույն տեղում, գ. 391, թ. 378:

տակի հրամանատարին, որ իրեն էլ ուղարկեն հետախուզության, քանի որ լավ ծանոթ էր տեղանքին: Գումարտակի հրամանատարը համաձայնեց նրա հետ և թույլատրեց 4-րդ դասակին նույնպես մասնակցել հետախուզությանը: Առաջադրանքը կատարվեց հաջողությամբ և ժամանակին: Սակայն դարանակալ թշնամու արձակած գնդակից Համբարձումովը ծանր վիրավորվեց և տեղափոխվեց հոսպիտալ: Արժանի է պարգևատրվելու Կարմիր դրոշի շքանշանով»[81]:

Վերոհիշյալ հրամանագրով Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվեց նաև 13-րդ բանակի 17-րդ մոտոհրաձգային դիվիզիայի շտաբի 1-ին՝ օպերատիվ բաժնի պետ, կապիտան Հակոբ Երվանդի Մամիկոնյանը[82]: Դիվիզիայի հրամանատար կոմբրիգ Բացանովը և բանակի հրամանատար, 2-րդ կարգի բանակային հրամանատար Գրենդալը նրա պարգևատրման թերթիկում նշել են. «1940 թ. փետրվարի 10–17-ը տեղի ունեցած մարտերի ընթացքում ընկ. Մամիկոնյանը հստակորեն է ղեկավարել դիվիզիայի զորամասերի գործողությունները՝ հաշվի չառնելով ժամանակը, չխնայելով ուժերը, ցուցաբերել է համառություն և հաստատակամություն: Ողջ մարտերի ժամանակ նա մշտապես ստույգ գիտեր զորամասերում տիրող վիճակի և նրանց գործողությունների ընթացքի մասին: Ճգնաժամային պահերին ընկ. Մամիկոնյանը հարկ եղած դեպքում հայտնվում էր այս կամ այն զորամասում, անձամբ շտկում նկատված թերությունները, կարգ հաստատում ամենուրեք, վերացնում անցանկալի հետևանքները, անձնական օրինակով ոգևորում հրամանատարներին ու զինվորներին: Ցուցաբերած համառության, հաստատակամության և նախաձեռնության համար կապիտան Հ.Ե Մամիկոնյանն արժանի է պարգևատրման Կարմիր դրոշի շքանշանով»[83]:

Հերոսի ինքնությունը պարզելու նպատակով մեր հետազոտական աշխատանքը շարունակեցինք ՌԴ պաշտպանութ-

---

[81] Նույն տեղում, գ. 395, թթ. 29–33:
[82] Ведомости Верховного Совета СССР. 1941. 16 февраля. № 8. С. 3.
[83] ՌՊՈԱ, ֆ. 37837, ց. 3, գ. 502, թ. 136:

յան նախարարության կենտրոնական արխիվում (Մոսկվայի մարզ, ք. Պոդոլսկ), որի համապատասխան բաժնում պարզեցինք. Հակոբ Երվանդի Մամիկոնյանը ծնվել է 1908 թ. օգոստոսի 1-ին Հայաստանի Ղարաքիլիսա (այժմ՝ Վանաձոր) քաղաքում: 1930 թ. հոկտեմբերի 25-ին զորակոչվել է Կարմիր բանակի շարքերը և ծառայել Հայկական հրաձգային դիվիզիայի 1-ին հրաձգային գնդի շարքերում: 1931 թ. նոյեմբերին նա տեղափոխվել է Մոսկվայի զինվորական օկրուգ և մինչև Խորհրդա-ֆիննական պատերազմը ծառայել 17-րդ հրաձգային դիվիզիայի 49-րդ հրաձգային գնդում, սկզբում որպես սակրային դասակի, ապա՝ վաշտի հրամանատար: 1937 թ. օգոստոսին ավագ լեյտենանտ Հ.Ե. Մամիկոնյանն առաջ է քաշվում գնդի ինժեներական ծառայության պետի պաշտոնում, իսկ 1938 թ. փետրվարի 7-ին նշանակվում 49-րդ հրաձգային գնդի շտաբի պետ: Նույն թվականին նրան շնորհվում է կապիտանի կոչում և 1939 թ. վերջերին առաջ քաշվում 17-րդ մոտոհրաձգային դիվիզիայի շտաբի 1-ին՝ օպերատիվ բաժնի պետի պաշտոնում և այդ պաշտոնում մասնակցում Խորհրդա-ֆիննական պատերազմին:

Պատերազմից հետո՝ 1940 թ. հուլիսի 17-ին, Հ.Ե. Մամիկոնյանին շնորհվում է մայորի կոչում: Հայրենական մեծ պատերազմի առաջին շրջանի մարտերին մայոր Հ.Ե. Մամիկոնյանը մասնակցում է Արևմտյան ռազմաճակատի 30-րդ բանակի 162-րդ հրաձգային դիվիզիայի շարքերում՝ որպես դիվիզիայի շտաբի պետ: Մոսկվայի համար մղված մարտերից մեկում 1941 թ. հոկտեմբերի 11-ին ծանր վիրավորվում է և բուժվում թիվ 2386 էվակոհոսպիտալում: Այնուհետև մայոր Հ.Ե. Մամիկոնյանը սովորում է Արևմտյան ռազմաճակատի գնդերի հրամանատարների կատարելագործման դասընթացներում: Ավարտելուց հետո նրան շնորհվում է փոխգնդապետի կոչում: Փոխգնդապետ Հ.Ե. Մամիկոնյանը 1943–1944 թթ. վարում է Երրորդ Բելոռուսական ռազմաճակատի հրամանատարական դասընթացների պետի շարային գծով տեղակալի պաշտոնը: 1945 թ. ապրիլի 30-ին նրան շնորհվում է գնդապետի կոչում:

Իոսիֆ Ստալին, ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1–ին քարտուղար

Կլիմենտ Վորոշիլով, ԽՍՀՄ պաշտպանության նախարար

Սեմյոն Տիմոշենկո, Հյուսիսարևմտյան ռազմաճակատի հրամանատար

Բորիս Շապոշնիկով, ԲԳԿԲ գլխավոր շտաբի պետ

Կիրիլ Մերեցկով, Լենինգրադյան զինվորական օկրուգի, ապա 7-րդ բանակի հրամանատար

Լենինգրադյան զինվորական օկրուգի և Բալթիական նավատորմի հրամկազմը

Կարլ Մաններհայմ, Ֆինլանդիայի զինված ուժերի գլխավոր հրամանատար

Ադոլֆ Հիտլերը և Կարլ Մաններհայմը

Խորհրդային զինվորները
գրոհից առաջ

Ֆիննական դիպուկահարը՝
«կկուն», ծառի վրա

ԽՈՐՀՐԴԱ–ՖԻՆՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՅ ՀԵՐՈՍՆԵՐԸ

Կարապետ Սիմոնյան

Միքայել Պարսեղով

Գրիգոր (Գուրգեն) Հայրապետյան

Իսահակ Մանասյան

ԽՈՐՀՐԴԱ-ՖԻՆՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՅ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՆԵՐ, ՈՎՔԵՐ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ԴԱՐՁԵԼ ԵՆ ԾՈՎԱԿԱԼ ՈՒ ՄԱՐՇԱԼՆԵՐ

Հովհաննես Իսակով, Խորհրդային Միության նավատորմի ծովակալ, Խորհրդային Միության հերոս

Համազասպ Բաբաջանյան, զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ, Խորհրդային Միության հերոս

Սերգեյ Ագանով, ինժեներական զորքերի մարշալ

ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ԳԵՆԵՐԱԼ–ԼԵՅՏԵՆԱՆՏՆԵՐ

Բագրատ Առուշանյան

Ստեփան Կինոսյան

Իվան Վեքիլյան

Քրիստափոր Իվանյան

ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ԳԵՆԵՐԱԼ–ՄԱՅՈՐՆԵՐ

Քրիստափոր Ալավերդյան

Բենիամին Գալստյան

Նիկոլայ Հովհաննիսյան

Ռաֆայել Մարտիրոսյան

ԽՈՐՀՐԴԱ–ՖԻՆՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԱՄՆԱԿԻՑ ՀԱՅ ԱՆՎԱՆԻ ԲԺԻՇԿՆԵՐ

ա) հետագայում Սոցիալիստական աշխատանքի հերոսներ

Լևոն Օրբելի, բժշկական ծառայության գեներալ–գնդապետ

Ավետիք Բուռնազյան, բժշկական ծառայության գեներալ–լեյտենանտ

Արամ Աբրահամյան, բժշկական ծառայության գնդապետ

բ) բժշկական ծառայության գեներալ–մայորներ

Արթուր Կյուչարյանց

Ստեփան Կարճիկյան

Տիգրան Ճառաքյան

գ) բժշկական ծառայության գնդապետներ

Ալեքսանդր Հարությունով

Ստեփան Տեր-Մխիթարով

Ստեփան Քեչեկ

Եվգենի Շահբազյան

ՀԱՅ ՕԴԱՉՈՒՆԵՐ

Սարգիս Հայրապետով
(զոհվել է ՀՄՊ–ում)

Լազար Չափչախով (հետագայում Խորհրդային Միության հերոս, զոհվել է ՀՄՊ–ում)

Սամսոն Մկրտումյան (հետագայում Խորհրդային Միության հերոս, զոհվել է ՀՄՊ–ում)

Կոնստանտին Մալխասյան (հետագայում ԽՍՀՄ վաստակավոր օդաչու, ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ)

ԽՈՐՀՐԴԱ–ՖԻՆՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԱՅ ՍՊԱՆԵՐ ՈՒ ԶԻՆՎՈՐՆԵՐ

Հմայակ Մեհրաբյան (գնդապետ, հերոսաբար զոհվել է Սևաստոպոլում 1942 թ. հուլիսի 4–ին)

Հայկ Ղազարյան (Լենինի շքանշանակիր, զոհվել է ՀՄՊ–ում)

Սիմոն Սարգսյան (հետագայում գնդապետ, պատմական գիտությունների թեկնածու)

Գևորգ Բաղդասարյան (հետագայում գնդապետ)

Օնիկ Մինասյան (հետագայում փոխգնդապետ)

Ասատուր Հայրապետյան (ավագ լեյտենանտ, զոհվել է ՀՄՊ–ում)

Իզրեկ Օհանջանյան (զոհվել է ՀՄՊ–ում)

Գարեգին Խաչատրյան (զոհվել է Խորհրդա–ֆիննական պատերազմում)

Ժորա Ղազախեցյան (զոհվել է ՀՄՊ–ում)

Գևորգ Սարգսյան (զոհվել է ՀՄՊ–ում)



Լուսեղեն Գայբարով

Արամ Պետրոսյան

Գրիգոր Աղասյան

Սերգեյ Դանիելյան

Արամայիս Բալասանյան

Պատերազմից հետո ծառայել է Դոնի, Հյուսիս-Կովկասյան զինվորական օկրուգներում, իսկ 1954 թ. սեպտեմբերի 18-ին նշանակվել 9-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, այնուհետև առաջ քաշվել Հյուսիս-Կովկասյան զինվորական օկրուգի մարտական պատրաստության վարչության պետի պաշտոնում: Բանակից զորացրվել է 1959 թ.: Գնդապետ Հ.Ե. Մամիկոնյանը ՀԿ(բ)Կ անդամ էր 1940 թ.: Նա պարգևատրվել է Կարմիր դրոշի, 2 Կարմիր աստղի, Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշաններով, «Մարտական ծառայությունների համար» և այլ մեդալներով[84]:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. ապրիլի 7-ի հրամանագրով Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվեց նաև 13-րդ բանակի 51-րդ հրաձգային դիվիզիայի 348-րդ հրաձգային գնդի հրաձգային գումարտակի հրամանատար, ավագ լեյտենանտ Ենոք Պետրոսի Խաչատրյանը: Նա հատկապես աչքի ընկավ 1940 թ. փետրվար ամսին Խեմելյա-Ռեպոլա շրջանում տեղի ունեցած մարտերում: Մարտերի սկզբում նա 2-րդ գումարտակի շտաբի պետն էր: Երբ Խեմելյայի գրավման ժամանակ սպանվեց գումարտակի հրամանատարը, ավագ լեյտենանտ Ենոք Խաչատրյանն անմիջապես իր վրա վերցրեց հրամանատարությունը և հաջողությամբ կատարեց մարտական առաջադրանքը: Դրանից հետո էլ տեղի ունեցած մարտերի ընթացքում նա խելացի կերպով էր ղեկավարում գումարտակի գործողությունները, ձգտում փոքր կորուստների գնով կատարել մարտական առաջադրանքը: Շնորհիվ նրա ցուցաբերած խիզախության և մարտավարական բարձր ունակությունների, գումարտակի վաշտերը քիչ կորուստներով գրավեցին Ռեպոլա բնակավայրի վրա իշխող բարձունքների վրայի ուժեղ ամրացված դզոտը, ինչպես նաև ազատագրեցին համանուն բնակավայրը: Չնայած Խեմելյայի շրջանում ավագ լեյտենանտ Ե.Պ. Խաչատրյանը վիրավորվեց,

---

[84] ՌԴ ՊՆԿԱ, 11-րդ բաժին, գնդապետ Հ.Ե. Մամիկոնյանի հաշվառման քարտ, թիվ 129/7:

սակայն նա չթողեց մարտադաշտը և սրընթաց կերպով գրոհեց հակառակորդի ամրությունները՝ նախօրոք վստահ լինելով մարտի հաղթական ելքի վրա[85]:

Մաններհայմի գծի անառիկ ամրությունները ճեղքելու մարտերում ցուցաբերած խիզախության համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. ապրիլի 11-ի հրամանագրով Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվեց 13-րդ բանակի 80-րդ հրաձգային դիվիզիայի 88-րդ հրետանային գնդի դիվիզիոնի հրամանատար, ավագ լեյտենանտ Փայլակ Մնացականի Գևորգյանը[86] (ծնվել է 1908 թ. նոյեմբերի 15-ին Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի շրջանի Մանգասար գյուղում: 1931 թ. Երևանից զորակոչվել էր Կարմիր բանակի շարքերը: 1931 թ. ավարտել է Կիևի հրետանային դպրոցը): Նրա պարգևատրման թերթիկում, որը ստորագրվել էր գնդի հրամանատար, մայոր Բիլենկոյի, դիվիզիայի հրամանատար, կոմբրիգ Պրոխորովի, 13-րդ բանակի հրամանատար, կոմկոր Պարուսինովի և այլոց կողմից, նշված էր. «Թշնամու դեմ մղված մարտերում ավագ լեյտենանտ Փ.Մ. Գևորգյանն իրեն դրսևորել է որպես անվախ ու քաջ հրամանատար: Հակառակորդի ուժեղ կրակի տակ նա ղեկավարում էր դիվիզիոնի հրետանային կրակը՝ մեկը մյուսի հետևից ճնշելով թշնամու կրակակետերը: Նա հաճախ էր անձամբ ղեկավարում ուղիղ նշանառության դուրս բերած հրանոթների կրակը, իսկ հաճախ էլ իր նախաձեռնությամբ հետախուզության գնում սպիտակ ֆինների թիկունքը և հայտնաբերում թշնամու կրակակետերի տեղը: Մարտերից մեկի ժամանակ դիվիզիայի գնդերից մեկի հետևակային ստորաբաժանումը, հանդիպելով հակառակորդի ուժեղ դիմադրությանը, ստիպված էր նահանջել: Ավագ լեյտենանտ Փ.Մ. Գևորգյանը, տեսնելով այդ, դիվիզիոնի կրակը տեղափոխեց հակառակորդի կրակակետերի վրա և նպաստեց մեր ստորաբաժանման մարտիկների կազմակերպված ետ քաշվելուն: Դա հնարավորություն տվեց հետևակին հետ քա-

---

[85] Նույն տեղում, գ. 579, թ. 23:

[86] Ведомости Верховного Совета СССР. 1941. 11 июня. № 25. С. 1.

շել ուժերը և հրետանու աջակցությամբ գրավել կորցրած դիրքերը: Արժանի է պարգևատրման Կարմիր դրոշի շքանշանով»[87]:

Խորհրդա-ֆիննական պատերազմում իրենց խիզախությամբ աչքի ընկած Կարմիր բանակի մի շարք հայ հրամանատարներ պարգևատրվեցին Կարմիր աստղի շքանշանով: Նման պարգևի ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. ապրիլի 11-ի հրամանագրով արժանացան 43-րդ հրաձգային դիվիզիայի քաղբաժնի ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի պետ, ավագ քաղղեկ Սիմոն Մկրտչի Սարգսյանը և 143-րդ մոտոհրաձգային դիվիզիայի 507-րդ մոտոհրաձգային գնդի կուսակցական բյուրոյի պատասխանատու քարտուղար, քաղղեկ Իզրեկ Միրզոյի Օհանջանյանը[88]: Դիվիզիայի հրամանատար գնդապետ Մարցենկևիչի և կոմիսար, գնդային կոմիսար Շվեդի վկայությամբ. «Ընկ. Օհանջանյանն ուղարկվել էր 2-րդ և 3-րդ գումարտակներ, որտեղ մարտի ընթացքում իր անձնական օրինակով ոգևորում էր մարտիկներին, նրանց գրոհի առաջնորդում, դրանով իսկ նպաստելով 20,1 բարձունքի գրավմանը: Այնուհետև քաղղեկ Օհանջանյանը գլխավորեց նաև թշնամական հակագրոհների ետմղումը, մարտում ցուցաբերած խիզախությամբ նպաստելով մարտական առաջադրանքի կատարմանը: Արժանի է պարգևատրվելու Կարմիր աստղի շքանշանով»[89]:

Վերոհիշյալ հրամանագրով նման պարգևի արժանացավ 43-րդ հրաձգային դիվիզիայի քաղբաժնի ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի պետ, ավագ քաղղեկ Սիմոն Մկրտչի Սարգսյանը: Դիվիզիայի հրամանատար, գնդապետ Կիրպիչ-

---

[87] ՌՊՈԱ, ֆ. 37837, ց. 3, գ. 427, թ. 112–113 (կապիտան Փ.Ս. Գևորգյանը մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին և զոհվել 1941 թ. նոյեմբերին Հարավարևմտյան ռազմաճակատում):

[88] Ведомости Верховного Совета СССР. 1941. 25 июня. № 28. С. 1–3.

[89] ՌՊՈԱ, ֆ. 37837, ց. 3, գ. 520, թթ. 269–270 (Ի.Ս. Օհանջանյանը ծնվել է 1912 թ. Հայաստանի Կապանի շրջանի Արծվանիկ գյուղում... Զոհվել է Հայրենական մեծ պատերազմում):

նիկովի և զինկոմ, բրիգադային կոմիսար Իվանովի վկայությամբ. «Ավագ քաղղեկ Ս.Մ. Սարգսյանը ֆիննական ճակատում տեղի ունեցած մարտական գործողությունների սկզբից մինչև վերջ ամբողջ ժամանակ աշխատել է զորամասերում, նախապատրաստել նրանց մարտերի, հաճախակի ինքը գրոհի առաջնորդել 65-րդ հրաձգային և 162-րդ հրետանային գնդերը: Որպես քաղբաժնի ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի պետ՝ նա հասել էր այն բանին, որ զորամասերը մշտապես և ժամանակին ապահովված էին լինում լրագրերով, իսկ քարոզչական աշխատանքը մշտապես գտնվում էր անհրաժեշտ մակարդակի վրա: 65-րդ հրաձգային գնդի շարքերում հերթական մարտական առաջադրանքները կատարելիս ավագ քաղղեկ Ս.Մ. Սարգսյանը ծանր վիրավորվեց: Արժանի է պարգևատրվելու Կարմիր աստղի շքանշանով»[90]: Ս.Մ. Սարգսյանը ծնվել է Հայաստանի Վայքի մարզի Ազատեկ գյուղում 1909 թ.: 1932–1933 թթ. և 1939 թ. ծառայել է Կարմիր բանակում: Ինչպես արդեն նշեցինք, մասնակցել է Խորհրդա-ֆիննական պատերազմին: Այնուհետև, սկզբից մինչև վերջ մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: Հյուսիսարևմտյան ռազմաճակատում ցուցաբերած խիզախության համար 1942 թ. հունվարի 8-ին նա պարգևատրվել է Կարմիր աստղի երկրորդ շքանշանով: 1942 թ. գարնանը եղել է Կերչում մարտնչող Հայկական 390-րդ հրաձգային դիվիզիայի գնդերից մեկի կոմիսար, իսկ 1942 թ. հուլիսի վերջերին՝ նշանակվել Հայկական 408-րդ հրաձգային դիվիզիայի քաղբաժնի պետ: Այնուհետև 1943–1945 թթ. գնդապետ Ս.Մ. Սարգսյանը եղել է 10-րդ գվարդիական հրաձգային բրիգադի կոմիսար, 257-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարի քաղգծով տեղակալ, աչքի ընկել Կովկասի, Ղրիմի, Դոնբասի, Բելոռուսի և Մերձբալթիկայի ազատագրման մարտերում, երկու անգամ պարգևատրվել Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշաններով: Պատերազմից հետո պահեստի գնդապետ Ս.Մ. Սարգսյանը ապ-

---

[90] Նույն տեղում, գ. 547, թ. 371:

ռել ու աշխատել է Մոսկվայում, զբաղվել գիտամանկավարժական աշխատանքով, դարձել պատմական գիտությունների թեկնածու: Նրա գրչին են պատկանում «Այրվող անտառ» (1965 թ., Հայկական 408-րդ հրաձգային դիվիզիայի մասին), «408-րդ հայկական հրաձգային դիվիզիան Կովկասի համար մղված ճակատամարտում» (1985 թ.), «51-րդ բանակը» (1983 թ.): Մինչև իր կյանքի վերջը Ս.Մ. Սարգսյանը բազմիցս այցելել է Հայաստան և անգնահատելի օգնություն ցույց տվել երիտասարդ ռազմական պատմաբաններին[91]:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. ապրիլի 9-ի հրամանագրով Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվեց 13-րդ բանակի 50-րդ հրաձգային դիվիզիայի 6-րդ առանձին հետախուզական գումարտակի հրամանատար, կապիտան Անդրեյ Միքայելի Սարկիսովը (ծնված 1905 թ., բանակում էր ծառայում 1925 թ.): Նրա պարգևատրման թերթիկը ստորագրել էին դիվիզիայի հրամանատար, կոմբրիգ Երյոմինը, զինկոմ, գումարտակային կոմիսար Սումարը, բանակի հրամանատար, կոմկոր Գրենդալը և բանակի ռազմական խորհրդի անդամ, կոմկոր Զապորոժեցը: Այնտեղ ասված էր. «Ընկ. Սարկիսովը դիվիզիայի ողջ մարտական գործողությունների ընթացքում իրեն դրսևորել է իբրև տակտիկապես գրագետ, հաստատակամ և կրթված հրամանատար: Ընկ. Սարկիսովը վայելում է ինչպես իր ենթակաների, այնպես էլ դիվիզիայի ողջ հրամանատարական կազմի վստահությունը, մեծ հեղինակություն վայելում նրանց շրջանում: Մարտում ընկ. Սարկիսովն անձամբ խիզախ է և անվեհեր: 27,9 բարձունքի գրավման ժամանակ նա ցուցաբերեց համառություն և ստիպեց հակառակորդին թողնել տեղանքի վրա իշխող դիրքերը: Այնուհետև նա հմտորեն կազմակերպեց սպիտակ ֆինների հետապնդումը: Կապիտան Ա.Մ. Սարկիսովի գումարտակի հաջողությունը հնարավորություն տվեց դիվիզիայի 359-րդ հրա-

---

[91] *К.А. Арутюнян.* Участие Армянского народа в Великой Отечественной войне Советского Союза (1941–1945). Е.: «Гитутюн» НАН РА, 2004. С. 580–581.

ձգային գնդին առաջանալ մինչև Սալմեն գետ – Կայտա բնագիծը: Գումարտակի գործողությունները գերազանց կազմակերպելու, ինչպես նաև մարտերում ցուցաբերած անձնական խիզախության համար արժանի է պարգևատրման Կարմիր աստղի շքանշանով»[92]:

1940 թ. մարտի 8-ին 18,1 բարձունքի մարտերում խիզախության ու հերոսության իսկական օրինակներ ցույց տվեց 173-րդ մոտոհրաձգային դիվիզիայի 567-րդ մոտոհրաձգային գնդի 2-րդ գումարտակի 5-րդ հրաձգային վաշտի հրամանատար, լեյտենանտ Մկրտիչ Կնյազի Գրիգորյանը (ծնվել է 1910 թ. Թիֆլիսում): Դիվիզիայի հրամանատար, գնդապետ Մարցենկովիչի վկայությամբ. «Լեյտենանտ Գրիգորյանը սպիտակ ֆինների դեմ մղված մարտերում իրեն դրսևորել է իբրև խիզախ և անվեհեր հրամանատար: Մարտերից մեկում նրա վաշտը երեք կողմից շրջապատվեց հակառակորդի կողմից: Սակայն հմուտ հրամանատարը սառնասրտորեն ետ մղեց թշնամու բոլոր գրոհները և վաշտը քիչ կորուստներով դուրս բերեց սպիտակ ֆինների քթի տակից: 1940 թ. մարտի 8–9-ին թիվ 18,1 բարձունքի գրավման մարտում լեյտենանտ Մ.Կ. Գրիգորյանը դարձյալ աչքի ընկավ իր խիզախությամբ: Նա գնում էր վաշտի առջևից և անձնական օրինակով գրոհի տանում մարտիկներին: Մարտական առաջադրանքը կատարելու ժամանակ ցուցաբերած հերոսության համար լեյտենանտ Մ.Կ. Գրիգորյանն արժանի է պարգևատրվելու Կարմիր աստղի շքանշանով»[93]: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. ապրիլի 11-ի հրամանագրով խիզախ հայորդին պարգևատրվեց Կարմիր աստղի շքանշանով»[94]:

Նույն հրամանագրով «Արիության համար» մեդալի արժանացավ 80-րդ մոտոհրաձգային դիվիզիայի 330-րդ մոտոհրաձգային գնդի մոտոհրաձգային գումարտակի հրամանատար, ավագ լեյտենանտ Ապրես Սեյրանի Գրիգորյանը (ծնվել է

---

[92] Նույն տեղում, թ. 361, գ. 383, թ. 22:

[93] Նույն տեղում, գ. 434, թ. 225:

[94] Ведомости Верховного Совета СССР. 1941. 15 июня. № 26. С. 4.

1908 թ., բանակում էր ծառայում 1931 թ.): Գնդի հրամանատար, մայոր Հուսեյնովի և դիվիզիայի հրամանատար, կոմբրիգ Նովոսելսկու վկայությամբ. «Ավագ լեյտենանտ Ա.Ս. Գրիգորյանը հարձակողական գործողության նախապատրաստվելիս մեծ ջանքեր ու աշխատանք է թափել իր գումարտակի համախմբման և կուռ անձնակազմ ստեղծելու ուղղությամբ: Մարտերի ընթացքում նա իրեն դրսևորեց որպես իր ստորաբաժանման գործողությունները լավ կազմակերպող և իր գործը հասկացող հմուտ հրամանատար: Պիտկա-Նիեմի ծովածոցի և Վիլլա-Իոկի բնակավայրի համար մղված մարտերում նա ցուցաբերեց խիզախություն և քաջություն, մշտապես գտնվում էր առաջավոր գծում և անձնական օրինակով ոգևորում զինվորներին՝ կատարելու մարտական առաջադրանքը: Ավագ լեյտենանտ Ա.Ս. Գրիգորյանի գումարտակը հաջողությամբ կատարեց մարտական առաջադրանքը՝ նվազագույն մարդկային կորուստներով: Արժանի է պարգևատրման «Արիության համար» մեդալով»[95]:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. ապրիլի 11-ի հրամանագրով Կարմիր աստղի շքանշանով պարգևատրվեց 7-րդ բանակի 3-րդ առանձին երկաթուղային վերականգնողական գումարտակի հրամանատարի օգնական, լեյտենանտ Վարդան Ավանեսի Ավետովը (ծնված 1902 թ.): Նա այդ գումարտակում էր ծառայում 1939 թ. սեպտեմբերի 7-ից: Դեռևս 1918 թ. դեկտեմբերից մինչև 1921 թ. հուլիս Կարմիր բանակի շարքերում Թուրքեստանյան ճակատում մասնակցել էր քաղաքացիական կռիվներին, վիրավորվել ոտքից Ուչ-Կուրգան կիշլակի մոտ տեղի ունեցած մարտում: Խորհրդա-ֆիննական պատերազմի նախօրյակին Վ.Ա. Ավետովն ապրում էր Լենինգրադում (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ): Շնորհիվ նրա տքնաջան աշխատանքի՝ մշտապես ժամանակին վերականգնվում էին շարքից դուրս եկած երկաթգիծը, վերանորոգվում էին գումարտակի բեռնատար ավտոմեքենաները: Այդ

---

[95] ՌՊՈԱ, ֆ. 37837, ց. 3, գ. 434, թ. 216:

ամենը զգալի չափով նպաստեց 7-րդ բանակի գործողությունների հաջողությանը՝ «Մաններհայմի գծի» ճեղքման ժամանակ[96]:

1939 թ. նոյեմբերի 30-ից մինչև դեկտեմբերի 20-ը Տոլվայարվիի, ապա 1940 թ. հունվարի 21–27-ը՝ Այտտակոսկիի շրջանում տեղի ունեցած մարտական գործողությունների ընթացքում իր պարտականությունները մեծ եռանդով ու ջանասիրաբար էր կատարում 8-րդ բանակի 75-րդ հրաձգային դիվիզիայի մատակարարման կետի պարետ, լեյտենանտ Իվան Հովհաննեսի Խառատյանը (1907 թ. ծնված, Կարմիր բանակում էր ծառայում 1929 թ., պատերազմից առաջ բնակվում էր Լենինգրադի մարզի Օստրով քաղաքում): Կիվիյարվիի շրջանում, երբ դիվիզիայի 28-րդ հրաձգային գունդը բարդ պայմաններում հակառակորդի թիկունքում կատարում էր հատուկ առաջադրանք, և փակված էին գնդի մատակարարման ճանապարհները, շնորհիվ լեյտենանտ Ի.Հ. Խառատյանի հնարամտության, գունդը չունեցավ մատակարարման խաթարման ոչ մի դեպք: Այդ ամենը մեծ չափով նպաստեց գնդի կողմից մարտական հատուկ առաջադրանքի հաջող կատարմանը: Իր պարտականությունները ֆիննական պատերազմի բարդ պայմաններում հստակ կատարելու համար լեյտենանտ Ի.Հ. Խառատյանը ներկայացվեց Կարմիր աստղի շքանշանով պարգևատրման, ինչպես նաև առաջ քաշվեց 1-ին հրաձգային կորպուսի մատակարարման կետի պարետի օգնականի պաշտոնում[97]:

Մաններհայմի գծի ճեղքման մարտերում ցուցաբերած արիության համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. ապրիլի 7-ի հրամանագրով Կարմիր աստղի շքանշանով պարգևատրվեց 13-րդ բանակի 3-րդ հրաձգային կորպուսի 101-րդ հրաձգային գնդի 7-րդ հրաձգային վաշտի քաղ-

---

[96] Նույն տեղում, գ. 391, թ. 376:
[97] Նույն տեղում, գ. 578, թ. 221:

ղեկ, կրտսեր քաղղեկ Գուրգեն Սամվելի Գալստյանը[98]: Նրա պարգևատրման թերթիկում գնդի հրամանատար, գնդապետ Պիմենովը, կորպուսի հրամանատար, կոմդիվ Բատովը և բանակի հրամանատար, 2-րդ կարգի բանակային հրամանատար Գրենդալը նշել են. «Ընկ. Գալստյանը սպիտակ ֆիններ դեմ մղված մարտերում, հատկապես 108-րդ բարձունքի խրամատներն ու դոտը գրավելիս, ցուցաբերեց խիզախություն և նախաձեռնություն՝ իր անձնական օրինակով գրոհի առաջնորդելով վաշտի զինվորներին: Հետևելով խիզախ քաղղեկին, զինվորները նետվեցին առաջ, գրավեցին բարձունքը, խրամատները, լռեցրին դոտի կրակը և վերցրեցին գերիներ: Ցուցաբերած խիզախության և հերոսության համար քաղղեկ Գ.Ս. Գալստյանը արժանի է պարգևատրման Կարմիր աստղի շքանշանով»[99]:

Նման պարգևի ներկայացվեց նաև 54-րդ հրաձգային դիվիզիայի 118-րդ հրաձգային գնդի հրետանային մարտկոցի հրամանատար, ավագ լեյտենանտ Հայկ Սահակի Հովհաննիսյանը (ծնվել է 1902 թ., Կարմիր բանակում էր ծառայում 1930 թ.): Գնդի հրամանատար, մայոր Ռասսոչինի և կոմիսար, գումարտակային կոմիսար Վիխրովի վկայությամբ. «Ավագ լեյտենանտ Հ.Ս. Հովհաննիսյանը մարտերում իրեն դրսևորել է որպես կարգապահ և հայրենիքին նվիրված հրամանատար: Դիվիզիայի 46 օր շարունակ շրջապատման մեջ գտնվելու մարտերում նա հմտորեն էր ղեկավարում գնդի մարտկոցի գործողությունները: Շատ զուսպ հրամանատար է: Մարտերից մեկում վիրավորվեց, բայց վերքը կապելուց հետո շարունակեց ղեկավարել հրետանու կրակը: Արժանի է պարգևատրվելու Կարմիր աստղի շքանշանով»[100]:

Իր կատարած սխրանքների համար նման պարգևի ներկայացվեց նաև 104-րդ լեռնահրաձգային դիվիզիայի առան-

---

[98] Ведомости Верховного Совета СССР. 1941. 23 февраля. № 10. С. 4.

[99] ՌՊՌԱ, ֆ. 37837, ց. 3, գ. 426, թ. 129:

[100] Նույն տեղում, գ. 520, թ. 237:

ձին գնդացրային գումարտակի դասակի հրամանատար, կրտսեր լեյտենանտ Հովհաննես Գրիգորի Աբովյանը (ծնված 1911 թ. Նոյեմբերյանում): Գումարտակի հրամանատար ավագ լեյտենանտ Գորշկովը և դիվիզիայի հրամանատար գնդապետ Շևչենկոն նրա պարգևատրման թերթիկում նշել են. «Ընկ. Հ.Գ. Աբովյանը 3 անգամ գնաց հետախուզության, ամեն անգամ էլ դրսևորելով խիզախություն և համարձակություն: Հետախուզական խմբի հրամանատարից նա ստացավ հատուկ առաջադրանք. եթե հակառակորդը շրջապատման մեջ գցեր հետախուզական խումբը, ապա կրտսեր լեյտենանտ Աբովյանը պետք է մեկ մարտիկի հետ աջից ճեղքեր թշնամու օղակը, նահանջեր՝ իր վրա գրավելով հակառակորդի հիմնական ուշադրությունը: Ամեն ինչ ընթացավ ծրագրվածի նման: Խիզախ հրամանատարի հետևից ընկավ 20 ֆիննական զինվորներից բաղկացած խումբը: Շրջապատումից դուրս գալիս նա դիպուկ կրակով ոչնչացրեց հակառակորդի 8 զինվոր: Կտրվելով հետևակային հիմնական խմբից՝ ընկ. Աբովյանը հաջողությամբ կատարեց հրամանատարության առաջադրանքը: Առաջադրանքը հաջողությամբ կատարեց նաև հետախուզական հիմնական խումբը: Հակառակորդի խոր թիկունքում խուսանավելուց հետո, ի վերջո, կրտսեր լեյտենանտ Հ.Գ. Աբովյանին և նրա հետ գտնվող զինվորին հաջողվեց դուրս պրծնել շրջապատումից և ողջ-առողջ վերադառնալ զորամաս[101]:

Խորհրդա-ֆիննական պատերազմում ծառայողական պարտականությունները գերազանց կատարելու և այդ ընթացքում ցուցաբերած խիզախության համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. ապրիլի 7-ի հրամանագրով Կարմիր աստղի շքանշանով պարգևատրվեց 13-րդ բանակի 4-րդ հրաձգային դիվիզիայի 63-րդ առանձին կապի գումարտակի հրամանատար կապիտան Վահան Սողոմոնի Մկրտչյանը[102]: Նրա պարգևատրման թերթիկում, որի

---

[101] Նույն տեղում, գ. 391, թ. 55:

[102] Ведомости Верховного Совета СССР. 1941. 9 марта. № 12. С. 4.

տակ ստորագրել են գնդի հրամանատար, գնդապետ Կրյուկովը և բանակի հրամանատար, կոմկոր Պարուսինովը, նշվում է. «1939 թ. դեկտեմբերի 25–27-ը Սուվանտո-Յարվի լճի շրջանում սպիտակ ֆինների դեմ մղված մարտերում ընկ. Մկրտչյանը գտնվում էր կապի հանգույցում և հստակորեն ղեկավարում էր կապավորների գործողությունները: Նա ճիշտ ժամանակին կարողանում էր կազմակերպել հակառակորդի արկերից ու ականներից խաթարված կապի գծերի միացման աշխատանքը, հասնում նրան, որ դիվիզիայի հրամանատարի բոլոր հրամաններն ու կարգադրությունները ժամանակին հաղորդվեին բոլոր զորամասերի և ատորաբաժանումների հրամանատարներին, դրանով իսկ նպաստում մարտի կառավարման գործին: 1940 թ. փետրվարի 15–17-ի մարտերում նա անձամբ եղավ առաջին գծի դիտակետում և ղեկավարեց կապավորների աշխատանքը, հետևելով, որ ժամանակին վերացվեին հեռախոսալարի կտրվածքները, վերականգնվի հստակ կապը:

1940 թ. մարտի 1–13-ը տեղի ունեցած մարտերի ընթացքում գումարտակի կապավորները դարձյալ գտնվեցին իրենց բարձրության վրա՝ զորամասերի և դիվիզիայի հրամանատարների միջև պահպանելով անխաթար կապ: Սպիտակֆինների դեմ մղված մարտերում գործողությունները հմտորեն ղեկավարելու և ցուցաբերած անձնական խիզախության համար կապիտան Վ.Ս. Մկրտչյանը արժանի է պարգևատրման Կարմիր աստղի շքանշանով»[103]:

Ո՞վ է այդ խիզախ կապավոր-հրամանատարը, որտե՞ղ է ծնվել նա, ի՞նչ ճակատագիր է ունեցել: Այդ հարցերը պարզելու համար մենք դարձյալ եղանք ՌԴ պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվում (Մոսկվայի մարզ, ք. Պոդոլսկ) և նրա համապատասխան բաժիններում մեր կատարած ուսումնասիրությունների հետևանքով պարզեցինք հետևյալը. Վահան Սողոմոնի Մկրտչյանը ծնվել է Հայաստանի

[103] ՌՊՈԱ, ֆ. 37837, ց. 3, գ. 510, թ. 176:

Անիի շրջանի Գուսանագյուղ գյուղում՝ 1907 թ. հոկտեմբերի 1-ին: 1929 թ. հոկտեմբերի 5-ին զորակոչվել է Կարմիր բանակի շարքերը և ծառայել Հայկական հրաձգային դիվիզիայի կապի վաշտում: Կապի դպրոցն ավարտելուց հետո՝ 1930 թ. սեպտեմբերի 7-ին, նշանակվել է Հայկական հրաձգային դիվիզիայի Առանձին կապի վաշտի ջոկի հրամանատար: Մեկ տարի անց նրան ուղարկում են Կիև՝ Միացյալ ռազմական կապի ուսումնարանում սովորելու համար: Ուսումնարանը գերազանց ավարտելուց հետո Վ.Ս. Մկրտչյանը կրկին վերադառնում է հարազատ դիվիզիա, 1932 թ. սեպտեմբերին նշանակվում դիվիզիայի Առանձին կապի վաշտի դասակի հրամանատար: 1935 թ. հմուտ կապավորը առաջ է քաշվում վաշտի հրամանատարի, իսկ 1937 թ. օգոստոսի 2-ին՝ Առանձին կապի գումարտակի շտաբի պետի պաշտոններում: 1937 թ. մարտի 26-ին նրան շնորհվում է ավագ լեյտենանտի կոչում: 1938 թ. հունվարի 2-ին ավագ լեյտենանտ Վահան Մկրտչյանը գործուղվում է Մոսկվայի զինվորական օկրուգ՝ Սուրոմ քաղաքի Կապի հրամանատարների վերապատրաստման դասընթացներում սովորելու: Ավարտելուց հետո նա նշանակում է ստանում Բելոռուսական հատուկ զինվորական օկրուգում՝ որպես Մինսկ քաղաքի ռազմատրանսպորտային ծառայության 4-րդ բաժնի պետ: 1938 թ. սեպտեմբերի 18-ին ավագ լեյտենանտ Վ.Ս. Մկրտչյանը նշանակվում է նույն օկրուգի 4-րդ հրաձգային դիվիզիայի 63-րդ առանձին կապի գումարտակի հրամանատար: 1939 թ. հունվարի 29-ին նրան շնորհվում է կապիտանի կոչում: 1939 թ. սեպտեմբերին կապիտան Վ.Ս. Մկրտչյանը մասնակցում է Արևմտյան Բելոռուսիայի ազատագրմանը, որը դեռևս 1920 թ. Խորհրդային Ռուսաստանից զավթել էր պանական Լեհաստանը: Այնուհետև 1939 թ. նոյեմբերի 30-ից մինչև 1940 թ. մարտի 13-ը կապիտան Վ.Ս. Մկրտչյանը, որպես 4-րդ հրաձգային դիվիզիայի 63-րդ առանձին կապի գումարտակի հրամանատար, մասնակցել է Խորհրդա-ֆիննական պատերազմին և պարգևատրվել Կարմիր աստղի շքանշանով: Հայրենական մեծ պատերազմի առաջին շրջանում նա 1942 թ.

հունվարի 10-ին նշանակվել է Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիայի կապի պետ և նրա կազմում նույն թվականի օգոստոս-հոկտեմբեր ամիսներին մասնակցել Կովկասի ճակատամարտին, արժանացել մայորի կոչման: 1942 թ. նոյեմբերի 4-ից մայոր Վ.Ս. Մկրտչյանը, որպես 389-րդ հրաձգային դիվիզիայի կապի պետ, մասնակցել է Կովկասի ճակատամարտի հաղթական շրջանի (1943 թ. հունվար-հոկտեմբեր) մարտերին, 1943 թ. ապրիլի 14-ին ստացել փոխգնդապետի կոչում: Այնուհետև փոխգնդապետ Վ.Ս. Մկրտչյանը, որպես 1-ին Ուկրաինական ռազմաճակատի 5-րդ գվարդիական բանակի հրետանու կապի պետ, մասնակցել է Ուկրաինայի, Լեհաստանի ազատագրման մարտերին, հաղթական մարտական ուղին ավարտել Բեռլինում: Հետպատերազմյան տարիներին նա եղել է դիվիզիայի սպա, հրետանային կորպուսի կապի պետ: 1950 թ. նոյեմբերի 2-ին Վ.Ս. Մկրտչյանին շնորհվել է գնդապետի կոչում: Գնդապետ Վ.Ս. Մկրտչյանը 1951 թ. հոկտեմբերի 6-ին ավարտել է Ձերժինսկու անվան հրետանային ակադեմիային կից բարձրագույն ակադեմիական հրետանային դասընթացները և մինչև 1958 թ. նոյեմբերի 12-ը ծառայել ԽՍՀՄ զինված ուժերում: Զորացրվելուց հետո պահեստի գնդապետ Վ.Ս. Մկրտչյանն ապրում էր Սամարա քաղաքում: Հայրենական մեծ պատերազմում պարգևատրվել էր Հայրենական պատերազմի 1-ին (2 հատ) և 2-րդ աստիճանի շքանշաններով[104]:

1940 թ. փետրվարի 19-ի մարտում ցուցաբերած սխրանքի համար Կարմիր աստղի շքանշանով պարգևատրվեց նաև 13-րդ բանակի 62-րդ հրաձգային դիվիզիայի 123-րդ հրաձգային գնդի 8-րդ հրաձգային վաշտի քաղղեկ Մակիչ Գաբրիելի Խաչատրյանը (ծնվել է 1907 թ. Շամխորի շրջանի Սապեր գյուղում, Կարմիր բանակում էր ծառայում 1931 թ.): Նրա պարգևատրման թերթիկում գնդի հրամանատար Կորոտնևը, դիվիզիայի հրամանատար, կոմբրիգ Կոնդրուսովը և բանակի հրամանատար, կոմկոր Պարուսինովը նշել են. «8-րդ հրաձգային

---

[104] ՌԴ ՊՆԿԱ, 11-րդ բաժին, գնդապետ Վ.Ս. Մկրտչյանի անձնական հաշվառման և պարգևատրման բաժնի թիվ 219/29 և 1292 քարտեր:

վաշտի քաղղեկ ընկ. Խաչատրյանը գնդի բոլոր մարտական գործողությունների ընթացքում ապահովել է վաշտի քաղաքական-բարոյական բարձր վիճակը՝ իր կազմակերպչական աշխատանքով: 1940 թ. փետրվարի 19-ին Սուվանտո Յարվի լճի մոտ տեղի ունեցած մարտում անձնական օրինակով վաշտի անձնակազմին վճռական գրոհի էր առաջնորդում: Նա լավ կազմակերպիչ է, կարգապահ ու պահանջկոտ քաղղեկ և կարեկից ընկեր: Վայելում է ամբողջ վաշտի անձնակազմի հարգանքը, բոլորի մոտ ունի մեծ հեղինակություն: Հերոսությունն ու անձնազոհությունը քաղղեկ Խաչատրյանի բարձր հատկություններն են: Արժանի է պարգևատրման Կարմիր աստղի շքանշանով»[105]:

1940 թ. փետրվարի 6–8-ի մարտերում քարակույտ տեղանքից 1 կմ արևմուտք գտնվող բարձունքի գրավման մարտերում իրեն որպես խիզախ և անվեհեր հրամանատար դրսևորեց 15-րդ բանակի 25-րդ մեքենայացված հեծյալ դիվիզիայի 63-րդ մեքենայացված հեծյալ գնդի 1-ին էսկադրոնի դասակի հրամանատար, լեյտենանտ Սուրեն Տիգրանի Աբաջյանը (ծնվել է 1916 թ., Կարմիր բանակ էր զորակոչվել 1936 թ. Լենինգրադի մարզի Պսկով քաղաքից): Վերոհիշյալ մարտերում նրա դասակը գործում էր էսկադրոնի երկրորդ էշելոնում: Հակառակորդը նկատելով նրանց վերցրեց ուժեղ գնդացրային կրակի տակ: Աբաջյանի դասակում կար ընդամենը 2 հաստոցավոր գնդացիր: Սակայն հնարամիտ հրամանատարը մարտադաշտով, ձյան տակից գտավ 3 սարքին վիճակում գտնվող հաստոցավոր գնդացիր և ուժեղ կրակ բացեց ֆինների կրակակետերի վրա՝ լռեցնելով դրանք: Էսկադրոնի հիմնական ուժերը, օգտվելով դրանից, գրավեցին բարձունքը և դուրս եկան ելման դիրքեր: Փետրվարի 8-ի մարտում խիզախ հրամանատարը ծանր վիրավորվեց և տեղափոխվեց հոսպիտալ: Դիվիզիայի հրամանատար կոմբրիգ Դեդաևը, կոմիսար, գնդային Կոմիսար Տուլիկովը, բանակի հրամանատար, 2-րդ կարգի

---

[105] ՌՊՌԱ, ֆ. 37837, ց. 3, գ. 579, թ. 31:

բանակային հրամանատար Կուրդյումովը և ռազմական խորհրդի անդամ, կորպուսային կոմիսար Վաշուգինը լեյտենանտ Ս.Տ. Աբաջյանին ներկայացրին պարգևատրման «Արիության համար» մեդալով[106]:

Նման պարգևի ներկայացվեց նաև 86-րդ մոտոհրաձգային դիվիզիայի 169-րդ հրաձգային գնդի 3-րդ գումարտակի կոմիսար, ավագ քաղղեկ Արիստակես Համբարձումի Գաբրիելյանը (ծնվել է 1908 թ. Լեռնային Ղարաբաղի Ջրաբերի շրջանի Կարադաղ գյուղում):

«Սպիտակ ֆիններ դեմ տեղի ունեցած մարտերում ընկ. Գաբրիելյանն իրեն դրսևորեց որպես խիզախ հերոս կոմիսար, – Գաբրիելյանի պարգևատրման թերթիկում նշել է գնդի հրամանատարը: – Իր անձնական օրինակով նա մարտիկներին գրոհի էր առաջնորդում՝ հակառակորդի կրակակետերը ոչնչացնելու համար: 1940 թ. մարտի 5-ին հերթական գրոհի ժամանակ նա ծանր վիրավորվեց: Ցուցաբերած հերոսության և խիզախության համար արժանի է պարգևատրման «Արիության համար» մեդալով»[107]:

1940 թ. մարտի 1–13-ը տեղի ունեցած մարտերում իր պարտականությունները գերազանց կատարելու համար «Մարտական ծառայությունների համար» մեդալի ներկայացվեց նույն գնդի կապի պետ, ավագ լեյտենանտ Բենիամին Մոկեևիչ (այդպես է տեքստում) Ղազարյանը (ծնվել է 1909 թ. Գանձակում, Կարմիր բանակի շարքերում է ծառայում 1931 թ.): Գնդի և դիվիզիայի հրամանատարների վկայությամբ. «Շնորհիվ ավագ լեյտենանտ Բ.Մ. Ղազարյանի հմուտ ղեկավարության՝ 1940 թ. մարտի 1–13-ի մարտերի ժամանակ կապը գնդի ստորաբաժանումների միջև ընթանում էր առանց լուրջ խաթարումների: Հեռախոսալարի ամեն տեսակ վնասվածք վերացվում էր տեղն ու տեղը: Մեկ անգամ չէր, որ հակառակորդի տեղատարափ կրակի տակ, վտանգի ենթարկելով սեփական

---

[106] Նույն տեղում, թ. 3:
[107] Նույն տեղում, գ. 425, թ. 240:

կյանքը, ավագ լեյտենանտ Բ.Մ. Ղազարյանն անձամբ էր վերացնում կապի գծի վնասվածքները: Շնորհիվ ընկ. Ղազարյանի լավ աշխատանքի, գնդի հրամանատարությունը հնարավորություն ստացավ ժամանակին և արագ մարտական հրամաններն ու կարգադրությունները հաղորդել առաջապահ ստորաբաժանումներին»[108]:

«Մարտական ծառայությունների համար» մեդալի ներկայացվեց 19-րդ հրաձգային կորպուսի 43-րդ կորպուսային ծանր հրետանային գնդի կապի պետի օգնական, լեյտենանտ Վասիլ Ալեքսանդրի Հովհաննիսյանը (ծնվել է 1914 թ., Կարմիր բանակ էր զորակոչվել 1933 թ. Լենինականից, այժմ՝ Գյումրի): Նրա պարգևատրման թերթիկում, որը ստորագրել են գնդի հրամանատար, գնդապետ Զախարովը և կորպուսի հրամանատար, կոմդիվ Պարուսինովը, գրված է. «Ընկ. Վ.Ա. Հովհաննիսյանն աշխատելով որպես գնդի կապի պետի օգնական ռադիոկապի գծով, իր գործը ուսումնասիրել է խորապես և այն գիտի լավ: Ռադիոկապի գույքը և անձնակազմը մարտական գործողությունների համար պատրաստված է լավ: Ամբողջ մարտական գործողությունների ժամանակ ռադիոկապը մշտապես աշխատել է անխաթար, հաղորդումները եղել են հստակ և պարզ լսելի: Ռադիոկապի գույքը միշտ պահվում է սարքին և գերազանց վիճակում: Ընկ. Վ.Ա. Հովհաննիսյանը կարգապահ, կատարող հրամանատար է, պահանջկոտ է ինչպես իր, այնպես էլ իր ենթակաների հանդեպ: Ռադիոկապի աշխատանքը կազմակերպում է ճիշտ, ժամանակին հետևում գնդի ռադիստների գործունեությանը, օգնում նրանց: Մշտապես աշխատում է իր և ռադիստների գիտելիքների կատարելագործման ուղղությամբ: Նվիրված է հայրենիքի և կուսակցության գործին: Ակտիվորեն մասնակցում է հասարակական աշխատանքներին, լավ կազմակերպիչ է ու քարոզիչ»[109]:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ.

---

[108] Նույն տեղում, թ. 257:
[109] Նույն տեղում, գ. 520, թ. 229:

մայիսի 20-ի հրամանագրով «Մարտական ծառայությունների համար» մեդալով պարգևատրվեց 15-րդ բանակի 37-րդ մոտոհրաձգային դիվիզիայի 20-րդ հրաձգային գնդի 3-րդ հրաձգային վաշտի քաղղեկի տեղակալ Պատվական Ավետիսի Ասատրյանը (ծնվել է 1916 թ., Կարմիր բանակ էր զորակոչվել 1937 թ.)[110]: Գնդի հրամանատար մայոր Գրուզդևը, կոմիսար Չիբերովը և դիվիզիայի հրամանատար, կոմբրիգ Սորոկինը խիզախ հայորդուն ներկայացրել էին Կարմիր դրոշի շքանշանի, սակայն բանակի հրամանատար, 2-րդ կարգի բանակային հրամանատար Կուրդյումովը և ռազմական խորհրդի անդամ կորպուսային կոմիսար Վաշուգինը պարգևը իջեցրել էին մեդալի: Ահա թե ինչ է գրված Պ.Ա. Ասատրյանի պարգևատրման թերթիկում. «Ընկ. Ասատրյանը 1940 թ. փետրվարի 23-ից մինչև մարտի 13-ը Պիտկյարանտայի շրջանում տեղի ունեցած մարտերում միշտ գործել է առջևի գծում, իր անձնական օրինակով ոգևորելով վաշտի անձնակազմին հասնելու հաղթանակի: Փետրվարի 23-ին վաշտի դասակներից մեկը ընկել էր հակառակորդի գնդացրային ուժեղ կրակի տակ: Քաղղեկի տեղակալ Ասատրյանը, ամեն վայրկյան վտանգի ենթարկելով սեփական կյանքը, մարտադաշտից անվտանգ վայր տեղափոխեց 6 վիրավոր կարմիրբանակայինի, ապա դասակը դուրս բերեց թշնամու կրակի տակից... Մարտի 5-ի մարտում նա թշնամու սպանիչ կրակի տակ դասակներից մեկի հրամանատարին հասցրեց վաշտի հրամանատարի հրամանը, ապա մարտադաշտից հանեց 4 վիրավոր կարմիրբանակայինի: Այնուհետև փոխարինելով շարքից դուրս եկած հրամանատարին, նա դասակը տարավ գրոհի՝ «Հանուն հայրենիքի» կոչով: Արժանի է պարգևատրվելու Կարմիր դրոշի շքանշանով»[111]:

«Մարտական ծառայությունների համար» մեդալով պարգևատրվեց 34-րդ հրաձգային կորպուսի մթերախարային մատակարարման պետի օգնական, ավագ լեյտենանտ Վար-

---

[110] Նույն տեղում, գ. 383, թ. 212:
[111] Նույն տեղում, գ. 398, թ. 388:

դան Հակոբի Հակոբյանը (ծնված 1908 թ., Կարմիր բանակում էր ծառայում 1930 թ.):

Մաններհայմի գծի ճեղքման և Վիբորգի գրավման մարտերում կորպուսի զորամասերը երբեք չունեցան պարենի և անհրաժեշտ սննդամթերքի պակաս: Ձմեռային դաժան սառնամանիքի պայմաններում, շնորհիվ ավագ լեյտենանտ Վ.Հ. Հակոբյանի և նրա զինակիցների հոգատար աշխատանքի, առաջին գծում մարտնչող ստորաբաժանումների անձնակազմերը մշտապես ապահովված եին տաք կերակուրով և թեյով: Այդ ամենն զգալի չափով նպաստեց կորպուսի զորամասերին հաջողությամբ կատարել մարտական առաջադրանքը»[112]:

Նման պարգևի արժանացավ նաև 95-րդ հրաձգային դիվիզիայի 90-րդ հրաձգային գնդի քիմիական պաշտպանության պետ, ավագ լեյտենանտ Վլադիմիր Վիրաբի Բադալյանը (ծնվել է 1911 թ., Կարմիր բանակում էր ծառայում 1933 թ.): Նրա պարգևատրման թերթիկում գնդի հրամանատար, մայոր Գուձը և դիվիզիայի հրամանատար, կոմբրիգ Եգորովը նշել են. «Ընկ. Բադալյանը սպիտակ ֆիններին դեմ 1940 թ. փետրվարի 24-ից մինչև մարտի 13-ը տեղի ունեցած մարտերի ընթացքում աշխատում էր գնդի շտաբի օպերատիվ խմբում: Այդ ամբողջ ժամանակ նա տասնյակ անգամ, գիշեր թե ցերեկ, մինչև գոտկատեղը ձյան մեջ խրված, հակառակորդի փոթորկալից կրակի տակ, կատարում էր օպերատիվ հանձնարարություններ՝ լինելով գումարտակների հրամանատարական կետերում և վաշտերի ռաջին գծում: Բոլոր օպերատիվ առաջադրանքներն ավագ լեյտենանտ Վ.Վ. Բադալյանը, ամենաբարդ պայմաններում, կատարեց գերազանց, դրանով իսկ նպաստելով գնդի ստորաբաժանումների մարտական գործողությունների հաջողությանը: Արժանի է պարգևատրման «Մարտական ծառայությունների համար» մեդալով»[113]:

1940 թ. փետրվարի 22–27-ը տեղի ունեցած մարտերում

---

[112] Նույն տեղում, գ. 392, թ. 363:
[113] Նույն տեղում, գ. 400, թ. 245:

ցուցաբերած անձնական խիզախության և քաջության համար «Արիության համար» մեդալով պարգևատրվեց 95-րդ հրաձգային դիվիզիայի 161-րդ հրաձգային գնդի վաշտի հրամանատար, ավագ լեյտենանտ Սարգիս Վարդանի Գրիգորյանը (ծնվել է 1907 թ., Կարմիր բանակում էր ծառայում 1907 թ.): Նա իր վաշտի մարտիկների հետ փետրվարի 25-ին, հասնելով հակառակորդի պաշտպանության գծի փշալարային արգելքներին, անցումներ բացեց ֆիննների կրակի տակ, հաղթահարեց այն և առաջինը ներխուժեց թշնամու խրամատների առաջին գոտին և կատաղի ձեռնամարտից հետո գրավեց այն: Հակառակորդի խրամատների երկրորդ գոտին գրավելիս խիզախ հայորդին ծանր վիրավորվեց[114]:

Նման պարգևի արժանացավ նաև 28-րդ հրաձգային կորպուսի 447-րդ կորպուսային հրետանային գնդի քաղղեկի տեղակալ Ենոք Եղիայի Աղաջանյանը (ծնվել է 1918 թ. Հայաստանի Ստեփանավանի շրջանի Վարդաբլուր գյուղում): 1938 թ. նա զորակոչվել է Կարմիր բանակի շարքերը, գերազանց գնահատականներով ավարտել կրտսեր հրամանատարների դպրոցը և, որպես քաղղեկի տեղակալ, ծառայել Լենինգրադյան զինվորական օկրուգում: 1939 թ. դեկտեմբերի սկզբներին նրա գունդն ակտիվորեն մասնակցում է Խորհրդա-ֆիննական պատերազմին: Ձմեռային սառնամանիքի դաժան պայմաններում տեղի ունեցած մարտերում գնդի հրետանին կրակային հզոր աջակցություն էր ցույց տալիս Մաններհայմի անառիկ ամրությունները գրոհող յուրայիններին, քարուքանդ անում թշնամու զօտերն ու դոտերը, ճանապարհ հարթում հետևակի համար: Մարտական առաջադրանքները Ե.Ե. Աղաջանյանը կատարում էր հստակորեն և բարեխիղճ կերպով՝ հաշվի չառնելով ամեն տեսակ դժվարությունները: Մարտերում ցուցաբերած անձնական խիզախության և իր ենթակաների հանդեպ դրսևորած հոգատարության համար քաղղեկ Աղաջան-

[114] Նույն տեղում, գ. 434, թ. 227:

յանը գնդում ձեռք էր բերել մեծ հեղինակություն[115]:

Մաններհայմի ամրությունների գոտին ճեղքելիս իր ծառայողական պարտականությունները բարեխղճորեն կատարելու համար «Արիության համար» մեդալի ներկայացվեց 173-րդ մոտոհրաձգային դիվիզիայի 378-րդ մոտոհրաձգային գնդի շտաբի պետի տեղակալ ավագ լեյտենանտ Արամ Ավետիսի Մկրտչյանը (ծնվել է 1908 թ., Կարմիր բանակում էր ծառայում 1928 թ.): Գնդի հրամանատար, գնդապետ Կալինասը, զինկոմ Պետրովը և դիվիզիայի հրամանատար, գնդապետ Մարցենկևիչը նրա պարգևատրման թերթիկում նշել են. «Մարտերի ընթացքում ավագ լեյտենանտ Ա.Ա. Մկրտչյանն ակտիվորեն է կատարում հրամանատարության հանձնարարությունները՝ գնդի ստորաբաժանումները ժամանակին ապահովելով պարենով և զինամթերքով: Գնդի թիկունքի աշխատանքները լավ կազմակերպելու, ստորաբաժանումները կրակային միջոցներով ժամանակին ապահովելու ժամանակ ցուցաբերած եռանդուն գործունեության և հայրենիքին նվիրվածության համար լեյտենանտ Ա.Ա. Մկրտչյանն արժանի է պարգևատրման «Արիության համար» մեդալով»[116]:

Նման պարգևի արժանացավ նաև 168-րդ հրաձգային դիվիզիայի 453-րդ հրետանային գնդի հրամանատարի օգնական, 3-րդ կարգի համբարակ (մատակարարման պետ): Գրիգոր Հակոբի Ղազարյանը (ծնվել է 1908 թ., Կարմիր բանակում էր ծառայում 1929 թ.): Գնդի հրամանատար, գնդապետ Գորելովի և դիվիզիայի հրամանատար, գնդապետ Բոնդարևի վկայությամբ. «Ընկ. Ղազարյանը կարգապահ և եռանդուն հրամանատար է: Նա լավ է կատարում իր պարտականությունները, մարտերի ժամանակ ժամանակին և անխափան կազմակերպում գնդի թիկունքի աշխատանքները: 1940 թ. հունվարի 8–22-ը, գնդի տրանսպորտի հետ հայտնվելով շրջապատման մեջ, նա հմտորեն կազմակերպեց պաշտպանությունը և գնդի

---

[115] Նույն տեղում, գ. 392, թ. 42:
[116] Նույն տեղում, գ. 510, թ. 174:

անխափան մատակարարման գործը: Ճիշտ կատարած հետախուզության շնորհիվ նրան հաջողվեց հունվարի 22-ին դուրս գալ շրջապատումից և միանալ գնդի հիմնական զորամասերին»[117]:

Խորհրդա-ֆիննական պատերազմին ակտիվորեն մասնակցած հայ սպաներից էր 119-րդ հրաձգային դիվիզիայի՝ 421-րդ հրաձգային գնդի հրամանատար, մայոր Հմայակ Բեյբուութի Մեհրաբյանը (ծնվել է 1901 թ. Իջևանի շրջանի Գանձաքար գյուղում): Դիվիզիան Կարելյան պարանոց բերվեց Սիբիրյան զինվորական օկրուգից: Մինչ այդ նրա զորամասերը 1939 թ. օգոստոսի 10–21-ը Մոնղոլիայի և Չինաստանի սահմանամերձ Խալխին Գոլ գետի մոտ մասնակցել էին ճապոնական զավթիչների դեմ մղված մարտերին և ջախջախիչ հարված հասցրել նրանց: Մարտական փորձ ունեցող և Սիբիրյան զինվորական օկրուգում ձմեռային սառնամանիքներին սովոր և տաք հանդերձավորված դիվիզիայի[118] հայտնվելը Կարելյան պարանոցում կարևոր նշանակություն ունեցավ Մաններհայմի գիծը ճեղքելու գործում: Սիբիրյան զինվորական օկրուգից եկած զորամասերի անձնակազմերը ոչ միայն ունեին մարտական փորձ և հանդերձավորված էին պատշաճ կերպով, այլև նրանք լավ դահուկորդներ էին և կարողանում էին արագորեն կողմնորոշվել և մի տեղից մյուսը տեղափոխվել: Չնայած ֆիններին՝ խնամքով կառուցված ամրությունների անառիկությանը, նրանք չկարողացան դիմանալ սիբիրցիների հուժկու գրոհներին և տեղի տվեցին... Խորհրդա-ֆիննական պատերազմում իր գնդի գործողությունները հմտորեն ղեկավարելու համար մայոր Հ.Բ. Մեհրաբյանին արտահերթ շնորհվեց գնդապետի կոչում: Հետագայում գնդապետ Հ.Բ. Մեհրաբյանը ակտիվորեն մասնակցեց Հայրենական մեծ պատերազմի առաջին շրջանի դաժան մարտերին՝ որպես Արևմտյան ռազմաճա-

---

[117] Նույն տեղում, գ. 462, թ. 290:

[118] 119-րդ հրաձգային դիվիզիայի հետ միասին Սիբիրյան զինվորական օկրուգից Կարելյան պարանոց ուղարկվեցին մի շարք այլ զորամիավորումներ և զորամասեր·

կատի 20-րդ բանակի 69-րդ հրածգային կորպուսի շտաբի պետի տեղակալ: Նա հատկապես աչքի ընկավ Մոսկվայի ընդհանուր ռազմավարական ուղղությամբ տեղի ունեցած Սմոլենսկի ճակատամարտում, որտեղ առաջին անգամ գերմանա-ֆաշիստական զավթիչները, հանդիպելով խորհրդային զորքերի հերոսական դիմադրությանը, զգացին «կայծակնային պատերազմի» պլանի անհեթեթությունը: 1941 թ. օգոստոսի 7-ին գնդապետ Մեհրաբյանը ծանր վիրավորվեց և մինչև նույն ամսվա 28-ը բուժվեց Մոսկվայի զինվորական հոսպիտալներից մեկում: Ապաքինվելուց հետո նա սեպտեմբերի սկզբներին գործուղվեց Հարավային ռազմաճակատ՝ Մերձծովյան բանակ և որպես բանակի մատակարարման պետ՝ մինչև 1941 թ. հոկտեմբերի 16-ը ակտիվորեն մասնակցեց Օդեսայի հերոսական պաշտպանությանը: Այնուհետև գնդապետ Հ.Բ. Մեհրաբյանը 1941 թ. հոկտեմբերի 30-ից մինչև 1942 թ. հուլիսի 4-ը, որպես Մերձծովյան բանակի համբարակ, ապա՝ օպերատիվ խմբավորման պետ, թիկունքի աշխատանքները ղեկավարելով ակտիվորեն մասնակցել է Սևաստոպոլի հերոսական պաշտպանությանը, որը տևել է 250 օր: Գնդապետ Հ.Բ. Մեհրաբյանը գիշեր-ցերեկ, հակառակորդի տեղատարափ կրակի տակ, ապա շրջափակման մեջ, հոգ էր տանում բանակի անձնակազմին զինամթերքով ու պարենով ապահովելու մասին, կազմակերպում վիրավոր զինվորների տեղափոխման ծանր գործը և այլն: Երբ հրաման ստացվեց թողնել Սևաստոպոլը, նա հերոս քաղաքի պաշտպաններից վերջինը հեռացավ ծովով, սակայն զոհվեց հակառակորդի օդային հարձակումից: Հայրենական մեծ պատերազմում ցուցաբերած խիզախության համար գնդապետ Հ.Բ. Մեհրաբյանը պարգևատրվել է Կարմիր դրոշի և Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշաններով: Վերջինս ի պահ է հանձնվել հերոս հրամանատարի որդուն՝ Վուլեն Հմայակի Մեհրաբյանին: Այժմ Սևաստոպոլի զինվորական գերեզմանոցում է գտնվում գնդապետ Հ.Բ. Մեհրաբյանի հուշաքարը, որի վրա գրված է. «Զոհվել է հերոսի մահով՝ պաշտպանելով Սևաստոպոլը»: Հերոսի ծննդավայր

գյուղի դպրոցը 1971 թ. կոչվել է գնդապետ Հմայակ Մեհրաբյանի անունով: Այս տեղեկությունները մենք վերցրեցինք Խորհրդային Միության կրկնակի հերոս, Խորհրդային Միության մարշալ Ն.Ի. Կրիլովի և Խորհրդային Միության հերոս գեներալ-մայոր Ա.Վ. Ղազարյանի գրքերից[119], ինչպես նաև գնդապետ Հ.Բ. Մեհրաբյանի որդու՝ Վուլեն Մեհրաբյանի գրավոր հուշերից, որը նա սիրով հանձնել է մեզ:

Խորհրդա-ֆիննական պատերազմում 1940 թ. մարտի 8-ին Տուրկին-Սարի կղզու և Մայանյախյա թերակղզու գրավման մարտերում հերոսաբար զոհվեց 113-րդ հրաձգային դիվիզիայի 513-րդ հրաձգային գնդի շտաբի պետի օգնական, կրտսեր լեյտենանտ Սուրեն Անտոնի Խաչատրյանը[120]:

Մաններհայմի գիծը գրոհողների շարքերում էին ելդովանցի Խաչիկ Վարդանի Ոսկանյանը, լիճքեցի Հրանտ Գրիգորի Հովհաննիսյանը, խդրանցի Խաչիկ Հակոբի Աթայանը, շիկահողցի Օնիկ Ֆյոդորի Մինասյանը, շիշկերտցի Ասատուր Ջհանգիրի Հայրապետյանը և շատ ուրիշներ, որոնք հետագայում որպես սպաներ ակտիվորեն մասնակցեցին Հայրենական մեծ պատերազմին և արժանացան կառավարական բազմապիսի պարգևների:

Նրանցից ավագ լեյտենանտ Ասատուր Ջհանգիրի Հայրապետյանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին ակտիվորեն մասնակցեց Ստալինգրադյան ճակատամարտին, Ուկրաինայի, Հունգարիայի և Չեխոսլովակիայի ազատագրական մարտերին և հերոսաբար զոհվեց Սլովակիայի շրջանի Կուցանի գյուղի համար մղված մարտում՝ 1944 թ. նոյեմբերի 30-ին:

Մահվանից ամիսներ առաջ, երբ նա իմացավ, որ որդի է ունեցել, տուն ուղարկած նամակում կնոջը գրել էր. «Ես հա-

---

[119] *М.И. Крылов.* Не померкнет никогда. М.: Воениздат, 1984. С. 488; *А.В. Казарьян.* Война, люди, судьбы. Кн. 2. Е.: «Айастан», 1977. С. 272–275.

[120] ԴՊՌԱ, ֆ. 34980 (113-րդ հրաձգային դիվիզիայի ֆոնդ), ց. 10, գ. 1954, թ. 84:

վատում եմ, որ հաղթանակը մերը կլինի: Գուցե ես այդ ժամանակ կենդանի չլինեմ և չտեսնեմ որդուս: Խնդրում եմ, ֆիննական պատերազմից իմ բերած զինվորական վերնաշապիկից շոր կարեք տղայիս համար, երբ գնա դպրոց: Նրան կմեծացնեք և կզինվորագրեք հայրենիքին»[121]: Կինը՝ Նուբարը, պատվով կատարեց ամուսնու պատվիրանը: Երբ տղան՝ Վոլոդյան, մեծացավ և ընդունվեց գյուղի դպրոցի առաջին դասարան, մայրը ֆիննական պատերազմից ամուսնու բերած վերնաշապիկից շոր կարեց, որը շատ էր սազում տղային... Առաջ անցնելով նշենք, որ երբ Վոլոդյան ավարտեց տասներորդ դասարանը և եկավ բանակ մեկնելու ժամանակը, նա առանց վարանելու ընդունվեց Թբիլիսիի Անդրկովկասյան հրետանային ուսումնարանը և այդ օրվանից զինվորագրվեց հայրենիքի պաշտպանության գործին: Ավարտելուց հետո նա վարեց հրետանային դասակի, մարտկոցի, դիվիզիոնի, գնդի, դիվիզիայի և կորպուսի հրետանու, բանակային կորպուսի հրթիռահրետանային զորքերի հրամանատարի պաշտոնները, ավարտեց Լենինգրադի բարձրագույն հրետանային ռազմական ակադեմիան՝ լեյտենանտից հասնելով գնդապետի կոչման: Երբ սկսվեց Արցախյան շարժումը, գնդապետ Վ.Ա. Հայրապետյանը թողեց իր բարձր պաշտոնը Ռուսաստանում և եկավ Հայաստան: 1992 թ. նրան վստահեցին Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հրթիռահրետանային զորքերի հրամանատարի պատասխանատու պաշտոնը, որ նա վարեց ավելի քան 13 տարի: Ադրբեջանական զավթիչների դեմ մղված ազգային-ազատագրական պատերազմի տարիներին նա պատվով կատարեց Խորհրդա-ֆիննական պատերազմի մասնակից և Հայրենական մեծ պատերազմում զոհված հոր՝ ավագ լեյտենանտ Ասատուր Հայրապետյանի պատվիրանը: Նրա ղեկավարությամբ կազմավորված զորքերը ջախջախիչ հարվածներ հասցրեցին ադրբեջանցի-թուրք զավթիչ-

---

[121] *Կ.Ա. Հարությունյան.* Գեներալ-մայոր Վլադիմիր Ասատուրի Հայրապետյան, Ե.: «Զանգակ-97» հրատ., 2007, էջ 16:

ներին և ստիպեցին նրանց ձեռք քաշել Արցախից ու Հայաստանի Հանրապետության սահմանամերձ մի շարք շրջաններից: Մարտերում հրետանային զորքերի հմուտ ղեկավարման և ցուցաբերած քաջության համար գնդապետ Վ.Ա. Հայրապետյանը պարգևատրվեց Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների շքանշաններով ու մեդալներով: 1994 թ. մայիսի 28-ին Վ.Ա. Հայրապետյանին առաջինների թվում շնորհվեց մայորի կոչում: Գեներալ-մայոր Վ.Ա. Հայրապետյանն այսօր էլ շարքում է և ՀՀ պաշտպանության նախարարին առընթեր բարձրագույն սպայական հանձնաժողովի կազմում կատարում է պատասխանատու առաջադրանքներ: Նա իր որդու անունը կնքել է հոր՝ Խորհրդա-ֆիննական և Հայրենական մեծ պատերազմի մասնակից Ասատուր Ջհանգիրի Հայրապետյանի անունով:

Խորհրդա-ֆիննական պատերազմի ակտիվ մասնակիցներից էր 163-րդ հրաձգային դիվիզիայի 759-րդ գնդացրային վաշտի հրամանատար, ավագ լեյտենանտ (ծնվել է 1907 թ. մարտի 21-ին Լեռնային Ղարաբաղի Շուշիի շրջանի Մեծ Կալադարասի գյուղում, Կարմիր բանակում էր ծառայում 1929 թ. նոյեմբերի 20-ից): Նրա վաշտը ձմեռային դաժան պայմաններում մեծ աջակցություն էր ցույց տալիս գրոհող հետևակին, դիպուկ կրակով լռեցնում հակառակորդի գնդացրային կրակակետերը: Մինչ այդ նա ավարտել էր Թբիլիսիի հետևակային դպրոցը, ադրբեջանական դիվիզիայի 4-րդ լեռնահրաձգային գնդի կազմում մասնակցել բանդիտիզմի վերացման կռիվներին, իսկ 1938 թ. ամռանը 96-րդ առանձին գնդացրային գումարտակի կազմում որպես գնդացրային վաշտի հրամանատար մասնակցել Խասան լճի մոտ ճապոնական ռազմամոլների ջախջախմանը: Դրանից հետո տեղափոխվել է Լենինգրադի զինվորական օկրուգ և 9-րդ բանակի 163-րդ հրաձգային դիվիզիայի շարքերում գրոհել «Մաններհայմի գիծը»... Այնուհետև նույն դիվիզիայի շարքերում 1941 թ. հուլիսի 3-ից մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, վիրավոր վիճակում հուլիսի 19-ին Պսկովի տակ գերվել թշնամու կողմից,

տառապել Նորվեգիայի, Ֆինլանդիայի, ապա Գերմանիայի համակենտրոնացման ճամբարներում: 1945 թ. մայիսի 4-ին ամերիկյան զորքերը ազատագրել են գերմանական էնգել-շտադ քաղաքը և նրա շրջակայքում գտնվող ռազմագերիների ճամբարը: Գերությունից հետո վերադարձել է Բաքու և մինչև 1954 թ. մարտի 29-ը որպես ջրմուղ-կոյուղու բանվոր աշխատել այնտեղ և զոհվել ողբերգական մահով: Այդ ամենի մասին մեզ պատմել է Արամ Պետրոսյանի աղջիկը՝ Լյուսյա Արամովնան, որը Բաքվի կոտորածներից հետո փախստականի կարգավիճակով այժմ ապրում է Չարենցավանում:

5. Շքանշաններով ու մեդալներով պարգևատրված հայ շարքայիններ ու սերժանտներ

Խորհրդա-ֆիննական պատերազմում ցուցաբերած խիզախության և քաջության համար շքանշաններով ու մեդալներով պարգևատրվեցին նաև բազմաթիվ հայ շարքայիններ ու սերժանտներ, որոնից շատերը զոհվեին մարտերում: Այդպիսի քաջերից էր 70-րդ հրաձգային դիվիզիայի[122] 329-րդ հրաձգային գնդի գնդացրորդ, կարմիրբանակային Ասկարամ Գալուստի Հովհաննիսյանը (ծնվել է 1915 թ., Կարմիր բանակ էր զորակոչվել 1937 թ.): Գնդի հրամանատար. մայոր Ֆյոդորովի, կոմիսար, ավագ քաղղեկ Զոտովի, դիվիզիայի հրամանատար, դիվիրամ Կիրպոնոսի և կոմիսար, գնդային կոմիսար Բենիամին Գալստյանի վկայությամբ. «1940 թ. փետրվարի 28-ին Հովհաննիսյանի ստորաբաժանումը մարտական առաջադրանք ստացավ՝ հակառակորդին դուրս շպրտել Կերի գյուղից: Հովհաննիսյանը գործում էր իր գնդացրային հաշվարկի հետ միասին: Սակայն հակառակորդն ինքը նախահարձակ եղավ և փորձեց ձախողել խորհրդային հրամանատարության մտահղացումը: Հովհաննիսյանն իր գնդացրային անձնակազմի հետ չերկնչեց և սառնասրտորեն դիրքավորվելով, սպասեց

[122] Ինչպես արդեն նշել ենք, դիվիզիան պարգևատրվել էր Լենինի շքանշանով:

թշնամու մոտենալուն: Երբ հակագրոհի անցած ֆիններին մի քանի մետր էր բաժանում Հովհաննիսյանի գրաված դիրքերից, վերջինս «Հանուն հայրենիքի» կոչով կրակ բացեց հակառակորդի վրա:

Հանկարծակիի եկած ֆինն զինվորները խուճապի մատնվեցին և մարտադաշտում մեծ թվով սպանվածներ ու վիրավորներ թողնելով՝ նահանջեցին: Նահանջող հակառակորդի ուղղակի ուսերի վրայով խորհրդային զինվորները հակագրոհի անցան և շուտով գրավեցին Կերի գյուղը: Առաջինների թվում գյուղ մտավ գնդացրորդ Հովհաննիսյանն իր հաշվարկի հետ միասին: Ավա՜ղ, երբ հաղթանակը շատ մոտ էր, խիզախ հայորդին զոհվեց մարտական առաջադրանքը կատարելիս: Հրամանատարությունը բարձր գնահատեց կարմիրբանակային Ա.Գ. Հովհաննիսյանի սխրանքը և նրան հետմահու ներկայացրեց Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրման»[123]:

Մաններհայմի գիծը հաղթահարելու մարտերում աչքի ընկած դիվիզիաների թվում էր նաև 100-րդ հրաձգային դիվիզիան, որը նույնպես ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. մարտի 21-ի հրամանագրով պարգևատրվել էր Լենինի շքանշանով[124]: Այդ փառապանծ դիվիզիայի շարքերում էր մարտնչում նաև 331-րդ հրաձգային գնդի դիպուկահար հրաձիգ, կարմիրբանակային Լևոն Գալոյի Օգանովը (ծնվել է Վրաստանի Ախալքալաքի շրջանի Հագվի գյուղում 1916 թ., Կարմիր բանակում էր ծառայում 1937 թ.): Գնդի հրամանատար, կապիտան Միխեևի և դիվիզիայի հրամանատար, կոմբրիգ Երմակովի վկայությամբ Խորհրդա-ֆիննական պատերազմում Լ.Գ. Օգանովը գործում էր համարձակ և վճռականորեն: Վիբորգի ուղղությամբ տեղի ունեցած մարտերում նա համարձակորեն մենամարտի էր բռնվում ծառերի վրա քողարկված, սպիտակ խալաթավոր դիպուկահար ֆինն հրաձիգ-

---

[123] ՌՊՈԱ, ֆ. 37837, ց. 3, գ. 520, թ. 229:
[124] Известия. 1940. 22 марта. № 67. С. 1.

ների («կուկուշկաների») հետ և հաճախակի հաղթող դուրս գալիս: Այսպես, օրինակ, 1940 թ. հունվարի 21-ին նա կարողացավ հայտնաբերել ձյունածածկ ծառի վրա քողարկված ֆինն դիպուկահարին, որը մեծ չարիք էր դարձել խորհրդային զինվորների համար, և դիպուկ կրակով սպանեց նրան: Փետրվարի 2-ին խիզախ ջավախեցին կարողացավ ոչնչացնել նման երկու դիպուկահարի ևս: Օգանովը հաճախակի էր կամավոր գնում հետախուզության, հայտնաբերում հակառակորդի կրակակետերը և ստույգ տեղեկություններ հաղորդում դիվիզիայի հրետանավորներին, որոնք դիպուկ կրակով լռեցնում էին դրանք: 1940 թ. մարտի 3-ին Վիբորգ քաղաքի մատույցներում տեղի ունեցած մարտում խիզախ դիպուկահարը գտնվում էր հարձակվողների առաջին շարքերում և անվրեպ կրակոցներով աջակցում յուրայինների գրոհը: Մարտի թեժ պահին թշնամու դավադիր գնդակը ծանր վիրավորեց քաջ զինվորին, սակայն նա չթողեց մարտադաշտը մինչև գիտակցությունը կորցնելը: Հրամանատարությունը կարմիրբանակային Լ.Գ. Օգանովին ներկայացրեց պարգևատրման Կարմիր դրոշի շքանշանով[125]: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. ապրիլի 11-ի հրամանագրով խիզախ հայորդին պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով[126]:

Նույն հրամանագրով Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվեց նաև 7-րդ բանակի 50-րդ հրաձգային կորպուսի 471-րդ կորպուսային հրետանային գնդի կրակային դասակի հրամանատարի օգնական, սերժանտ Գրիգոր Համբարձումի Սարգիսջանովը (ծնվել է 1917 թ. Բաքվում, Կարմիր բանակում էր ծառայում 1938 թ. հոկտեմբերից): Նրա պարգևատրման թերթիկում, որը ստորագրել են գնդի հրամանատար, մայոր Ստյոգանցևը, գնդի կոմիսար, ավագ քաղղեկ Մուսատովը և բանակի հրետանու պետ, կոմդիվ Միքայել Պարսեղովը, նշված է. «Ընկ. Սարգիսջանովը սպիտակ ֆինների դեմ մղվող

---

[125] ԴՊՈԱ, ֆ. 37837, ց. 3, գ. 520, թ. 241:

[126] Ведомости Верховного Совета СССР. 1941. 11 июня. № 25. С. 3.

մարտերին մասնակցում է 1940 թ. փետրվարի 11-ից՝ Վիբորգի ընդհանուր ուղղությամբ: Փետրվարի 17–18-ին Կյամյարվի շրջանում տեղի ունեցած մարտերում ընկ. Սարգիսջանովը, որպես կրակային դասակի հրամանատարի օգնական, ակտիվ կրակ էր վարում հակառակորդի ամրությունների և թիկունքային կառույցների վրա, դրանով իսկ նպաստելով յուրայինների հարձակմանը: Փետրվարի 22-ին նա հետախուզություն էր կատարում նոր կրակային դիրքեր գրավելու համար: Դասակի հրետանին նշված տեղում հարմար դիրքեր գրավեց Պիենպերո գյուղի կամրջի մոտ և սկսեց ճշտված տվյալներով խփել հակառակորդի կրակակետերին և ամրություններին: Ֆիննական ականանետի ականից Սարգիսջանովը ցնցակաթված ստացավ, սակայն այդ վիճակում նա վեր բարձրացավ տեղից, դիմեց հրետանավորներին՝ «խփել այդ իժերին» ու ընկավ՝ գիտակցությունը կորցնելով: Ընկ. Սարգիսջանովը կարգապահ, մարտական և քաղաքական պատրաստվածության գերազանցիկ մարտիկ է, անսահման նվիրված է հայրենիքի պաշտպանության գործին: Սպիտակֆիննների դեմ մղված մարտերում իրեն դրսևորել է որպես տոկուն և խիզախ հրետանավոր: Մարտից հետո նա հրաժարվեց հոսպիտալ գնալուց և մնաց իր դասակի հրետանավորների հետ: Արժանի է պարգևատրվելու Կարմիր դրոշի շքանշանով»[127]:

Խորհրդային Միության Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. ապրիլի 11-ի վերոհիշյալ հրամանագրով Կարմիր դրոշի շքանշանով հետմահու պարգևատրվեց 95-րդ հրաձգային դիվիզիայի 57-րդ հրետանային գնդի ռադիոկայանի պետ, սերժանտ Քրիստափոր Սհարոնի Սարգսյանը (ծնվել է 1916 թ. Դոնի Ռոստովում, 1937 թ. ծառայում էր Կարմիր բանակի շարքերում, մարտական և քաղաքական լավ պատրաստվածության համար արժանացել էր մի շարք շնորհակալագրերի): Նրա պարգևատրման թերթիկում գնդի հրամանատար, մայոր Պեչոնկին-Իվանովը և դիվիզիայի հրա-

[127] ՌՊՌԱ, ֆ. 37837, ց. 3, գ. 547, թ. 350:

մանատար, կոմբրիգ Եգորովը նշել են. «1940 թ. փետրվարի 22-ից մինչև մարտի 13-ը սպիտակ ֆինների դեմ մղված մարտերում ցուցաբերել է բացառիկ համարձակություն՝ հակառակորդի ուժեղ հրացանագնդացրային՝ ականանետային և հրետանային կրակի տակ հեռախոսագիծ անցկացնելով հրամանատարական և առաջին գծում գտնվող դիտակետերի միջև: Մարտերի ընթացքում նա հաճախ փրկել է իր վիրավոր ընկերների կյանքը՝ նրանց հանելով թշնամու կրակի տակից: Այդպես նա փրկեց լեյտենանտ Երմոլաևի կյանքը, որը վիրավորվել էր հակառակորդի ականանետային կրակից, և ոչ ոք ռիսկ չէր անում մոտենալ նրան, քանի որ ֆինները գնդակների կարկուտ էին թափում այդ ուղղությամբ: 1940 թ. մարտի 13-ին՝ հեռախոսակապի գծի կտրվածքը վերացնելիս, թշնամու գնդակը մահացու վիրավորեց խիզախ հրետանավոր կապավորին: Հավաքելով վերջին ուժերը՝ նա միացրեց հեռախոսալարը և զոհվեց: Արժանի է պարգևատրման Կարմիր դրոշի շքանշանով»[128]:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. ապրիլի 7-ի հրամանագրով Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվեց 113-րդ հրաձգային դիվիզիայի 239-րդ առանձին հակատանկային դիվիզիոնի ջոկի հրամանատար, սերժանտ Պապին Գեղամի Հարությունյանը (ծնվել է 1916 թ. Գավառ քաղաքում, Կարմիր բանակում էր ծառայում 1937 թ.): Նրա պարգևատրման թերթիկը ստորագրվել էր դիվիզիոնի հրամանատարի և կոմիսարի կողմից և հաստատվել դիվիզիայի հրամանատար, գնդապետ Քրիստափոր Նիկոլայի Ալավերդովի (Ալավերդյան) կողմից: Այնտեղ նշված էր. «Ընկ. Հարությունյանը 1940 թ. փետրվարի 5–24-ը սպիտակ ֆինների դեմ մղված մարտերում հրանոթի հաշվարկի հրամանատար էր և իրեն դրսևորեց որպես հմուտ և խիզախ հրետանավոր: Կարխուլյան ուղղությամբ Յուխանես բնակավայրի շրջանում գտնվող 38,2 բարձունքի գրավման մարտերում նրա հրանոթը ոչնչացրեց

---

[128] Նույն տեղում, էջ 373:

հակառակորդի 6 կրակակետ, որից երկուսը՝ դզօտներ, մի քանի դիպուկահարների: Երբ մարտի թեժ պահին շարքից դուրս եկավ հրանոթի նշանառուն, սերժանտ Հարությունյանն առանց հապաղելու կանգնեց նշանացույցի մոտ, և ինքն անձամբ կրակ բացեց հակառակորդի վրա: Արժանի է պարգևատրման Կարմիր դրոշի շքանշանով»[129]:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. ապրիլի 11-ի հրամանագրով Խորհրդա-ֆիննական պատերազմում կատարած սխրանքների և մարտերում ցուցաբերած խիզախության համար Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվեց[130] 7-րդ բանակի 50-րդ հրաձգային գնդի 24-րդ կորպուսային հրետանային գնդի հետախույզ-դիտորդ կարմիրբանակային Վաղինակ Վարոսի Գրիգորյանը (ծնվել է 1916 թ. Երևանում, Կարմիր բանակ էր զորակոչվել 1938 թ.): Հետաքրքիր է, որ գնդի հրամանատար, մայոր Տոլեչոպյատովը, կոմիսար, գումարտակային կոմիսար Սինյակովը, կորպուսի հրամանատար, կոմդիվ Գորելենկոն և կոմիսար, բրիգադային կոմիսար Սեմյոնովը խիզախ հրետանավոր-հետախույզին ներկայացրել էին Լենինի շքանշանով պարգևատրման: Սակայն 7-րդ բանակի հրամանատար, 2-րդ կարգի բանակի հրամանատար Մերեցկովը այն փոխեց Կարմիր դրոշի շքանշանով[131]: Ահա թե ինչ էր գրված կարմիրբանակային Վ.Վ. Գրիգորյանի պարգևատրման թերթիկում. «1940 թ. հունվարի 20-ից մինչև փետրվարի 12-ը գտնվելով առաջին գծի դիտակետում, ընկ. Գրիգորյանը մանրազնին կերպով հետախուզում էր հակառակորդի հրետանու դիրքերը: Շնորհիվ դրա հայտնաբերվեց թշնամու հակատանկային մեկ հրանոթի և գնդացրի տեղը, որի մասին անմիջապես հայտնեց գնդի հրամանատարությանը: Հրետանային և գնդացրային կրակակետերը ոչնչացվեցին: 1940 թ. փետրվարի 4–11-ը դարձյալ գտնվելով առաջին գծի դիտակետում, ընկ. Գրիգորյանը հակառակորդի գնդացրային

---

[129] Նույն տեղում, գ. 398, էջ 267:
[130] Ведомости Верховного Совета СССР. 1941. 11 июня. № 25. С. 3.
[131] ՈՊՈԱ, ֆ. 37837, g. 3, գ. 434, թ. 217:

և հրետանային կրակի տակ հետախուզում էր ֆիններ կրակակետերը և դրանց ճիշտ տեղորոշիչները հայտնում գնդի հրամանատարությանը: Այդ ամենը նպաստեց 123-րդ հրաձգային դիվիզիային գրավել 65,5 կարևոր բարձունքը: Արժանի է պարգևատրման Լենինի շքանշանով»[132]:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. մայիսի 7-ի հրամանագրով Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվեց 14-րդ բանակի հետախուզության բաժնի հատուկ դահուկային ջոկատի 3-րդ դասակի հրաձիգ, կարմիրբանակային Արամ Արտաշի Ավետյանը (ծնվել է 1915 թ. Հայաստանի Լոռու մարզի Շնող գյուղում, Կարմիր բանակում էր ծառայում 1937 թ.): Նրա պարգևատրման թերթիկում ջոկատի հրամանատար, կապիտան Զնամենսկին և զինկոմ Վոտյանովը նշել են. «Խետեոյա գետի մոտ տեղի ունեցած մարտում նա ավտոմատային կրակով ապահովում էր շրջապատման մեջ հայտնված դասակի զինվորների նահանջը: Երբ դասակն ամբողջովին դուրս եկավ շրջապատման օղակից, կարմիրբանակային Ավետյանը մարտադաշտից հեռացավ վերջինը: Կորնետտիոկի գետի շրջանում տեղի ունեցած մարտում ընկ. Ավետյանը, չնայած վիրավորվելուն, գնաց հարձակման և գրոհեց անանուն բարձունքը, որը գտնվում էր Նատսի բնակավայրից 10 կմ հյուսիս-արևելք: Բարձունքը գրավելուց հետո, չնայած վիրավոր վիճակին, նա իր համար խրամատ փորեց առաջին գծում և արիաբար ետ մղեց թշնամու գրոհները: Արժանի է պարգևատրման Լենինի շքանշանով»[133]:

Պարգևատրման թերթիկի մեջ նշված էր նաև, որ խիզախ դահուկորդը մինչ այդ 1940 թ. հունվարի մարտերում պարգևատրվել է Կարմիր աստղի շքանշանով՝: Դա եզակի դեպքերից է, որ Խորհրդա-ֆիննական պատերազմում զինվորը արժանանում է երկու շքանշանի: Մենք լայնացրինք մեր ուսումնասիրման շրջանակները և գտանք, որ 52-րդ հրաձգա-

---

[132] Նույն տեղում:
[133] Նույն տեղում, թ. 381:

յին դիվիզիայի 58-րդ հրաձգային գնդի գնդացրորդ, կարմիր-բանակային Արամ Արտաշի Ավետյանը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. փետրվարի 5-ի հրամանագրով պարգևատրվել է Կարմիր աստղի շքանշանով: Նրա պարգևատրման թերթիկում, որը ստորագրված էր գնդի հրամանատար, մայոր Ինտյապինի և կոմիսար, գումարտակային կոմիսար Ռոմանովի կողմից 1940 թ. հունվարի 25-ին, նշված էր. «Ընկ. Ավետյանը կարգապահ, օրինակելի մարտիկ է: Սպիտակֆիններին դեմ մղված մարտական գործողությունների ժամանակ նա միշտ իր խիզախությամբ օրինակ է հանդիսացել ընկերների համար: Չորս անգամ նա մասնակցել է մարտերին և միշտ էլ եղել առաջին գծում, իր ետևից գրոհի տանելով մյուսներին: 1939 թ. դեկտեմբերի 27-ին սպիտակ ֆինների հետ տեղի ունեցած մարտում հակառակորդի կրակի տակ արագ և հմտորեն սողալով առաջ գնաց և հարմար դիրք գրավելով ձեռքի գնդացրով կրակ բացեց ֆինների կրակակետերի վրա: Նրա գնդացիրը գործում էր անխաթար և անվրեպ: Մարտի ժամանակ թշնամու գնդակը վնասեց խիզախ գնդացրորդի սաղավարտը, բայց դա չկոտրեց նրա մարտական ոգին և ավելի եռանդուն շարունակեց մարտը: Ավետյանի դիպուկ կրակից թշնամու կրակակետը լռեցվեց: Դրանից օգտվելով, մեր հետևակը շարունակեց հարձակումը և գրավեց կարևոր դիրքեր: Արժանի է պարգևատրման Կարմիր աստղի շքանշանով»[134]:

Հետագայում շարունակելով մեր ուսումնասիրությունը, պարզվեց, որ խիզախ լոռեցին այնուհետև մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին և զոհվել ֆաշիստական զավթիչների դեմ մղված մարտերում: Պարզվեց նաև, որ Խորհրդա-ֆիննական պատերազմին Շնող գյուղից մասնակցել են չորս հայորդիներ՝ Անդրանիկ Հարությունի Ավետյանը, Կարդոս Ալեքսանի Բաբայանը (որոնք զոհվել են ֆիննական պատերազմում) և Անդրանիկ Օհանյանը: Ընդհանուր առմամբ,

[134] Նույն տեղում, թ. 380:

Խորհրդա-ֆիննական և Հայրենական մեծ պատերազմում Շնող գյուղից մասնակցել է 600 հոգի, որոնցից 260-ը զոհվել են մարտերում[135]:

Խորհրդա-ֆիննական պատերազմում ցուցաբերած խիզախության համար Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվեց նաև 7-րդ բանակի 320-րդ թնդանոթային-հրետանային գնդի հարվածային խմբի ռադիստ, կարմիրբանակային Վասիլ Արտեմի Գրիգորյանը (ծնվել է 1918 թ. Բաքվում, Կարմիր բանակ է զորակոչվել 1938 թ.): Նրա պարգևատրման թերթիկը ստորագրել էին գնդի հրամանատար, կապիտան Սիդլյարը, զինկոմ Խրիստենկոն և բանակի հրետանու պետ, դիվիրամ Մ.Ա. Պարսեղովը: Այնտեղ նշված է. «Խիզախ, հնարամիտ և անձնազոհ մարտիկ է: Ռադիստ աշխատելու ընթացքում երբեք չի ունեցել ռադիոկապի ընդհատման որևէ դեպք: Նա բարեխիղճ և խնամքով է վերաբերվում ռադիոկայանին և նրա նյութական մասը պահպանում օրինակելի կերպով: Մարտական գործողությունների հենց առաջին օրվանից նա հարվածային խմբի կազմում մշտապես գտնվում է ամենապատասխանատու տեղամասերում և գերազանց կատարում իր պարտականությունները: 1939 թ. դեկտեմբերի 23-ին Պերկ-Յարվիի շրջանում սպիտակ ֆիններ հետ տեղի ունեցած մարտում, երբ թշնամին փորձում էր ներխուժել հրամանատարական կետ, զենքը ձեռքին մասնակցեց գրոհի ետ մղմանը, միաժամանակ հստակ կատարելով հարվածային խմբի հրամանատարի մարտական առաջադրանքները: 1940 թ. մարտի 11-ին կամավոր մտավ հրետանային հարվածային խմբի մեջ՝ անխափան կապ հաստատելով խմբի հրամանատարի և գնդի շտաբի միջև, նպաստեց մարտական առաջադրանքի հաջողությանը: Մարտի 12-ին Ախոկասի շրջանում, երբ դարձյալ թշնամու զինվորները փորձեցին գրավել խմբի հրամանատարի դիտակետը, Գրիգորյանը վերցրեց անձնական զենքը և համարձակորեն ետ մղեց ֆիններին: Հաջորդ մարտում խի-

---

[135] *Սվետյան Վարշամ*. Շնող, Ե., 1998, էջ 145–154:

զախ ռադիստը վիրավորվեց պայթուցիկ գնդակից: Չնայած դրան, նա կարողացավ շտաբին հայտնել կարևոր տեղեկություններ, որից հետո տեղափոխվեց հոսպիտալ... Մարտերի ժամանակ իր պարտականությունները գերազանց կատարելու և այդ ընթացքում ցուցաբերած խիզախության համար արժանի է պարգևատրվելու Կարմիր դրոշի շքանշանով»[136]:

Մարտերում ցուցաբերած խիզախության և արիության համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. մայիսի 21-ի հրամանագրով Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվեց նաև 7-րդ բանակի 45-րդ առանձին մոտոինժեներական գումարտակի սակրավոր, կարմիրբանակային Օնիկ Գագիկի Մաթևոսյանը (ծնվել է 1918 թ. Գյումրի քաղաքում, Կարմիր բանակ է զորակոչվել 1938 թ.): Գումարտակի հրամանատար, կապիտան Գրոմովը, կոմիսար Շևչենկոն, բանակի ինժեներական զորքերի պետ, գնդապետ Խրենովը նրա պարգևատրման թերթիկում նշել են. «Կարմիրբանակային Օնիկ Մաթևոսյանը գումարտակի ամենախիզախ սակրավորներից է: 1939 թ. դեկտեմբերի 17-ի գիշերը լույս 18-ի առավոտյան 138-րդ հրաձգային դիվիզիայի հետ համատեղ Սումմայի շրջանում իրագործած հարձակողական գործողության ժամանակ սակրավոր Մաթևոսյանն առաջապահ դասակի շարքերում հասավ երկաթբետոնից պատրաստված ցցասյուների պատնեշի առաջին գծին և, չնայած հակառակորդի ուժեղ կրակին, պայթեցրեց դրանք: Առավոտյան Մաթևոսյանն առաջադրանք ստացավ՝ հետախուզել հակառակորդի ցցասյուների պատնեշի երկրորդ գծի վիճակը, բայց ընկավ ֆինների տեղատարափ խաչաձև կրակի տակ: Ամբողջ մեկ ու կես օրը Մաթևոսյանը ստիպված էր պառկած մնալ ձյան վրա: Եվ միայն հաջորդ օրը՝ երեկոյան, նրան հաջողվեց մի կերպ դուրս գալ թաքստոցից և վերադառնալ հարազատ զորամաս: 1939 թ. դեկտեմբերի 22-ին մարտիկների մի խմբի հետ Մաթևոսյանը պայթեցրեց նաև հակառակորդի ցցասյուների պատնեշի երկ-

[136] ՌՊՈԱ, ֆ. 37837, ց. 3, գ. 434, թ. 223:

որդ գիծը: Հաջորդ օրը նա 355-րդ հրաձգային գնդի առաջապահի շարքերում մասնակցեց հարձակողական մարտին: Նա իրեն հերոսաբար դրսևորեց նաև դեկտեմբերի 24-ին: Լեյտենանտ Բիլենկոյի խմբի հետ միասին հակառակորդի ուժեղ կրակի տակ Մաթևոսյանը մասնակցեց ցցասյուների մեկ այլ գծի պայթեցմանը: Դեկտեմբերի 26-ին նա ստախանովականի պես էր աշխատում 70-րդ հրաձգային դիվիզիայի համար կամուրջ կառուցելիս՝ ուշադրություն չդարձնելով հակառակորդի հրետակոծությանը: Այդպիսի ծանր պայմաններում Մաթևոսյանը երբեք չէր կորցնում հումորի զգացումը և իր համարձակությամբ բարձրացնում էր իր գործընկերների տրամադրությունը: Հրամանատարության մարտական առաջադրանքները հաջողությամբ կատարելու և այդ ընթացքում ցուցաբերած խիզախության և համարձակության համար արժանի է պարգևատրվելու Կարմիր դրոշի շքանշանով»[137]: Մեր ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ Օնիկ Մաթևոսյանը ստացել էր Կարմիր դրոշի շքանշանը, որը կրում էր 20406 համարը: Պարզվեց նաև, որ նա նախքան Խորհրդա-ֆիննական պատերազմը եղել է դահուկավազքի Հայաստանի չեմպիոն, ԽՍՀՄ սպորտի վարպետ: 1941 թ. սեպտեմբերի 22-ից մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին»[138]:

Կարմիր դրոշի շքանշանի արժանացած հայ զինվորներից էր 8-րդ բանակի 164-րդ հրաձգային դիվիզիայի պարտիզանական ջոկատի կարմիրբանակային Իվան Մովսեսի Խաչատրյանը (ծնվել է 1918 թ. Հայաստանի Տավուշի մարզի Կարակազ գյուղում, այդպես է տեքստում): Դիվիզիայի հրամանատար, կոմբրիգ Դենիսովը և բանակի հրամանատար, 2-րդ կարգի բանակի հրամանատար Շտեռնը նրա պարգևատրման թերթիկում նշել են. «ԸՆԿ. Իվան Մովսեսի Խաչատրյանը 1940 թ. մարտի 5-ին գտնվելով 11 հոգուց բաղկացած

---

[137] Նույն տեղում, գ. 504, թ. 361:

[138] ՌԴ ՊՆԿԱ, 11-րդ բաժին, Օ.Գ. Մաթևոսյանի պարգևատրման հաշվառման քարտ, թիվ 56/26, էջ 1–2:

պարտիզանական ջոկատի կազմում, անսպասելի հարձակվեցին Կիյիվա-Յարվի լճից հարավ-արևմուտք գտնվող անանուն բարձունքի վրա գտնվող ֆիննական դիրքերի վրա, գրավեցին այն և հնարավորություն տվեցին 358-րդ հրաձգային գնդի 2-րդ գումարտակին հաջողությամբ շարունակել հարձակումը: Չնայած բարձունքի գրավման մարտում խիզախ զինվորը ծանր վիրավորվեց, բայց ցուցաբերելով արիություն, մնաց մարտադաշտում մինչև վերջ: Արժանի է պարգևատրման Կարմիր դրոշի շքանշանով»[139]:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. ապրիլի 7-ի հրամանագրով Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվեց նաև 13-րդ բանակի 50-րդ հրաձգային կորպուսի 359-րդ հրաձգային գնդի հրանոթի նշանառու, կարմիրբանակային Արզուման Լևոնի Սիմոնյանը (ծնվել է 1916 թ., Կարմիր բանակ էր զորակոչվել 1938 թ. Ադրբեջանի Շամխորի շրջանի Օրջոնիկիձե գյուղից): Նրա պարգևատրման թերթիկում գնդի հրամանատար, մայոր Բորեյկոն, գինկոմ, գումարտակային կոմիսար, կոմբրիգ Երյոմինը, բանակի հրամանատար, կոմկոր Պարուսինովը նշել են. «1940 թ. փետրվարի 12–16-ը ընկ. Սիմոնյանը մշտապես գտնվում էր առաջին գծում և ուղիղ նշանառությամբ կրակում 48,5 բարձունքի վրա գտնվող ֆիննական կրակակետերին և շարքից հանում դրանք: Սաներհայմի երկաթբետոնե ամրությունները գրոհելիս նա ուղիղ նշանառությամբ խփում էր հակառակորդի դոտերի հրակնատներին: Ֆիններ հակագրոհի ժամանակ ընկ. Սիմոնյանը սպանիչ կրակ բացեց նրանց վրա և ստիպեց ետ քաշվել: Դյունամասարի կղզու գրավման համար մղված մարտում նա դիպուկ կրակով խփում էր խրամատներում թաքնված ֆիննական զինվորներին՝ չթողնելով նրանց գլուխ բարձրացնել: 1940 թ. մարտի 4-ի մարտում ընկ. Սիմոնյանը վիրավորվեց դեմքից, սակայն վիրակապելուց հետո կրկին վերադարձավ հրանոթի մոտ և չնայած ուժեղ ցավին, շարունակեց մարտը մինչ օրվա

---

[139] ՌՊՈԱ, ֆ. 837, ց. 3, գ. 579, թ. 29:

վերջը: Արժանի է պարգևատրման Կարմիր դրոշի շքանշանով»[140]:

Մի շարք հայ զինվորներ մարտերում ցուցաբերած խիզախության համար պարգևատրվեցին Կարմիր աստղի շքանշանով: Այսպես, օրինակ, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. ապրիլի 7-ի հրամանագրով Կարմիր աստղի շքանշանի արժանացավ 17-րդ մոտոհրաձգային դիվիզիայի 8-րդ առանձին ականանետային մարտկոցի ականանետային հաշվարկի հրամանատար, ավագ Վաչագան Գեղամի Հակոբյանը (ծնվել է 1913 թ. Գյումրիում)[141]: Դիվիզիայի հրամանատար, կոմբրիգ Բացանովը և զինկոմ, գնդային կոմիսար Դավիդովը նրա պարգևատրման թերթիկում նշել են. «1940 թ. փետրվարի 15-ին և 16-ին մարտկոցն առաջադրանք էր ստացել Պեյկուլայի շրջանում աջակցել 55-րդ հրաձգային գնդի 2-րդ գումարտակի հարձակմանը: Մարտական առաջադրանքի կատարման ժամանակ ավագ Հակոբյանն իրեն դրսևորեց որպես խիզախ և հաստատակամ հրամանատար: Նա այնպես հմտորեն ղեկավարեց 3-րդ հաշվարկի գործողությունները, որ մի քանի ժամվա ընթացքում ականանետը կրակում էր անընդհատ, դիպուկ կրակով հարվածում հակառակորդի խրամատներին ու գետնատներին: Մարտի ընթացքում շարքից դուրս եկավ աջ թևում գործող 4-րդ հաշվարկի ականանետի ձգանի մեխանիզմը: Ընկ. Հակոբյանն առանց թուլացնելու կրակի տեմպը արագորեն վերացրեց հարևանությամբ գործող ականանետի անսարքությունը, որն անմիջապես սկսեց ականակոծել թշնամու դիրքերը: 1940 թ. մարտի 8-ին Պեոնեի շրջանում տեղի ունեցող մարտում շարքից դուրս եկավ կրակային դասակի հրամանատար, լեյտենանտ Դոլգոպոլովը: Ավագ Հակոբյանը, ճիշտ գնահատելով իրադրությունը, համարձակորեն իր վրա վերցրեց դասակի հրամանատարությունը և ապահովեց մարտական առաջադրանքի կատարումը: Արժանի է

---

[140] Նույն տեղում, գ. 553, թ. 190:

[141] Ведомости Верховного Совета СССР. 1941. 23 февраля. № 10. С. 2.

պարգևատրման Կարմիր աստղի շքանշանով»[142]:

Նույն հրամանագրով հետմահու նման պարգևի արժանացավ 13-րդ բանակի 50-րդ հրաձգային դիվիզիայի 359-րդ հրաձգային գնդի սանիտար, կարմիրբանակային Վլադիմիր Գրիգորի Հակոբյանը (ծնվել է 1919 թ. Հայաստանի Մարտունու շրջանի Գեղհովիտ գյուղում, Կարմիր բանակ էր զորակոչվել 1937 թ.): Գնդի հրամանատար, մայոր Բորեյկոյի և զինկոմ, գումարտակի կոմիսար Գուձիկի վկայությամբ 1940 թ. փետրվարի 13-ի մարտում կարմիրբանակային Հակոբյանը գործում էր 9-րդ հրաձգային վաշտի շարքերում և մեծ օգնություն էր ցույց տալիս վիրավոր մարտիկներին: Այդ պահին վաշտի հաստոցային գնդացրի հաշվարկներից մեկը, որոնց զգալի մասը դուրս էր եկել շարքից, խնդրեց Հակոբյանին օգնել իրենց գնդացիրը հարմար դիրքեր հասցնելու համար: Հակոբյանն անմիջապես սկսեց օգնել գնդացրորդներին, և թշնամու կրակի տակ գնդացիրը հասցրեցին տեղանքի վրա իշխող բարձունք: Գնդացիրը սկսեց գործել՝ սպանիչ կրակ թափելով ֆիններ վրա: Հակոբյանը փոխարինել էր շարքից դուրս եկած հաշվարկի երկրորդ համարին և օգնում էր նշանառուին ետ մղել հակառակորդի գրոհը: Երբ գրոհը ետ էր մղված, ֆինն դիպուկահարի կրակոցից սպանվեց քաջ հայորդին: Հետաքրքիր է, որ գնդի հրամանատարը և կոմիսարը կարմիրբանակային Վ.Գ. Հակոբյանին ներկայացրել էին պարգևատրման՝ «Մարտական ծառայությունների համար» մեդալով, սակայն վերադաս հրամանատարությունն այն դարձրել էր Կարմիր աստղի շքանշան[143]:

Նման պարգևի ներկայացվեց նույն բանակի 311-րդ թնդանոթային, հրետանային գնդի ջոկի հրամանատար սերժանտ Գևորգ Պետրոսի Ղազարովը (ծնվել է 1917 թ., Կարմիր բանակ է զորակոչվել 1938 թ. Վրաստանի Աշբուլադ քաղաքից (այդպես է տեքստում): Գնդի հրամանատար, գնդապետ Պյա-

---

[142] ՌՊՈԱ, ֆ. 37837, ց. 3, գ. 392, թ. 367:
[143] Նույն տեղում, թ. 369:

դուսկովը և բանակի հրամանատար Գրենդալը նրա պարգևատրման թերթիկում նշել են. «Աշխատելով որպես ջոկի հրամանատար, ցուցաբերել է բացառիկ համարձակություն, հնարագիտություն և վճռականություն: Նրա ջոկը ծայնաչափման միջոցով որոշում էր հակառակորդի հրետանային կրակակետերի տեղը և այդ մասին հեռախոսով հայտնում գնդի հրամանատարությանը... 1940 թ. հունվարի 12-ին հայտնաբերելով սպիտակ ֆիններ հրետանային մարտկոցի տեղը, երբ ընկ. Ղազարյանը ցանկանում էր այդ մասին հաղորդել հրամանատարությանը, թշնամու արկը պայթեց 20 մ հեռավորության վրա, որից վնասվեց կապի գիծը: Չնայած հակառակորդի ուժեղ կրակին, կարճ ժամանակամիջոցում վերացվեց վնասվածքը, և կարևոր տվյալները հայտնվեցին հրամանատարությանը: Գնդի հրետանին ստացված տեղորոշիչների համաձայն ճնշեց թշնամու մարտկոցի կրակը: Մարտերում ցուցաբերած խիզախության, համարձակության և անվեհերության համար արժանի է պարգևատրման Կարմիր աստղի շքանշանով»[144]:

Կարմիր աստղի շքանշանի ներկայացվածների թվում էր նաև նույն բանակի 4-րդ հրաձգային դիվիզիայի 101-րդ հրաձգային գնդի սակրային դասակի սակրավոր, կարմիրբանակային Եղիշ Աբգարի Բոշյանը (ծնվել է Լոռու մարզի Շնող գյուղում 1916 թ., Կարմիր բանակ էր զորակոչվել 1937 թ.): Նրա ազգանունը պարգևատրման թերթիկը լրացնելիս աղավաղվել էր, ինչպես հաճախ է պատահում ռուս գրագիրների մոտ և դարձել Կաբաչյան: Մենք այդ ազգանունը չգտանք պատմաբան-հնագետ, պատմական գիտությունների դոկտոր Վարշամ Ավետյանի գրքում: Սակայն ուշադիր կարդալով պատերազմում զոհված շնողցիների ազգանունները, մեր ուշադրությունը գրավեցին Արտուշ, Եղիշ և Ժորա Բոշյանները: Կասկած չկա, որ Խորհրդա-ֆիննական պատերազմում Կարմիր աստղի շքանշանի ներկայացված Եղիշ Աբգարի Կաբաչյանը այդ երեք եղբայրներից միջնեկն էր[145]: Այսպիսով, Խորհրդա-ֆիննական

---

[144] Նույն տեղում, գ. 462, թ. 284:
[145] *Վ. Ավետյան*, Շնող, էջ 152:

պատերազմին մասնակից շնողցիների թիվը ոչ թե 4 է, այլ՝ 5: 101-րդ հրաձգային գնդի դիվիզիայի 359-րդ հրաձգային գնդի հրամանատար գնդապետ Չումակովը, 4-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, գնդապետ Կրյուկովը և 13-րդ բանակի հրամանատար, կոմկոր Պարուսինովը սակրավոր Բոշյանի պարգևատրման թերթիկում նշել են. «Սպիտակֆինների դեմ մղվող մարտերում ցուցաբերել է արիության, հերոսության և խիզախության բազմաթիվ օրինակներ: 1940 թ. փետրվարի 18-ին 108-րդ և 107-րդ բարձունքների վրա գտնվող դոտերի և նրանց կից խրամատները գրոհելու ժամանակ, չնայած հակառակորդի ուժեղ կրակին, նա առաջինը նետվեց գրոհի՝ իր հետևից մարտի առաջնորդելով ընկերներին: Մեծ եռանդով ու անվախ նա նետվեց դեպի թշնամու խրամատը, որտեղ նռնակներով ու սվինով ոչնչացրեց հակառակորդի զինվորներին: Երբ խրամատն արդեն գրավված էր, նա նետվեց դեպի ֆինների հրամանատարական կետը և ընկերների հետ այն վերցրեց շրջապատման օղակի մեջ: Ֆինները ուժեղ դիմադրություն էին ցույց տալիս և չէին ուզում գերի հանձնվել: Այնժամ խիզախ սակրավորը պայթուցիչ դրեց հրամանատարական կետի պատերին և պայթեցրեց այն. ներսում գտնվող 15 ֆիններ իրենց հրամանատարի հետ միասին զոհվեցին: Շարունակելով հարձակումը, գրոհային խումբը մոտեցավ անտառամերձ շրջանին: Հայտնաբերելով հակառակորդի կողմից ականապատված դաշտը, խիզախ սակրավորն իր ընկերների հետ միասին արագորեն ականազերծեց այն և ճանապարհ բացեց հետևակի համար: Ցուցաբերած արիության և հերոսության համար արժանի է պարգևատրման Կարմիր աստղի շքանշանով»[146]:

1939 թ. դեկտեմբերի 10–24-ը տեղի ունեցած մարտերում նման պարգևի ներկայացվեց նաև նույն 13-րդ բանակի 49-րդ հրաձգային դիվիզիայի 121-րդ առանձին հակատանկային դիվիզիոնի հրետանային վարպետ, ավագ Խաչիկ Զոհրաբի Խաչիկյանը (ծնվել է 1915 թ. Գավառ քաղաքում, Կար-

[146] Նույն տեղում, էջ. 42–43:

միր բանակ էր զորակոչվել 1937 թ.): Նրա պարգևատրման թերթիկում դիվիզիոնի հրամանատար, կապիտան Նիկիֆորովը, դիվիզիայի հրամանատար, կոմբրիգ Վորոբյովը և բանակի հրամանատար, 2-րդ կարգի բանակային հրամանատար Գրենդալը նշել են. «Ընկ. Խաչիկյանը գերազանց հրետանային վարպետ է, սպիտակ ֆիններին դեմ մղվող մարտերում նա լավ իրականացնում է հրանոթների նյութատեխնիկական մասի վերանորոգման աշխատանքը: 1939 թ. դեկտեմբերի 10-ին առաջին գծի դիրքերում նա վերանորոգեց 2 հրանոթ, որոնք անմիջապես մտցվեցին մարտի մեջ և ապահովեցին մարտական առաջադրանքի կատարումը: Դեկտեմբերի 24-ի մարտում հրանոթներից մեկը դադարեց կրակելուց: Խաչիկյանը հաշված րոպեների ընթացքում վերանորոգեց այն: Սակայն այդ պահին վիրավորվեց հրանոթի նշանառուն: Խաչիկյանը փոխարինեց նրան և երկու դիպուկ կրակոցով շարքից հանեց հակառակորդի գնդացիրը, որը շատ էր խանգարում մեր հետևակին: Արժանի է պարգևատրման Կարմիր աստղի շքանշանով»[147]:

Նման պարգևի ներկայացվեց նաև 14-րդ բանակի 205-րդ հրաձգային գնդի 8-րդ հրաձգային վաշտի հետախույզ, կարմիրբանակային Ավետիս Հարությունի Հայրապետյանը (ծնվել է 1916 թ. Շիրակի մարզի Թորոսգյուղում, Կարմիր բանակ էր զորակոչվել 1937 թ.): Նրա պարգևատրման թերթիկում, որը ստորագրել են գնդի հրամանատար, մայոր Մոժարովը և կոմիսար, գումարտակային կոմիսար Իվաննիկովը, նշված է. «Նվիրված է հայրենիքի պաշտպանության գործին: Սպիտակֆիններին դեմ մղվող պատերազմում շատ անգամ է գնացել հետախուզության, թշնամու դեմ կռվում է համարձակորեն և խիզախաբար: 1940 թ. փետրվարի 13-ին ֆիննական պահակախմբի հետ տեղի ունեցած անհավասար մարտում խիզախ հետախույզը զոհվեց հերոսաբար: Արժանի է պարգևատրման

[147] Նույն տեղում, գ. 579, թ. 33:

Կարմիր դրոշի շքանշանով»[148]: Սակայն բանակի հրամանատարը փոխեց ստորադաս հրամանատարության որոշումը և Ա.Հ. Հայրապետյանին ներկայացրեց Կարմիր աստղի շքանշանի[149]:

Խորհրդա-ֆիննական պատերազմում ցուցաբերած խիզախության և քաջության համար հայ ռազմիկներն արժանացան նաև «Արիության համար» մեդալի: Նման քաջերից էր 8-րդ բանակի 56-րդ հրաձգային դիվիզիայի 37-րդ հրաձգային գնդի հրետանային մարտկոցի հրանոթի նշանառու, կարմիրբանակային Սուրեն Գրիգորի (Կրիկորի) Աստվածատուրյանը (Ասվադուրովը, որը ծնվել է 1917 թ. Դոնի Ռոստովի Նոր Նախիջևանի շրջանի Նեսվետայ գյուղում, Կարմիր բանակ էր զորակոչվել 1938 թ.): Գնդի հրամանատար, մայոր Վասիլևը, դիվիզիայի հրամանատար, գնդապետ Պանկովը և բանակի հրամանատար, 2-րդ կարգի բանակային հրամանատար Շտեռնը, որոնք ստորագրել են խիզախ հրետանավորի պարգևատրման թերթիկի տակ, նշված է. «1940 թ. մարտի 2-ին սպիտակ ֆիններին դեմ մղված մարտում, չնայած հակառակորդի գնդացրային և ականանետային մրրկային կրակին, նա դիպուկ կրակով ավերեց ֆիննական երեք գետնատնակ (բլինդաժ) և նույնքան կրակակետեր: Չնայած այդ մարտում խիզախ հրետանավորը ցնցակաթված (կոնտուզիա) ստացավ, բայց մնաց շարքում մինչև մարտական առաջադրանքի լրիվ կատարումը: Արժանի է պարգևատրման «Արիության համար» մեդալով»[150]:

Նման պարգևի ներկայացվեց նաև 13-րդ բանակի 47-րդ կորպուսային հրետանային գնդի հրանոթի հրամանատար, սերժանտ Մեխակ Ավետիսի Հովհաննիսյանը (ծնվել է 1917 թ. Լոռու մարզի Վանաձոր քաղաքում, Կարմիր բանակում էր ծառայում 1938 թ.): «Կարխուլյան ուղղությամբ 1940 թ. հունվարի 5–12-ը տեղի ունեցած մարտերում նա կատարել է հրանոթի հրամանատարի պարտականությունը: Հակառակորդն անընդ-

---

[148] Նույն տեղում, գ. 398, թ. 118:
[149] Նույն տեղում:
[150] Նույն տեղում, թ. 398:

հատ հրետակոծության տակ է պահում գնդի մարտկոցների կրակային դիրքերը: Չնայած դրան՝ ընկ. Հովհաննիսյանը կարողանում էր կատարել մարտական խնդիրները և հաջողությամբ պայքարել հակառակորդի դեմ: Նրա մարտական կեցվածքից ոգևորվում էին ոչ միայն հրանոթի անձնակազմը, այլև մյուս հրետանավորները, – Հովհաննիսյանի պարգևատրման թերթիկում նշել են գնդի հրամանատար, կապիտան Շուբոդերովը և կոմիսար, գումարտակային կոմիսար Օռլովը: – Սալմեն-Կայտա տեղամասում նրա հրանոթը փակ դիրքից վարած կրակով խփում էր թշնամու թիվ 112 դոտին և նրա շուրջ գտնվող այլ կրակակետերին: Արձակած 35 արկերից 2-ը ուղիղ դիպան դոտի հրակնատին և լռեցրին կրակակետը: Դա հնարավորություն տվեց հարձակման անցած գումարտակին առաջ անցնել և գրավել դոտն ու շրջակա մանր-մունր կրակակետերը: Արժանի է պարգևատրման՝ «Արիության համար» մեդալով»[151]: Գնդի հրամանատարի և կոմիսարի կարծիքին համաձայնեցին նաև կորպուսի հրետանու պետ, գնդապետ Տուրբինը և կորպուսի հրամանատար կոմբրիգ Կորոլյովը[152]:

Մաններհայմի գծի ճեղքման մարտերում ցուցաբերած քաջության համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. հունվարի 15-ի հրամանագրով «Արիության համար» մեդալով պարգևատրվեց 13-րդ բանակի 142-րդ հրաձգային դիվիզիայի 172-րդ առանձին հետախուզական գումարտակի հետախույզ, կարմիրբանակային Անդրանիկ (Անդրեյ) Գրիգորի Գասպարյանը (ծնվել է 1915 թ. Բաքվում, Կարմիր բանակում էր ծառայում 1937 թ.): Նրա պարգևատրման թերթիկում գումարտակի հրամանատար, մայոր Կոլիվանովը և կոմիսար, ավագ քաղղեկ Գլազկովը նշել են. «1939 թ. դեկտեմբերի 16–17-ի գիշերը ընկ. Գասպարյանը կամավոր համաձայնվեց հետախուզության գնալ Սուվանտա-Յարվի լճի հյուսիսային ափը: Ռևել-Լախտի շրջանում, անցնելով լճի հյու-

---

[151] Նույն տեղում, գ. 520, թ. 239:
[152] Նույն տեղում:

սիսային ափը՝ Տուրկայի ուղղությամբ, սկսեցին հետախուզել՝ պարզելու հակառակորդի ինժեներական կառույցների տեղն ու չափը: Մարտական առաջադրանքը կատարվեց հաջողությամբ: Արժանի է պարգևատրման «Արիության համար» մեդալով»[153]:

Մաններհայմի գծի անառիկ ամրությունների գոտին հաղթահարելիս «Արիության համար» մեդալի արժանացավ նաև 20-րդ տանկային բրիգադի 90-րդ առանձին տանկային գումարտակի տանկի գնդացրորդ, կարմիրբանակային Համազասպ Գրիգորի Գրիգորյանը (ծնվել է 1917 թ. Վրաստանի Բորչալուի շրջանի Աղքյորփի գյուղում): Նրա պարգևատրման թերթիկում գումարտակի հրամանատար, կապիտան Կազարինը և զինկոմ, ավագ լեյտենանտ Ուդոդովը նշել են. «Քաջ և խիզախ զինվոր է, սպիտակ ֆիններին դեմ մղվող պատերազմում հանուն հայրենիքի չի խնայում անգամ կյանքը: 1940 թ. մարտի 11-ին նրա տանկը հակառակորդի կողմից ենթարկվեց ուժեղ հրետակոծության, որի հետևանքով տանկի դիտակետերը ծածկվեցին ցեխով, որը, փաստորեն, կուրացրեց անձնակազմին և ստիպեց կանգ առնել: Վտանգելով սեփական կյանքը՝ խիզախ տանկիստը հակառակորդի կրակի տակ դուրս եկավ տանկից և մաքրեց դիտակետերը և դիտախողովակը ցեխից: Այնուհետև նստեց տանկ և գործի դրեց գնդացիրը՝ անվրեպ կրակով ոչնչացնելով դեպի տանկը արշավող ֆիններ դահուկորդ-ավտոմատավորներին: Ընկ. Գրիգորյանն արժանի է պարգևատրվելու «Արիության համար» մեդալով»[154]: Գումարտակի հրամանատարի և կոմիսարի միջնորդությունը պաշտպանել են նաև բրիգադի հրամանատար, կոմբրիգ Բորզիլովը և կոմիսար, բրիգադային կոմիսար Կուլիկը[155]:

«Արիության համար» մեդալի ներկայացված հայորդիներից էր 7-րդ հրաձգային դիվիզիայի 300-րդ հրաձգային գնդի սանիտարական դասակի ջոկի հրամանատար, կրտսեր սեր-

---

[153] Նույն տեղում, գ. 427, թ. 12:
[154] Նույն տեղում, գ. 434, թ. 214:
[155] Նույն տեղում:

ժանտ Վանուշ Հմայակի Սարգսյանը (ծնվել է 1917 թ. Հայաստանի Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքում, Կարմիր բանակ էր զորակոչվել 1938 թ.): Գնդի հրամանատարը և կոմիսարն անձնազոհ սանիտարի պարգևատրման ներկայացման թերթիկում նշել են. «Ընկ. Սարգսյանը նվիրված է հայրենիքի պաշտպանության գործին, կարգապահ, եռանդուն, կամքի տեր զինվոր է: Սպիտակֆիններին դեմ մղվող մարտերում նա հակառակորդի տեղատարափ կրակի տակ, վտանգի ենթարկելով սեփական կյանքը, անմիջականորեն առաջին գծում առաջին անհրաժեշտ բժշկական օգնությունն է ցույց տվել վիրավոր մարտիկներին, փրկել տասնյակ մարդկանց կյանքը: Նա պահանջկոտ էր իր և իր ջոկի անձնակազմի անդամների հանդեպ, հոգատար՝ վիրավորների հանդեպ: Արժանի է ներկայացվելու կառավարական պարգևի՝ «Արիության համար» մեդալի»[156]: Ստորադաս հրամանատարության առաջարկությունը պաշտպանվեց դիվիզիայի հրամանատար, կոմբրիգ Բերզինի և կոմիսար, գնդապետ կոմիսար Կարգանովի կողմից[157]:

«Արիության համար» մեդալով պարգևատրվածների մեջ էր նաև 8-րդ բանակի 56-րդ հրաձգային դիվիզիայի 37-րդ հրաձգային գնդի հրետանու հրանոթի հրամանատար, կրտսեր սերժանտ Գուրգեն Սարգսի Սարգսյանը (ծնվել է 1918 թ. Դոնի Ռոստովի Նոր Նախիջևանի շրջանի Չալտր գյուղում, Կարմիր բանակ էր զորակոչվել 1938 թ.): Նրան պարգևատրման էին ներկայացրել գնդի հրամանատար մայոր Վասիլևը և կոմիսար, գումարտակային կոմիսար Մակարովը 1940 թ. մարտի 7-ին: Հետաքրքիր է, որ նրանք խիզախ հրետանավորին ներկայացրել էին Կարմիր աստղի շքանշանի: Ահա թե ինչ էին գրել նրանք հայորդու պարգևատրման թերթիկում. «1939 թ. դեկտեմբերի 8-ին սպիտակ ֆինների դեմ տեղի ունեցած մարտում ընկ. Սարգսյանը, հրանոթը դուրս բերելով ուղիղ նշանա-

---

[156] Նույն տեղում, գ. 547, թ. 367–368:
[157] Նույն տեղում:

ռության, ոչնչացրեց հակառակորդի մեկ հրանոթ՝ իր անձնակազմի հետ և ցրեց հետևակի մի հոծ խումբ: Պաշտպանական մարտերի ժամանակ նա ստացավ նոր համալրում և նրանցից պատրաստեց իսկական հրետանավորներ, որոնք փոխարինեցին հրանոթի հաշվարկի շարքից դուրս եկած անդամներին: 1940 թ. մարտի 2-ին ընկ. Սարգսյանն իր հրանոթը դարձյալ դուրս բերեց ուղիղ նշանառության և 100–150 մ հեռավորությունից ոչնչացրեց հակառակորդի երկու կրակակետ, երկու գետնատնակ՝ ճանապարհ բացելով հարձակման անցած հետևակի համար: Միջնորդում ենք ընկ. Սարգսյանին Կարմիր աստղի շքանշանով պարգևատրելու համար»[158]: Սակայն բանակի հրամանատար 2-րդ կարգի բանակային հրամանատար Շտեռնը, ռազմական խորհրդի անդամ կորպուսային կոմիսար Զիմինն այն փոխարինեցին «Արիության համար» մեդալով[159]:

Խորհրդա-ֆիննական պատերազմում ցուցաբերած խիզախության և կատարած սխրանքների համար «Արիության համար» մեդալով պարգևատրվեցին նաև կարմիրբանակայիններ Վահրամ Հովհաննեսի Մինասյանը (51-րդ հրաձգային դիվիզիա, պարգևատրվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. ապրիլի 7-ի հրամանագրով)[160], Ռահիմ Սարգսի Մելքումյանը (ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. մայիսի 7-ի հրամանագրով)[161], 4-րդ հրաձգային դիվիզիայի 101-րդ հրաձգային գնդի ռադիստ Պետրոս Վլասի Ղուլյանը (ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. ապրիլի 8-ի հրամանագրով)[162], 113-րդ հրաձգային դիվիզիայի 149-րդ առանձին հետախուզական գումարտակի դասակի հրամանատարի օգնական, սերժանտ Շմավոն Խոսրովի Հովհաննիսյանը (պարգևատրվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. մայիսի 20-ի հրամա-

---

[158] Նույն տեղում, թթ. 365–366:
[159] Նույն տեղում:
[160] Նույն տեղում, գ. 383, թ. 140:
[161] Նույն տեղում, թ. 478:
[162] Նույն տեղում, թ. 580:

նագրով)[163] և ուրիշներ:

Բազմաթիվ հայորդիներ Մաննեռիայմի գծի ամրությունները ճեղքելիս կատարած սխրանքների և այդ ընթացքում ցուցաբերած քաջության համար պարգևատրվեցին «Մարտական ծառայությունների համար» մեդալով: Այդպիսի խիզախներից էր 123-րդ հրաձգային դիվիզիայի գնդի հրանոթի հրամանատար, սերժանտ Իվան Սարգսի Սարգսյանը (ծնվել է 1916 թ. Բաքվում, Կարմիր բանակի շարքերում էր ծառայում 1935 թ.): Լենինի շքանշանակիր այդ փառապանծ դիվիզիայի հրամանատար կոմբրիգ Օգուրցովը և կոմիսար գնդային կոմիսար Ուշակովը, խիզախ հրետանավորի պարգևատրման թերթիկում նշել են. «Սպիտակ ֆիններին դեմ մղված մարտերում հմտորեն էր ղեկավարում իր հրանոթի հաշվարկի գործողությունները՝ դիպուկ կրակով ոչնչացնելով հակառակորդի 13 կրակակետ: Բոլոր մարտերի ընթացքում նա դրսևորել է քաջություն, ոգեշնչելով իր ենթականերին հաջողությամբ կատարել մարտական առաջադրանքը: Արժանի է պարգևատրման «Մարտական ծառայությունների համար» մեդալով»[164]:

Նման պարգևի արժանացավ նաև 447-րդ կորպուսային հրետանային գնդի հրանոթի լիցքավորող կարմիրբանակային Աշխարհբեկ Եգորի Ղազարյանը (ծնվել է 1918 թ. Հայաստանի Լոռու մարզի Թումանյանի շրջանի Աթան գյուղում, Կարմիր բանակ էր զորակոչվել 1938 թ.): Մուսիյալո բնակավայրի համար տեղի ունեցած մարտի թեժ պահին ծանր վիրավորվելու հետևանքով շարքից դուրս եկավ հրանոթի փակաղակավարը: Անվեհեր զինվորը, գնահատելով պահի լրջությունը, անմիջապես փոխարինեց շարքից դուրս եկած ընկերոջը և մինչև մարտի վերջն արիաբար կատարեց և լիցքավորողի, և փակաղակավարի պարտականությունները՝ չիջեցնելով կրակի տեմպը[165]:

---

[163] Նույն տեղում, թ. 256:
[164] Նույն տեղում, գ. 547, թ. 369:
[165] Նույն տեղում, գ. 462, թ. 286:

Նման պարգևի արժանացավ նաև նույն գնդի 1-ին դիվիզիոնի 3-րդ մարտկոցի հրանոթի նշանառու կարմիրբանակային Անդրանիկ Մուխտարի Առաքելյանը (ծնվել է 1917 թ., Կարմիր բանակ էր զորակոչվել 1938 թ., մինչև պարգևատրվելը դիվիզիոն հրամանատարի կողմից արժանացել էր շնորհակալության՝ մարտական հրամանները գերազանց կատարելու համար): Դիվիզիոնի հրամանատարի վկայությամբ. «Մարտական ողջ գործողությունների ընթացքում Առաքելյանը իրեն դրսևորել է որպես ազնիվ, աշխատասեր և կարգապահ մարտիկ: Աշխատելով որպես նշանառու, մարտերի օրերին աչքի է ընկել իր դիպուկ կրակով: 1940 թ. փետրվարի 15-ի մարտում շարքից դուրս եկավ հրանոթի լիցքավորողը: Ընկ. Առաքելյանն անմիջապես վերցրեց երկու պարտականություններ և դրանք կատարեց գերազանց կերպով: Մարտական առաջադրանքները կատարվեցին ճիշտ ժամանակին: Արժանի է պարգևատրման «Մարտական ծառայությունների համար» մեդալով»[166]:

Նման պարգևի արժանացած հայորդիներից էր նաև 95-րդ հրաձգային դիվիզիայի 134-րդ հաուբիցային հրետանային գնդի ծանր հրանոթի կրակի վարման հաշվարկ կատարող կարմիրբանակային Ռուբեն Բորիսի Գասպարյանը (ծնվել է 1915 թ. Թիֆլիսում, Կարմիր բանակ է զորակոչվել 1938 թ.): Գնդի հրամանատարը նրա պարգևատրման թերթիկում նշել է. «Ընկ. Գասպարյանը ողջ մարտերի ընթացքում մարտկոցի հրամանատարի կողմից մշտապես ուղարկվել է ամենապատասխանատու և վտանգավոր տեղամասերը, որտեղ նա գերազանց և ժամանակին կատարել է հեռաչափի պատասխանատու գործը: 1940 թ. փետրվարի 25-ի մարտում, իր պարտականությունների հետ համատեղ, նա հակառակորդի կրակի տակ, վտանգի ենթարկելով կյանքը, առաջին անհրաժեշտ օգնությունը ցույց տվեց վիրավոր կարմիրբանակայիններին և նրանց հանեց մարտադաշտից: Նույն օրը ան-

---

[166] Նույն տեղում, գ. 398, թ. 71:

հրաժեշտ էր նաև կապի գիծ անցկացնել մարտկոցի հրամանատարի դիտակետի և առաջին գծի դիտակետի միջև: Չսպասելով կապավորների գալուն՝ ընկ. Գասպարյանը կամավոր ստանձնեց հաղորդալարի անցկացման գործը և կարճ ժամանակում անցկացրեց 1,5 կմ երկարությամբ հեռախոսագիծը: Կապի հաստատումը թույլ տվեց մարտկոցին ճշտված կրակ թափել հակառակորդի ամրությունների վրա և կատարել մարտական առաջադրանքը: Արժանի է պարգևատրման «Մարտական ծառայությունների համար» մեդալով»[167]:

«Մարտական ծառայությունների համար» մեդալով պարգևատրված հայորդիների թվում էր նաև 95-րդ հրաձգային դիվիզիայի 57-րդ հրետանային գնդի տնտեսական ջոկի հրամանատար, սերժանտ Ամիր Սահակի Չոբանյանը (ծնվել է 1913 թ. Երևանում, Կարմիր բանակում ծառայում էր 1938 թ., ծառայողական պարտականությունները բարեխիղճ կատարելու համար արժանացել էր դիվիզիայի հրամանատարների շնորհակալություններին): Հետաքրքիր է, որ գնդի հրամանատար, մայոր Պեչոնկինը և կոմիսար ավագ քաղղեկ Լավրենտևը նրան ներկայացրել էին «Պատվո նշան» շքանշանով պարգևատրման: Ահա թե ինչ էր գրված սերժանտ Ա.Ս. Չոբանյանի պարգևատրման թերթիկում. «Բացառիկ բարեխիղճ և նախաձեռնող հրամանատար է: Նրա տնտեսական ջոկը սպիտակ ֆինների դեմ մղված մարտերում բացառապես լավ է աշխատել մարտկոցին զինամթերք և սննդամթերք մատակարելու գծով: 1940 թ. փետրվարի 25-ին, երբ անհրաժեշտություն էր առաջացել ավելացնել մարտկոցին ավելի շատ արկերով ապահովելու խնդիրը, Չոբանյանն անձամբ բեռնաթափեց մեկ վագոն արկ և հասցրեց մարտկոցի կրակային դիրքեր: Դա հնարավորություն տվեց վարել անխափան կրակ և նպաստել հետևակի հաջողությանը: Ջոկի հրամանատարի պարտականությունները կատարում է լավ: Արժանի է պարգևատրվելու

[167] Նույն տեղում, գ. 427, թ. 13:

«Պատվո նշան» շքանշանով»[168]: Սակայն դիվիզիայի հրամանատարը այդ պարգևը փոխարինեց «Մարտական ծառայությունների համար» մեդալով[169]:

«Մարտական ծառայությունների համար» մեդալով պարգևատրվեց նաև 100-րդ հրաձգային դիվիզիայի 34-րդ հրետանային գնդի կապավոր, կարմիրբանակային Աշոտ Բաևը (ծնվել է 1916 թ. Դոնի Ռոստովի Նոր Նախիջևան շրջանի Աշխատանք գյուղում), մարտական և քաղաքական լավ պատրաստվածության համար արժանացել էր մի շարք խրախուսանքների: Նրա պարգևատրման թերթիկում, որը ստորագրել են գնդի հրամանատար, մայոր Օստանկովիչը, կոմիսար, գումարտակային կոմիսար Լոբենկոն, դիվիզիայի հրամանատար, կոմբրիգ Երմակովը և կոմիսար, բրիգադային կոմիսար Աքսելրոդը, նշված է. «Ռազմաճակատում եղած ողջ ժամանակաընթացքում իրեն դրսևորել է որպես ազնիվ և հայրենիքի պաշտպանության գործին նվիրված, կարգապահ, նախաձեռնող և համարձակ մարտիկ: Նա մարտական և քաղաքական ուսուցման առաջավորներից է: 1940 թ. փետրվարի 1–16-ը Խոտինենի շրջանում հակառակորդի ուժեղ ամրացված շրջանը գրոհելու մարտերի ժամանակ նա հստակ հեռախոսակապ էր ապահովում գնդի հրամանատարի և դիվիզիոնների հրամանատարների միջև: Հակառակորդի հրետանային-ականանետային կրակի հետևանքով կապի գիծը հաճախ վնասվում էր, սակայն խիզախ կապավորը, ապահովելով կյանքին սպառնացող վտանգը, կարճ ժամանակում վերացնում էր վնասվածքը և դրանով իսկ հնարավորություն տալիս հրետանային ստորաբաժանումներին կատարելու մարտական առաջադրանքը: Արժանի է պարգևատրման «Մարտական ծառայությունների համար» մեդալով»[170]:

Մարտերի ընթացքում հրետանային տեխնիկայի անխափան աշխատանքն ապահովելու և անսարքությունները ժա-

---

[168] Նույն տեղում, գ. 582, թ. 171:
[169] Նույն տեղում:
[170] Նույն տեղում, գ. 400, թ. 271:

մանակին վերացնելու համար «Մարտական ծառայությունների համար» մեդալի արժանացավ 24-րդ կորպուսային հրետանային գնդի փականագործ, կարմիրբանակային Կոնստանտին Իվանի Ավանեսովը (ծնվել է 1917 թ. Թիֆլիսում, Կարմիր բանակ էր զորակոչվել 1938 թ., մարտական ծառայություններն օրինակելի կատարելու համար ստացել էր հինգ խրախուսանք):

Նրա պարգևատրման թերթիկում, որը ստորագրել են գնդի հրամանատար, մայոր Տոլեպյատովը, կոմիսար, գումարտակի կոմիսար Սիմոնովը, 50-րդ հրաձգային կորպուսի հրամանատար, կոմդիվ Գորելենկոն և կոմիսար, բրիգադային կոմիսար Սեմյոնովը, նշված է. «Ընկ. Ավանեսովին որպես հրետանային վարպետի գերազանցիկ աշակերտ, վստահվեց մարտկոցի հրանոթների մարտական պատրաստության մեջ պահելու պատասխանատու գործը: Ընկ. Ավանեսովը մարտական առաջադրանքները կատարեց հաջողությամբ: Նրա կողմից սպասարկվող հրանոթներն ամբողջ մարտի ընթացքում գործում էին անխափան: Դրա համար նա առաջ քաշվեց հրետանային վարպետի պաշտոնում: Արժանի է պարգևատրման «Մարտական ծառայությունների համար» մեդալով»[171]:

1939 թ. դեկտեմբերի 6–17-ը տեղի ունեցած մարտերում հրետանավորներին անգնահատելի օգնություն էր ցույց տալիս նաև 49-րդ հրաձգային դիվիզիայի 166-րդ հաուբիցային հրետանային գնդի 2-րդ դիվիզիոնի սանիտարական հրահանգիչ, կարմիրբանակային Բագրատ Ղազարի Հակոբջանյանը (ծնվել է 1918 թ. Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Օրդուբադի շրջանի Պարագա գյուղում, Կարմիր բանակ էր զորակոչվել 1938 թ. հոկտեմբերին): Գնդի հրամանատար, մայոր Սավչուկի և կոմիսար, գումարտակային կոմիսար Կուրչեևի վկայությամբ անձնազոհ սանիտարը վերոհիշյալ մարտերի ընթացքում, հակառակորդի ուժեղ կրակի տակ բժշկական առաջին անհրաժեշտ օգնությունն էր ցույց տալիս վիրավոր

---

[171] Նույն տեղում, գ. 391, թ. 263:

մարտիկներին: Միայն դեկտեմբերի 17-ի մարտում նա, վտանգի ենթարկելով իրեն, փրկեց դիվիզիոնի վիրավոր հրամանատարի և 2 հրետանավորների կյանքը[172]:

Վիրավոր, զինվորների խնամքը լավ կազմակերպելու համար «Մարտական ծառայությունների համար» մեդալով պարգևատրվեց նաև 13-րդ բանակի 17-րդ մեքենայացված հրաձգային դիվիզիայի 88-րդ բժշկասանիտարական գումարտակի վիրահատական դասակի սանիտար, կարմիրբանակային Մկրտիչ Համբարձումի Իսոյանը (ծնվել է Վրաստանի Ախալքալաքի շրջանի Սուլդա գյուղում 1916 թ., Կարմիր բանակ էր զորակոչվել 1939 թ. նոյեմբերի 28-ին): Նրա պարգևատրման թերթիկում, որը ստորագրել են գումարտակի հրամանատար (ազգանունն անընթեռնելի է), դիվիզիայի հրամանատար, կոմբրիգ Բացանովը և բանակի հրամանատար, 2-րդ կարգի բանակային հրամանատար Գրենդալը, նշված է. «1940 թ. փետրվարի 8–17-ը տեղի ունեցած մարտերում ընկ. Մ.Հ. Իսոյանն աշխատում էր վիրահատական դասակում՝ որպես սանիտար: Այդ ընթացքում նա վիրավորների նկատմամբ ցուցաբերել է հոգատար վերաբերմունք և բացառիկ աշխատասիրություն: Բժշկասանիտարական գումարտակի լարված աշխատանքների շրջանում նա խնամքով և բարեխիղճ կերպով էր կատարում իր պարտականությունները, օրինակ հանդիսանալով մյուս սանիտարների համար՝ հատկապես ծանր վիրավորների վիրակապերը փոխելիս, նրանց ցույց տալիս լավ վերաբերմունք: Արժանի է պարգևատրման «Մարտական ծառայությունների համար» մեդալով»[173]:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. մարտի 21-ի հրամանագրով «Մարտական ծառայությունների համար» մեդալով պարգևատրվեց նաև 70-րդ հրաձգային դիվիզիայի 11-րդ առանձին կապի գումարտակի ավտոմատավոր, կարմիրբանակային Գևորգ Վանուշի Արզաքանյանը

---

[172] Նույն տեղում, գ. 392, թ. 260:
[173] Նույն տեղում, գ. 461, թ. 285:

(ծնվել է 1915 թ., բանակ է զորակոչվել 1937 թ.)[174]: Նրա պարգևատրման թերթիկը ստորագրել են գումարտակի հրամանատար, ավագ լեյտենանտ Կրոզը, ավագ քաղղեկ Չուվաշինը, դիվիզիայի հրամանատար, կոմդիվ Կիրպոնոսը և կոմիսար, գնդային կոմիսար Բենիամին Գալստյանը: Այնտեղ նշված է. «Աշխատելով զեկուցումների և տեղեկատվությունների հավաքման կետում, նա մշտապես իր պարտականությունները կատարում էր ժամանակին և բարեխիղճ կերպով: 1939 թ. դեկտեմբերի 29-ին հակառակորդի հրետանային կրակի տակ նա շտապ զեկուցագիր պետք է հասցներ 68-րդ հրաձգային գնդի շտաբ: Չնայած կյանքին սպառնացող վտանգին և սառած ճանապարհին կարմիրբանակային Գ.Վ. Արզաքանյանը ժամանակին կատարեց մարտական առաջադրանքը: 1940 թ. մարտի 12-ին նա առաջադրանք ստացավ շտապ զեկուցագիր հասցնել 252-րդ գնդի շտաբ: Ճանապարհազուրկ տեղանքը ստիպեց կարմիրբանակային Գ.Վ. Արզաքանյանին զեկույցը շտաբ հասցնել ոտքով՝ հակառակորդի ականանետային կրակի տակ: Նա, վտանգի ենթարկելով կյանքը, ժամանակին կատարեց հրամանը և նպաստեց մարտական առաջադրանքի հաջողությանը: Նրա ավտոմեքենան, սկսած 1939 թ. սեպտեմբերի 17-ից մինչև այսօր՝ 1940 թ. մարտի 15-ը, աշխատում է անխափան: Արժանի է պարգևատրման «Մարտական ծառայությունների համար» մեդալով»[175]:

Նման պարգևի արժանացավ նաև 13-րդ բանակի 38-րդ առանձին ավտոտրանսպորտային սանիտարական վաշտի ավտովարորդ, կարմիրբանակային Միհրան Անդրեասի Անտոնյանը (ծնվել է 1918 թ. Երևանում, Կարմիր բանակ էր զորակոչվել 1939 թ.: Մինչև պարգևատրվելը վիրավորների տեղափոխման գործը լավ կազմակերպելու համար ստացել էր 6 շնորհակալագիր): Նրա պարգևատրման թերթիկում, որի տակ ստորագրել էին վաշտի հրամանատարը, բանակի սանիտա-

---

[174] Նույն տեղում, գ. 383, թթ. 405, 419:
[175] Նույն տեղում, գ. 398, թ. 65:

ական բաժնի պետը, բանակի հրամանատար, կոմկոր Պարուսինովը, նշված է. «Ընկ. Անտոնյանը մարտական գործողությունների ընթացքում իրեն դրսևորել է որպես լավագույն ավտովարորդ, մարտական և քաղաքական գերազանց պատրաստվածություն ունեցող զինվոր: Նեղ ճանապարհներով և դաժան ձմեռային պայմանների ժամանակ կատարած աշխատանքի ընթացքում նա չի ունեցել ոչ մի վթարի դեպք կամ հարկադիր պարապուրդ: Ընկ. Անտոնյանի ավտոմեքենան օրվա որ ժամին էլ ասես՝ գիշեր թե ցերեկ, միշտ էլ գտնվել է սարքին վիճակում, պատրաստ կատարելու ցանկացած առաջադրանք: Շնորհիվ մեքենայի լավ խնամքի՝ այն գործի է գցվում 5–10 րոպեի ընթացքում՝ չնայած ուժեղ սառնամանիքին: Ընկ. Անտոնյանը գերազանց գիտի ավտոմեքենայի նյութական մասը և նույնքան էլ տիրապետում է մեքենայի վարման տեխնիկային: Վիրավորների տեղափոխման լարված օրերին նա աշխատում էր 3–4 օր ու գիշեր, առանց քնի ու հանգստի: Միշտ էլ գերազանց է կատարում հրամանատարության ցանկացած առաջադրանք: Վիրավորների էվակուացիան գերազանց կատարելու համար նա վեց անգամ արժանացել է զորամասի և հոսպիտալի հրամանատարության շնորհակալությանը: Բացի այդ նա իր օգնականներից երկու հոգու սովորեցրել է ավտովարորդի գործը, և նրանք պատրաստ են հարկ եղած ժամանակ փոխարինել շարքից դուրս եկած ավտովարորդներին: Ընկ. Անտոնյանը լավ, կարեկից ընկեր է, միշտ հարկ եղած ժամանակ օգնության է հասնում ընկերներին, որի համար էլ նրանց շրջանում ունի մեծ հեղինակություն: Արժանի է պարգևատրման «Մարտական ծառայությունների համար» մեդալով»[176]:

Նման պարգևի արժանացած հայորդիներից էր նաև 7-րդ բանակի ինժեներական զորքերի բաժնի գործավարության պետ Հակոբ Հայրումի Հայրումյանցը (ծնվել է 1883 թ., Կարմիր բանակում էր ծառայում 1919 թ., Խորհրդա-ֆիննական

[176] Նույն տեղում, գ. 397, թ. 229:

պատերազմից առաջ բնակվում էր Լենինգրադում): Ըստ բանակի ինժեներական զորքերի պետի տեղակալ մայոր Կոպիլովի. «Ընկ. Հայրումյանցը միանգամայն աշխատասեր, ազնիվ աշխատակից է, որը ժամանակին կարողանում է կատարել իր ծառայությունները: Չնայած նրա պատկառելի տարիքին՝ 57 տարեկան, նա ժամանակին է կատարում բանակի ինժեներական սպասարկման բոլոր փաստաթղթերի ձևակերպման և տարածման աշխատանքը: Ազնիվ է և նվիրված հայրենիքի պաշտպանության գործին: Արժանի է պարգևատրման «Մարտական ծառայությունների համար» մեդալով»[177]:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. մայիսի 20-ի հրամանագրով «Մարտական ծառայությունների համար» մեդալով պարգևատրվեց նաև 201-րդ օդադեսանտային բրիգադի սանիտարական հրահանգիչ, կարմիրբանակային Տիգրան Պողոսի Պողոսյանը, 17-րդ հրաձգային դիվիզիայի 20-րդ հրաձգային գնդի մարտկոցի ավագ Վաչագան Գեղամի Հակոբյանը[178], 7-րդ հրաձգային դիվիզիայի 23-րդ հրաձգային գնդի խոհարար կարմիրբանակային Ասկ (այդպես է տեքստում) Ռուշանի Խաչատրյանը[179] (ծնվել է 1918 թ. Հայաստանի Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում, Կարմիր բանակ էր զորակոչվել 1938 թ.), որը 1940 թ. հունվարի 27-ից մինչև մարտի 13-ը Խոտինենի և Վիբորգի շրջաններում տեղի ունեցած մարտերի ընթացքում անխափան կերպով համեղ և տաք կերակուրներ էր պատրաստում հրետանավորների համար և այլն:

Խորհրդա-ֆիննական պատերազմին սկզբից մինչև վերջ ակտիվորեն մասնակցել է սակրավոր, ավագ սերժանտ Գրիգոր Մարտիրոսի Աղասյանը (ծնվել է 1917 թ. սեպտեմբերի 4-ին Տավուշի տարածաշրջանի Այգեձոր գյուղում): 1938 թ. զորակոչվել է Կարմիր բանակի շարքերը, ծառայել Կիևի հատուկ զինվորական օկրուգի 218-րդ ռազմաինժեներական

---

[177] Նույն տեղում, գ. 392, թ. 277:
[178] Նույն տեղում, գ. 383, թ. 155, 200:
[179] Նույն տեղում, գ. 579, թ. 27:

գումարտակում, ավարտել գնդային դպրոցը և նշանակվել սակրային դասակի հրամանատարի օգնական: 1939 թ. աշնան սկզբներին մասնակցել է Արևմտյան Ուկրաինայի ազատագրմանը: Այնուհետև, 1939 թ. նոյեմբերի 30-ից մինչև 1940 թ. մարտի 13-ը նույն գումարտակի կազմում մասնակցել է Խորհրդա-ֆիննական պատերազմին, աչքի ընկել Մաններհայմի գծի ճեղքման մարտերում, վիրավորվել, բայց կրկին վերադարձել շարք: 1941թ. հունիսի 22-ից մինչև նույն տարվա սեպտեմբեր Լուցկի և Կիևի շրջաններում մասնակցել է Հայրենական մեծ պատերազմի առաջին շրջանի ծանր մարտերին, Բրովարիի շրջանում վիրավոր վիճակում գերվել գերմանացիների կողմից: Այնուհետև, մինչև 1943 թ. սկզբները, հարկադրաբար ծառայել է գերմանական բանակի Հայկական լեգեոնի 3-րդ գումարտակի 4-րդ վաշտում: 1943 թ. փետրվարին փախել է գերությունից և միացել Ուկրաինայում գործող խորհրդային պարտիզանական բրիգադին, որի հրամանատարը Դանչենկոն էր: Վաշտի հրամանատարի օգնական Աղասյանն այդ բրիգադի շարքերում մասնակցել է բազմաթիվ մարտերի և իր արժանի ավանդը ներդրել պարտիզանների տարած հաղթանակներում: 1944 թ. փետրվարի սկզբին հերթական մարտական առաջադրանքը կատարելիս նա ծանր վիրավորվել է և գրկվել ձախ ոտքից: Նույն թվականին վերադարձել է հայրենիք և հայրենի գյուղում աշխատել որպես հաշվապահ: 1951 թ. Գրիգոր Աղասյանն ընտանիքով տեղափոխվել է Մասիսի շրջանի Սայաթ-Նովա գյուղ և շարունակել աշխատանքը: Խորհրդա-ֆիննական և Հայրենական մեծ պատերազմների վետերանի կյանքի թելը կտրվել է 1986 թ. մարտի 8-ին:

Արևմտյան Բելոռուսիայի ազատագրման, ապա Խորհրդա-ֆիննական պատերազմում աչքի ընկավ նաև կարմիրբանակային Արամայիս Խաչատուրի Բալասանյանը (ծնվել է 1919 թ. Գորիսում), որն այնուհետև մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, արժանացել ավագ լեյտենանտի կոչման:

Մաններհայմի գծի անառիկ պաշտպանությունը ճեղքելու մարտերում հերոսաբար զոհվեցին վանաձորցի Արշալույս

Ռուբենի Ալավերդյանը (Ղազախեցյանը), ողջաբերդցի Մովսես Պապիկի Մուշեղյանը, ճլոխանցի Մկրտիչ Հունանի Իսրայելյանը, բուժականցի Եղիազար Հայրապետի Մելքոնյանը, հարթավանցի Արշալույս Գեղամի Քյոռօղլյանը, քուչակցի Ենոք Պողոսի Բոյախչյանը, արտաշատցիներ Աբրահամ Համբարձումի Համբարձումյանը, Թովմասիկ Արմենակի Կտրուկյանը, բամբակաշատցի Հրանտ Հակոբի Բաբայանը, քարաշենցի Աշոտ Գևորգի Մարկոսյանը, այգեձորցիներ Անդրուշ Ասատուրի Թունյանը, Ավանես Շամիրի Առուստամյանը, ֆրանգանոցցիներ Եղիազար և Զարգանդ Քերոբի Եղիազարյան եղբայրները, նորատուսցի Անդրանիկ Սիմոնի Օհանյանը, ալափարսցի Անուշավան Քերոբի Սարգսյանը, գեղանուշցի Սարգիս Մովսեսի Կոստանդյանը, դավիթբեկցի Աշոտ Բախշիի Աբգարյանը, բնունիսցի Դրաստամատ Միքայելի Ավագյանը, շաղաթցի Հմայակ Գևորգի Գյուրջյանը, նորաշենցի Մուշեղ Վարդանի Սիմոնյանը, լորեցի Մարտիրոս Օհանի Մարտիրոսյանը և շատ ուրիշներ: Խորհրդա-ֆիննական պատերազմի մասնակից վանաձորցի ավտովարորդ, տանկիստ-մեխանիկ Ռաֆիկ Նահապետի Ղազախեցյանը հետագայում զոհվել է Հայրենական մեծ պատերազմում: Հայրենական մեծ պատերազմում է զոհվել նաև նրա կրտսեր եղբայրը՝ Ժորա Նահապետի Ղազախեցյանը:

6. Հայ օդաչուներ

Խորհրդա-ֆիննական պատերազմում տարած հաղթանակում իրենց արժանի ավանդն են ներդրել նաև օդաչուները, որոնց շարքերում կային հայորդիներ, որոնք մարտերում ցուցաբերած խիզախության համար արժանացել են կառավարական տարբեր պարգևների: Օդաչուները զգալի օգնություն են ցույց տվել ցամաքային զորքերին Մաններհայմի գիծը ճեղքելիս: Նրանք գործում էին բնակլիմայական բարդ պայմաններում: Օդում ջերմաստիճանը հասնում էր մինուս 40–50-ի: Հաճախակի տեղի ունեցող մագնիսական փոթորիկ-

ները, մառախուղը, մրրկահողմը, ցածր ամպամածությունը, խոր ձյունը, ցերեկվա կարճատևությունը մեծ դժվարություններ էին ստեղծում ինքնաթիռների վարման, նյութական մասի շահագործման և օդանավակայանային բազավորման համար: Հենց առաջին իսկ օրվանից Լենինգրադի զինվորական օկրուգի ռազմաօդային ուժերը, շնորհիվ իրենց թվային և որակական հատկությունների, օդում նախաձեռնությունը վերցրեցին իրենց ձեռքը և այն պահպանեցին մինչև պատերազմի ավարտը: Դա հնարավորություն տվեց երկաթուղայիններին և ավտոտրանսպորտային աշխատողներին անխափան իրագործել բեռների և զորքերի փոխադրման խիստ կարևոր գործը, ռազմաճակատային ու բանակային թիկունքային զորամասերին հանգիստ կատարել իրենց աշխատանքը: Բացի այդ, շնորհիվ օդում ունեցած գերազանցության, խորհրդային ավիացիան թույլ չտվեց հակառակորդին օդից շատ թե քիչ զգալի հարվածներ հասցնել խորհրդային ցամաքային ուժերին: Ավիացիան հատկապես կարևոր դեր խաղաց Մաններհայմի գծի ամրությունների հետախուզության ժամանակ: Օդից լուսանկարվեց հակառակորդի պաշտպանական համակարգի հսկայական տարածքներ: Լուսանկարները վերծանելուց և ֆիններին կրակակետերի տեղերը ճշտելուց հետո տվյալները հանձնվեցին հրետանային և տանկային զորքերի հրամանատարներին: Բացի այդ խորհրդային ավիացիայի առաջնահերթ խնդիրներից էր նաև բուն Մաններհայմի գծի ամրությունների և մարդկային ուժի ոչնչացումը: Ռմբակոծիչ և գրոհային ավիացիան գիշեր ու ցերեկ, երբ եղանակը բարեհաճ էր լինում, անընդհատ ռմբակոծում էին հակառակորդի դիրքերը: Իսկ երբ ցամաքային զորքերը սկսեցին գրոհել հակառակորդի ամրությունների առաջին, երկրորդ և երրորդ գոտիները, կործանիչ և գրոհային ավիացիան օդից աջակցում էր հարձակվողներին: Խորհրդային ավիացիան զգալի հարվածներ հասցրեց հակառակորդի թիկունքին՝ շարքից հանելով երկաթուղային կամուրջները, հանգույցները, կայարանները և այլն: Այսպես, օրինակ, Կարելյան պարանոցում նրանք

հասան այն բանին, որ ֆիննական երկաթուղային տրանսպորտը Մաններհայմի գծից 100 կմ դեպի Ֆինլանդիայի խորքերը շարքից դուրս էր բերված: Ֆինները ստիպված էին ցերեկային պայմաններում դադարեցնել նաև ավտոտրանսպորտի երթևեկությունը: Խորհրդային ավիացիան, դրա հետ մեկտեղ, ռմբակոծում էր նաև Ֆինլանդիայի զանազան ռազմական օբյեկտներ, շարքից հանում դրանք, որը մեծ չափով ազդում էր երկրի տնտեսության կանոնավոր ընթացքի վրա, բարոյապես գցում թիկունքում պատրաստվող պահեստային ուժերի ոգին[180]:

Ըստ Հյուսիսարևմտյան ռազմաճակատի ռազմաօդային ուժերի հրամանատար, կոմկոր Ե.Ս. Պտուխինի՝ միայն Կարելյան պարանոցի ամրացված շրջանների ոչնչացման և ավերման նպատակով իրագործվել է 53 000 ինքնաթիռային թռիչք, որոնց մասնակցել է ավելի քան 1500 ինքնաթիռ: Այդ թռիչքներից ավելի քան 27 000-ը իրագործել է ռմբակոծիչ ավիացիան բնակլիմայական բարդ պայմաններում, օրվա տարբեր ժամերին՝ ընդհուպ նաև գիշերները[181]:

Մեկ այլ հեղինակի տվյալներով խորհրդային ավիացիան ունեցել է շուրջ 2000 ինքնաթիռ[182]: Ընդհանուր առմամբ Խորհրդա-ֆիննական պատերազմում խորհրդային ավիացիան կատարել է 100 970 թռիչք, որից 44 041-ը՝ ռմբակոծիչ ավիացիան, 40 266-ը՝ կործանիչ ավիացիան, 16 663-ը՝ Կարմրադրոշ Բալթյան նավատորմի ռազմաօդային ուժերի ավիացիան[183]: Ըստ խորհրդային կողմի հաշվարկների, պատերազմի ընթացքում խորհրդային ռազմաօդային ուժերի կորուստները կազմել են 650, հակառակորդինը՝ 362 ինքնաթիռ: Ֆիննական կողմն իր կորուստները համարում է 62 ինքնաթիռ,

---

[180] Красная звезда, 1940. 18 августа. № 93. С. 2

[181] Зимняя война 1939–1940. Кн. 2. И.В. Сталин и финская компания. М.: изд. «Наука», 1999. С. 134–139.

[182] *Б.В. Соколов.* Тайны финской войны. М.: изд. «Вече», 2000. С. 109.

[183] Советско-финская война 1939–1940гг. Хрестоматия. Минск: изд.: «ХарвестВече», 1999. С. 355–356.

իսկ հակառակորդինը՝ ավելի քան 700 ինքնաթիռ[184]:

Ինչպես արդեն նշեցինք, խորհրդային ավիացիայի շարքերում իրենց խիզախությամբ և մարտական ունակություններով աչքի ընկան նաև հայ օդաչուները, որոնցից շատերն արժանացան կառավարական բազմաթիվ պարգևների: Այսպես, օրինակ, Խորհրդա-ֆիննական պատերազմում ցուցաբերած խիզախության և արիության համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. ապրիլի 7-ի հրամանագրով Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվեց Հյուսիսարևմտյան ռազմաճակատի ռազմաօդային ուժերի 16-րդ արագընթաց ռմբակոծիչ ավիաբրիգադի 31-րդ արագընթաց ռմբակոծիչ ավիագնդի ավիաէսկադրիլիայի կոմիսար, ավագ քաղղեկ Սարգիս Միքայելի Հայրապետովը[185] (ծնվել է 1914 թ. Հայաստանի Տավուշի շրջանի Արծվաբերդ գյուղում): 1939 թ. նոյեմբերի 30-ից մինչև 1940 թ. մարտի 13-ը նրա էսկադրիլիան օդերևութաբանական աննպաստ եղանակի պայմաններում և հակառակորդի զենիթային հրետանու ու կործանիչ ինքնաթիռների մշտական գործողության գոտում իրագործեց 23 մարտական թռիչք՝ 65 ժամ ընդհանուր տևողությամբ: Էսկադրիլիայից բացի ինը ռմբակոծիչներից բաղկացած խումբը միշտ Հայրապետովն էր հմտորեն առաջնորդում մարտի: Գնդի հրամանատար մայոր Դոբիշի և բրիգադի հրամանատար գնդապետ Բելովի վկայությամբ Հայրապետովի իննյակը մշտապես մարտական առաջադրանքները կատարել է գերազանց: Այսպես, օրինակ, Լապպերատնա, Վիբորգ, Կոուլա երկաթուղային հանգույցների ռմբակոծության հետևանքով, ինչպես ցույց են տվել լուսանկարչական-հետախուզական տվյալները, երկար ժամանակ դադարել էր գնացքների երթևեկությունն այդ տեղամասում: Այդ ամենի հետ մեկտեղ, կոմիսար Հայրապետովը մարտական գործողությունների ընթացքում հմտորեն էր կազմակերպում նաև կուսակցական, քաղա-

---

[184] *П.Б. Липатов.* Зимняя война. М.: изд. «Рейтар», 1996. С. 45.
[185] Ведомости Верховного Совета СССР. 1941. 15 июня. № 26. С. 2.

քական և մարտական ուսուցման աշխատանքը, որի շնորհիվ նրա էսկադրիլիան կորուստներ չունեցավ ինչպես հակառակորդի զենիթային հրետանու, այնպես էլ նրա կործանիչների հարվածներից[186]: Ձմեռային սառնամանիքների և տեղանքի բարդ պայմաններում կատարած թռիչքների ժամանակ էսկադրիլիայի գործողությունները հմտորեն ղեկավարելու և այդ ընթացքում դրսևորած տոկունության ու քաջության համար, ինչպես արդեն նշեցինք, ավագ քաղղեկ Սարգիս Հայրապետովը պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով: Շուտով նա առաջ քաշվեց գնդի կոմիսարի պաշտոնում:

Հյուսիսարևմտյան 7-րդ խառն ավիադիվիզիայի 31-րդ արագընթաց-խորընթաց ավիագնդի կոմիսար, Կարմիր դրոշի շքանշանակիր Սարգիս Հայրապետովը 1941 թ. հունիսի 22-ից ակտիվորեն մասնակցեց հայրենական մեծ պատերազմին և անմահ սխրանք կատարեց պատերազմի երրորդ օրը՝ հունիսի 24-ին՝ Լիտվայի Տաուրագե շրջանում: Զինվորական թղթակից Գ. Խոլոպովի «Во славу Родины» ռազմաճակատային թերթում տպագրած «Առաջին Գաստելլոն» հոդվածից իմանում ենք, որ հունիսի 24-ին հերթական մարտական թռիչքը կատարելիս Հայրապետովի ռմբակոծիչը բոցավառվեց գերմանական կործանիչի գնդացրային կրակահերթից: Ներքևում՝ մարտադաշտում, ծգվում էր հակառակորդի տանկերի և վառելանյութ տեղափոխող ավտոմեքենաների շարասյունը: Շրջան կատարելով ճանապարհի վրա և թիրախ ընտրելով տանկերի և վառելանյութ տեղափոխող ավտոմեքենաների խումբը, խիզախ հայորդին բոցավառ ինքնաթիռն ուղղեց այն կողմ և խոյահարեց նրանց[187]: Ուժեղ պայթյունից հոդս ցնդեցին բենզինի լցատակառները, ոչնչացվեցին ֆաշիստական տասնյակ տանկեր և զինվորներ: Կատարած անօրինակ սքխրանքի համար Սարգիս Հայրապետովը հետմահու պարգևա-

---

[186] ՌՊՈԱ, ֆ. 37837, ց. 3, գ. 392, թ. 275:

[187] Во славу Родины. 27 февраля 1942г. Молодой коммунист, 1974. № 2.

տրվեց Կարմիր դրոշի շքանշանով[188]: Հիշեցնենք, որ կապիտան Նիկոլայ Գաստելլոն նման սխրանք կատարեց 1941 թ. հունիսի 26-ին:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. ապրիլի 7-ի վերոհիշյալ հրամանագրով Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվեց նաև նույն գնդի «СБ» արագընթաց ռմբակոծիչ ինքնաթիռի օդային հրաձիգ-ռադիստ, ավագ Հովհաննես Արտաշեսի Հարությունովը (ծնվել է 1917 թ.)[189]: Նրա պարգևատրման թերթիկում, որը ստորագրել են գնդի հրամանատար մայոր Դոբիշը, բրիգադի հրամանատար գնդապետ Բելովը, Հյուսիսարևմտյան ռազմաճակատի ռազմաօդային ուժերի հրամանատար կոմկոր Պտուխինը, ռազմաճակատի հրամանատար 1-ին կարգի բանակային հրամանատար Տիմոշենկոն, նշված էր. «1940 թ. հունվարի 5-ից մինչև մարտի 12-ը գտնվելով սպիտակ ֆինների զորքերի դեմ մղված պայքարում, ընկեր Հարությունովը մարտական առաջադրանքները կատարելիս ցուցաբերել է բացառիկ համարձակություն և համառություն՝ ցանկացած բարդ հանգամանքներում: Օդային մարտերում նա իր երկու ընկերների հետ միասին խփեց հակառակորդի 2 ինքնաթիռ Վիբորգի շրջանում: Չնայած թռիչքի ժամանակ, որը ընթանում էր 45 աստիճան սառնամանիքի պայմաններում, ցրտահարվեց նրա դեմքը, այնուամենայնիվ շարունակեց մարտը և ետ մղեց հակառակորդի «Սիվերսի» տիպի 3 ինքնաթիռների գրոհը: Մարտի պահին մշտապես սարքին վիճակում էր գտնվում ռադիոկայանը, և անխափան էր գործում գնդացիրը: Ընկեր Հարությունովը հաճախակի կատարում էր նաև հակառակորդի զորքերի կուտակումների և օդանավակայաններում գտնվող ռազմաօդային ուժերի հետախուզում, ձեռք բերում արժեքավոր տվյալներ և ռադիոյով գնդի հրամանատարությանը

---

[188] А.П. Каваленко. Вершины мужества. М.: МОФ; Победа-1945, 1995. С. 143.Ведомости Верховного Совета СССР. 1941. 15 июня. № 26. С. 2.

[189] Ведомости Верховного Совета СССР. 1941. 15 июня. № 26. С. 2.

հայտնում դրանք: Ընդհանուր առմամբ, օդային հրաձիգ-ռադիստ Հարությունովը կատարել է 18 մարտական թռիչք՝ 55 ժամ տևողությամբ, որոնց ընթացքում ընկերների հետ խփել է թշնամու 3 ինքնաթիռ: Նա ֆիզիկապես կոփված է և առողջ, որը հնարավորություն է տալիս օրվա մեջ կատարել երկու թռիչք՝ 7 ժամ տևողությամբ: Թռիչքներից ազատ ժամերին Հարությունովը խմբագրում ձևավորում է մարտական թերթիկներ, որոնք լույս էին տեսնում ամեն օր և որի համար մի քանի անգամ արժանացել է գնդի և բրիգադի հրամանատարության շնորհակալությանը: Նա շատ կարգապահ և հանձնակատար զինվոր է, օրինակելի ընկեր, մշտապես հոգ է տանում իր գիտելիքների հարստացման և ամրապնդման ուղղությամբ: Անչափ նվիրված է հայրենիքին: Քաղաքականապես շատ գրագետ է, ցանկացած պահի պատրաստ է մարտի գնալ՝ առանց խնայելու կյանքը՝ հանուն հայրենիքի սահմանների անվտանգության: Մարտական և քաղաքական գերազանց արդյունքների, ինչպես նաև հրամանատարության մարտական առաջադրանքները օրինակելի կատարելու համար արժանի է պարգևատրման Կարմիր դրոշի շքանշանով»[190]:

Նման պարգևի ներկայացվեց նաև 8-րդ բանակի ռազմաօդային ուժերի 13-րդ արագընթաց ռմբակոծիչ ավիագնդի ավագ օդաչու-դիտորդ լեյտենանտ Ղազար Խաչատուրի Սահակյանը (ծնվել է 1912 թ., Կարմիր բանակում էր ծառայում 1931 թ.): Նրա պարգևատրման թերթիկում գնդի հրամանատար գնդապետ Ուշակովը, բանակի ռազմաօդային ուժերի հրամանատար, Խորհրդային Միության հերոս Կոպեցը նշել են. «Նվիրված է Հայրենիքի պաշտպանության գործին, քաղաքականապես պատրաստված է լավ: Եռանդուն, կամային և նախաձեռնող, իր և իր ենթակաների հանդեպ պահանջկոտ է: Որպես Շտուրման՝ ավագ օդաչու-դիտորդ, պատրաստված է շատ լավ: Օդում կողմնորոշվում է լավ: Թռչում է կլիմայական բարդ պայմաններում և մեծ բարձրությունների վրա: Թռիչքի

---

[190] ՌՊՌԱ, ֆ. 37837, ց. 3, գ. 398, թ. 293:

ժամանակ շատ ուշադիր է, աշխատում է հանգիստ և վստահ: Մեծ հեղինակություն է վայելում ինչպես էսկադրիլիայում, այնպես էլ գնդում: Սպիտակֆինների դեմ մղված մարտական գործողությունների ժամանակ նա կատարել է 46 մարտական թռիչք, որոնց ընթացքում ռմբակոծել է հակառակորդի պաշտպանական ամրությունները և զորքերը, կատարել լուսանկարչական հետախուզություն: Առաջադրանքները մշտապես կատարել է լավ և գերազանց: Մարտական առաջադրանքները կատարելիս ցուցաբերած հերոսության և անձնազոհ աշխատանքի համար արժանի է պարգևատրման Կարմիր դրոշի շքանշանով»[191]:

Խորհրդային Միության հերոս, կոմբրիգ Ի.Տ. Սպիրինի հեռահար ռմբակոծիչների խիզախ օդաչուներից էր ավիաէսկադրիլիայի ավագ օդաչու, ավագ լեյտենանտ Անդրանիկ Արշալույսի Վարդանյանցը (ծնվել է 1908 թ., Կարմիր բանակում էր ծառայում 1930 թ.): Կոմբրիգ Սպիրինը և կոմիսար Սուխարևը նրա պարգևատրման թերթիկում նշել են. «Գերազանց օդաչու է, թռչում է վստահորեն, ճիշտ է գնահատում ստեղծված իրավիճակը օդում, ժամանակին և հստակ է որոշումներ ընդունում: Անձնակազմի հետ տարվող աշխատանքների լավ կազմակերպիչ է: Մարտական առաջադրանք կատարելիս ինքնաթիռը գերազանց է պահում շարքում: 1940 թ. հունվարի 31-ին ռմբակոծիչների ինքնակի կազմում Ռովալինեմի ամրացված շրջանի ռմբակոծման մարտական առաջադրանքը կատարելիս Վարդանյանցի ինքնակը ենթարկվեց «ֆոկեր Դ-21» մակնիշի հակառակորդի կործանիչ ինքնաթիռների հարձակման: Առանց մարտակարգը խախտելու, ռմբակոծիչները հիմնական ուշադրությունը կենտրոնացրին հրամանատարության հրամանը կատարելու վրա և, առանց կորուստների, հաջողությամբ կատարեցին մարտական առաջադրանքը: Միայն 1940 թ. փետրվար-մարտ ամիսներին ավագ լեյտենանտ Անդրանիկ Վարդանյանցն իրագործեց 12 մարտական թռիչք,

---

[191] Նույն տեղում, գ. 545, թ. 3:

որոնց ընթացքում հրամանատարության առաջադրանքները կատարեց գերազանց: Արժանի է պարգևատրման Կարմիր աստղի շքանշանով»[192]: Հետագայում հեռահար գործողության ավիացիայի 26-րդ գվարդիական ավիագնդի 1-ին ավիաէսկադրիլիայի հրամանատարի տեղակալ, գվարդիայի կապիտան Ա.Ա. Վարդանյանցը մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, պարգևատրվել Կարմիր դրոշի, Հայրենական պատերազմի 1-ին և 2-րդ աստիճանների, «Պատվո նշան» շքանշաններով, «Մարտական ծառայությունների համար» մեդալով[193]:

Մաններհայմի գծի պաշտպանական ամրությունների գոտին ճեղքելու գործում զգալի ավանդ ներդնելու համար Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվեց 7-րդ բանակի ռազմաօդային ուժերի 55-րդ արագընթաց ռմբակոծիչ ավիաբրիգադի 44-րդ արագընթաց ռմբակոծիչ ավիագունդը[194]: Այդ փառապանծ գնդի 2-րդ ավիաէսկադրիլիայի շարքերում էր մարտնչում կրտսեր օդաչու, լեյտենանտ Գալուստ Մակարի Բարթադյանը (ծնվել է 1917 թ., Կարմիր բանակի շարքերում էր ծառայում 1935 թ.): Գնդի հրամանատար, գնդապետ Դմիտրևի, բրիգադի հրամանատար, գնդապետ Նաումենկոյի և բանակի ռազմաօդային ուժերի հրամանատար, Խորհրդային Միության հերոս, կոմդիվ Դենիսովի վկայությամբ խիզախ օդաչուն Խորհրդա-ֆիննական պատերազմում կատարել էր 19 մարտական թռիչք, որոնց ընթացքում ցուցաբերել էր բացառիկ քաջություն, համարձակություն և վճռականություն: 1940 թ. փետրվարի 10-ին, երբ Հյուսիսարևմտյան ռազմաճակատի ռազմական խորհուրդը հրաման տվեց հարձակում սկսել Մաններհայմի պաշտպանական գիծը ճեղքելու համար, խիզախ օդաչուն առաջինների թվում թռավ՝ ռմբակոծելու հակառակորդի նպատակակետերը՝ դոտերը, դզոտները, հրե-

---

[192] Նույն տեղում, գ. 416, թ. 265–266:

[193] ՌԴ ՊՆԿԱ, 11-րդ բաժին, պարգևատրման հաշվառման բաժին, գվ. կապիտան Ա.Ա. Վարդանյանցի պարգևատրման հաշվառման քարտ, էջ 1–2:

[194] Известия. 22 марта 1940. № 67. С. 1.

տանային կրակակետերը, ռազմական այլ կարևոր օբյեկտներ: Չնայած թռիչքները հաճախ ընթանում էին օդերևութաբանական բարդ պայմաններում, հաճախակի հակառակորդի զենիթային-հրետանային, գնդացրային, հրացանային ուժեղ կրակի տակ, լեյտենանտ Բարթադյանը իր «СБ» ռմբակոծիչ ինքնաթիռը դուրս էր բերում ճիշտ նպատակակետի վրա և գերազանց կատարում հրամանատարության առաջադրանքը: Հաճախակի նա մեկ օրվա մեջ կատարում էր երկու թռիչք: 1940 թ. փետրվարի 10-ին, ավիաօղակի հրամանատար Մազաևը հարկադրված էր վնասված ինքնաթիռն իջեցնել հակառակորդի տարածքում՝ Կուոլեմո-Յարվի լճի մոտ: Ֆիննական դահուկորդները, նկատելով այդ, սլացան դեպի խորհրդային ինքնաթիռը՝ նպատակ ունենալով գերել անձնակազմին: Վայրկենապես ճիշտ գնահատելով ստեղծված պահի լրջությունը՝ կապիտան Միխայիլ Տրոֆիմովիչ Տրուսովը, վտանգի ենթարկելով կյանքը, վայրէջք կատարեց Մազաևի ինքնաթիռի մոտ, իր ինքնաթիռ տեղափոխեց ընկերոջը և անձնակազմի մյուս անդամներին և թշնամու քթի տակ օդ բարձրանալով, նրանց ողջ և առողջ հասցրեց օդանավակայան: Այդ ամբողջ պահին լեյտենանտ Բարթադյանը օդից գնդացրային կրակով պաշտպանում էր մարտական ընկերներին՝ ճնշելով ֆիննների գնդացրային կրակակետերի կրակը, ինչպես նաև սպանիչ կրակով փակում ֆիննն դահուկորդ-ավտոմատավորների ճանապարհը: Շնորհիվ կապիտան Տրուսովի և լեյտենանտ Բարթադյանի խելացի համագործակցության, Մազաևի անձնակազմը փրկվեց գերությունից և վերադարձավ շարք:

Այդ անօրինակ սխրագործության համար կապիտան Մ.Տ. Տրոսովը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. մարտի 21-ի հրամանագրով արժանացավ Խորհրդային Միության հերոսի կոչման[195], իսկ լեյտենանտ Գ.Մ. Բարթադյանը պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով[196]:

---

[195] Герои Советского Союза. Краткий биографический словарь. М.: Воениздат, 1988. Т. 2. С. 603–604.

[196] ՌՊՌԱ, ֆ. 37837, ց. 3, գ. 402, թ. 341:

Նման պարգևի արժանացավ նաև 15-րդ բանակի ռազմաօդային ուժերի 201-րդ ավիացիոն հանգրվանի (բազայի) հրամանատար մայոր Արամ Եֆիմի Հարությունյանը (ծնվել է 1908 թ., Կարմիր բանակում էր ծառայում 1930 թ.): Նրա պարգևատրման թերթիկում, որը ստորագրել է 15-րդ բանակի ռազմաօդային ուժերի հրամանատար, Հանրապետական Իսպանիայի 1936–1939 թթ. Ազգային հեղափոխական պատերազմում Խորհրդային Միության հերոսի կոչման արժանացած կոմբրիգ Ալեքսանդր Իվանովիչ Գուսևը, նշված է. «1939 թ. նոյեմբերի 30-ից մասնակցելով սպիտակ ֆիններին դեմ ռազմական գործողություններին, մայոր Ա.Ե. Հարությունյանն իրեն դրսևորել է որպես հմուտ կազմակերպիչ հրամանատար՝ 201-րդ ավիաբազայի ստեղծման, 49-րդ և 153-րդ կործանիչ ավիագնդի մարտական գործողությունների նյութատեխնիկական սպասարկման գործում: Չնայած ավիաբազան լրիվ համալրված չէր ավտոտրանսպորտով և հատուկ մասնագիտացված մեքենաներով, մարտական առաջադրանքի թռչող ինքնաթիռների թռիչքների հետաձգման որևէ դեպք չեղավ այդ պատճառով: Օդանավակայանը և ավիաբազան տեղաբաշխված էին Ֆինլանդիայից ազատագրված տարածքում, ուստի ֆիննական բանդաները հաճախակի զինված հարձակումներ էին կազմակերպում՝ ավիաբազայի աշխատանքները կազմալուծելու նպատակով: Ա. Հարությունյանը կարողացավ կարճ ժամանակամիջոցում ձեռքի տակ եղած մարդկային ուժերի հաշվին ստեղծել 315 հոգուց բաղկացած մեկ գումարտակ և 135 հոգուց բաղկացած մեկ վաշտ ու արժանի հակահարված հասցնել հակառակորդին: Դեռ ավելին, այդ ստորաբաժանումներն ակտիվորեն մասնակցեցին Լունկուլան-Սարի կղզու գրավման մարտերին և այնտեղից դուրս շպրտեցին ավիաբազային սպառնացող թշնամական ուժերին: Ստորաբաժանումների հրամանագրերն ու զինվորները մայոր Հարությունյանի հրամանները կատարեցին հստակորեն և ցուցաբերեցին կարգապահության և կազմակերպվածության, հայրենիքին նվիրվածության օրինակներ:

Մայոր Հարությունյանի ղեկավարությամբ ավիաբազայի սպասարկող անձնակազմը, շնորհիվ բազայի աշխատանքների խելացի կազմակերպման, տնտեսեց 140 տ վառելանյութ, զինամթերք և այլ ապրանքներ: Մայոր Հարությունյանն օժտված է բավականաչափ անհրաժեշտ օպերատիվ-մարտավարական ունակություններով: Բազայում օրինակելի հիմքերի վրա է դրված ավիատեխնիկական գույքի խնայման և հաշվառման, դաշտային պայմաններում ինքնաթիռների ու ավտոտրանսպորտի շարժիչների վերանորոգման գործը: Մայոր Հարությունյանը հոգատար վերաբերմունք է ցուցաբերում օդաչուատեխնիկական անձնակազմի հանգստի կազմակերպման գործին, որի վկայությունը հանգստյան տան ստեղծումն է, որտեղ բոլոր պայմանները կան օդաչուների և տեխնիկական աշխատողների համար, որը մեծ չափով նպաստում է բազայի կողմից սպասարկվող ավիացիոն զորամասերի մարտական արդյունավետ գործողությունների վրա: Մայոր Հարությունյանի ղեկավարած 201-րդ ավիաբազան ռազմաճակատի առաջավոր բազաներից մեկն է, որի համար այն ներկայացվել է պարգևատրման: Մարտական գործողությունների ընթացքում ավիաբազայի գործունեությունը հմտորեն կազմակերպելու համար մայոր Ա.Ե. Հարությունյանն արժանի է պարգևատրման Կարմիր աստղի շքանշանով[197]:

Կարմիր աստղի շքանշանով պարգևատրվեց նաև 8-րդ բանակի ռազմաօդային ուժերի քաղաքացիական օդային նավատորմի «ՊՀ-89» օդանավի հրամանատար, կապիտան Անդրեյ Իվանի Ոսկանովը (ծնվել է 1904 թ., Կարմիր բանակում էր ծառայում 1925–1931 թթ., այնուհետև աշխատել է քաղաքացիական օդային նավատորմում: Արևմտյան Բելոռուսիայի ազատագրման և Խորհրդա-ֆիննական պատերազմի ընթացքում գործուղվել է ռազմաճակատ և հատուկ առաջադրանքներ էր կատարում): Բանակի ռազմաօդային ուժերի հրամանատար, Հանրապետական Իսպանիայի ազգային հեղափո-

[197] Նույն տեղում, գ. 398, թ. 295:

խական պատերազմում Խորհրդային Միության կոչման արժանացած, կոմբրիգ Իվան Իվանովիչ Կոպեցի և 8-րդ բանակի հրամանատար, 2-րդ կարգի բանակային հրամանատար Գրիգորի Միխայլովիչ Շտեռնի կողմից ստորագրված Ոսկանովի պարգևատրման թերթիկում նշված է. «Ա.Ի. Ոսկանովը քաղաքացիական օդային նավատորմում աշխատում է 1931 թ. և իր հաշվում ունի 5250 թռիչքային ժամ: Աէրոֆլոտի պետի հրամանով նա 1939 թ. սեպտեմբերին նշանակում է ստացել 1-ին ավիաջոկում՝ հատուկ առաջադրանքներ կատարելու համար: Այդ աշխատանքի ընթացքում նա կատարել է մի շարք պատասխանատու հանձնարարություններ՝ ռազմաճակատի գիծ փոխադրելով բժիշկներ ու դեղորայք, հակառակ ուղղությամբ՝ վիրավորներ: 1939 թ. դեկտեմբեր – 1940 թ. փետրվար ամիսներին նա օդերևութաբանական բարդ պայմաններում Կարկկուի շրջանից Պետրոզավոդսկ փոխադրեց հարյուրավոր վիրավորներ և փրկեց նրանց կյանքը: Կապիտան Ոսկանովը թռիչքային գործին տիրապետում է կատարյալ կերպով, թռչում է բարդ օդերևութաբանական պայմաններում և մշտապես հաջողությամբ կատարում հանձնարարված առաջադրանքները: 1939 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Արևմտյան Բելոռուսիայի ազատագրման գործողության ժամանակ նա հատուկ առաջադրանքներ կատարելու նպատակով թռիչքներ էր իրականացնում դեպի Վիլնո, Բելոստոկ, Լիդա, Բրեստ-Լիտովսկ, որի համար շնորհակալություն է ստացել բանակի հրամանատարությունից, արժանացել աէրոֆլոտի պատվոգրի՝ անվթար թռիչքների համար: Խորհրդա-ֆիննական պատերազմում 8-րդ բանակի հրամանատարության հատուկ առաջադրանքները կատարելիս ցուցաբերած խիզախության և համարձակության համար կապիտան Ա.Ի. Ոսկանովը արժանի է պարգևատրման Կարմիր աստղի շքանշանով»[198]:

Խորհրդա-ֆիննական պատերազմին մասնակից հայ

---

[198] Նույն տեղում, գ. 424, թ. 207:

օդաչուներից էին կործանիչ օդաչու Լազար Սերգեյի Չափչախովը, որը Հայրենական մեծ պատերազմի առաջին շրջանում դարձավ Խորհրդային Միության առաջին հայ հերոսը, Կոնստանտին Իվանի Մալխասյանը, որը հետագայում դարձավ ԽՍՀՄ վաստակավոր օդաչու, Սամսոն Մովսեսի Մկրտումյանը, որը Հայրենական մեծ պատերազմում կատարած խիզախության համար արժանացավ Խորհրդային Միության հերոսի կոչման, Նիկոլայ Տիգրանի Հարությունովը, որը ձմեռային պատերազմում տասնյակ անգամ իր ռմբակոծիչով խորտակիչ հարվածներ հասցրեց «Մաններհայմի գծի» ամրություններին, Ավետիք Խուդիի Դանիելյանը, Գուրգեն Սամվելի Գալստյանը և շատ ուրիշներ:

7. Հայ բժիշկներ

Խորհրդա-ֆիննական պատերազմին ակտիվ մասնակցություն ունեցան նաև հայ բժիշկները: Ձմեռային սառնամանիքային և բնակլիմայական բարդ պայմաններում տեղի ունեցած մարտերում ոչ միայն շատ էր վիրավոր զինվորների թիվը (ինչպես արդեն նշել ենք սույն մենագրության առաջին բաժնում, Կարմիր բանակը պատերազմի օրերին ունեցավ 188 671 վիրավոր), այլև մեծ էր նաև ցրտահարված և հիվանդ զինվորների թիվը (17 867 ցրտահարված և 58 370 հիվանդ): Բժիշկների առջև խնդիր էր դրված՝ առավելագույն չափով փրկել վիրավորների, ցրտահարվածների և հիվանդների կյանքը, ամենակարճ ժամանակաընթացքում վերականգնել նրանց առողջությունը և կանխել զորքերի մեջ զանազան հիվանդությունների առաջացումն ու տարածումը: Պատերազմի ժամանակ ստեղծված ռազմաբժշկական ծառայության առջև խնդիր էր դրված նաև հստակորեն կազմակերպել զորքերի բուժէվակուացիոն, սանպրոֆիլակտիկ և հակահամաճարակային գործը: 105 օր տևած պատերազմի օրերին ռազմաբժշկական ծառայության աշխատողները, չնայած ծանր պայմաններին, կարողացան պատվով կատարել իրենց առջև

դրված չափազանց կարևոր խնդիրը: Եվ պետք է հպարտությամբ նշել, որ այդ խնդրի լուծման գործում իրենց արժանի ավանդն են ներդրել նաև հայ բժիշկները: Նրանց թվում էին խորհրդային առողջապահության այնպիսի ճանաչված գործիչներ, ինչպիսիք էին՝ Լևոն Աբգարի Օրբելին, Ավետիք Իգնատի Բուռնազյանը, Արթուր Գրիգորի Կյուչարյանցը, Ստեփան Հովհաննեսի Կարճիկյանը, Տիգրան Կարապետի Ճառաքյանը (որոնք հետագայում արժանացան բժշկական ծառայության գեներալի կոչման), Ալեքսանդր Իվանի Հարությունովը, Արամ Հակոբի Աբրահամյանը (որոնց հետագայում շնորհվեց Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում. ի դեպ. նման կոչում շնորհվեց նաև Լևոն Օրբելուն և Ավետիք Բուռնազյանին) և ուրիշներ:

Խորհրդային ականավոր կենսաբան, էվոլյուցիոն կենսաբանության ստեղծողներից մեկը, 1935 թ. ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Լևոն Օրբելին Խորհրդա-ֆիննական պատերազմի ժամանակ եղել է Լենինգրադի կենսաբանության ինստիտուտի տնօրեն, ինչպես նաև ռազմաբժշկական ակադեմիայի կենսաբանության ամբիոնի պետ: Կենսաբանության բնագավառում 30-ական թվականների նրա կատարած ուսումնասիրությունները ոչ միայն կապված էին տեսական, այլև գործնական, այդ թվում նաև ռազմական խնդիրների հետ: Պատերազմի օրերին Օրբելու տեսական և գործնական հետազոտությունների արդյունքները լայնորեն կիրառվեցին Լենինգրադի ռազմա-բժշկական ակադեմիայում, որը մեծ արդյունք տվեց հատկապես ողնուղեղի վնասվածք ստացած վիրավորների բուժման գործում: 1943 թ. Լ.Ա. Օրբելուն շնորհվել է բժշկական ծառայության գեներալ-մայորի, իսկ 1944 թ. մայիսի 25-ին՝ բժշկական ծառայության գեներալ-գնդապետի կոչում: 1943 թ. նոյեմբերի 29-ին Լ.Ա. Օրբելին ընտրվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, իսկ 1945 թ. հունիսի 10-ին նրան շնորհվել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում: 1942–1946 թթ. ակադեմիկոս Լ.Ա. Օրբելին եղել է նաև ԽՍՀՄ ԳԱ փոխ-

պրեզիդենտ: Լ.Ա. Օրբելին ծնվել է 1882 թ. հուլիսի 7-ին Ծաղկաձորում (Հրազդանի շրջան), մահացել 1859 թ. դեկտեմբերի 4-ին՝ Լենինգրադում[199]:

Խորհրդա-ֆիննական պատերազմի օրերին 15-րդ բանակի սանիտարական բաժանմունքի պետի պաշտոնն էր վարում բժշկական ծառայության գնդապետ Ավետիք Իգնատի Բուռնազյանը: Այս բանակը կազմավորվել է 1940 թ. փետրվարի 11-ին և ֆիննական պատերազմին մասնակցել Լադոգա լճի հյուսիսարևելյան ափամերձ շրջաններում: Շնորհիվ Ա.Ի. Բուռնազյանի եռանդուն գործունեության, կարճ ժամանակաընթացքում բանակի սանիտարական բաժանմունքը համալրվում է ինչպես բժշկական համապատասխան կադրերով, այնպես էլ նյութատեխնիկական բազայով, որը հնարավորություն տվեց ձմեռային պայմաններում կազմակերպել ինչպես մարտադաշտում վիրավորների առաջին անհրաժեշտ օգնություն ցույց տալու, այնպես էլ նրանց տեղափոխելու և հոսպիտալացնելու, այնտեղ հետագա բուժումը պատշաճ կերպով կազմակերպելու գործը: Մարտերից մեկում նա վիրավորվում է, սակայն վիրակապված վիճակում շարունակել է ղեկավարել բանակի, սանիտարական բաժնի աշխատանքը: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Ա.Ի. Բուռնազյանին շնորհվել է բժշկական ծառայության գեներալ-մայորի (31 մարտի 1943 թ.) և բժշկական ծառայության գեներալ-լեյտենանտի (19 հունիսի 1945 թ.) կոչում: Պատերազմի տարիներին գեներալ Ա.Ի. Բուռնազյանը վարել է 1-ին Մերձբալթյան և Հեռավորարևելյան ռազմաճակատների սանիտարական վարչության պետի պաշտոնները: Իսկ պատերազմից հետո շուրջ 30 տարի եղել է ԽՍՀՄ առողջապահության նախարարի առաջին տեղակալ: Հայրենիքին մատուցած ակնառու ծառայությունների համար 1976 թ. Ա.Ի. Բուռնազյանին շնորհվել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում:

---

[199] Советская военная энциклопедия. М.: Воениздат, 1978. Т. 6. С. 84.

Բացի այդ նա պարգևատրվել է Լենինի 6, Հոկտեմբերյան հեղափոխության, Աշխատանքային կարմիր դրոշի 3, Կարմիր աստղի, «Պատվո նշան» շքանշաններով և բազմաթիվ մեդալներով, արժանացել Լենինյան և պետական մրցանակների: Ա.Ի. Բուռնազյանը ծնվել է 1906 թ. ապրիլի 20-ին Գավառ քաղաքում, մահացել 1981 թ. հոկտեմբերի 15-ին Մոսկվայում[200]:

Երբ սկսվեց Խորհրդա-ֆիննական պատերազմը, կորպուսային բժիշկ Արթուր (Հարություն) Գրիգորի Կյուչարյանցը Լենինգրադի Ս.Մ. Կիրովի անվան ռազմաբժշկական ակադեմիայի պետն էր (նա այդ պաշտոնը վարել է 1934 թ. հունիսից մինչև 1940 թ. հոկտեմբեր): Ակադեմիայի կլինիկաներում իրենց բուժումն են ստացել հարյուրավոր վիրավոր զինվորներ և հրամանատարներ, որոնցից շատերը վերադարձել են շարք: Հայրենական մեծ պատերազմի տարիներին սկզբից մինչև վերջ եղել է պաշարված Լենինգրադում և կատարել համանուն ռազմաճակատի բուժաշխատողների վերաորակավորման դասընթացների, 283-րդ և 1171-րդ հոսպիտալների և պահեստային ռազմաճակատի սանիտարական վարչության պետի պաշտոնները: 1943 թ. ապրիլին նրան շնորհվել է բժշկական ծառայության գեներալ-մայորի կոչում: Հայրենիքի պաշտպանության գործում ներդրած ավանդի համար Ա.Գ. Կյուչարյանցը պարգևատրվել է Կարմիր դրոշի 3, Կարմիր աստղի շքանշաններով, «ԲԳԿԲ-ի 20 տարին», «Լենինգրադի պաշտպանության համար» մեդալներով և այլն: Ա.Գ. Կյուչարյանցը նաև մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմին որպես գնդի բժիշկ և պարգևատրվել Ստանիսլավի 2-րդ և 3-րդ աստիճանների, Աննայի 2-րդ, 3-րդ և 4-րդ աստիճանների շքանշաններով և այլն... Ա.Գ. Կյուչարյանցը ծնվել է 1889 թ. հունվարի 1-ին Թիֆլիսում, մահացել 1962 թ. հունվարի 22-ին Լենինգրադում, թաղված է Բոգոսլավսկի գերեզմանատանը[201]:

---

[200] Правда. 19 октября. № 292. С. 4.

[201] Ռուսաստանի դաշնության պաշտպանության նախարարության Ռազմաբժշկական թանգարանի ռազմաբժշկական փաստաթղթերի արխիվ (այ-

Խորհրդա-ֆիննական պատերազմի սկզբին բժշկական գիտությունների դոկտոր, բրիգադային զինվորական բժիշկ Ստեփան Իվանի (Հովհաննեսի) Կարճիկյանը Լենինգրադի զինվորական օկրուգի սանիտարական բաժանմունքի գիտա-կոնսուլտացիոն բյուրոյի նախագահն էր և 50-րդ ռազմաճակատային էվակուացման կայանի գլխավոր նյարդաբանը (ջղաախտաբան): Ձմեռային սառնամանիքների և բնակլիմայական բարդ պայմաններում տեղի ունեցող մարտերի ժամանակ նա մեծ օգնություն է ցույց տվել վիրավոր և նյարդային համակարգը խախտված մարտիկների բուժման գործի կազմակերպմանը: Հետաքրքիր է նշել, որ առաջինների թվում մարտադաշտից վիրավորների տեղափոխման գործում զրահասահնակների օգտագործման միտքը պաշտպանել է Ս.Ի. Կարճիկյանը: Նա համոզեց, որ զրահասահնակների հիման վրա ստեղծվեն զրահածածկ քարշակներ, որոնք սանիտարները կօգտագործեն մարտադաշտում վիրավորներին անվտանգ մոտենալու և նրանց տեղափոխելու համար: Երբ սկսվեց «Մաններհայմի գծի» ճեղքման գրոհը, սանիտարական զրահածածկ քարշակներն արդարացրին իենց: Նրանց զրահի տակ թաքնված սանիտարները հնարավորություն էին ստանում հակառակորդի ուժեղ կրակի տակ մոտենալ վիրավոր զինվորներին և նրանց տեղափոխել թիկունք: Այդ քարշակներին չէին խանգարում խորը ձյունը և լավ էին մանևրում գլաքարերի, ցցակոճղակների և ծառերի միջև: Այդ օրինակը մեկ անգամ ևս Կարճիկյանին համոզեց, թե ինչքան կարևոր է ռազմաճակատում սանիտարական ծառայության գործը կազմակերպելիս հաշվի առնել մարտական հանգամանքներից բխող որոշակի պայմանները: Հայրենական մեծ պատերազմի տարիներին Ս.Ի. Կարճիկյանը Լենինգրադի գլխավոր նյարդաբանն էր, իսկ 1948 թ.՝ Կարմիր բանակի գլխավոր նյարդաբանը, միաժամանակ նա Լենինգրադի Ս.Մ. Կիրովի

սուհետև՝ ՌԴ ՊՆ ՌԲՓԱ), Բժշկական ծառայության գեներալ-մայոր Ա.Գ. Կյուչարյանցի անձնական գործ, թ. 1–4:

անվան ռազմաբժշկական ակադեմիայի նյարդային հիվանդությունների ամբիոնի վարիչն էր: 1949 թ. մայիսի 11-ին Ս.Ի. Կարճիկյանին շնորհվեց բժշկական ծառայության գեներալ-մայորի կոչում: Հայրենիքին մատուցած ծառայությունների համար նա պարգևատրվել է Լենինի, Կարմիր դրոշի 2 շքանշանով և բազմաթիվ մեդալներով: Ս.Ի. Կարճիկյանը ծնվել է 1890 թ. սեպտեմբերի 23-ին էջմիածնում, մահացել 1965 թ. նոյեմբերի 27-ին Լենինգրադում[202]:

Երբ սկսվեց Խորհրդա-ֆիննական պատերազմը, Տիգրան Կարապետի Ճառաքյանը նույն տարում ավարտել էր Լենինգրադի Ս.Մ. Կիրովի անվան ռազմաբժշկական ակադեմիան: Գերազանց դիպլոմով ավարտած շրջանավարտին 1939 թ. սեպտեմբերին պահել էին ակադեմիայի ասպիրանտուրայում՝ նորմալ կենսաբանության ամբիոնում: Պատերազմի օրերին նա ոչ միայն ակտիվորեն մասնակցում էր ակադեմիայի բաժանմունքներում բուժվող վիրավորների բուժմանը, այլև բուժաշխատողներից կազմված բժշկական ուժեղացման խմբերում հաճախակի լինում էր մերձճակատային հոսպիտալներում և իր գործընկերների հետ անգնահատելի օգնություն ցույց տալիս բուժանձնակազմին վիրավորների բուժման գործում: Հայրենական մեծ պատերազմի տարիներին ռազմաբժշկական ակադեմիայի կենսաբանության ամբիոնի դասախոս, բժշկական գիտությունների թեկնածու Տ.Կ. Ճառաքյանը 1944 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ակադեմիայի գիտահետազոտական բրիգադի հետ եղել է 1-ին Ուկրաինական ռազմաճակատում և մեծ օգնություն ցույց տվել ճակատային բուժաշխատողներին վիրավորների և հիվանդների բուժման մեթոդները և եղանակները բարելավելու նպատակով, հատկապես շոկոթերապիայի գծով: Պատերազմից հետո նա շարունակել է գիտահետազոտական աշխատանքները Լենինգրադի Ս.Մ. Կիրովի անվան ռազմաբժշկական ակադեմիա-

---

[202] *А.В. Казарьян.* Война, люди, судьбы. Е.: «Айастан», 1984. Т. 4. С. 199–206; *Արմո Մալխասյան.* Սովետական բանակի հայ գործիչները. Ե., Հայպետհրատ, 1963, էջ 472–474.

յում, նշանակվել թիվ 1 լաբորատորիայի վարիչ, դարձել կենսաբանության և ճառագայթաբանության բարձրորակ մասնագետ: Տիգրան Ճառաքյանը 1967 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսությունը և ստացել բժշկական գիտությունների դոկտորի կոչում: 1971 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Հայրենիքին մատուցած ծառայությունների համար Տ.Կ. Ճառաքյանը պարգևատրվել է Կարմիր դրոշի, Կարմիր աստղի շքանշաններով, «Լենինգրադի պաշտպանության համար», «Մարտական ծառայությունների համար» մեդալներով, «Առողջապահության գերազանցիկ» կրծքաշքանշանով և այլն: 1961 թ. մայիսի 9-ին նրան շնորհվել է բժշկական ծառայության գեներալ-մայորի կոչում: Տ.Կ. Ճառաքյանը ծնվել է 1909 թ. օգոստոսի 31-ին Սանկտ-Պետերբուրգում[203]:

Խորհրդա-ֆիննական պատերազմին ակտիվորեն մասնակցած հայ բժիշկներից էր Ալեքսանդր Իվանի Հարությունովը (ծնվել է 1904 թ. հունվարի 3-ին Երևանում, մահացել՝ 1975 թ. հունիսի 5-ին Մոսկվայում): 1929 թ. ավարտելով Դոնի Ռոստովի Հյուսիս-Կովկասյան համալսարանի բժշկական ֆակուլտետը, այնուհետև աշխատել է Մոսկվայի նյարդավիրաբուժության ինստիտուտում՝ ակադեմիկոս Ն.Ն. Բուրդենկոյի գիտական ղեկավարությամբ, 1935թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1939 թ. մայիսին զորակոչվել է Կարմիր բանակի շարքերը և գործուղվել Մոնղոլիա, որտեղ հունիս-սեպտեմբեր ամիսներին մասնակցել է Մոնղոլիայի և Չինաստանի սահմանամերձ Խալխին-Գոլ գետի մոտ ճապոնական զավթիչների դեմ Կարմիր բանակի և Մոնղոլիայի ժողովրդական Հանրապետության զորքերի համատեղ մղած մարտերին, որպես բժշկական խմբի ղեկավար մեծ օգնություն ցույց տվել մարտիկներին: 1939 թ. նոյեմբերի 30-ից մինչև 1940 թ. մարտի 13-ը. որպես 8-րդ բանակի բժշկական ուժե-

---

[203] ՌԴ ՊՆ ՌԲՓԱ, Բժշկական ծառայության գեներալ-մայոր Տ.Կ. Ճառաքյանի անձնական գործ, թ. 1–4:

ղացման խմբի պետ, ապա 15-րդ բանակի կորպուսային վիրաբույժ, ակտիվ մասնակցություն է ունեցել Խորհրդա-ֆինական պատերազմին և փրկել հարյուրավոր վիրավոր մարտիկների ու հրամանատարների կյանքը, որի համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. մայիսի 20-ի հրամանագրով պարգևատրվել է Կարմիր աստղի շքանշանով: Նրա կազմակերպչական բարձր հատկությունները և վիրաբույժի մեծ տաղանդը հատկապես վառ կերպով ի հայտ եկան Հայրենական մեծ պատերազմի տարիներին: Պատերազմի առաջին ամիսներին բժշկական ծառայության գնդապետ Ա.Ի. Հարությունովը եղել է Հարավային ռազմաճակատի 6-րդ և 9-րդ բանակների գլխավոր վիրաբույժ, 1941–1943 թթ.՝ Հյուսիս-կովկասյան ռազմաճակատի գլխավոր վիրաբույժ, ապա ԽՍՀՄ պաշտպանության նախարարության կենտրոնական ավիացիոն հոսպիտալի ավագ խորհրդատու, 1943–1944 թթ.՝ Հարավարևմտյան, ապա 3-րդ Ուկրաինական ռազմաճակատների գլխավոր վիրաբույժ, 1944–1945 թթ. Կարմիր բանակի գլխավոր սանիտարական վարչության ավագ վիրաբույժ (խորհրդատու):

1944 թ. Ա.Ի. Հարությունովը հաջողությամբ պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Արյունատար անոթների հրազենային վերքերը և նրանց բուժումը էվակուացիայի ընթացքում» թեմայով: 1945 թ. սեպտեմբերին բժշկական գիտությունների դոկտոր Ա.Ի. Հարությունովը զորացրվել է Կարմիր բանակի շարքերից և աշխատանքի անցել Կիևում, ղեկավարել Հոգենյարդաբանության գիտահետազոտական ինստիտուտի նյարդավիրաբուժական կլինիկայի և Կիևի բժշկական կադրերի վերապատրաստման ինստիտուտի նյարդավիրաբուժության ամբիոնի աշխատանքները, Ուկրաինայի գլխավոր վիրաբույժն էր: 1950 թ. պրոֆեսոր Ա.Ի. Հարությունովի անմիջական ջանքերով ստեղծվեց Ուկրաինական ԽՍՀ առողջապահության նախարարության նյարդավիրաբուժության գիտահետազոտական ինստիտուտը: Նա այսօր էլ իրավամբ համարվում է ուկրաինական նյարդավիրաբուժության դպրոցի

հիմնադիրը: 1964 թ. պրոֆեսոր Ա.Ի. Հարությունովը տեղափոխվել է Մոսկվա և նշանակվել ԽՍՀՄ առողջապահության նախարարության՝ ակադեմիկոս Ն.Ն. Բուրդենկոյի անվան նյարդավիրաբուժության ինստիտուտի տնօրեն, միաժամանակ ղեկավարել ԽՍՀՄ առողջապահության նախարարության բժիշկների կատարելագործման կենտրոնական ինստիտուտի նյարդավիրաբուժության ամբիոնի աշխատանքները: 1967 թ. ընտրվել է ԽՍՀՄ բժշկական ակադեմիայի իսկական անդամ: 1974 թ. նրան շնորհվել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում: Նա հեղինակ է ավելի քան 200 գիտական աշխատությունների, այդ թվում՝ 4 մենագրության: Նրա ղեկավարությամբ երեք տասնյակից ավելի բժիշկներ պաշտպանել են թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ, դարձել ԱՊՀ երկրների ճանաչված մասնագետներ, որոնք այսօր իրենց ուսուցչապետից սովորածն ի սպաս են դնում մարդկանց առողջության պահպանման գործին: Ես չեմ կարող չհիշատակել մեծ բժշկապետի աշակերտներից, այսօր Հայաստանում նրա գործը հաջողությամբ շարունակող բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մամիկոն Աղասիի Եղունյանին, որը ղեկավարում է Երևանի «Էրեբունի» բժշկական կենտրոնի նյարդավիրաբուժական կլինիկան:

Տողերիս հեղինակը 2005 թ. դեկտեմբերի 16-ին գլխուղեղի ծանր ինսուլտով, մահամերձ վիճակում, նրա կողմից կատարված նուրբ և բարդ վիրահատության շնորհիվ «այն աշխարհից» վերադարձավ կյանք և շարունակեց գիտական աշխատանքը: Դրա վառ ապացույցն է, որ ես բուժվելուց հետո մինչև այսօր պատրաստել և հրատարակել եմ «Ավիացիայի մարշալ Ս.Ս. Խուդյակով – Ա.Ա. Խանփերյանց», «Խորհրդային Միության մարշալ, կրկնակի հերոս Ի.Բ. Բաղրամյան», «Հայ ռազմիկների մասնակցությունը Ստալինգրադի ճակատամարտին» (1942 թ. հուլիսի 17 – 1943 թ. փետրվարի 2) ռուսերեն և «Գեներալ-մայոր Վլադիմիր Ասատուրի Հայրապետյան» հայերեն մենագրությունները, որոնք լույս են տեսել 2006–2007 թթ. ընթացքում: Սույն աշխատությունը կլինի 5-րդ մենագրութ-

յունը, որ մենք հրատարակության ենք պատրաստում Ա.Ի. Հարությունովի արժանի հետևորդ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ.Ա. Եղունյանի կատարած վիրահատությունից հետո: Եվ օգտվելով հարմար առիթից, ես խորին շնորհակալություն եմ հայտնում նրան, ցանկանում երկար տարիների կյանք և նորանոր հաջողություններ Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում: Այսօր «Էրեբունի» հիվանդանոցի նյարդաբուժության կլինիկայի՝ երրորդ հարկում գտնվող պրոֆեսոր Մ.Ա. Եղունյանի աշխատասենյակում պատից կախված է նրա ուսուցիչ, ականավոր վիրաբույժ Ա.Ի. Հարությունովի մեծադիր նկարը: Վերջում ավելացնենք, որ Ա.Ի. Հարությունովը մինչև իր կյանքի վերջը համարվում էր նաև ԽՍՀՄ գլխավոր նյարդավիրաբույժը: Հայրենիքին մատուցած ծառայությունների համար, բացի Խորհրդա-ֆիննական պատերազմում ստացած Կարմիր աստղի շքանշանից, Ա.Ի. Հարությունովը պարգևատրվել էր նաև Լենինի 2, Մարտական Կարմիր դրոշի 2, Աշխատանքային Կարմիր դրոշի 2 շքանշաններով, բազմաթիվ մեդալներով և, ինչպես արդեն նշել ենք, 1974 թ. նրան շնորհվել էր Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում[204]:

Խորհրդա-ֆիննական պատերազմի մասնակիցներից էր նաև Լենինգրադյան զինվորական օկրուգի հոսպիտալի ուրոլոգիական բաժնի պետ, 3-րդ կարգի զինվորական բժիշկ Արամ Հակոբի Աբրահամյանը (ծնվել է 1898 թ. դեկտեմբերի 31-ին Թիֆլիսում – մահացել է 1990 թ. Մոսկվայում): Նա այդ ժամանակ արդեն ձեռք է բերել անվանի վիրաբույժ-ուրոլոգի համբավ և զգալի աշխատանք էր տանում վիրավոր ու հիվանդ զինվորների ապաքինման և շարք վերադառնալու ուղղությամբ: Դժվարին պայմաններում վիրավորներին ցույց տված որակյալ բժշկական օգնության համար Ա.Հ. Աբրա-

---

[204] ՌԴ ՊՆ ՈԲՓԱ. Բժշկական ծառայության գնդապետ Ա.Ի. Հարությունովի անձնական գործ, թիվ 0310188, թթ. 1–5: Военно-медицинский журнал. 1984. № 1. С. 68–69. Большая медицинская энциклопедия. М., 1975. Т. 2. С. 245.

համյանն արժանացավ Լենինգրադի զինվորական օկրուգի սանիտարական բաժանմունքի պետի շնորհակալությանը...

1941–1944 թթ. նա ղեկավարել է Երևանի զինվորական հոսպիտալների ուրոլոգիական բաժանմունքների աշխատանքը: Պատերազմից հետո նա աշխատում էր Մոսկվայում, եղել է մարզային գիտահետազոտական ինստիտուտի ուրոլոգիական կլինիկայի վարիչ: 1949 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, 1950 թ. ստացել պրոֆեսորի, 1959 թ. գիտության վաստակավոր գործչի, 1969 թ. Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում, իսկ 1976 թ. արժանացել է ԽՍՀՄ պետական մրցանակի: Ա.Հ. Աբրահամյանը 1965 թ. մինչև իր կյանքի վերջը եղել է ուրոլոգների համամիութենական ընկերության նախագահը: Անվանի ուրոլոգի կողմից Հայաստանին նվիրաբերված գեղանկարչության հավաքածուի հիման վրա 1984 թ. Երևանում հիմնադրվել է Ռուսական արվեստի թանգարան[205]:

Խորհրդա-ֆիննական պատերազմի հիվանդ և վիրավոր զինվորներին ցույց տված որակյալ բժշկական օգնության համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. ապրիլի 7-ի հրամանագրով Կարմիր աստղի շքանշանով պարգևատրվեց 13-րդ բանակի 142-րդ բժշկական գումարտակի բժշկական դասակի հրամանատար, 2-րդ կարգի զինվորական բժիշկ Հակոբ Բեգլարի Ղևոնդյանը[206] (ծնվել է 1909 թ. Թիֆլիսում, Կարմիր բանակում էր ծառայում 1932 թ.): Նրա պարգևատրման թերթիկում, որի տակ ստորագրել էին գումարտակի հրամանատար, 3-րդ կարգի զինվորական բժիշկ Գլազովը, դիվիզիայի հրամանատար, կոմբրիգ (ազգանունն անընթեռնելի է) և բանակի հրամանատար, կոմկոր Պարու-

---

[205] *Ա. Գրիգորյան, Բ. Մելքումյան,* Հայաստանի բժիշկները մեծ հայրենականում, գիրք առաջին, Ե.: «Հայաստան» հրատ., 1983, էջ 64–65; Ով ով է, Հայեր կենսագրական հանրագիտարան, Ե.: «Հայկական հանրագիտ.» հրատ., 2005, հ. 1, էջ 18:

[206] Ведомости Верховного Совета СССР. 1941. 23 февраля. № 10. С. 3.

սինովը, նշված էր. «156-րդ բժշկական գումարտակում աշխատելու ընթացքում իրեն դրսևորել է որպես լավ կազմակերպիչ, կարողանալով իր դասակի բազայի վրա ստեղծել 85 մահճակալանոց թերապևտիկ ստացիոնար: Չխնայելով իր ուժերը՝ նա հիվանդ զինվորներին ժամանակին ապահովում էր բարձրորակ բուժումով: Շնորհիվ նրա նախաձեռնության, եռանդի, սիրո և գործին անսահման նվիրվածության, մեծ թվով հիվանդներ առողջացան և վերադարձան շարք: Նա համեմատաբար կարճ ժամանակամիջոցում կարողացավ սովորեցնել իր ստորաբաժանման անձնակազմին ցրտահարված հիվանդներին որակյալ օգնություն ցույց տալու կարողությունը: Բացառիկ ուշադիր և հոգատար բժիշկ է, որը շատ ժամանակ և ուժեր է հատկացնում հիվանդներին խնամելու և առողջացնելու գործին: Արժանի է պարգևատրման Կարմիր աստղի շքանշանով»[207]:

Նման պարգևի ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. ապրիլի 11-ի հրամանագրով արժանացավ 3-րդ կարգի զինվորական բժիշկ Վազգեն Հովհաննեսի Սարուխանյանը[208] (ծնվել է 1910 թ. հունվարի 10-ին Գավառում, մահացել է 1973 թ. սեպտեմբերի 3-ին Երևանում): Նա 1931 թ. Երևանի բժշկական ինստիտուտն ավարտելուց հետո աշխատել էր նույն ինստիտուտի ֆակուլտետային վիրաբուժության կլինիկայում և ձեռք բերել գործնական մեծ փորձ: Խորհրդա-ֆիննական պատերազմը սկսվելու պահին նա զորակոչվել է Կարմիր բանակի շարքերը և ուներ 3-րդ կարգի զինվորական բժշկի կոչում: Պատերազմի ժամանակ նա ծառայում էր Լենինգրադի զինվորական օկրուգի հոսպիտալներից մեկում՝ որպես վիրաբույժ: 105 օր տևած պատերազմում նա փրկեց տասնյակ վիրավոր զինվորների կյանքը, որոնցից շատերը բուժվելուց հետո շարունակեցին իրենց ծառայությունը բանակում: 1941–1945 թթ. փորձառու զինվորական վիրաբույժը

---

[207] ՌՊՌԱ, ֆ. 37837, ց. 3, գ. 427, թթ. 110–111:
[208] Ведомости Верховного Совета СССР. 1941. 25 июня. № 28. С. 3.

ակտիվ մասնակցություն ունեցավ նաև Հայրենական մեծ պատերազմին և փրկեց հարյուրավոր վիրավորների կյանքը: Պատերազմից հետո վերադարձել է Հայաստան և նվիրվել հանրապետության առողջապահության զարգացման ու ամրապնդման գործին, միաժամանակ զբաղվել գիտամանկավարժական աշխատանքով: 1956 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, 1958 թ. ստացել պրոֆեսորի, իսկ 1964 թ.՝ Հայաստանի գիտության վաստակավոր գործչի կոչում: 1956–1961 թթ. ղեկավարել է Երևանի ռենտգենաբանության և ուռուցքաբանության գիտահետազոտական ինստիտուտի վիրաբուժական կլինիկան, 1958 թ. եղել է Երևանի բժշկական ինստիտուտի սանհիգիենայի, 1960-ից՝ մանկաբուժության, սանիտարական և ստոմատոլոգիական ֆակուլտետների և հոսպիտալային վիրաբուժության ամբիոնների վարիչ[209]: Պարգևատրվել է Կարմիր աստղի և Աշխատանքային կարմիր դրոշի շքանշաններով: Նրա գործը այսօր արժանի կերպով շարունակում է նրա որդին՝ վիրաբույժ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վիրաբուժական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Հովհաննես Վազգենի Սարուխանյանը[210]:

Խորհրդա-ֆիննական պատերազմի հիվանդ և վիրավոր զինվորներին անգնահատելի օգնություն ցույց տալու համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. ապրիլի 7-ի հրամանագրով «Մարտական ծառայությունների համար» մեդալով պարգևատրվեց 13-րդ բանակի սանիտարական բաժնի բժշկական ուժեղացման խմբի օրդինատոր (բուժող բժիշկ), 3-րդ կարգի զինվորական բժիշկ Սերգեյ Միքայելի Ազարյանցը[211] (ծնվել է 1899 թ. սեպտեմբերի 13-ին Դերբենտ քաղաքում (Ռուսաստանի դաշնություն, Դաղստան), մահվան մասին տեղեկություններ չկան, Կարմիր բանակում ծառայում է 1937 թ.): Նրա պարգևատրման թերթիկում, որը ստորագրել է

---

[209] Հայկական սովետական հանրագիտարան, Ե., 1984, հ. 10, էջ 245–246:
[210] Հայկական համառոտ հանրագիտարան, Ե., 2003, հ. 4, էջ 382:
[211] Ведомости Верховного Совета СССР. 1941. 30 апреля. № 18. С. 3.

բանակի սանիտարական բաժնի պետ, 1-ին կարգի զինվորական բժիշկ Բարանովը, նշված է. «Մասնագիտությամբ թերապևտ Սերգեյ Միքայելի Ազարյանցը բանվորագյուղացիական Կարմիր բանակի Կիրովի անվան ռազմաբժշկական ակադեմիայի ասպիրանտ է: 13-րդ բանակում է գտնվում նրա ստեղծման օրից և մեծ աշխատանք է կատարել գրիպի համաճարակի կանխարգելման ուղղությամբ: Բանակի սանիտարական մասի հանձնարարությամբ բժշկասանիտարական գումարտակային և դիվիզիոնային հոսպիտալներին կից ստեղծեց ստացիոնարներ գրիպով հիվանդների համար՝ դրանով իսկ զորամասերում վարակից փրկելով հազարավոր զինվորների: Զգայուն և հոգատար բժիշկ է: Բոլոր առաջադրանքները կատարում է լավ: Նվիրված է հայրենիքի պաշտպանության գործին: Արժանի է պարգևատրման «Մարտական ծառայությունների համար» մեդալով»[212]: 1941–1945 թթ. Ս.Մ. Ազարյանցը մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, եղել բանակի թերապևտ, ստացել բժշկական ծառայության փոխգնդապետի կոչում, մասնակցել Վիսլա-Օդերյան, Վարշավա-Պոզնանյան, Արևելա-Պոմերանյան և այլ գործողությունների: Պատերազմից հետո շարունակել է աշխատանքը ռազմաբժշկական ակադեմիայում, զբաղվել գիտական աշխատանքով, պաշտպանել թեկնածուական ատենախոսություն և ստացել բժշկական գիտությունների թեկնածուի գիտական կոչում, հրատարակել մի շարք աշխատություններ: 1959 թ. զորացրվել է բանակի շարքերից և զբաղվել գիտամանկավարժական աշխատանքով[213]:

Մաններհայմի գծի Կարխուլյան ամրացված շրջանի և Վիբորգի գրավման համար մղված մարտերում վիրավոր մարտիկներին բժշկական անհրաժեշտ օգնություն էր ցույց տալիս 7-րդ բանակի 113-րդ հրաձգային դիվիզիայի (հիշեցնենք, որ այդ դիվիզիայի հրամանատարը գնդապետ Քրիստափոր Ալա-

---

[212] ԴՊՌԱ, ֆ. 37837, ց. 3, գ. 392, թ. 241:
[213] ԴՊՌԱ, ֆ. 37837, ց. 3, գ. 392, թ. 241:

վերդյանն էր), 513-րդ հրաձգային գնդի վիրաբույժ, 3-րդ կարգի զինվորական բժիշկ Իվան Հակոբի Թումանյանը, որը նույնպես արժանացավ «Մարտական ծառայությունների համար» մեդալի[214]:

Նման պարգևի արժանացած հայ բժիշկներից էր 2-րդ կարգի զինվորական բժիշկ Արտաշես Գրիգորի Ղասաբյանը, որն այդ մեդալով պարգևատրվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1940 թ. հունվարի 26-ի հրամանագրով[215]: Մեկ այլ՝ 1940 թ. ապրիլի 7-ի հրամանագրով «Մարտական ծառայությունների համար» մեդալով պարգևատրվեց զինվորական բուժակ Սարգիս Գասպարի Լուսպարոնյանը[216]:

Խորհրդա-ֆիննական պատերազմում վիրավոր և հիվանդ զինվորների բուժման գործում զգալի ավանդ ներդրեց նաև 1-ին կարգի զինվորական բժիշկ Ստեփան Միքայելի Տեր-Մխիթարովը (ծնվել է 1885 թ. հոկտեմբերի 7-ին Թիֆլիսում): Նա պատերազմի օրերին 44-րդ դաշտային էվակուացնող կետի գլխավոր բաժնի պետն էր և աչքի էր ընկնում որպես իր գործի մասնագետ, հիվանդ և վիրավոր զինվորների հանդեպ հոգատար ու կարեկից բժիշկ: Պատերազմն ավարտվելուց հետո Ս.Մ. Մխիթարովը դասավանդում էր Լենինգրադի ռազմաբժշկական ուսումնարանում: 1943 թ. նրան նշանակեցին Կարմիր բանակի ռազմաբժշկական թանգարանի պետի օգնական, իսկ 1945 թ.՝ այդ թանգարանի պետ: Նշենք, որ այսօր Սանկտ Պետերբուրգում գտնվող այդ թանգարանում են պահվում ինչպես Խորհրդա-ֆիննական, այնպես էլ Հայրենական մեծ պատերազմում վիրավորված բոլոր զինվորների, սպաների և գեներալների համապատասխան փաստաթղթերը: Այն այսօր մարտական գործողությունների ժամանակ վիրավորվելու վերաբերյալ տեղեկանք ստանալու ամենակարևոր և ստույգ աղբյուրն է: 1942 թ. մայիսի 14-ին Ս.Մ. Մխիթարովին

---

[214] ՌՊՌԱ, ֆ. 37837, ց. 3, գ. 383, թ. 259:
[215] Известия. 27 января 1940. № 21. С. 2.
[216] Ведомости Верховного Совета СССР. 1941. 20 мая. № 21. С. 3.

շնորհվել է բրիգադային բժշկի, իսկ 1943 թ. փետրվարի 14-ին՝ բժշկական ծառայության գնդապետի կոչում[217]:

Նույն արխիվում մենք արժեքավոր տեղեկություններ քաղեցինք ինչպես Խորհրդա-ֆիննական, այնպես էլ Հայրենական մեծ պատերազմներին մասնակից բժշկական ծառայության փոխգնդապետներ Եվգենի Սերգեյի Շահբազյանի, Պետրոս Արտեմի Սարաֆյանի և բժշկական ծառայության մայոր Ստեփան Ադամի Քեչեկի մասին:

Ե.Ս. Շահբազյանը ծնվել է 1902 թ. Արտաշատում՝ բժշկի ընտանիքում: 1926 թ. ավարտել է Մոսկվայի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետը և, այնուհետև, ուսումը շարունակել նույն համալսարանի հոսպիտալային վիրաբուժական կլինիկայի օրդինատուրայում, հաջողությամբ ավարտել այն, պաշտպանել թեկնածուական ատենախոսությունը և զբաղվել գիտամանկավարժական աշխատանքով: 1940 թ. հունվար-փետրվար ամիսներին, որպես դաշտային շարժական հոսպիտալի վիրահատական բաժանմունքի պետ, մասնակցել է Խորհրդա-ֆիննական պատերազմին և փրկել հարյուրավոր ծանր վիրավոր մարտիկների կյանքը: Խորհրդա-ֆիննական պատերազմի ավարտից հետո, նույն թվականին (1940 թ.) պաշտպանել է դոկտորական ատենախոսություն և ստացել բժշկական գիտությունների դոկտորի կոչում: Հայրենական մեծ պատերազմի տարիներին եղել է Հարավարևմտյան ռազմաճակատի դաշտային շարժական հոսպիտալի վիրահատական բաժանմունքի պետ (22 հունիս 1941 թ. – հունիս 1942 թ.), 5-րդ տանկային բանակի գլխավոր վիրաբույժ (հունիս 1942 թ. – մայիս 1943 թ.), 12-րդ բանակի գլխավոր վիրաբույժ (մայիս – դեկտեմբեր 1943 թ.) և այլն:

---

[217] Վերոհիշյալ տեղեկությունները մենք քաղել ենք ՌԴ ՊՆ ռազմաբժշկական թանգարանի ռազմաբժշկական փաստաթղթերի արխիվում պահվող բժշկական ծառայության գնդապետ Ս.Մ. Տեր-Մխիթարովի անձնական քարտից:

Հայրենական մեծ պատերազմի ավարտից հետո երկար տարիներ աշխատել է Մոսկվայի թիվ 1 Ի.Մ. Սեչենովի անվան բժշկական ինստիտուտում, եղել հոսպիտալային վիրաբուժության կլինիկայի, այնուհետև՝ օպերատիվ վիրահատության ամբիոնի պրոֆեսոր: Բժշկական ծառայության փոխգնդապետ Ե.Ս. Շահբազյանը պարգևատրվել էր Հայրենական պատերազմի 1-ին և 2-րդ աստիճանների, Կարմիր աստղի շքանշաններով և բազմաթիվ մեդալներով: Խորհրդա-ֆիննական և Հայրենական մեծ պատերազմի մասնակից, տաղանդավոր վիրաբույժ պրոֆեսոր Ե.Ս. Շահբազյանը մահացել է Մոսկվայում 1966 թ. օգոստոսի 15-ին[218]:

Կարելյան պարանոցում «Մաններհայմի գծի» պաշտպանական ամրությունների ճեղքման մարտերում վիրավորված զինվորների բուժման գործում իր արժանի լուման է ներդրել նաև վիրաբույժ, բժշկական ծառայության 3-րդ կարգի զինվորական բժիշկ Պետրոս Արտեմի Սարաֆյանը (ծնվել է 1899 թ. ապրիլի 13-ին Թիֆլիի նահանգի Դուշեթի շրջանի Անապուր գյուղում): 1940 թ. հունվար-մարտ ամիսներին 3-րդ կարգի զինվորական բժիշկ, 17-րդ հրաձգային դիվիզիայի բժշկասանիտարական գումարտակի վիրահատական դասակի հրամանատար Պ.Ա. Սարաֆյանի ղեկավարությամբ վիրաբուժական դասակը փրկեց հարյուրավոր ծանր վիրավորների կյանքը, որոնցից շատերը կրկին վերադարձան շարք: Փորձառու վիրաբույժը (նա 1922 թ. ավարտել էր Դոնի Ռոստովի համալսարանի բժշկական ֆակուլտետը և աշխատել իր մասնագիտությամբ), կատարեց հարյուրից ավելի բարդ վիրահատություններ և փրկեց զինվորների ու հրամանատարների կյանքը՝ արժանանալով Լենինգրադյան զինվորական օկրուգի սանիտարական բաժանմունքի պետի շնորհակալությանը: Հայրենական մեծ պատերազմի տարիներին բժշկական ծառայության փոխգնդապետ Պ.Ա. Սարաֆյանը, որպես 2383

---

[218] ՌԴ ՊՆ ՌԲՓԱ, Բժշկական ծառայության փոխգնդապետ Ե.Ս. Շահբազյանի անձնական գործ: Известия. 19 августа 1966:

դաշտային շարժական հոսպիտալի պետ (հոսպիտալը գործել է 13-րդ, ապա 21-րդ բանակի կազմում), ապա 1-ին Ուկրաինական ռազմաճակատի 3-րդ բանակի գլխավոր վիրաբույժ, փրկել է հազարից ավելի վիրավոր զինվորների ու սպաների կյանքը: Նա ակտիվորեն մասնակցել է Սմոլենսկի, Մոսկվայի, Կուրսկի ճակատամարտերին, Սանդոմիր-Սիլեզյան գործողությանը, Բեռլինի ճակատամարտին: 1954 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, ստացել բժշկական գիտությունների թեկնածուի կոչում և զբաղվել գիտամանկավարժական աշխատանքով: Պարգևատրված էր Կարմիր դրոշի, 2 Կարմիր աստղի շքանշաններով, «Մարտական ծառայությունների համար», «Բեռլինի գրավման համար» մեդալներով, Չեխոսլովակիայի «Մարտական խաչ 1-ին աստիճանի» շքանշանով և այլն[219]:

Խորհրդա-ֆիննական պատերազմի ակտիվ մասնակիցներից էր նաև բժշկական ծառայության մայոր Ստեփան Ադամի Քեչեկը (ծնվել է 1890 թ. սեպտեմբերի 1-ին Դոնի Ռոստովի Նոր Նախիջևանում, մահացել 1954 թ. Լենինգրադում): 1923 թ. ավարտել էր Լենինգրադի 2-րդ բժշկական ինստիտուտը բժիշկ հիգիենիստ, էպիդեմիոլոգ (համաճարակաբան) մասնագիտությամբ աշխատել է Լենինգրադում: 1939 թ. ամռանը զորակոչվել է Կարմիր բանակի շարքերը՝ որպես Բելոռուսական հատուկ զինվորական օկրուգի 3-րդ բանակի ինֆեկցիոն հոսպիտալի պետ: Նույն թվականի աշնանը մասնակցել է Արևմտյան Ուկրաինայի և Բելոռուսիայի ազատագրմանը, որոնք դեռևս 1920 թ. Խորհրդային Ռուսաստանից զավթել էր պանական Լեհաստանը: 1939 թ. նոյեմբերի 30-ից մինչև 1940 թ. մարտի 13-ը, որպես Լենինգրադի զինվորական օկրուգի ինֆեկցիոն հոսպիտալի պետ, մասնակցել է Խորհրդա-ֆիննա-

---

[219] ՌԴ ՊՆ ՌԲՓԱ, Բժշկական ծառայության փոխգնդապետ Մ.Ա. Սարաֆյանի անձնական գործ, թիվ 0476508, թթ. 1–4: Военные врачи-участники Великой Отечественной войны. 1941–1945 гг. СПб., 1996. Кн. 2. С. 116:

կան պատերազմին, զգալի ավանդ ներդրել օկրուգի զորքերին համաճարակներից զերծ պահելու, տարբեր տեսակի սուր-վարակիչ հիվանդություններով վարակված հիվանդների բուժման գործը կազմակերպելու բնագավառում: Դրա համար արժանացել է ԽՍՀՄ առողջապահության նախարարի հատուկ շնորհակալությանը՝ պարգևատրվել է «Առողջապահության գերազանցիկ» կրծքանշանով:

Հայրենական մեծ պատերազմի առաջին տարում, որպես բանակի էպիդեմիոլոգ, մասնակցել է Սմոլենսկի և Մոսկվայի ճակատամարտերին և շնորհակալ գործ կատարել հիվանդ և վիրավոր զինվորների ու սպաների բուժման գործում: Այնուհետև նա տեղափոխվել է Լենինգրադ և վարել 42-րդ բանակի սանիտարական-էպիդեմիոլոգիական թիվ 261 և թիվ 41 փորձակայանների պետի պաշտոնները՝ իր արժանի լուման ներդնելով 900 օր պաշարման մեջ ապրած հերոս-քաղաքի պաշտպաններին և բնակչությանը համաճարակային հիվանդություններից զերծ պահելու գործի մեջ՝ պարգևատրվելով «Լենինգրադի պաշտպանության համար» մեդալով: Պատերազմից հետո մինչև իր կյանքի վերջը Ս.Ա. Քեչեկը աշխատել է Լենինգրադում՝ զբաղվել գիտամանկավարժական գործունեությամբ[220]:

Խորհրդա-ֆիննական պատերազմին ակտիվորեն մասնակցած հայ բժիշկներից էր նաև Ելենա Տիգրանի Բուռնազյանը (ծնվել է 1914 թ. Շուշի քաղաքում): 1937 թ. նա Երևանի բժշկական ինստիտուտն ավարտելուց հետո մինչև 1939 թ. աշխատել էր Արթիկի հիվանդանոցում և պոլիկլինիկայում: 1939 թ. գործուղվել է Լենինգրադ՝ ասպիրանտուրայում սովորելու: Բայց նույն թվականի նոյեմբերի 30-ին ուսումն ընդհատվում է Խորհրդա-ֆիննական պատերազմը սկսվելու պատճառով: Նրան մոբիլիզացնում են և ուղարկում Կարելյան

---

[220] ՌԴ ՊՆ ՌԲՓԱ, Բժշկական ծառայության մայոր Ս.Ա. Քեչեկի անձնական գործ, թիվ 19312448, էջ 1–3: Военные врачи-участники Великой Отечественной войны. 1941–1945 гг. СПб., 1995. Кн. 1. С. 148–149:

պարանոցում մարտնչող 7-րդ բանակ որպես վիրաբույժ: «Կարելիայի պարանոցում ես առաջին անգամ հանդիպեցի բազմաթիվ և բազմազան բարդ տրավմատիկ վնասվածքների, որոնք հաճախ կոմբինացվում էին 45–50 աստիճան սառնամանիքների հետևանքով առաջացած ցրտահարությամբ, – հետագայում իր հուշերում գրել է բժշկուհին: – Այս հիվանդներն իմ տեսած հիվանդները չէին, նրանց ցավի արտահայտումը նման չէր սովորական հիվանդների տրտունջներին: Վերքերը բազմապիսի էին, մեկը մյուսից տարբեր, մեկը կռվի դաշտում էր թողել ոտքը, մյուսը եկել էր առանց ձեռքի, երրորդի դեմքը կորցրել էր իր բնական տեսքը, չորրորդը... Սարսափելի՛ է, սարսափելի է, ահավոր...»[221]: Ե.Տ. Բուռնազյանը այնուհետև մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին Լենինգրադի ռազմաճակատում: 1944 թ. վիրավորվում է մարտերից մեկում և բուժվելուց հետո զորացրվում է և վերադառնում Երևան, աշխատում 1-ին կլինիկական հիվանդանոցում որպես վիրաբույժ-օրդինատոր, 1949 թ.-ից՝ հանրապետության շտապ օգնության կայանի պետ, իսկ 1951 թ.-ից՝ վիրաբույժ պրոֆ. Յոլյանի անվան հիվանդանոցում: 1964 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: Պարգևատրվել է մի շարք շքանշաններով ու մեդալներով[222]:

Խորհրդա-ֆիննական պատերազմին ակտիվորեն մասնակցած հայ բժիշկներից էին Հրանտ Ստեփանի Բարսեղյանը (ծնվել է Կարսի մարզի Արշուտլի գյուղում 1901 թ. – մահացել է 1948 թ. Երևանում), Մկրտիչ Արամի Կոստանյանը (ծնվել է 1905 թ. Գյումրիում – մահացել է 1946 թ. Գյումրիում: Նա բժշկական ծառայության փոխգնդապետ էր, պարգևատրվել էր Կարմիր աստղի երկու շքանշանով ու մեդալներով), Անդրանիկ Սարգսի Հակոբյանը (ծնվել է Կարսի մարզի Բայրախտար գյուղում 1915 թ.: Նա բժշկական ծառայության գնդապետ էր,

---

[221] *Ա. Գրիգորյան, Բ. Մելքումյան,* Հայաստանի բժիշկները մեծ հայրենականում, Ե.: «Հայաստան» հրատ., 1983, գիրք առաջին, էջ 166:
[222] Նույն տեղում, էջ 167:

պարգևատրվել էր շքանշաններով ու մեդալներով, 1958 թ. աշխատում էր Երևանի բժշկական ինստիտուտում), Միքայել Ստեփանի Համբարձումյանը (ծնվել է 1918 թ. Նախիջևանի Օրդուբադի շրջանի Բիստ գյուղում: Բացի Խորհրդա-ֆիննական պատերազմից որպես վիրաբույժ մասնակցել է նաև Հայրենական մեծ պատերազմին, ինչպես նաև Խորհրդա-ճապոնական պատերազմին, ուներ բժշկական ծառայության փոխգնդապետի կոչում, պարգևատրված է շքանշաններով ու մեդալներով: Հետպատերազմյան տարիներին աշխատել է Լենինականում (այժմ՝ Գյումրի) և Երևանում) և ուրիշներ[223]:

[223] Նույն տեղում, էջ 156–157, 266–267, 271–273, 279–280:

ՎԵՐՋԱԲԱՆ

Այսպիսով, ավարտելով մեր ուսումնասիրությունը Խորհրդա-ֆիննական պատերազմին հայ ռազմիկների մասնակցության մասին, գալիս ենք այն եզրակացության, որ հայ ժողովրդի զավակները ռուսների, ուկրաինացիների, բելոռուսների և Խորհրդային Միության մյուս ժողովուրդների զավակների հետ միասին ակտիվորեն մասնակցել են Երկրորդ համաշխարհային պատերազմի բաղկացուցիչ մասը կազմող Խորհրդա-ֆիննական պատերազմին և իրենց արժանի լուման ներդրել այդ պատերազմում տարած հաղթանակի գործում: Ստույգ դժվար է ասել այդ պատերազմին մասնակցած հայ ռազմիկների թիվը: Սակայն ուսումնասիրելով 1938–1939 թթ. Խորհրդային Հայաստանից Կարմիր բանակ զորակոչված զորակոչիկների թիվը, ըստ որի 1938 թ. զորակոչվել են 5438, իսկ 1939-ին՝ 11634, որոնք մեծ մասամբ ծառայության են ուղարկվել Մերձբալթյան հատուկ և Լենինգրադյան զինվորական օկրուգներ, պարզվում է, որ այդ երկու օկրուգներում միայն Հայաստանից զորակոչվել էր 17072 մարդ[1]: Եթե հավասարապես բաժանենք այդ թիվը երկու օկրուգների միջև, ապա կարող ենք ասել, որ Լենինգրադյան օկրուգում ծառայում էր ավելի քան 8536 հայ, իսկ եթե դրան գումարենք նաև ԽՍՀՄ այլ շրջաններից 1938–1939 թթ. բանակ զորակոչված հայերի թիվը, որն ըստ մեզ կազմել է մոտավորապես 14000 հայ, որոնց կեսը ծառայության է ուղարկվել Լենինգրադյան զինվորական օկրուգ, ապա դուրս է գալիս, որ պատերազմի ժամանակ այս օկրուգում ծառայում էին ավելի քան 15000 հայեր: Եթե հաշվի առնենք, որ մինչ այդ բանակում ծառայում էին մի քանի հազար հայեր, որոնցից շուրջ 1000-ը վերոհիշյալ օկրուգում, ապա դուրս կգա, որ Խորհրդա-ֆիննական պատե-

[1] Այս թվերը մենք վերցրել ենք ՀՀ զինվորական կոմիսարիատի արխիվում պահվող պատմական տեղեկանքից:

բազմին մասնակից հայերի թիվը պետք է կազմի շուրջ 16000: Երբ ուսումնասիրում էինք Հայաստանից Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմում զոհված հայերի ցուցակները, որոնք կազմվել էին մեր ինստիտուտի աշխատակիցների ջանքերով և տեղ գտել Հուշամատյանի 4 մեծածավալ հատորներում, տեսնում ենք, որ միայն Հայաստանից զոհվել է ավելի քան 1000 հոգի, շուրջ այդքան էլ հայեր զոհվել են այլ հանրապետություններից: Այսինքն՝ շուրջ 2000 հայ, որը կազմում է մասնակիցների թվի 12,5%-ը:

Ըստ այժմ Հայաստանի Ազգային արխիվում պահվող այդ ցուցակների՝ միայն Կոտայքի մարզի Աբովյանի շրջանի Գողթ գյուղից Խորհրդա-ֆիննական պատերազմում զոհվել է 4 մարդ (Մարգարյան Գագիկ Սմբատի, 1914 թ., Հովհաննիսյան Լալիկ Եսայու, 1921 թ., Առաքելյան Միհրան Ղևոնդի, 1918 թ., Հովսեփյան Վարիկ Բագրատի, 1921 թ.), Մայակովսկի գյուղից նույնպես 4 մարդ (Հակոբյան Կարապետ Մելիքսեթի, 1918 թ., Ավագյան Լևոն Յուրայի, 1915թ., Հովհաննիսյան Ժորժիկ Համբարձումի, 1918 թ., Անտոնյան Մինաս Պողոսի, 1919 թ.), Վայքի մարզի Բարձրունի գյուղից 5 մարդ (Ավագյան Իշխան Ենոքի, 1922 թ., Պետրոսյան Աղվան Հովակիմի, 1918 թ., Ալեքսանյան Աղասի Արսենի, 1917 թ., Սարգսյան Աղվան Գյուլբուդաղի, 1918 թ., Մուրադյան Վահրամ Մկրտչի, 1918 թ.), Խնձորուտ գյուղից 3 մարդ (Հակոբյան Գերասիմ Դավթի, 1918, Մանասերյան Անանիա Հարությունի, 1913 թ., Վարդանյան Հայրապետ Ներսեսի, 1912 թ.), Լոռու մարզի Ալավերդու շրջանի Ճոճկան գյուղից 3 մարդ (Մոսինյան Ադամ Սարգսի, 1919 թ., Վարդանյան Կոլյա Կարապետի, 1926 թ., Կարապետյան Սարգիս Սահակի, 1914 թ.), Շիրակի մարզի Ախուրյանի շրջանի Հայկավան գյուղից 4 մարդ (Հովհաննիսյան Սուրեն Սմբատի, 1917 թ., Անանյան Անանիկ Իսահակի, 1918 թ., Մելքոնյան Վրեժ Մովսեսի, 1918 թ., Կիրակոսյան Ցոլակ Ենոքի, 1913 թ.), Մայիսյան գյուղից 4 մարդ (Մաթևոսյան Զոհրաբ Ստեփանի, 1920 թ., Հակոբյան Գարեգին Եղիայի, 1920 թ.,

Նալբանդյան Արամայիս Կարապետի, 1918 թ., Ավետիսյան Արզուման Հակոբի, 1916 թ.), Ջաջուռ գյուղից 3 մարդ (Համբարձումյան Վաչո Հ., 1912 թ., Պետրոսյան Արարատ Ս., 1918 թ., Գալստյան Գևորգ Վ., 1920 թ.), Սյունիքի մարզի Գորիսի շրջանի Խոտ գյուղից 7 մարդ (Իվանյան Արսեն Խաչատուրի, 1918 թ., Գևորգյան Սերգեյ Նավասարդի, 1918 թ., Սիմոնյան Արսեն Կոստանդինի, 1918 թ., Առաքելյան Երվանդ Ծատուրի, 1918 թ., Սիմոնյան Մարտիրոս Գրիգորի, 1920 թ., Ծատուրյան Երվանդ Լալայի), Շինուհայր գյուղից 9 մարդ (Ամիրյան Տիգրան Լևոնի, 1915 թ., Առուստամյան Քրիստափոր Մարգարի, 1918 թ., Առուստամյան Նիկոլայ Ծատուրի, 1916 թ., Բալայան Երվանդ Արամի, 1919 թ., Դանիելյան Վոլոդյա Միքայելի, 1920 թ., Հարությունյան Հովհաննես Մաքևոսի, 1917 թ., Հարությունյան Ավագ Եգորի, 1912 թ., Մելքումյան Ռաֆայել Խաչատուրի, 1915 թ., Ստեփանյան Արշավիր Գարեգինի, 1913 թ.), Սյունիքի մարզի Կապանի շրջանի Շիկահող գյուղից 3 մարդ (Խաչատրյան Գարեգին Սմբատի, 1916 թ., Առաքելյան Արտեմ Ավանեսի, 1916 թ., Հովհաննիսյան Արծվիկ Պատվականի, 1916 թ.), Ծավ գյուղից՝ Ավետիսյան Հայկազ Մկրտչի, 1916 թ. (Խորհրդային Միության հերոս Հունան Ավետիսյանի կրտսեր եղբայրը) և շատ ուրիշներ:

Փաստորեն Խորհրդա-ֆիննական պատերազմին մասնակցել են Հայաստանի բոլոր շրջաններից ու գյուղերից: Հայ ռազմիկները մասնակցել են ինչպես «Մաններհայմի գծի» անառիկ ամրությունների ճեղքման, այնպես էլ մյուս ուղղություններով տեղի ունեցած մարտերին՝ բոլոր զորատեսակների կազմում: Նրանք օդաչուներ էին, ծովայիններ, տանկիստներ, հրետանավորներ, սակրավորներ, հրաձիգներ, կապավորներ, բժշկասանիտարական աշխատողներ և այլն: Նրանց մեջ կային նավատորմի ժողկոմի տեղակալ, բանակի հրետանու պետ, դիվիզիայի հրամանատար, դիվիզիայի կոմիսար, գնդերի, գումարտակների, վաշտերի, դասակների, մարտկոցների հրամանատարներ և այլն, որոնցից շատերը մարտերում ցու-

ցաբերած խիզախության համար պարգևատրվել են Լենինի, Կարմիր դրոշի, Կարմիր աստղի շքանշաններով, «Արիության համար», «Մարտական ծառայությունների համար» մեդալներով: Հիշեցնենք, որ 1939–1940 թթ. ԽՍՀՄ-ում գոյություն ունեին միայն այդ շքանշաններն ու մեդալները, որոնցով պարգևատրվում էին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրերով: Հայրենական մեծ պատերազմի տարիներին շքանշանների անվանացուցակը ավելացավ, իսկ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության անունից պարգևատրում կարող էին կատարել ռազմաճակատի, բանակի, կորպուսի, դիվիզիայի, բրիգադի և գնդի հրամանատարները:

Ինչպես արդեն նշել ենք մեր ուսումնասիրության առաջին գլխում, Խորհրդա-ֆիննական պատերազմում ցուցաբերած խիզախության համար ավելի քան 20 000 զինվոր ու սպա պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով, իսկ մարտերում առավել աչքի ընկած 412 խիզախների շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում: Ըստ ազգային կազմի՝ հերոսներից 284-ը ռուսներ էին, 85-ը՝ ուկրաինացիներ, 13-ը՝ բելոռուս, 4-ը՝ հայ, 3-ը՝ վրացի և այլն: Ադրբեջանցիները Խորհրդա-ֆիննական պատերազմում հերոսներ չեն ունեցել: Ինչպես տեսնում ենք, հայերը հերոսների թվով զբաղեցրել են չորրորդ պատվավոր տեղը:

Ինչպես արդեն նշել ենք երկրորդ գլխի 1-ին մասում, Խորհրդա-ֆիննական պատերազմի 12 մասնակից հետագայում՝ Հայրենական մեծ պատերազմի տարիներին, արժանացել են Խորհրդային Միության հերոսի կոչման: Մեր հաշվարկներով հայերից 6 հոգի պարգևատրվել են Լենինի շքանշանով: Եթե դրան ավելացնենք նաև Խորհրդային Միության 4 հերոսներին, որոնք բացի հերոսի «Ոսկե աստղ» մեդալից պարգևատրվել էին նաև Լենինի շքանշանով, ապա դուրս կգա, որ Խորհրդա-ֆիննական պատերազմում 10 հայ արժանացել է Լենինի շքանշանի: Մեր ուսումնասիրության արդյունքում պարզել ենք նաև, որ հայերից 30-ը պարգևատրվել են

Կարմիր դրոշի, նույնքան էլ Կարմիր աստղի շքանշաններով, ավելի քան 60-ը «Արիության համար», և «Մարտական ծառայությունների համար» մեդալներով: Այսպիսով, ոչ լրիվ հաշվարկներով հայերից ավելի քան 130 զինվոր և հրամանատար պարգևատրվել են շքանշաններով ու մեդալներով: Խորհրդա-ֆիննական պատերազմին մասնակից հայերից Իվան (Հովհաննես) Ստեփանի Իսակովին հետագայում շնորհվել է Խորհրդային Միության ծովակալի և Խորհրդային Միության հերոսի կոչում, Համազասպ Խաչատուրի Բաբաջանյանին՝ ԽՍՀՄ զրահատանկային զորքերի գլխավոր մարշալի և Խորհրդային Միության հերոսի կոչում, Սերգեյ Քրիստափորի Ագանովին՝ ինժեներական զորքերի մարշալի կոչում: Վերոհիշյալ պատերազմի մասնակից 17 հայերի շնորհվել է գեներալական կոչում, որոնցից՝ Միքայել Արտեմի Պարսեղովին՝ հրետանու գեներալ-գնդապետի և Խորհրդային Միության հերոսի, Լևոն Աբգարի Օրբելուն՝ բժշկական ծառայության գեներալ-գնդապետի և Սոցիալիստական աշխատանքի հերոսի, Բագրատ Իսահակի Առուշանյանին, Իվան Դավթի Վեքիլովին, Ստեփան Իլյայի Կինոսյանին, Քրիստափոր Իվանի Իվանյանին, Պետրոս Անտոնի Չունչուզովին՝ գեներալ-լեյտենանտի, Ավետիք Իգնատի Բուռնազյանին՝ բժշկական ծառայության, Քրիստափոր Նիկոլայի Ալավերդյանին, Բենիամին Հովհաննեսի Գալստյանին, Նիկոլայ Ալեքսանդրի Հովհաննիսյանին, Բագրատ Հովհաննեսի Իսահակյանին, Սերգեյ Իվանի Նարինյանին, Աշոտ Վաղարշակի Ղազարյանին գեներալ-մայորի, Արթուր (Հարություն) Գրիգորի Կյուչարյանցին, Ստեփան Իվանի Կարճիկյանին և Տիգրան Կարապետի Ճառաքյանին բժշկական ծառայության գեներալ-մայորի կոչում: Խորհրդա-ֆիննական պատերազմի մասնակից 4 հայորդի, առողջապահության գործի ականավոր գործիչների, հետագայում շնորհվել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում. բժշկական ծառայության գեներալ-գնդապետ, ակադեմիկոս Լևոն Աբգարի Օրբելի, բժշկական ծառայության գեներալ-լեյտենանտ Ավե-

տիք Իգնատի Բուռնազյան, բժշկական ծառայության գնդապետ, ակադեմիկոս Ալեքսանդր Իվանի Հարությունով և բժշկական ծառայության փոխգնդապետ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամ Հակոբի Աբրահամյան: Խորհրդա-ֆիննական պատերազմին մասնակցած բոլոր հայ ռազմիկները հետագայում ակտիվ մասնակցել են 1941–1945 թթ. Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմին և իրենց արժանի ավանդը ներդրել ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած պատմական հաղթանակի գործում:

УЧАСТИЕ ВОИНОВ-АРМЯН В СОВЕТСКО-ФИНСКОЙ ВОЙНЕ (30.11.1939 – 13.03.1940)

Резюме

Советско-финская война, или, как ее называют на Западе, Зимняя война, началась 30 ноября 1939 г. и завершилась 13 марта 1940 г. Причина этой войны состояла в том, что в тридцатых годах правящие реакционные круги Финляндии с помощью империалистических государств превратили территорию страны в плацдарм для нападения на СССР. В 32 км от Ленинграда при участии немецких, английских, французских и бельгийских военных специалистов и финансовой помощи Великобритании, Франции, Швеции, Германии и США была построена мощная система долговременных укреплений, которая получила название «линия Маннергейма» в честь главнокомандующего финляндской армии маршала Карла Маннергейма. Общая протяженность «Линии Маннергейма» составила 135 км, общая глубина – до 90 км и насчитывала более 2000 деревоземляных и долговременных огневых сооружений. Кроме того, с помощью немецких специалистов в Финляндии были сооружены аэродромы, способные принять в 10 раз больше самолетов, чем их имелось в финляндских военно-воздушных силах. Пропагандировался лозунг «Создание великой Финляндии» за счет отторжения значительной территории от СССР. Советское правительство, озабоченное сохранением безопасности СССР в обстановке усиления военной опасности, неоднократно пыталось найти мирный путь решения вопросов взаимоотношений между Финляндией и Советским Союзом и договориться с финляндским правительством об условиях, обеспечивающих безопасность северо-западных границ Советского Союза, и прежде всего Ленинграда[1]. «Мы просим,

[1] Советская военная энциклопедия. Т. 7. С. 418–419.

чтобы расстояние от Ленинграда до линии границы было семьдесят километров, – сказал И.В. Сталин. – Таковы наши минимальные требования, и вы не должны думать, что мы уменьшили их. Мы не можем передвинуть Ленинград, поэтому линия границы должна быть перенесена»[2].

Советское правительство предложило финляндскому правительству рассмотреть вопрос об обмене финляндской территории на бóльшую территорию в Советской Карелии. Общая площадь территории, переходящей от Финляндии к СССР, составила бы 2761 кв. км, в качестве компенсации было предложено 5529 кв. км в Восточной Карелии возле Реболы и Поросо-озера[3]. Советское правительство предложило финляндскому правительству отвести свои войска на 20–25 км от границы на Карельском перешейке. Предложение Советского правительства разрешить мирным путем вопросы взаимоотношений между СССР и Финляндией и обеспечить безопасность Ленинграда финляндским правительством было отвергнуто. 30 ноября 1939 г. началась Советско-финская война, которая в условиях суровой зимы продолжалась 105 дней. Первый этап войны, который длился до конца декабря, в целом для Красной Армии оказался неудачным. На Карельском перешейке советские войска, преодолев предполье «Линии Маннергейма», 4–10 декабря вышли к ее главной оборонительной полосе. Однако попытки ее прервать оказались безуспешными. После кровопролитных боев стороны перешли к позиционной борьбе[4]. Проведя необходимую подготовку, значительно усиленные войска 11 февраля 1940 г. начали решительное наступление на Карельском перешейке. Прервав главную оборонительную полосу, к 21 февраля они вышли ко второй полосе «Линии Маннергейма», 3 марта оказались на подступах к Выборгу, 7–9

---

[2] *В. Таннер.* Зимняя война. М., 2003. С. 38–39.

[3] *М.И. Мельтюхов.* Упущенный шанс Сталина. Советский Союз в борьбе за Европу: 1939–1941 гг. (документы, факты, суждения), М., 2002. С. 118 г.

[4] Там же. С. 126.

марта прорвались к его окраинам. 9 марта маршал Маннергейм сообщил финляндскому правительству, что финская армия стоит перед угрозой полного разгрома. 12 марта 1940 г. финская делегация в Москве вынуждена была подписать мирный договор на советских условиях, и с 13 марта с 12 часов по московскому времени военные действия прекратились. В соответствии с договором граница севернее Ленинграда отодвигалась за линию Выборг, Сортавала, Карельский перешеек, ряд островов в Финском заливе, небольшая территория с г. Куолаярви и часть полуостровов Рыбачий и Средний отошли к СССР. Советскому Союзу предоставлялся в аренду на 30 лет полуостров Ханко с правом создания на нем военно-морской базы[5].

Однако Красной Армии эта победа досталась ценою множественных потерь: 65 384 убитых, 14 043 без вести пропавших, 15921 умерший в госпиталях, 188071 раненый, 58370 обмороженных. Таким образом, за 105 дней войны общие потери Красной Армии составили 360256 человек[6]. Потери финнов были значительно меньше: 25000 убитых, 45000 раненых и 25243 погибли вследствие бомбежки[7].

В дело победы Красной Армии в Советско-финской войне вместе с русскими, украинцами, белорусами и другими представителями народов СССР, свою достойную лепту внесли также воины-армяне. По нашим неполным расчетам, в войне участвовали более 16000 воинов-армян, из коих более 2000 погибли в боях. Активное участие армян в Советско-финской

---

[5] Советская военная энциклопедия. Т. 7. С. 418–419.

[6] Гриф секретности снят. Потери Вооруженных сил СССР в войнах, боевых действиях и военных конфликтах. Статистическое исследование. М.: Воениздат, 1993. С. 125; Россия и СССР в войнах XX века. Потери вооруженных сил. Статистическое исследование. М.: изд. ОЛМА-ПРЕСС, 2001. С. 195–197.

[7] *П.Б. Липатов.* Зимняя война. М.: ТОО «Рейтер», 1996. С. 45; Советско-финская война 1939–1940 гг. Хрестоматия. Редактор-составитель А.А. Тарас. Минск: Харвест, 1999. С. 31.

войне проявилось не только призывом в ряды Красной Армии, но и героизмом на полях сражений в составе различных родов войск. Воины-армяне активно участвовали как в боях за прорыв «Линии Маннергейма», так и в боях на других направлениях. Это были летчики, моряки, танкисты, артиллеристы, саперы, стрелки, связисты, санитары, врачи и т.д. В их числе начальник артиллерии армии, командир дивизии, комиссары дивизии, командиры полков, батальонов, дивизионов, рот, батарей, отделения и т.д. Многие из них за образцовое выполнение боевых заданий и проявленные при этом отвагу и героизм, были награждены орденами и медалями. Четырем храбрецам было присвоено звание Героя Советского Союза. Первым Героем Советского Союза стал рядовой, радист танка 91-го танкового батальона 20-й танковой бригады 7-й армии Карапет Семеонович Симонян. Звание героя был присвоено ему Указом Президиума Верховного Совета СССР от 15 января 1940 г. за подвиг, совершенный при прорыве «Линии Маннергейма» на Карельском перешейке в конце декабря 1939 г. Указом Президиума Верховного Совета СССР от 21 марта 1940 г. звание Героя Советского Союза за умелое управление артиллерией 7-й армии при прорыве «Линии Маннергейма» было присвоено начальнику артиллерии 7-й армии комдиву Михаилу Артемьевичу Парсегову. Двум воинам-армянам — командиру взвода 756-го стрелкового полка дивизии 13-й армии младшему лейтенанту Григорию Михайловичу Айрапетяну и помощнику командира пулеметного взвод 39-го стрелкового полка 4-й стрелковой дивизии той же армии, младшему командиру Иссаку Маркосовичу Манасяну звание Героя Советского Союза Указом Президиума Верховного Совета СССР от 7 апреля было присвоено 1940 г. Первый получил звание героя за подвиг, совершенный в боях южнее озера Вуокси Выборского района 11 февраля 1940 г. при прорыве обороны «Линии Маннергейма» на Карельском перешейке. Второй — в бою в районе с. Барышево Выборского района на южном берегу р. Вуокса 5

марта 1940 г. заменил вышедшего из строя командира роты, отразил 5 контратак врага. 7 марта уничтожил вражеские огнеметчики, чем способствовал форсированию реки батальоном.

Уместно вспомнить, что в Советско-финской войне звание героя Советского Союза было присвоено 412 воинам, из них 284 – русским, 85 – украинцам, 13 – белорусам, 4 – армянам, 3 – грузинам и т.д. Азербайджанцы в Советско-финской войне героев не имели.

В ходе нашего исследования мы выяснили, что 10 воинов-армян были награждены орденом Ленина, 30 – орденом Красного Знамени, столько же орденом Красной Звезды, а более 60 – медалями «За отвагу» и «За боевые заслуги». Из участников Советско-финской войны в дальнейшем Ивану Степановичу Исакову было присвоено звание Адмирала флота Советского Союза, а также звание Героя Советского Союза. Звание Главного маршала бронетанковых войск и Героя было присвоено Амазаспу Хачатуровичу Бабаджаняну. Герою Советского Союза Михаилу Артемьевичу Парсегову было присвоено воинское звание генерал-полковника артиллерии, а Герою Социалистического Труда, академику Левону Абгаровичу Орбели – генерал-полковника медицинской службы. Из участноков в Советско-финской войне 6 армянам в дальнейшем было присвоено звание генерал-лейтенанта: Баграт Исаакович Арушанян, Степан Ильич Киносян, Иван Давидович Векилов, Христофор Иванович Иванян, Петр Антонович Чунчузов и Аветик Игнатьевич Бурназян (последний получил звание генерал-лейтенанта медицинской службы). После войны звание генерал-майора было присвоено Христофору Николаевичу Алавердову, Бениамину Оганесовичу Галстяну, Николаю Александровичу Оганесяну, Сергею Ивановичу Нариняну, Гевонду Аваковичу Акопяну, Сурену Саркисовичу Восканяну, Рафику Сааковичу Мартиросяну, Ашоту Вагаршаковичу Казарьяну (ему было присвоено также звание Героя Советского Союза), Артуру Григорьевичу Кючармянцу, Степану Ивановичу Карчикяну и Тиграну Карапетовичу Джаракяну (последним трем бы-

ло присвоено звание генерал-майора медицинской службы). Таким образом, из участников Советско-финской войны 21 армянину в дальнейшем было присвоено высокое воинское звание адмирала, маршала и генерала.

Из участников Советско-финской войны четверем армянам в дальнейшем было присвоено звание Героя Социалистического Труда: Левон Абгарович Орбели, Аветик Игнатьевич Бурназян, полковник медицинской службы, академик Александр Иванович Арутюнов и подполковник медицинской службы, доктор медицинских наук, профессор Арам Акопович Абрамян.

Все воины-армяне — участники Советско-финской войны в 1941—1945 гг. активно участвовали в Великой Отечественной войне и внесли свой достойный вклад в историческую победу над фашизмом.

Կլիմենտ Ամասիայի Հարությունյանը ծնվել է 1940 թ. մայիսի 1-ին Հայաստանի Սյունիքի մարզի Կապան քաղաքում շիկահողցի մտավորականի ընտանիքում: 1957 թ. ավարտել է Կապանի թիվ 2 միջնակարգ դպրոցը, իսկ 1966-ին՝ գերազանցությամբ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետի ցերեկային բաժինը:

Սինչև 1968 թ. դեկտեմբեր աշխատել է Հայաստանի նորագույն պատմության կենտրոնական արխիվում՝ որպես կրտսեր, ապա ավագ գիտաշխատող: 1968 թ. դեկտեմբերին ընդունվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի ասպիրանտուրան՝ արտադրությունից կտրված: Այն ավարտելուց հետո 1971 թ. առ այսօր աշխատում է նույն ինստիտուտում՝ սկզբում կրտսեր, ապա՝ ավագ և առաջատար գիտաշխատող, իսկ 1994-ից՝ «Հայ ժողովրդի մասնակցությունը Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմներին» բաժնի վարիչ, թեմատիկ խմբի ղեկավար: 1979 թ. պատմական գիտությունների թեկնածու է, իսկ 1994-ից՝ պատմական գիտությունների դոկտոր: Նա մասնագիտացել է Հայկական ազգային զորամիավորումների, Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմներին հայ ժողովրդի մասնակցության, հայ զորավարների և զորապետերի կենսագրությունները լուսաբանող հիմնահարցերի ուսումնասիրության ասպարեզում:

Կ.Ա. Հարությունյանը հեղինակ է 14 մենագրության. «51-րդ գվարդիական դիվիզիայի մարտական ուղին», Ե., 1980, 8,25 մամուլ; «Հայ ռազմիկների Չեխոսլովակիայի ազատագրման համար մղված մարտերում», Ե., 1983, 15,5 մամուլ; «Հայ ռազմիկ-

ները Հունգարիայի և Ավստրիայի ազատագրման մարտերում», Ե., 1990, 33 մամուլ; «Մարշալ Բաղրամյան», Ե., 1997, 8,5 մամուլ; «Հայ ժողովրդի մասնակցությունը երկրորդ համաշխարհային պատերազմին (1939–1945 թթ.)», Ե., 2001, 9,2 մամուլ; «Գրիգոր Արտեմի գործունեությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1939–1945 թթ.)», Ե., 2001, 9,6 մամուլ; «Հայկական ազգային զորամիավորումները 1918–1945 թթ.», Ե., 2004 (ունեցել է երկու հրատարակություն), 17 մամուլ; «Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941–1945 թթ.)», Ե., 2002, 15,5 մամուլ, «Участие армянского народа в Великой Отечественной войне Советского Союза (1941—1945)», Е., 2004, 54,2 п.л.; «Маршал авиации С.А. Худяков — А.А. Ханферьянц», Е., 2006, 15,75 п.л., «Маршал Советского Союза, дважды герой — И.Х. Баграмян», Е., 2007, 15 п.л.; "Участие воинов-армян в Сталинградской битве (17 июля 1942 г. — 2 февраля 1943 г.), Е., 2007, 6,5 п.л.; «Գեներալ-մայոր Վլադիմիր Ասատուրի Հայրապետյան», Ե., 2007, 18,5 մամուլ; «Հայ ռազմիկների մասնակցությունը Խորհրդա-ֆիննական պատերազմին (30 նոյեմբերի 1939 – 13 մարտի 1940), Ե., 2008, 14 մամուլ:

Կ.Ա. Հարությունյանը համահեղինակ է նաև 6 գրքի. «Книга о героях», Е., 1985, 18 п.л.; «Նրանք մարտնչել են հանուն հայրենիքի», Ե., 1988, 25 մամուլ; «Գրիգոր Հարությունյան. Կյանքը և գործունեությունը», Ե., 2000, 22,5 մամուլ; «Հայ ժողովրդի ավանդը Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում 1941–1945 թթ.», Ե., 2001, 8 մամուլ, «Участие сотрудников Национальной академии наук Республики Армения в Великой Отечественной войне (1941—1945)», Е., 2001, 16,3 п.л.; «Маршал Победы — И.Х. Баграмян», Е., 2002, 2003 (две издания), 12,25 п.л.:

Բացի վերոհիշյալից՝ Կ.Ա. Հարությունյանը Հայկական 76-րդ լեռնահրաձգային և 89-րդ Թամանյան եռակի շքանշանակիր հրաձգային դիվիզիաների պատմության և Խորհրդային Միության մարշալ Հ.Քրիստոֆորի Բաղրամյանի կյանքի ու գործունեության վերաբերյալ արխիվային փաստաթղթերի ու նյութերի ժողովածու-

ների կազմող համահեղինակն է (երեք ժողովածուները հրատարակվել են ռուսերեն՝ 96 մամուլ ծավալով):

Հեղինակ է նաև ավելի քան 60 գիտական, 110 թերթային և հանրագիտարանային հոդվածների, Խորհրդային Միության հայ, Հայաստանի զավակ այլազգի հերոսների, Փառքի շքանշանի երեք աստիճանների լրիվ ասպետների և հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին երեք պլակատների (հայերեն և ռուսերեն), խմբագիր է 25 գրքի, այդ թվում՝ «Հուշամատյան» (Ե., 1995, 1996, 1998, 2005 թթ.) քառահատորյակի (274,4 մամուլ), գրել է 1-ին և 4-րդ հատորների առաջաբանները, մասնակից է մի շարք միջազգային և հանրապետական գիտաժողովների: Պարգևատրվել է «Մարշալ Բաղրամյան», «Մ.Ա. Շոլոխով», «Հայրենական մեծ պատերազմի 60-ամյակը» մեդալներով, Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահության «Գովեստագրով» և Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի նախագահության և Ռուսաստանի պատմության ինստիտուտի պատվավոր դիպլոմով (2007): Ամուսնացած է, ունի մեկ որդի, երկու դուստր, չորս թոռ և մեկ թոռնուհի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 5

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԽՈՐՀՐԴԱ-ՖԻՆՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 11

1. Միջազգային դրությունը և պատերազմի պատճառները 11
2. Խորհրդա-ֆիննական պատերազմի համառոտ նկարագիրը 20

ա) Մաններհայմի պաշտպանական համակարգը 20

բ) Պատերազմող կողմերի ուժերի հարաբերակցությունը 22

գ) Պատերազմական գործողությունների ընթացքը 25

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅ ՌԱԶՄԻԿՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱ-ՖԻՆՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ 41

1. Խորհրդային Միության առաջին հայ հերոսները 40
2. Լենինի շքանշանով պարգևատրվածները 63
3. Պատերազմին մասնակցած հայորդիներ, որոնք հետագայում դարձել են ծովակալներ, մարշալներ և գեներալներ 71
4. Մեդալներով պարգևատրված հայ սպաներ և քաղաքաշխատողներ 106
5. Շքանշաններով ու մեդալներով պարգևատրված հայ շարքայիններ ու սերժանտներ 146
6. Հայ օդաչուներ 178
7. Հայ բժիշկներ 191

ՎԵՐՋԱԲԱՆ 212

РЕЗЮМЕ 218

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ 224

1500 դր

ԿԼԻՄԵՆՏ ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅ ՌԱԶՄԻԿՆԵՐԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱ-ՖԻՆՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

(30.11.1939 – 13.03.1940)

Հրատ. խմբագիր՝ Ա. Սահակյան
Համակարգչային շարվածքը՝ Ռ. Գալստյանի

Հրատ. պատվեր N203:
Հանձնված է տպագրության՝ 10.12.2007 թ.:
Չափսը՝ 60x84 1/16: Օֆսեթ տպագրություն՝ N 1:
15,25 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 300 օրինակ:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն,
Երևան, Մարշալ Բաղրամյան 24գ:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0032030

II
А 928 19



Շապիկի առաջին էջի նկարը արտատպված է
Պ. Լիպատովի «Ձմեռային պատերազմ» գրքից:

Շապիկի չորրորդ էջի քարտեզը արտատպված է
Բ. Սոկոլովի «Ֆիննական պատերազմի գաղտնիքները» գրքից: